

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

111311

ՎԼԱԴԻՍԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ
— ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIII դարի կես – XX դարի սկիզբ)



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Բ 358

Գիրքը տպագրվում է պետական պատվերով

Հրատարակվում է

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի

գիտական խորհրդի որոշմամբ

Բարխուդարյան Վ.Բ.

Բ 358

Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դ. կես – XX դ. սկիզբ). – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010. – 420 էջ:

Աշխատության մեջ լուսաբանվում են Ռուսաստանի մայրաքաղաքների հայկական համայնքների պատմությունը, նրանց կապերը մայր հայրենիքի հետ, նրանց որոշակի ներդրումը հայոց կրթության, գիտության ու արվեստի պահպանման և զարգացման ասպարեզում, հայ-ռուսական մշակութային կապերում XVIII դ. կեսից մինչև XX դ. սկիզբն ընկած ժամանակահատվածում:

Մենագրությունը հասցեագրված է գիտության ու կրթության ոլորտի աշխատողներին և ընթերցող լայն հասարակայնությանը:

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8080-0809-0

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արդեն ընդհանուր ճանաչում գտած ճշմարտությունն է դարձել այն հանգամանքը, որ արտագաղթի հետևանքով աշխարհի տարբեր անկյուններում գաղութներ ստեղծելը հայ ժողովրդի պատմական ճակատագրի բնորոշ առանձնահատկությունն է դարձել և նրան ուղեկցել իր անցած պատմական ուղու գրեթե ամբողջ ընթացքում:

Այլևայլ աշխարհամասերում ապաստան գտած հայ զանգվածները հայտնվել են տարբեր իրավիճակներում, անցել տարբեր ուղի՝ պայմանավորված տվյալ երկրի ու պատմական ժամանակաշրջանի ընձեռած հնարավորություններով: Այդուհանդերձ հայկական բոլոր գաղութներին հատուկ է եղել երկու այնպիսի բնորոշ առանձնահատկություն, որոնք օրինաչափության բնույթ են ստացել:

Օտար երկրներում հայտնված հայ զանգվածները, որպես կանոն, իրենց ունակությունները գործադրել են, որ ամենից առաջ սեփական գոյատևումն ապահովեն: Եվ հենց դրանով իսկ նրանք ծառայել են տվյալ երկրի ու ժողովրդի շահերին: Այսպես, օրինակ, Նոր Զուղայի, Տրանսիլվանիայի, Լեհաստանի, Ռուսաստանի և այլ երկրների գաղութահայերը առևտրատնտեսական աշխույժ ու արդյունավետ գործունեություններ նպաստել են իրենց ապաստանած երկրների տնտեսության զարգացմանը, նրանց հզորացմանը: Իրենց նոր հայրենիքին գաղթավայրերի հայության ծառայությունը միայն տնտեսական գործունեություններ չի սահմանափակվել: Նրանք պատրաստակամ են եղել իրենց

ներդրումը կատարելու երկրի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման գործում:

Օսմանյան թուրքիան XVI–XVII դդ. նվաճողական հզոր արշավանքներով նկատելի տարածքներ էր գրավել արևմուտքում, և շարունակվում էր հաղթարշավը դեպի Եվրոպայի խորքերը: Արևելյան Եվրոպայի երկրներն աստիճանաբար եկան այն համոզման, որ թուրքերի դեմ առանձին-առանձին պայքարը չի կարող հաջող ելք ունենալ: Առաջացավ սուլթանական բանակների ներխուժումների դեմ ուժերը համախմբելու, միասնական ճակատ կազմելու անհրաժեշտություն: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի հայկական գաղութների շատ հայ գործիչներ եռանդուն մասնակցություն ունեցան հակաթուրքական դաշնություն ստեղծմանը: Մոլդովայի, Վալաքիայի, Լեհաստանի, Հունգարիայի շատ հայեր անձնվիրաբար լծվեցին այդ գործին¹:

Գաղթավայրերի հայ բնակչությունը չի բավարարվել իր ծառայությունները սոսկ դիվանագիտության և քաղաքականության ոլորտում մատուցելով: Նա երկրին սպառնացող վտանգների ժամանակ զենքը ձեռքին կանգնել է իրեն ապաստան տված ժողովրդի կողքին և նրա հետ ուսուսի տված պայքարել թշնամիների դեմ: 1683 թ. Վիեննայի վճռական ճակատամարտում, որն ավարտվեց թուրքերի պարտությունից, Յան Սոբեսկոլ լեհական բանակի շարքերում կռվում էին նաև հազարավոր հայեր: Նույն ձևով հնդիկ ժողովրդի ազատագրական պայքարում 1760-ական թթ. հնդկահայերը Բենգալիայում զենքը ձեռքներին մարտնչում էին անգլիական գաղութարարների դեմ:

¹ Տե՛ս XVI–XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու), Երևան, 1989, Մ.Քոլանջյան, Հայերի մասնակցությունը հակաթուրքական լիգայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում (XVII դար). – Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից (հոդվածների ժողովածու), Երևան, 1983, էջ 105–128:

Հյուրընկալ երկրի մի փոքրիկ մասնիկը լինելու և ըստ ամենայնի նրա շահերին ծառայելու հետ մեկտեղ հայկական գաղութները բազմաթիվ թելերով կապված են եղել նաև Մայր Հայրենիքի հետ: Նրանք նախանձախնդիր են եղել հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի հարցում, մշտապես ձգտել են բարոյական և նյութական օգնություն ցույց տալ Հայրենիքին: Գաղթավայրերի հայ զանգվածներն ապրում ու գործում էին ուրիշ երկրներում, բայց միաժամանակ իրենց մեջ կրում էին Հայրենիքի գաղափարը, պահպանում ու զարգացնում մայր ժողովրդի ավանդներն ու մշակույթը: Այդ երկվությունը մշտապես հատուկ է եղել գաղթավայրերի բնակչությանը: Բոլոր գաղութների համար ընդհանուր է եղել այն, որ նրանք լծորդել են Մայր Հայրենիքը իրենց ապաստան տված երկրի, նոր Հայրենիքի հետ:

Այսպիսով, հայկական գաղութները, իրարից ընդգծված տարբերություններ ունենալով հանդերձ, առանցքային նշանակության խնդիրներում միևնույն իրավիճակում էին. նրանք կիսում էին նույն ճակատագիրը:

Դա է գաղթավայրերի պատմության բնորոշ կողմը, գլխավոր առանձնահատկությունը:

Գաղթավայրերում հայ զանգվածները շփվել, հարաբերվել են հյուրընկալող ժողովուրդների հետ, կրել նրանց ազդեցությունը: Կատարվել են սովորույթների, վարքուբարքի ու մշակույթների փոխազդեցություն և փոխհարստացում: Հետևաբար, գաղութների գոյությունը սոսկ հայկական առանձին զանգվածների պատմություն է: Այն միաժամանակ հայ ժողովրդի՝ օտար ժողովուրդների հետ շփումների, պատմական կապերի պատմություն է:

Այլևայլ ժողովուրդների միջավայրում հանգրվան գտնելով և ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան տվյալ երկրի ընձեռած հնարավորություններն օգտագործելով՝ հայկական գաղութների վերելքը, բնականաբար,

տեղի է ունեցել պատմական տարբեր փուլերում: Տարբեր հանգամանքներում ու ժամանակներում ձևավորված Լեհաստանի, Նոր Զուղայի, Հնդկաստանի և որոշ այլ գաղութներ օգտվում էին առանձնաշնորհումներից և առևտրատնտեսական ու մշակութային վերելք ապրեցին նույն ժամանակաշրջանում՝ միջնադարից դեպի բուրժուական հարաբերություններին անցնելու դարաշրջանում՝ XVII–XVIII դդ.: Հետագայում, զրկվելով արտոնություններից, այդ բարեշնչանք գաղութները թուլացան և մարման ուղի բռնեցին:

Միանգամայն այլ էր Ռուսաստանի տարածքում ձևավորված հայկական գաղութների վիճակը: Այդ գաղութներն առաջացան միևնույն դարաշրջանում, նույն հանգամանքների բերումով, սակայն արտոնություններից զրկվելուց հետո ևս շարունակեցին գոյատևել: Ռուսահայ գաղութների առաջացումը կապվում է հզորացող Հյուսիսային հարևանի ռազմաքաղաքական ծրագրերի իրականացման ընթացքում թուրք-պարսկական ծանր լուծը թոթափելու՝ հայ ժողովրդի ազատագրական ոգորումների հետ:

Ռուսական պետությունը հատկապես Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի վարած ակտիվ քաղաքականության ժամանակաշրջանում՝ XVIII դ., պայքարում էր ծով դուրս գալու և կայսրության հարավային սահմաններն ընդարձակելու համար: Ռուսաստանի հզոր տիրակալները բավականաչափ լայն արտոնություններ էին տալիս երկրի հարավային երկրամասերում բնակություն հաստատող օտարերկրացիներին, մասնավորապես իրենց ծրագրերին համակիր հայերին և վրացիներին:

Օգտվելով ընձեռված հնարավորություններից՝ հայկական զանգվածները հաստատվեցին և իրենց համայնքները ստեղծեցին Աստրախանում, Մոսկվայում, Ղզլարում, Մոզդոկում, Հյուսիսային Կովկասի մյուս բնակավայրերում, Պետերբուրգում: Հիմնադրվեցին Նոր Նախիջևանի և

Գրիգորիոսյանի գաղութները: 1783 թ. Ղրիմի թերակղզին իր հայկական համայնքներով միացվեց Ռուսաստանին:

Ռուսահայ գաղութներն էական դեր կատարեցին ռուս և հայ ժողովուրդների փոխճանաչման, հայերի ռուսական կողմնորոշման ամրապնդման գործում: Այդտեղ սկզբնավորվեց Հայաստանից սնվող ու արգասավորվող մի գործընթաց, որը վերընթաց զարգացումով, ի վերջո, հանգեցրեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական իրադարձությանը:

Դրանից բացի այդ գաղութներից յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում ներդրում ունեցավ ազգային ավանդների պահպանման, երկու ժողովուրդների մշակութային կապերի ձևավորման ու հարստացման գործում:

Միջնադարյան կյանքի դանդաղ ընթացքը, նրա պահպանողական բնույթը գաղթօջախների համապարփակ վիճակն անփոփոխ պահպանելու պայմաններ էին ստեղծում: Նոր շրջանում, սակայն, հաղորդակցության միջոցների զարգացումը, տնտեսության մեջ կատարվող հեղափոխումները ուժեղացնում էին համայնքների մեկուսի կյանքը խաթարող բնակչության երթևեկը: Տեխնիկայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացումն իր հերթին համահարթում էր կյանքի պայմանները և մեծապես հարվածում համայնքների ներփակ կյանքին:

Ընդհանուր այդ պայմանները չկարողացան խաթարել ռուսահայ գաղութների կենսունակությունը: Զորեղ մի գործոն մեծապես նպաստում էր այդ կենսունակության պահպանմանը: Նրանք աշխարհագրորեն մոտ էին Հայաստանին, որը և հնարավորություն էր տալիս Մայր Հայրենիքի հետ պահպանելու աշխույժ կապերն ու շփումները: Այդ հանգամանքը ռուսահայ գաղութների գոյատևման հիմնական գրավականն էր, քանի որ նրանց կյանքը մեծապես լիցքավորվել է հայրենիքից եկող ազդակներով:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո գոյութիւն ունեցող կապերը դարձան ավելի աշխույժ ու ծավալուն: Այդ և այլ հանգամանքների շնորհիվ նոր շրջանում՝ XVIII դ. վերջերից մինչև XX դ. սկզբները, ռուսահայ գաղութները ոչ միայն չեն մարել, այլև զարգացել են և էական նշանակութիւն ձեռք բերել ինչպես ռուս և հայ ժողովուրդների հարաբերութիւնների, այնպես էլ հայկական մշակութի պահպանման ու զարգացման գործում:

Հայ ժողովրդի մշակութի և հասարակական-քաղաքական կյանքի ոլորտում ունեցած նշանակալի դերով և սկզբնաղբյուրների մատչելիութամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ համեմատաբար լավ է ուսումնասիրվել ռուսահայ գաղութների պատմութիւնը: Հրապարակի վրա են Ղրիմի (Վ.Միքայելյան), Նոր Նախիջևանի (Վ.Բարխուդարյան), Գրիգորիոպոլի (Ժ.Անանյան) հայ գաղութների մասին մենագրութիւնները, բազում հոդվածներով և դոկտորական ատենախոսութիւնների մակարդակով հետազոտվել է Աստրախանի և Հյուսիսային Կովկասի (Վ.Սաչատրյան, Լ.Պողոսյան) հայկական գաղութների պատմութիւնը:

Սակայն Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքների մասին հրապարակի վրա չկան նման ուսումնասիրութիւններ: Մասնագետները դրանց անդրադարձել են անուղղակի՝ Հայոց պատմութիւն անունին հիմնահարցերի հետազոտման ժամանակ: Մասնագետներին հետաքրքրել են մասնավորապես XVIII դ. երկրորդ կեսին Ռուսաստանի միջոցով Հայաստանի ազատագրման ծրագրերի և դեպի Պարսկաստան արշավանք կազմակերպելու հարցերը, իսկ հետագա դարաշրջանի պատմութիւնը, բացի Լազարյան ճեմարանի հետ կապված գիտակրթական որոշ անդրադարձներից, ամբողջովին դուրս է մնացել ուսումնասիրութիւնի ոլորտից:

Եվ դա այն պարագայում, երբ ռուսական արքունիքի հետ անմիջական հարաբերութիւնների ոլորտում են մշակ-

վել և կյանքի կոչվել Հայաստանի ու Հայ իրականութեան հետ կապված հասարակական-տնտեսական ու մշակութային բազում հիմնահարցեր: Մոսկվայի և Պետերբուրգի Հայ համայնքները, նրանց շատ նշանավոր գործիչներ ակտիվ մասնակցութիւն են ունեցել այդ գործընթացին: Մայրաքաղաքների Հայ համայնքների բնակչութիւնը թեպետև ստվար չի եղել, բայց նրանք իրենց համայնքային կազմակերպութիւններով ղբաղվել են ոչ այնքան ներհամայնքային հարցերով, որքան Հայ հասարակայնութեանը մտահոգող, նրան հուզող հիմնախնդիրներով: Նրանք Հայրենիքին ծառայելու համահայկական գործունեութեան շառավիղ են ունեցել:

Պատմագիտութեան մեջ նկատվող բացը լրացնելու, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների ամբողջական պատմութիւնը շարադրելու համեստ մի փորձ է ընթերցողների դատին ներկայացվող սույն աշխատութիւնը:

Գլուխ առաջին

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ
ՄՈՍԿՎԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

1. Հայերի կապերը Մոսկվայի հետ

Պատմական փաստերը վկայում են, որ հայերը ծանոթ են եղել և բնակվել են Ռուսիայում տակալին թաթար-մոնղոլական արշավանքներից առաջ: Անառարկելի փաստական տվյալներ են պահպանվել XI–XII դդ. հայերի բնակության մասին: Կիևում կար փոքրաքանակ հայ համայնք: Պատահական չէր այդտեղ ռուսական կարևոր մի հուշարձանի՝ «Բորիսի և Գլբբի վարքի» հայերեն թարգմանությունը: Վլադիմիր Մոնոմախ թագավորի օրոք (1113–1125) տեղի ունեցած երկրի վերելքը խթանեց հայ դաղթականների հոսքը և Կիևի համայնքի ձևավորումը: Ակադեմիկոս Մ.Տիխոմիրովը գտնում է, որ դրա համար հիմք է տալիս նաև «Կիև-Պեչորյան հարանց վարքը», որը «վառ կերպով պատմում է հայերի, սիրիացիների, հրեաների և լատինացիների հետ պեչորյան վանականների (կաթոլիկների) ունեցած վեճերի մասին: Ագապիտի մասին ասքը խոսում է հայ բժշկի... և նրա հավատակիցների, ուրեմն մի ամբողջ հայկական դաղութի մասին»¹:

Այդ նույն ժամանակներում հայերը հաստատվել են Ղրիմի թերակղզում: Այդ մասին են վկայում Գրիգոր Լուսավորչին, Հռիփսիմե կուլյսին նվիրված որմնանկարները և

¹ М.Н.Тихомиров, Древнерусские города, Москва, 1956, էջ 293:

այլ փաստեր²: Ն.Կարամզինը նշում է, որ հուլյաները, հայերը, հրեաները, գերմանները, մորավներն ու վենետիկցիները ապրում էին Կիևում և առևտուր էին անում՝ օգտվելով քրիստոնյաների նկատմամբ ռուսների հյուրընկալությունից: Ապա հավելում է, թե Բոլգար քաղաքի ավերակներում, որը 90 կմ հեռավորություն վրա է Կազանից և 9 կմ՝ Վոլգայից, գտնվել է XII դ. հայկական արձանագրություն: Նա դա համարում է հավանական վկայություն այն մասին, որ առևտրի մեջ հռչակված հայերը այդտեղ պարսկական ապրանքները փոխում էին ռուսական մորթու և կաշվի հետ³: Վոլգյան Մեծ Բոլգար քաղաքի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են XI–XII դդ. այդտեղ հայերի բնակվելու հանգամանքը փաստող բազմաթիվ այլ նյութեր⁴:

Մոսկվայի հետ անմիջական կապերը սկսվել են մի փոքր ավելի ուշ: Հայերի՝ Մոսկվայում գտնվելու մասին առաջին հիշատակությունները վերաբերում են XIV դ. երկրորդ կեսին: Ռուսական տարեգրությունը հաղորդում է (1366 թ.), որ Նիժնի Նովգորոդի առաջին տոնավաճառին եկել էին հայ և այլազգի վաճառականներ, որոնք թալանվել

² Տե՛ս Խ.Փոքրեչյան, Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ. – Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1962, 2, Վ.Միքայելյան, Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 5–47:

³ Տե՛ս Н.М.Карамзин, История государства Российского, т. 1–3, Тула, 1990, էջ 477:

⁴ Տե՛ս А.Смирнов, Волжские булгары, Москва, 1951, էջ 185–195, Հ.Մ.Ջանփոլադյան, Բոլգար քաղաքի հայկական հնությունները. – ՊԲՀ, 1971, 2, էջ 191–200: Այդ շրջանի ռուս-հայկական հարաբերությունների մասին տե՛ս նաև Л.Меликсет-Бек, Из истории русско-армянских отношений. – ՀԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1954, 4, էջ 19–29:

էին դեպի Մոսկվա և Նիժնի Նովգորոդ տանող ճանապարհին⁵:

Ինչպես նշում է Ն.Կարամզինը, Մամայ խանը Մոսկվայի վրա արշավելու ժամանակ «տեսնելով, որ ռուսները վեհանձնորեն վճռել են ուժին ուժով դիմակայել», որոշ ժամանակ հապաղում ու ավելացնում է իր զորքի քանակը թաթարներից, պոլովցիներից, թուրքերից, չերկեսներից, Կովկասի հրեաներից, հայերից և Ղրիմի ջենովացիներից, որոնցից ոմանք «նրան ծառայում էին որպես հպատակներ, իսկ մյուսները՝ որպես վարձկաններ»⁶: Հայեր եղել են ոչ միայն Մամայի զորքի մեջ, այլև նրա դեմ դուրս եկած ռուսական բանակում: Ինչպես հայտնի է, այդ արշավանքն ավարտվեց 1380 թ. Կոլիկովյան դաշտում Դմիտրի Դոնսկոյի գլխավորած ռուսական զորքի հաղթանակով:

Թաթար-մոնղոլական լծի թոթափումն էական նշանակութուն ունեցավ Ռուսիայի համար: Մոսկվայի մեծ իշխանութունը իր ձեռքն առավ ռուսական հողերը միավորելու գործը և բռնեց տնտեսական ու քաղաքական զարգացման ուղի: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ հայերը սկսեցին հաստատվել Մոսկվայում և աստիճանաբար ավելի ու ավելի նկատելի դեր կատարել հզորացող այդ իշխանության առևտրատնտեսական կյանքում:

Ռուսական տարեգրութունը հաղորդում է, որ 1390 թ. հունիսի 22-ին Մոսկվայում բռնկված հրդեհը սկսում է տարածվել հայազգի Աբրահամի տնից: Նրա տունը գտնվում էր Կրեմլի շուրջը առաջացած առևտրաարհեստավորական թաղամասում՝ պոսադում⁷:

⁵ Տե՛ս Վ.Ոսկանյան, Հայերը Մոսկվայում 15–17-րդ դարերում. – ՊԲՀ, 1971, 1, էջ 25:

⁶ Տե՛ս Н.М.Карамзин, История государства Российского, т. 4–6, Тула, 1990, էջ 217:

⁷ Տե՛ս И.Забелин, История города Москвы, т. 1, Москва, 1990, էջ 97:

XIV–XV դդ. սահմանագլխին Մոսկվայում հայերի բնակության մասին Մ.Տիխոմիրովը խոսում է ավելի որոշակի՝ հենվելով ռուսական եկեղեցու պատմության դրվագներից մեկում պահպանված մի վկայության վրա: Կիպրիան միտրոպոլիտը, «հայկական աղանդի» կատաղի հակառակորդ լինելով, դժգոհ է եղել ռուսների և հայերի միջև բարեկամական և ամուսնական կապեր հաստատելու փաստից: Նա հրահանգել էր արգելել հայերին աղոթել ռուսական եկեղեցիներում, ամուսնանալ ռուսների հետ, քանի որ նրանք ժամանակին հրաժարվել են ուղղափառություն ընդունելուց: Այդուհանդերձ, ռուսները, նկատում է Մ.Տիխոմիրովը, հաշվի չէին առնում միտրոպոլիտի հրահանգները: «Շարքային ռուս մարդիկ, – գրում է նա, – արդարացիորեն մեծ տարբերություն չէին զգում ուղղափառ և հայկական դավանանքի միջև, հաճույքով շփվում, խնջույք սարքում, բարեկամություն անում ու ամուսնանում էին հայերի հետ, նրանց թույլատրում հաճախել իրենց եկեղեցիները»⁸:

Հիրավի, թեպետ հետագայում ևս շարունակվում էր խոչընդոտների հարուցումը, այնուամենայնիվ միևնույն դավանանքին պատկանելը, քրիստոնյա լինելու հանգամանքը նրանց մերձեցնում էին:

Միջնադարյան Մոսկվայի բնակչության ազգային կազմը բնութագրելիս շատ էական է դառնում քաղաքի առևտրատնտեսական կյանքում մի քանի դար շարունակ նշանակալի դեր կատարած «սուերոժցի հյուրերի» ազգային պատկանելիության հարցի պարզաբանումը: Այդ խնդրին հիմնավորապես անդրադարձել է ակադեմիկոս Լ.Խաչիկյանը⁹:

⁸ М.Н.Тихомиров, Средневековая Москва в XIV–XV веках, Москва, 1957, էջ 216:

⁹ Տե՛ս Լ.Ս.Խաչիկյան, Հայերը Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա. – Նույնի՝ Աշխատություններ, հ. Բ, Երևան, 1999, էջ 200–220:

Մոսկվան կապված էր Ջենովա և Վենետիկ քաղաք-պետությունների հետ: Առևտրատնտեսական այդ կապերը հանգուցավորվում էին Ղրիմում: Թերակղզու ծովահինյա գլխավոր քաղաքներից էին Սուրոժը և Կաֆան: Երկու քաղաքներում էլ հայ հոծ բնակչութուն կար: Մոսկվայում արևելյան ապրանքների (մետաքսե գործվածքներ, համեմունք, թանկարժեք քարեր և այլն) առևտուրը «սուրոժցի հյուր» կամ ուղղակի «սուրոժցի» անվանվող վաճառականների ձեռքում էր: Ռուսական տարեգրության մեջ XVI դ. կեսերին է առաջին անգամ նշվում «սուրոժցի հյուրերի»՝ Մոսկվա ժամանելու մասին: Նրանք օգտվում էին մեծ իրավունքներից, սակայն չէին համարվում Մոսկվայի հիմնական բնակիչ, այլ դիտվում էին որպես դրսից ժամանած վաճառական և այդ պատճառով անվանվում էին «հյուր»: Հետագայում նրանք աստիճանաբար դարձան քաղաքի մշտական բնակիչներ:

Պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել «սուրոժցի հյուրերի» ազգային պատկանելիության մասին: Նրանք դիտվել են որպես ռուս (Մ.Տիխոմիրով), իտալացի (Ի.Ջաբելին), հուլյն (Վ.Միրոյեչկովսկի) կամ ռուս, իտալացի, հուլյն և հայ (Վ.Միքայելյան) վաճառականներ:

Լ.Խաչիկյանը հանգամանորեն վերլուծել է սկզբնաղբյուրների վկայութունները՝ դրանք համադրելով ռուսական տարեգրութունների և այլ աղբյուրների տվյալների, ինչպես նաև պատմաբանների համար կուրսի դարձած հիմնական փաստաթղթերի հետ: Նա ցույց է տվել, որ Կաֆա քաղաքը, բարգավաճելով և բռնելով Սուրոժի տեղը, ինչ-որ ժամանակ սեփականել է նաև նրա անունը: Մոսկվայում հորջորջվող «սուրոժցի հյուր» հասկացութունը վերաբերել է նաև Ղրիմի տարբեր բնակավայրերից, բայց առաջին հերթին և գլխավորապես Կաֆայից եկած վաճառականներին: Նկատի է առել այն հանգամանքը, որ Կաֆայի

Հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը, որոնց ձեռքում էր կենտրոնացված արևելյան առևտրի գերակշիռ մասը: Այս և այլ անուղղակի վկայությունների հիման վրա Լ.Նաչիկյանը հանգում է այն հիմնավոր եզրակացությունը, որ Մոսկվայում արևելյան ապրանքների առևտրով Հայտնի դարձած «սուրժոցիները» հիմնականում եղել են Ղրիմից, մասամբ նաև այլ վայրերից ժամանած Հայ վաճառականները¹⁰:

Նման հիմնավոր եզրակացությունը հիմք է տալիս նշելու, թե ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե Հավաստենք, որ ռուսական մայրաքաղաքում XV դ. Հայ վաճառականներն ակտիվ գործունեություն էին ծավալել: Մանավանդ որ Ռուսաստանի պատմության խոշոր մասնագետներ ակադեմիկոսներ Մ.Տիխոմիրովը և Բ.Գրեկովը գտնում են, որ XV դ. Մոսկվայի առևտրական գործարքներին աշխուժորեն մասնակցում էին Հայ վաճառականները: Նրանք գալիս էին դրսից և հաճախ բնակություն հաստատում այդտեղ¹¹: Ոսկե Հորդայի ներկայացուցիչների հետ Մոսկվա էին գալիս հարյուրավոր վաճառականներ, որոնց թվում նաև Հայեր:

XV դ. երկրորդ կեսից սկսվեց ռուսական ազգային պետության ստեղծման վերընթաց զարգացման ժամանակաշրջանը: Մոսկովյան մեծ իշխանությունը, վերելք ապրելով, դարձավ ազգային պետության կազմավորման հիմքը: Մոսկվայի շուրջը սկսեցին համախմբվել մյուս իշխանությունները, ռուս ժողովրդի մասնատված զանգվածները: Ռուսաստանի ապագա մայրաքաղաքն աստիճանաբար դառ-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 214–219:

¹¹ Տե՛ս М.Тихомиров, Древняя Москва, XII–XV вв., Средневековая Россия на международных путях, XIV–XV вв., Москва, 1992, էջ 117–118, Б.Греков, Крестьяне на Руси, Москва, 1947, էջ 98–99:

հուժ էր համառուսական տնտեսական ու քաղաքական կենտրոն:

Մոսկվայի մեծ իշխան Իվան III-ը (1462–1505) վարում էր ներքին և արտաքին հեռատես ու խելամիտ քաղաքականություն և հզորացնում կենտրոնական իշխանությունը: Նա հաջողությամբ միավորեց կենտրոնական Ռուսաստանի իշխանությունները և, իրավամբ, իրեն հայտարարեց «Համայն Ռուսիայի մեծ իշխան»: Նա բարելավեց հարաբերությունները եվրոպական երկրների, Վատիկանի հետ, ամուսնացավ Բյուզանդիայի կայսերական տան վերջին ներկայացուցիչ Ջոյա Սոֆյա Պալեոլոգի հետ՝ դրանով կարծես թե դառնալով կայսերական գահի օրինական ժառանգորդը:

Ռուսաստանի միավորումն ու հզորացումը զուգակցվում էին թաթարական լուծը թոթափելու պայքարի հետ: Մեծ Հորդայի Ահմադ խանը 1480 թ. իր զորքով մոտեցավ Մոսկվայի մատույցներին և Ուլրա դեստի ափին կանգնեց ռուսական զորքերի դեմ Հանդիման: Մինչ այդ Իվան III-ը կարողացել էր դաշնակիցներ գտնել և կանխել Ղրիմի և ուրիշ խանությունների օգնությունը Ահմադին: Վերջինս համարձակություն չունեցավ կռվի մեջ մտնելու ռուսական զորքերի հետ և նահանջեց՝ դրանով, փաստորեն, ճանաչելով Մոսկովյան իշխանության անկախությունը: Թաթարական տիրապետությունից ազատագրվելը մեծ տպավորություն գործեց Եվրոպայի վրա և մեծապես նպաստեց Ռուսաստանի հզորացմանը: «Ջարմացած Եվրոպան, — գրում է Կ.Մարքսը, — որ Իվան III-ի իշխանության սկզբում նույնիսկ հաղիվ էր նկատում Լիտվայի ու թաթարների միջև սեղմված Մոսկվայի գոյությունը, շժմել էր իր արևելյան



սահմանների վրա հսկայական պետութայան հանդես գալուց»¹²:

Մոսկվան XV դ. վերջերին և XVI դ. սկզբներին դարձել էր աշխարհի շատ երկրների հետ հարաբերվող խոշոր առևտրաարդյունագործական կենտրոն: Մոսկվայի հետ հայերի շփումներն արդեն եզակի չէին: Կոստանդնուպոլսի անկումից հետո արևելասլավոնական քրիստոնյա ժողովուրդները, նրանց շարքում առաջին հերթին հայերը, իրենց հայացքն ուղղում էին դեպի հզորացող Մոսկովյան պետութայան կողմը:

Վաստակաշատ բանասեր Ա.Մնացականյանը գիտական շրջանառութայան մեջ դրեց հայկական մի պոեմ, որում հայ մատենագրութայան մեջ առաջին անգամ հիշատակվում է Մոսկվան¹³: Պոեմի առանցքն են կաղմում Մոսկվայի համեմատությունը աշխարհի նշանավոր քաղաքների հետ և նրա գովերգումն ու մեծարումը: Պոեմը ստեղծվել է XIV–XV դդ. սահմանագլխին և հետագայում մշակվել տարբեր հեղինակների կողմից: Այն, փաստորեն, ժողովրդական ստեղծագործություն է: Կարծում ենք՝ միջնադարյան Հայաստանում պոեմի երևան գալը ճիշտ է մեկնաբանել Ա.Մնացականյանը՝ այն առնչելով Մոսկովյան պետութայան հզորանալու և թաթարական լուծը թոթափելու արձագանքների հետ: Հայաստանում ևս բաղձում էին օտարի ծանր տիրապետությունից ազատագրվել և դրա իրականացումը ակնկալում կամ երազում էին տեսնել թաթարներին հաղթող հզոր Մոսկվայի միջոցով:

Թաթարական լուծը թոթափելուց հետո ուժեղացան Մոսկվայի առևտրական կապերը Ղրիմի, մասնավորապես

¹² К.Маркс, Секретная дипломатия XVIII века (իզվում է ըստ՝ История дипломатии, т.1, Москва, 1959, էջ 261):

¹³ Տե՛ս Ա.Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում. – ՀԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1948, 3, էջ 49–64:

Կաֆա քաղաքի, ինչպես և թերակղզու առևտրական մյուս կենտրոնների հետ: Մոսկվայի հետ կապերի ստեղծմանը նպաստում էին Ռուսաստանի և ուրիշ Հայ Համայնքների վաճառականների արգեն աշխույժ ուղևորությունները: Այդ կապերին մեծապես նպաստում էին նաև տարբեր երկրներից Մոսկվա և այդտեղից այլևայլ երկրներ մեկնող Հայազգի դիվանագետների այցելությունները: Իվան 'III-ի առևտրական գործակալն ու դիվանագետն էր Հայազգի Կակոսը (Կիրակոսը): Նրա միջոցով կապեր էին Հաստատվել Կաֆայի վաճառականների հետ, և բանակցություններ էին վարվում Ղրիմի խան Մենգլի Գիրեյի հետ¹⁴:

1482 թ. Մոսկվայում էր լեհական դեսպան Հայազգի Բոգդանը: Նա եղել էր Թամանի իշխանի, ապա՝ Ղրիմի խանի մոտ: Վերջինս Մոսկվայի հետ դաշինքի մեջ էր և խոստացել էր Իվան III-ի «թշնամիներին թշնամի լինել, բարեկամներին՝ բարեկամ»¹⁵:

Մոսկվայի դերը Հայերի կյանքում ավելի նշանակալի դարձավ Իվան IV-ի օրոք (1547–1584), Հատկապես Կազանի և Աստրախանի խանությունները գրավելուց հետո: Կազանում XVI դ. կային ոչ քիչ թվով Հայ վաճառականներ: 1552 թ. Իվան Ահեղի կողմից քաղաքի պաշարման ժամանակ թաթարները ցանկանում էին նրանց օգտագործել քաղաքի պաշտպանության համար: Տարեգրությունը հաղորդում է, որ Հայերը հրաժարվում էին ռուսների դեմ կռվելուց: Այդ պատճառով Հայերին կապում էին հրանոթներին, իսկ իրենց զինվորները մերկացրած սրերով կանգնում էին նրանց հետևում և հարկադրում կրակել: Սակայն, ինչպես նշվում է տարեգրության մեջ, այդ դեպքում ևս թաթարները հաջողություն չեն ունենում: Հայերը կրակում էին այնպես, որ

¹⁴ Տե՛ս Լ.Ս.Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 216–217:

¹⁵ Տե՛ս Վ.Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 28:

նրանց կրակոցը կամ ռուսներին չէր հասնում, կամ վերջիններիս գլխի վրայով անցնում էր մյուս կողմը¹⁶:

Հաղթանակով վերադարձող Իվան IV-ին դիմավորում են նաև հայերը: Կայսեր հրամանով նրանցից շատերը բնակություն են հաստատում Մոսկվայում: Ի նշանավորումն թաթարների դեմ տարած հաղթանակի և Կազանի խանությունը Ռուսաստանին միացնելու Մոսկվայում 1552–1556 թթ. կառուցվեց «Պոկրովսկի», հետագայում Վասիլի Երանելի անվանված տաճարը: Դրա 9 գմբեթներից մեկը կոչվեց «Գրիգոր Հայի» (Գրիգոր Լուսավորչի) անունով:

Նման վերաբերմունքը, անշուշտ, հայերի ծառայությունները գնահատելու և նրանց սիրաշահելու նպատակով կատարված քայլ էր:

Ն.Կարամզինը, անդրադառնալով Իվան IV-ի օրոք ծավալված առևտրին, նշում է, որ թեպետև կար թուրքական սուլթանի որոշակի թշնամանքը, բայց ռուսները շարունակում էին առևտուր անել Կաֆայում և Ազովում, իսկ թուրքերը և հայերը՝ Մոսկվայում¹⁷:

XVI դ. երկրորդ կեսին ավելի է աշխուժանում հայ վաճառականության գործունեությունը Ռուսաստանի տարբեր կենտրոններում և Մոսկվայում: Աստրախանի խանությունը 1556 թ. Ռուսաստանին միացնելուց հետո ռուսներն ամրացան Կասպից ծովի հյուսիսային ափերին, ինչի շնորհիվ դյուրին դարձան կապերը Անդրկովկասի և Պարսկաստանի հետ: Կասպ-վոլգյան հին մայրուղին շատ ավելի մեծ նշանակություն ստացավ:

¹⁶ Ст'ю К.Н.Григорьян, Из истории русско-армянских литературных и культурных отношений (X – начало XX вв.), Ереван, 1974, էջ 39, История о Казанском царстве. – Казанский летописец, Санкт-Петербург, 1903, էջ 130:

¹⁷ Ст'ю Н.М.Карамзин, История государства Российского, т. 4–6, Тула, 1990, էջ 386:

1584 թ. Հյուսիսում՝ Դվինայի գետաբերանին՝ Սպիտակ ծովի ափին, հիմնադրվում է Արխանգելսկ նավահանգստային քաղաքը: Այդ ձեռնարկումը Ռուսաստանին հնարավորություն էր ընձեռում ծովային ճանապարհով կապվելու Եվրոպայի հետ: Կասպից ծովով ու Վոլգայով դեպի Մոսկվա և ապա Եվրոպա ձգվող առևտրատնտեսական ուղին դարձավ ավելի կենսունակ: Մոսկվայի դերն ավելի մեծացավ հայ վաճառականների և այլ զբաղմունքի տեր մարդկանց համար: Հետին պլան մղվեց Ղրիմ-Մոսկվա առևտրական ուղին:

Ռուսական պետությունը շահագրգռված էր պարսկական մետաքսի ներմուծմամբ, ինչպես և Եվրոպական երկրների հետ դրա առևտրով, որից մաքսային որոշակի եկամուտներ էին ակնկալվում: Այդ պատճառով հայ վաճառականներին, որոնց ձեռքում էր հիմնականում պարսկական մետաքսի ներմուծումը, տալիս էր մեծ իրավունքներ, այդ թվում նաև մաքսային արտոնություններ: Հայ վաճառականները վոլգյան ուղիով աշխույժ առևտուր էին անում, կապվում Մոսկվայի, իսկ մեծածախ առևտրով՝ Եվրոպայի հետ¹⁸:

Բնականաբար ստվարանում էր Մոսկվայի հայ բնակչությունը: Լյուբլանյան հրապարակի մերձակայքում՝ Կիտայ-գորոդում, կար «Հայկական քարվանսարա»: Այդ նույն հրապարակի մոտակայքում՝ Սպիտակ (Белый) քաղաքում, հիշատակություն կա (XVI դ. վերջերին) հայ վաճառականների հատուկ թաղամասի գոյություն մասին¹⁹:

Հայ առևտրական կապիտալն ընդարձակում է իր գործունեությունը շրջանակները: Հայերը շարունակում էին զբաղվել գերազանցապես արևելյան ապրանքների առև-

¹⁸ Стѣ История москвы, т. 1, Период феодализма, XII–XVII вв., Москва, 1952, էջ 574–575:

¹⁹ Стѣ նույն տեղում, էջ 160, 170:

տրով: Առևտրի ծավալի ընդարձակման մասին է խոսում այն փաստը, որ այդ ժամանակ Մոսկվայում՝ Կրեմլի մոտ, արդեն կար առանձնացած հայկական առևտրական տուն՝ քարվանսարա²⁰: Իվան IV-ի ընտանեկան կենցաղի 1582 թ. ցուցակում նշվում են մի շարք հայերի անուններ (Ռոմոզանով, Մարտինով, Մուրատով, Սիմոնով, Ամիրև, Լևոնով և ուրիշներ), որոնք արքունիքին վաճառել են ձիեր, թամբեր և այլ ձիասարքեր²¹: Անգլիայի դեսպան Դ.Ֆլետչերը 1588 թ. գրում է, որ արևելյան երկրների տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց թվում և հայերը, Ռուսաստանից արտահանում են մեծաքանակ՝ մինչև 400–500 հազար ռուբլու մորթեղեն: Նրանք Մոսկվա են ներմուծում մետաքսյա գործվածքեղեն, թանկագին քարեր և այլ ապրանքներ²²:

Հայերն առևտրական լայն դործունեություն էին ծավալել նաև Արևելյան Եվրոպայի երկրներում: Լեհաստանում հայ վաճառականները, օգտվելով ստացած առանձնաշնորհումներից, այն աստիճան էին ամրապնդել իրենց դիրքերը, որ մրցակցություն մեջ նեղում էին տեղի առևտրականներին: Սիգիզմունդ թագավորին Լվով քաղաքից ուղղած բողոքագրում նրանք գրում են. «Հայք այժմ իրենց վաճառականությունն ամբողջ թագաւորութեան մէջ, Բրուսիոյ, Լիթուանիոյ եւ Մոսկուայի մեջ տարածուած են, ուր

²⁰ Տե՛ս Վ.Բ.Բարխուդարյան, Վ.Կ.Ոսկանյան, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, էջ 34:

²¹ Տե՛ս И.Забелин, Домашний быт русских царей в XVI и XVII ст., ч. II, Москва, 1915, էջ 846–869:

²² Տե՛ս Д.Флетчер, О государстве Русском, Санкт-Петербург, 1906, էջ 11–12, 51:

իրենց նախնիք միայն Արեւելքի վաճառականութեամբ գոհ կ'ըլլային»²³:

Հայերի հոսքը դեպի Մոսկվա նկատելիորեն ուժեղանում է XVII դ. առաջին կեսին: Ռուսական մայրաքաղաք էին գալիս ոչ միայն Հայաստանից ու Անդրկովկասի Հայաբնակ վայրերից, այլև Ղրիմից, Աստրախանից և այլ բնակավայրերից: Տարբեր շարժառիթներով գալիս էին ոչ միայն վաճառականներ, այլ նաև տարաբնույթ մասնագիտությունների տեր մարդիկ: Նրանց մի զգալի մասը բնակություն էր հաստատում Մոսկվայում: Այսպես, օրինակ, 1612 թ. Սարգիս Օգանեզովն իր ռուս կնոջ հետ Թուրքիայից գալիս է Մոսկվա և խնդրում մշտական բնակության իրավունք: Նա հայտնում է, որ փախել է ազգային ու կրոնական ճնշումների պատճառով և լսել է, որ Ռուսաստանում հայերին լավ են ընդունում²⁴:

Հայազգի կաթոլիկ կրոնավոր Ավգուստինոս Բաշեցին 1607–1609 թթ. Մոսկվայում էր և հակաթուրքական պայքարին նպաստելու առաքելություն ուներ: Հոռմի պապի նվիրակի հետ Մոսկվայից մեկնում է Եվրոպա²⁵: 1626 թ. մարտի 26-ին մի քանի հայ (Ղազար Կալյուստով, Իվանիս Գրիգորև և ուրիշներ) և այլազգի վաճառականներ վիթխարի արժողության արևելյան ապրանքներ են տանում մայրաքաղաք²⁶: 1641 թ. դեսպանատան ատյանի Հյուրատանը իջևանած հայ (Մուրադը, Սաֆարը, Լուկանոսը) և այլազգի

²³ [Ֆ.]Պիշոֆ, Լեհաստանից հիմ իրատուրը. – Ուսումնասիրութիւնք լեհաստանից դատաստանագրոյն, թարգմանեց Հ. Գրիգորիս վ. Գալէմբեաբեան, Վիեննա, 1890, էջ 36–37:

²⁴ Стен Армяно-русские отношения в XVII веке (сборник документов), под ред. В.Парсамяна, т. 1, Ереван, 1953, док. 2, էջ 4–8:

²⁵ Стен Աւգուստինոսի Բաշեցոյ Ճանապարհորդութիւն յԵւրոպայ. – Նշխարք մատենագրութեան հայոց, ի լոյս եւած Զ.Պ., Ս.Պետերբուրգ, 1884, էջ 5–26:

²⁶ Стен Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 1, էջ 3–4: . .

վաճառականները հայտնում են, որ իրենք եկվորներ են և ուզում են առևտուր անել Մոսկվայում²⁷:

1647 թ. մարտի 14-ի մի խնդրագրից հայտնի է դառնում, որ Զուղայի նշանավոր վաճառականական գերդաստանից Իվան Թավաքալովը Մոսկվա է բերել շատ մեծ գումարի ապրանքներ, և դրանց համար նրանից ավելի մեծ գումարի հարկ է վերցվել: Նկատի չի առնվել այն հանգամանքը, որ նա ուղևորակա է, մասնակցել է Ռուսաստանի պաշտպանութանը, և որ նրա որդիները Մոսկվայում դիվանագիտական ծառայութան մեջ են: Դիմումը հարգվում է, և նրանից հարկ է գանձվում այնքան և այնպես, ինչպես ուղևորից²⁸:

Այսպիսով, ուղևորական պետութան հզորացմանը զուգընթաց ուժեղանում են հետաքրքրությունն ու երթևեկը դեպի այդ երկիրն ու նրա մայրաքաղաքը: Ռուս և այլազգի բնակիչների թվում Մոսկվայի հետ ակտիվ կապեր են հաստատում և սկսում այդտեղ բնակվել նաև հայերը: Բավարար հիմքեր են ստեղծվում այդտեղ հայկական համայնքի ձևավորման համար:

²⁷ Տե՛ս Վ.Բ.Բարխուդարյան, Վ.Կ.Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 35:

²⁸ Տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 3, էջ 8–10:

2. Մոսկվայի հայկական համայնքի ձևավորումը

Հայ-ռուսական հարաբերություններում և Մոսկվայի Հետ Հայերի ունեցած կապերում նոր որակ ստեղծվեց XVII դ. երկրորդ կեսին: Ռուսական պետությունը, 1654 թ. իրեն միացնելով Ուկրաինան, տնտեսապես և ռազմաքաղաքական առումով զորեղացավ, սկսեց ավելի ակտիվորեն արևելյան քաղաքականություն վարել: Ռուսաստանի Հետ Հայերի նախկինում սկսած առևտուրը 1660-ական թթ. նկատելի չափերի է հասնում, նոր որակ ստանում և, որ կարևոր է, իր կենտրոնն է դարձնում հատկապես Մոսկվան:

Հայ վաճառականությունը դեպի Ռուսաստան ուղղություն վերցնելու և իր գործունեությունն այդտեղ ակտիվացնելու բավականաչափ ձեռնտու պայմաններ էր տեսնում: Ռուսաստանում կային առևտրի լայն հնարավորություններ ու նպաստավոր պայմաններ: Երկիրն ուներ հարուստ ու մեծ շուկա, Եվրոպայի ու Ասիայի Հետ կապվելու լավագույն ուղիներ: Այդտեղ չկային այդ դարաշրջանի Թուրքիային ու Պարսկաստանին հատուկ կրոնական ու ազգային ճնշման բիրտ ձևեր: Գոյություն ունեին պետական կարգ ու կանոն, առևտրականի անձի ու նրա սեփականության ասպարհություն: Դրա համար մեծապես նպաստավոր էր նաև միջազգային ասպարեզում ստեղծված իրավիճակը: Արևելքի ու Արևմուտքի միջև առևտուրը, որին աշխույժ մասնակցություն ունեին հայերը, XVI դ. և XVII դ. սկզբներին կատարվում էր Թուրքիայի տարածքով: Հյուսիսային կայսրության շահերը պահանջում էին, որ միջազգային առևտուրը կատարվի ոչ թե Թուրքիայի, այլ


Ռուսաստանի միջոցով: Այդ նպատակով ռուսական արքունիքն ամեն կերպ նպաստում և հովանավորում էր հայ վաճառականներին:

Սակայն Մոսկվան միայն առևտրով զբաղվողներին չէ, որ դեպի իրեն էր ձգում: Ռուսաստանի մայրաքաղաք էին մեկնում, վաճառականներից ու նրանց գործակատարներից բացի, արհեստավորներ, թարգմանիչներ, դիվանագետներ և մտավոր ասպարեզի այլ աշխատողներ, որոնց մի մասը Մոսկվա էր տեղափոխվում Ռուսաստանի հայաշատ կենտրոններից, մյուս մասը՝ Անդրկովկասից ու արտասահմանյան երկրներից: Նրանք ծառայութայն էին անցնում հատկապես որպես թարգմանիչներ և դիվանագիտական աշխատողներ:

Հին Ռուսիայում արտաքին հարաբերություններով զբաղվում էր բոյարական դոման: Պետութայն կապերի ընդլայնման հետևանքով տակավին XVI դ. առաջին կեսին հիմնվեց այդ խնդրով զբաղվող հատուկ մարմին՝ «Պոսոլսկի պրիկազը»: Դրա վարչակազմում ընդգրկված էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, այդ թվում և հայեր՝ որպես տոլմաչներ (թարգմանիչներ), դիվանագիտական ծառայողներ: 1660 թ. Մոսկվա են գնում Նոր Զուղայի նշանավոր վաճառական Զաքար Սահրադյան Շահրիմանյանն ու նրա ընկերները: Նրանք Ալեքսեյ Միխայլովիչ կայսեր (1645–1676) համար տանում են պերճանքի բաղամթիվ առարկաներ, այդ թվում նաև նշանավոր «Ադամանդակուռ գահը», որն այսօր էլ զարդարում է Կրեմլի Զինապալատը: Գահը, որ հայ վարպետները գաղտնի պատրաստել էին խոշա Զաքարի արհեստանոցում և գաղտնի էլ տարել Մոսկվա, դիմացկուն փայտից էր՝ շքեղացված ոսկով, արծաթով ու հազարավոր թանկագին քարերով²⁹: Գահի վրա լատիններեն

²⁹ См. Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 5, т. 21–34: Գահը զարդարված էր 897 ադամանդով, 1298 հակիմքով, 18300 փի-

գրված էր. «Հգորագույն ու անպարտելի Մոսկովյան կայսր Ալեքսեյին՝ երկրի վրա բախտավորությամբ թագավորողին, մեծագույն արվեստով ու եռանդով պատրաստված այս գահը թող լինի նախանշան բախտավոր գալիքի»³⁰: Գահը նվեր



Աղամանդակոտ գահը

տալը և հիշյալ խորհրդավոր մակագրությունը խոստում էին Ռուսաստանի նկատմամբ ունեցած իրական ակնկալիքների, մասնավորապես առևտրական գործունեություն ծավալելու հեռանկարի մասին:

Խոջա Զաքարը Մոսկվայի դեսպանական ատյանում նշում է այն հանգամանքը, որ իր հորը պարսից շահն արտոնություններ ու պարգևներ է տալիս, շահի հրամանով իր հայրն առանց մաքսավճարի է առևտուր անում,

բայց «շահական մեծությունը դավանանքով մահմեդական է, իսկ ինքը և նրանք (ռուսները – Վ.Բ.)՝ քրիստոնյա, դրա համար էլ իրենք ուրախ են... աշխատել ու ծառայել մեծ կայսեր համար»³¹:

Խոջա Զաքարի մյուս նվերը պղնձյա թիթեղի վրա պատկերված «Խորհրդավոր ընթրիք» հորինվածքն էր, որը շատ է դուր գալիս կայսրին: Նա Զաքարին առաջարկում է

րուզով, շուրջ 12 կգ ոսկով և 3,2 կգ արծաթով: Գահի արժեքը վճարվում է նվիրաբերողներին:

³⁰ Տես Վ.Բարխուդարյան, Վ.Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 40–41:

³¹ Տես Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 5, էջ 26:

դրա նկարչին ուղարկել Մոսկվա: Ալեքսեյ Միխայլովիչը պահանջում է արքունիքում ծառայելու համար ուղարկել նաև այլ վարպետներ, ինչպես և պերճանքի առարկաներ, «թանկագին քարեր..., թռչուններ..., որ խոսում են հնդկերեն»³²: Խոսքը Հնդկաստանից բերվող թուխանների մասին է:

Խոջա Ջաքարին արքունիքում ընդունում են հանդիսավորությամբ, հանդիպում կազմակերպում կայսր Ալեքսեյ Միխայլովիչի հետ: Նրան և նրա գործընկերներին տրվում են մեծ քանակությամբ թանկագին սամուլյրի մորթիներ, որոնք պետական մենաշնորհի ապրանքներ էին: Նրան հանդիսավոր ընդունելը դառնում է ավանդույթ:

³² Տես նույն տեղում, էջ 25:

Շատ ուշագրավ է Նոր Ջոտայի Շահրիմանյան տոհմի պատմությունը: Շահրիմանյան գերդաստանի մի մեծ ճյուղը բնակություն հաստատեց Վենետիկում: XVII–XVIII դդ. լայն գործունեություն ծավալեց և ամենուր լայն ճանաչման արժանացավ: Այդ դարաշրջանի իտալական նշանավոր այդ կենտրոնի ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ գիտամշակութային և պետական կյանքը հնարավոր չէ ներկայացնել առանց Շահրիմանյան տոհմի ներկայացուցիչների գործունեությանն անդրադառնալու:

Պակաս ուշագրավ չէ նաև պատմական այն իրողությունը, որ այդ գերդաստանի նշանավոր վաճառականներից մեկը՝ Ջ.Շահրիմանյանը, չգնաց իր ազգակիցների կողմից բացած դեպի Եվրոպա տանող շահավետ ուղիով: Նա բռնեց միանգամայն մոր և անձանոթ, դեպի հյուսիսային երկիրը տանող ուղին: Եվ այն էլ ռուսաց կայսրին հանդիպելու համար մտառկացված այնպիսի անսովոր ու մեծաթափ ձեռնարկով, ինչպիսին քանկարժեք գահի նվիրումն էր: Ինչո՞վ էր պայմանավորված դեպի հյուսիս շրջադարձ կատարելը: Կասպ-վոլգյան առևտրական ուղու տնտեսական նշանակությունը խորապես հասկանալու՞, թե՞ առհասարակ հայոց կյանքում հյուսիսային հզորացող պետության դերն ու նշանակությունը կանխագուշակելու հանգամանքով: Դժվար է ասել: Բոլոր պարագաներում Շահրիմանյան գերդաստանի՝ Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու այդ ձգտումը էական նշանակություն ունեցող և մանրախույզ քննարկման ու լուսաբանման կարոտ հարց է:

Դրանից հետո նշանավոր վաճառականները, հոգևորականները, դիվանագետները, որոնք հանձնարարություններով Մոսկվա էին ժամանում, հանդիսավոր ընդունելության էին արժանանում:

Օգտվելով կողմերի փոխադարձ շահագրգռվածությունից՝ հայ վաճառականները սկսում են ձեռնարկել ավելի խոշոր առևտրական գործարքներ: Հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչներ Ստեփան Ռամադամսկին և Գրիգոր Լուսիկովը, որոնք Մոսկվայում էին 1656–1660 թթ., մեծ չափերի առևտրական գործարքներ են կատարում Հնդկաստանի և Մոսկվայի միջև: 1662–1663 թթ. հայ վաճառականներ Միկիտա Պետրովը, Գրիգոր Սավելևը և Ստեփան Չեխատունովը Հնդկաստանից Մոսկվա են բերում ադամանդյա ոսկյա թաս, ակնակուռ ու ոսկյա գավազան և բազմաթիվ այլ ապրանքներ³³:

Ռուսական արքունիքի կողմից հրաման էր արձակվել Մոսկվայից արտաքսել իրենց առևտրական գործերն ավարտած արևելյան վաճառականներին, որոնք չեն շտապում թողնել քաղաքը: Բացառություն է արվում հայ վաճառականներ Գ.Լուսիկովի, Աֆանասի Իվանովի, Մատվեյ Գրիգորևի և Աբրահամ Կասպարովի համար³⁴: Այդ և համանման փաստերը վկայում են, որ Ռուսաստանի կառավարությունը նպաստում ու քաջալերում էր հայերի առևտուրը Մոսկվայի, ինչպես նաև երկրի մյուս առևտրական կենտրոնների հետ:

1666 թ. Գ.Լուսիկովի և Ս.Ռամադամսկու հետ Մոսկվա են գնում Թիֆլիսի, Ջուղայի, Երևանի, Շամախիի, Ագուլիսի հայ 40 վաճառականներ: Նրանք՝ որպես հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչներ, Յուրի Դոլգորուկովի և ապա Ա.Օրդին-Նաչեզկինի հետ դեսպա-

³³ Տե՛ս Վ.Բարխուդարյան, Վ.Ոսկանյան, ցվ. աշխ., էջ 42:

³⁴ Տե՛ս Մուլյն տեղում, էջ 43:

նական ատյանում բանակցություններ են սկսում: Բանակցություններն ավարտվում են հաջորդ տարում՝ ռուսական արքունիքի և Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության միջև առևտրական պայմանագրի կնքումով:

Հայերը 1667 թ. մայիսի 31-ին ստանում են ցարական շնորհագիրը, և հաստատվում է պայմանագիրը³⁵ (վերահաստատվում է 1673 թ. փետրվարի 7-ին³⁶): Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերությունը և, փաստորեն, բոլոր հայ վաճառականներն իրավունք են ստանում վոլգայան մայրուղով տարանցիկ առևտուր անելու Ասիայի ու Եվրոպայի երկրների հետ՝ վճարելով փոքր մաքս՝ ապրանքի արժեքի 5 տոկոսի չափով: Օտարերկրյա վաճառականներից, որոնց տարանցիկ առևտրի իրավունք չէր տրվում, գանձվում էր 10 տոկոս³⁷: Հարկ է նշել, որ տարանցիկ առևտրի իրավունք XVII դ. չէին ստացել աշխարհի և ոչ մի երկրի վաճառականներ, չնայած Անգլիան, Հոլանդիան, Փրանսիան ջանքեր էին գործադրել այդ ուղղությամբ և ձեռնտու առաջարկներ արել: Հատկանշական է, որ այդ արտոնությունները, որոնք շահութաբեր էին նաև հենց Ռուսաստանի համար, ուժի մեջ մնացին բավական երկար ժամանակ:

Մոսկվա մեկնած հայերը, առևտրից բացի, շփվում էին տեղի հայերի հետ, զբաղվում Ռուսաստանի հետ քաղաքական կապերի հաստատման և, որ գլխավորն է, Հայաստանի ազատագրման հարցերով:

³⁵ Ст'у Полное собрание законов Российской империи (ПСЗ), т. 1, с 1649 по 1675, Санкт-Петербург, 1830, էջ 692, В.Восканян, Ново-торговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г. — ՀԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1947, 6, էջ 29—43, Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 10, էջ 44—64:

³⁶ Ст'у Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 29, էջ 110—113:

³⁷ Ст'у ПСЗ, т. 1, док. 409, 514, 539:

Հետաքրքիր և ուշագրավ է, որ ռուսական արքունիքի Հետ Հարաբերվող Հայերը սոսկ իրենց առևտրական գործերով չէին մտահոգվում: Նրանք հոգ էին տանում և փորձում ինչ-որ ձևով կողմնորոշել և ուղղութուն տալ ուրիշ երկրներում ծվարած հայությանը: Մոսկվայում գտնվող Հայ առևտրական ընկերութան ներկայացուցիչները քառասուն Հայերի ստորագրութամբ նամակ են ուղարկում Կ.Պոլսի Հայերին, որում հաղորդում էին ռուսաց կայսեր շնորհած արտոնութունների մասին և խորհուրդ տալիս եկեղեցիներում պատարագ անել: Նրանք հորդորում են հայրենակիցներին ամեն կերպ օգնել Կ.Պոլիս մեկնող ռուսական դեսպանությանը, որը գլխավորում էր դեսպանական ատյանի ղեկավար, Հայերի բարեկամ և հակաթուրքական լիգայի կողմնակից Ա.Օրդին-Նաչչոկինը: Նամակի հեղինակները շեշտում են վերջինիս դերը Հայերին տրված արտոնութունների գործում: Նրանք նշում են, որ Ռուսաստանի կառավարութան և Ա.Օրդին-Նաչչոկինի բարյացակամության մասին բանավոր կհայտնի դեսպանության կազմում գտնվող Հայազգի Վասիլի Դաուդովը³⁸:

Մոսկվա մեկնած Հայերը պայմանագիրը կնքելուց հետո դիմում են արքունիք և խնդրում բարելավել ճանապարհները, ապահովել դրանց անվտանգութունը, կառուցել քարվանսարաններ, շենքեր ու եկեղեցիներ կամ թուլատրել օգտվել ռուսական եկեղեցիներից³⁹: Դրանք անհրաժեշտ էին մայրաքաղաքում հայերի հաստատվելը դյուրացնելու համար, որպեսզի հնարավորութունն ունենան աղոթիլու, մկրտելու նորածիններին, հուղարկավորելու մահացածներին և այլն:

Հայ վաճառականները և հատկապես նրանցից առաջատարները՝ Գ.Լուսիկովը և Ս.Ռամադամսկին, նկատելի

³⁸ Տե՛ս Վ.Ոսկանյան, ԳՂՎ. աշխ., էջ 35:

³⁹ Տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 9, էջ 43:

դեր կատարեցին Մոսկվայում բնակութունն հաստատած և Մոսկվայի հետ կապված հայերի կյանքում: Բանակցութուններ ժամանակ Գ.Լուսիկովն արքունիքի ներկայացուցիչներին համոզում էր վոլգյան ուղու վրա կառուցել ամրոցներ, իջևանատներ, հարկադրել լեռնային իշխաններին բարյացակամորեն վարվել հայ ուղևորների հետ: Ինչպես նաև թուլյատրել, որ ցանկացած հայ կարողանա գալ և բնակվել ռուսական քաղաքներում⁴⁰:

Գ.Լուսիկովը 1671 թ. Ալեքսեյ Միխայլովիչ կայսրին հայտնում է, որ Պարսկաստանում կա 8 հազար հակ, այսինքն՝ 48 հազար փութ մետաքս, որն ամբողջությամբ կարող են առաքել Ռուսաստան⁴¹: Մի քանի տարի անց՝ 1673 թ. փետրվարի 7-ին, նա, Ավետարանի վրա երդվելով, հայկական առևտրական ընկերության անունից ռուսական արքունիքին հավաստում է, որ Պարսկաստան եկած օտարերկրացիներին իրենք մետաքս չեն վաճառի, այլ Մոսկվայի միջոցով կարտահանեն Ռուսաստան⁴²:

Հետագայում՝ 1710 թ., Պետրոս I-ը պարսիկների և Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության հետ համաձայնություն է կնքում, որով հայ առևտրականները պարտավորություն են ստանձնում պարսկական մետաքսը վաճառքի հանելու միայն Ռուսաստանում: Նա թեթևացնում է սահմանված մաքսը և տալիս ազատ երթևեկելու իրավունք⁴³: Մետաքսի առևտուրը կարգավորելու համար ռուսաց կայսրը Պարսկաստան է ուղարկում փոխգնդապետ Ա.Վոլինսկու պատվիրակությանը: Նրան տված հանձնարարականում Պետրոս I-ը նշում է, որ նա շահին համոզի, որպեսզի վերջինս իր հպատակ ջուղայեցի հայերին կարգա-

⁴⁰ Տե՛ս Վ.Ոսկանյան, նշվ. աշխ., էջ 37:

⁴¹ Տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 16, էջ 71:

⁴² Տե՛ս նույն տեղում, վավ. 30, էջ 113–114:

⁴³ Տե՛ս П.Г.Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, Санкт-Петербург, 1869, էջ 4:

դրի մետաքսի առևտուրը կատարել Ռուսաստանում, որից նրանք մեծապես կօգտվեն ճանապարհի մոտիկուլթյան և անվտանգուլթյան շնորհիվ⁴⁴:

Պետրոս I-ը Ռուսաստանի հետ է կապում նաև Զմյուռնիայի հայ առևտրականներին: Նրանցից Պետրոս Աբրոյին և նրա երկու եղբայրներին, որոնք առևտրական կապեր ունեին Հնդկաստանի, Թուրքիայի և եվրոպական երկրների հետ, հենց Ամստերդամում եղած ժամանակ արտոնում է վոլգյան ուղիով մետաքս և այլ ապրանքներ արտահանել Մոսկվա, Պետերբուրգ և պատվիրում, որ մաքսերից բացի՝ նրանց առաջ այլ պահանջներ չլինեն⁴⁵:

Այսպիսով, հայ վաճառականները գերակշիռ դեր ունեին Պարսկաստանից վոլգյան ուղիով Ռուսաստան և առաջին հերթին Մոսկվա մետաքս և արևելյան այլ ապրանքներ արտահանելու գործում: Նրանցից շատերը վրադվում էին տարանցիկ առևտրով, Մոսկվայից անցնում էին Լեհաստան, Շվեյցարիա, Հոլանդիա և եվրոպական այլ երկրներ և այդ երկրներից մոսկովյան ուղիով տարբեր ապրանքներ ներմուծում Ռուսաստան: Նրանց մեծ մասը Ռուսաստանի քաղաքացի էին: Սակայն քիչ էին նաև ուսաստանաբնակ հայ վաճառականները, որոնց մի մասն աստիճանաբար խարխիս էր գցում և բնակուլթյուն հաստատում առևտրական գործունեուլթյան համար հանգուլց դարձած Մոսկվայում:

Ռուսական պետուլթյունը շահագրգռուլած էր ոչ միայն մետաքսի ներմուծումով, այլ նաև տեղում շերամապահուլթյուն արմատավորելուլ՝ սեփական մետաքսագործու-

⁴⁴ St'ն Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. 2, ч. I, Ереван, 1964, էջ 33:

⁴⁵ St'ն նույն տեղում, էջ 105–107, Ա. Պետրոսյան, Հայերի դերը Ռուսաստանում մետաքսի առևտրի և շերամապահուլթյան զարգացման գործում XVII–XVIII դդ. – Բանբեր Երևանի համալսարանի, 1974, 2, էջ 260:

Թյունը զարգացնելով: Այդ նպատակով խրախուսում, արտոնություններ էր տալիս արտադրութայն այդ ճյուղով զբաղվողներին: Այդ ասպարեզում ևս հայերը առաջնային դիրքերում էին, քանի որ նրանք Պարսկաստանում լավ ծանոթ էին շերամապահությանը: Այդ գործով զբաղվելու համար Պարսկաստանից, Թուրքիայից սկսեցին Ռուսաստան գալ շատ հայ մասնագետներ:

«Պոսոլսկի պրիկազում» թարգմանիչ աշխատող Դառուգովի որդի Վասիլի Դառուգովը խնդրում է Ալեքսեյ Միխայլովիչից, որ Թուլյատրի իր երկու եղբայրներին Պարսկաստանից գալ Աստրախան և այնտեղից ցամաքային կամ ջրային ուղիով հասնել Մոսկվա և զբաղվել գորգագործությամբ ու մետաքսագործությամբ: Ալեքսեյ Միխայլովիչը 1668 թ. հանձնարարում է ընդառաջել այդ խնդրանքին և նպաստել, որ նրանք գան և հաստատվեն Մոսկվայում⁴⁶:

Մետաքսագործության առաջին փորձերը եղել էին Աստրախանում, բայց այն մեծ ծավալներ չընդունեց և չէր կարող սպասվող պահանջները թեկուզ ինչ-որ չափով բավարարել: 1665 թ. Մոսկվայում այդ գործը ձեռնարկեցին մետաքսի մշակման մասնագետ Լարիոն Լգովը և ուրիշներ, բայց Մոսկվայի կլիման հարմար չէր թթենիներ աճեցնելու համար⁴⁷: Հետագայում՝ ամբողջ XVIII դ., Ռուսաստանի կառավարությունն ավելի ուժեղացրեց շերամապահությանն ու մետաքսի մշակմանը հետևելը և այդ գործով զբաղվողներին խրախուսելը:

Իրավացի են Մոսկվա քաղաքի պատմության հեղինակները, երբ հավաստում են, թե հայերի ձեռքում էր ոչ միայն Պարսկաստանից մետաքս ներմուծելը, այլ նաև Ռուսաստանում մետաքսագործությունն արմատավորելու գոր-

⁴⁶ См. Армано-русские отношения в XVII веке, т. 1, док. 14, т. 66–69, У. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 261:

⁴⁷ См. История Москвы, т. 1, էջ 575:

ծր: Համոզվելով, որ երկրի Հյուսիսային շրջաններում կլիման աննպաստ է շերամապահության համար, հայերը սկսեցին Հարավային Ռուսաստանում զբաղվել մետաքսի արտադրությամբ և որոշակի հաջողությունների հասան: Հյուսիսային Կովկասի, Նոր Նախիջևանի հայկական գաղութներն այդ ասպարեղում աչքի էին ընկնում իրենց արդյունավետ գործունեությամբ: Բավական է նշել, որ 1730-ական թթ. Ղզլար քաղաքն իր շրջակայքով տարեկան տալիս էր 400 փուլթ մետաքս: Մեկ հարյուրամյակ անց արտադրության քանակը ոչ միայն չպակասեց, այլև աճեց՝ 1835 թ. հասնելով 500 փթի⁴⁸: Այդ նույն ժամանակ՝ 1830 թ., Նոր Նախիջևանի հայկական գաղութն ուներ վիթխարի ծավալի ավելի քան 70 դեսյատինի հասնող թթենու այգի⁴⁹:

Ռուսաստանը և առաջին հերթին աստիճանաբար առևտրի, արտադրության և մշակույթի կենտրոն դարձող Մոսկվան դեպի իրենց էին ձգում նաև արտադրության մյուս ճյուղերի մասնագետներին: Երբ Ջ.Շահրիմանյանը 1660 թ. Ալեքսեյ Միխայլովիչին մատուցեց նշանավոր գահը, կայսրը, ինչպես արդեն նշվել է, ցանկություն հայտնեց, որ հայազգի արվեստագետներ, վարպետներ ուղարկեն Մոսկվա արքունիքում աշխատելու համար: Չաքարը իր և իր հոր՝ Սահրադ Շահրիմանյանի անունից խոստացավ կատարել այդ խնդրանքը: Մի քանի տարի անց Մոսկվա մեկնեցին և քաղաքի բնակիչ դարձան մի խումբ հայեր՝ սեկագործ վարպետ Հայրապետ Մարտինովը, նկարիչ Բոգդան Սալթանովը և շատ ուրիշներ⁵⁰:

Վարպետ Հ.Մարտինովը 1666 թ. հիմնում է սեկի արտադրություն: Այն ձեռքի աշխատանքի վրա հիմնված

⁴⁸ Տե՛ս Ա.Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 264:

⁴⁹ Տե՛ս Վ.Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861), Երևան, 1967, էջ 147:

⁵⁰ Տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 9, էջ 42–44,

պարզունակ արհեստանոց էր, որն արքունիքի սեփականու-
թյունն էր համարվում և սպասարկում էր նրան: Սեկի ար-
տադրությունը տևում է ընդամենը 6 տարի և փակվում,
քանի որ արտադրանքի որակը ցածր էր, ինքնարժեքը՝
բարձր, պահանջարկը՝ սակավ⁵¹:

Բ.Սալթանովը եկել էր Նոր Զուղայից արդեն որպես
ձևավորված նկարիչ և գրագետ անձնավորություն: Նա
1660 թ. Զ.Շահրիմանյանի կողմից կայսերը նվիրված
պղնձյա թիթեղի վրա պատկերված «Նորհրդավոր ընթրիք»
հորինվածքի հեղինակն էր, որին կայսրը հրավիրել էր
Մոսկվա⁵²: Ալեքսեյ Միխայլովիչը գեղանկարչու-
թյան սիրա-
հար էր, ուստի և հովանավորում էր նկարիչներին: Արքու-
նիքում կային գերմանացի, լեհ, հույն, պարսիկ և այլ ազ-
գության մի քանի տասնյակի հասնող նկարիչներ, կիրա-
ռական արվեստի մասնագետներ: Այդտեղ էլ աշխատանքի
է ընդունվում Բ.Սալթանովը: Կայսեր 1667 թ. հունիսի 15-ի
հրամանով նա աշխատանքի է անցնում Զինապալատում⁵³:
Վերջինս ստեղծվել էր մինչ այդ գոյություն ունեցող
«Օրոժեյնի պրիկազի» հիմքի վրա, որի խնդիրը արքու-
նիքի զենքերի պահպանումն էր: Արքունիքին առընթեր
Զինապալատում պահպանվում էին արդեն ոչ միայն զեն-
քեր, այլ նաև նկարներ, զարդեր և թանկարժեք այլ իրեր:
Այդտեղ մասնագետների աշխատանքի համար կային սեն-
յակներ, արհեստանոցներ և անհրաժեշտ այլ հարմարու-
թյուններ:

Բ.Սալթանովը շուտով դարձավ Զինապալատի գլխա-
վոր նկարիչը: Արտասովոր ընդունակությունների, բացա-
ռիկ աշխատասիրության և ստեղծված նպաստավոր պայ-

⁵¹ Стен История Москвы, т. 1, էջ 574–575:

⁵² Стен Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 7, 8, էջ 41, 42:

⁵³ Стен նույն տեղում, վավ. 11, էջ 64–65: Նկարչի մասին տես Կ.Ն.Գրի-
горьян, նշվ. աշխ., էջ 71, Н.Молева, Иван Салтанов и его школа. –
Լրաբեր հասարակական գիտությունների (ԼՀԳ), 1977, 10, էջ 73–89:

մանների շնորհիվ նա համընդհանուր ճանաչման արժանացավ և դարձավ իր ժամանակի ռուսական գեղանկարչության ամենանշանավոր դեմքերից մեկը⁵⁴։ Նա վիթխարի ծառայություն մատուցեց ռուսական արվեստին, բերեց նոր ութարմ երանգ։ Շատ երկար՝ ավելի քան երեք ու կես տասնամյակ աշխատեց Ջինապալատում և պատրաստեց բազմաթիվ ռուս գեղանկարիչներ։ Ակադեմիկոս Ա.Ուսպենսկին Բ.Սալթանովի մասին գրել է. «Մենք գովելի անվամբ, խորին շնորհակալությամբ ու հարգանքով ենք հիշում նկարչին, որը թողեց հայրենական տունը՝ Ռուսաստանում ռուսական նկարչության վերածննդի ու արմատավորման համար։ Նա առաջինը ռուսական արվեստը դուրս բերեց սրբանկարչության կանոններով կաղապարված նեղ շրջանակից դեպի աշխարհիկ արվեստի ասպարեզ՝ նրա մեջ ներարկելով թարմ ու կենսաբեր շիթ, հսկայական օգուտ բերելով ռուսական արվեստին»⁵⁵։ Նրա ստեղծագործական հարուստ կյանքը XVII դ. երկրորդ կեսի ռուս-հայկական մշակութային կապերի ուշագրավ էջերից է։ Բ.Սալթանովը միաժամանակ դարձավ հայկական համայնքի նշանավոր դեմքերից մեկը։

Միջազգային դրուժյունը մեծ փոփոխություններ կրեց XVII դ. երկրորդ կեսին, մասնավորապես դարի վերջին երեսնամյակում։ Արևելյան Եվրոպայի երկրներն արդեն հաղթանակ էին տանում և ազատագրվում թուրքական գերիշխանությունից։ Այդ հանգամանքը, Ռուսաստանի զորեղացումը և Անդրկովկասում խարիսխ գցելու նրա ձգտումները բարերար ազդեցություն էին ունենում երկրամասի ժողովուրդների քաղաքական կողմնորոշման հարցում։ Վրացիներն ու հայերը ազատագրական իրենց հայացքն ուղղում և հույսեր էին կապում Ռուսաստանի հետ։

⁵⁴ Ст'ю История Москвы, т. 1, էջ 576–577:

⁵⁵ А.И.Успенский, Царские иконописцы и живописцы XVII в., т. 2, Москва, 1910, էջ 245:

էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցին և Գանձասարի կաթողիկոս Պետրոսը գիմումներ էին ուղղում ուսաց կայսրին: Հ.Զուղայեցու գլխավորությամբ 1678 թ. էջմիածնի Հայ ավագանու գաղտնի ժողովը Հատուկ բանագնացներ է ուղարկում ուսաց կայսեր մոտ⁵⁶:

Քաղաքական կողմնորոշումը, ինչպես նաև պետության ընձեռած հնարավորությունները նպաստավոր դաշտ էին ստեղծում և առավել աշխուժացնում Ռուսաստանի և առաջին հերթին Մոսկվայի հետ ունեցած առևտրատնտեսական կապերը: Պատկերացում կազմելու համար հիշատակենք միայն 1670–1680-ական թթ. Մոսկվայում հայերի առևտրական գործունեության մասին որոշ տվյալներ: Զ.Շահրիմանյանը 1673 թ. ուսաց կայսրին է ուղարկում ավելի քան 3 հազար շարան մարգարիտ, բազմաթիվ զարդեր, գորգեր և այլ թանկարժեք իրեր⁵⁷: 1675 թ. Մոսկվա են գնում մի խումբ հայ վաճառականներ, որոնց տարած ապրանքների արժեքը կազմում էր 50 հազար ռուբլի: Այդ գումարը Հավասար էր Սմոլենսկ քաղաքի մեկ տարվա առևտրական շրջանառությանը: Նույն տարում Հակոբ Պողոսովը և նրա ընկերները Մոսկվա են տանում մեծ քանակությամբ մետաքս և այլ ապրանքներ⁵⁸: 1684 թ. Յաղուբ Գրիգորը Մոսկվայից Պարսկաստան է տանում մեծ քանակությամբ գործվածքեղեն, մորթեղեն, 60 հազար ասեղ և այլ իրեր⁵⁹: 1685 թ. Հուլիսին Դավիդ Բագրամովը և Պիրյա Դավիդովը Մոսկվայից Պարսկաստան են ուղարկում 5143 արշին մահուդ, դեղորայք, մուշտակներ և բազմատեսակ այլ ապրանքներ⁶⁰: 1688 թ. Անուշ Վարդանովը և Սաֆար Վա-

⁵⁶ Стѹ Г.Эзов, Сношения Петра Великого с армянским народом, Санкт-Петербург, 1898, док. 6, էջ 17:

⁵⁷ Стѹ Армяно-русские отношения в XVII веке, т. 1, док. 28, էջ 99–100:

⁵⁸ Стѹ նույն տեղում, վավ. 32, էջ 117–124:

⁵⁹ Стѹ նույն տեղում, վավ. 55, էջ 171:

⁶⁰ Стѹ նույն տեղում, վավ. 60, էջ 178–179:

սիւլքը Շվեդիայից Մոսկվա են տանում 9 հազար արջին մահուդ, 40 հազար ասեղ, բազմապիսի մեծաքանակ այլ ասրանքներ⁶¹:

Մոսկվայի հետ հայերի առևտրատնտեսական գործունեությունը աշխուժորեն ծավալվում էր նաև XVII դ. վերջին տասնամյակում⁶²:

Այս և այլ կապերի շնորհիվ, բնականաբար, Մոսկվայում բնակություն հաստատող հայերի թվաքանակն աստիճանաբար աճում էր:

Պետրոս Մեծի ժամանակաշրջանում (1689–1725) ռուս–հայկական հարաբերությունները, հատկապես քաղաքական բնույթ կրող շփումները աշխուժացան: Դրան մեծապես նպաստեցին XVIII դ. արշալույսին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Խորայեղ Օրու՝ Մոսկվա այցելելը և բանակցությունները Պետրոս I-ի ու ռուսական պետության բարձրաստիճան գործիչների հետ: 1711 թ. հրապարակվեց սենատի հրամանագիրը հայերի նկատմամբ ուշադիր լինելու և Ռուսաստանում նրանց բնակություն հաստատելը դյուրացնելու վերաբերյալ: 1723 թ. հունիսի 3-ին Պետրոս Մեծը հատուկ ցուցում էր արել քրիստոնյաներին Ռուսաստան հրավիրելու և հայերին իր հովանավորության տակ վերցնելու մասին⁶³: Պետականորեն նման հնարավորություններ ընձեռելու հետևանքն այն եղավ, որ հայ բնակչությունը սկսեց ստվարանալ Ռուսաստանում, այդ թվում նաև Մոսկվայում: Դրան նպաստեց նաև Պետրոս I-ի կողմից Նևայի ափին նոր քաղաք հիմնելու հանգամանքը:

* * *

Սովորաբար գաղութ, գաղթօջախ կամ համայնք հասկացությունն օգտագործվում է որևէ օտար երկրում, ուրիշ

⁶¹ Տե՛ս նույն տեղում, վավ. 72, էջ 196–197:

⁶² Տե՛ս նույն տեղում, վավ. 77–96, էջ 201–246:

⁶³ Տե՛ս Դ.Յոս, նշվ. աշխ., վավ. 229, էջ 354–356:

ժողովրդի միջավայրում այլ ժողովրդի մի խումբ կամ զանգված բնակվելու պարագայում: Հաճախ նկատի չի առնվում այն հանգամանքը, որ նրանք օտար միջավայրում կարող են մեկուսի կյանքով ապրել և վարքով ու բարքով, ազգային սովորություններով իրար հետ կապված չլինել: Նման պարագաներում, որպես կանոն, նրանք կորցնում են սեփական լեզուն, ազգային մյուս հատկանիշները և նոր բնակավայրում ձուլվում հյուրընկալ ժողովրդին: Համանման դեպքերում հիմքեր չկան օտար երկրում բնակություն հաստատած թեկուզև ատվար զանգվածի վերաբերյալ օգտագործելու «գաղութ» կամ «համայնք» հասկացությունը, որով պատմագիտություն մեջ ըմբռնվում է օտար երկրներում հաստատված որևէ ժողովրդի այն զանգվածը, որը նոր միջավայրում ապրում է համախումբ, համայնքային կյանքով և պահպանում մայրենի լեզուն, դավանանքը, ազգային սովորությունները կամ այդ հատկանիշների մի մասը: Ուրիշ խոսքով, երբ այդ զանգվածը օտար միջավայրում պահպանում է ազգային նկարագիրը և իր հատկանիշներով ու համապարփակ կյանքով առանձնանում իրեն ընդունող, հյուրընկալ ժողովրդից:

Սակայն ի՞նչ գործոններ են անհրաժեշտ, որ կարողանանք հավաստել այս կամ այն համայնքի ձևավորման, նրա գոյություն փաստը: Դա առաջին հերթին Մայր Հայրենիքի հետ լեզվի և դավանանքի ընդհանրություն պահպանումն է: Այսինքն՝ եթե օտար երկրում բնակություն հաստատած զանգվածն այն աստիճան համախմբված և ազգային ոգով է ապրում, որ պահանջ է զգում և իր դավանանքն ու ավանդությունները պահպանելու համար կառուցում է եկեղեցի, բացում է մայրենի լեզվով դպրոց, վստահորեն կարելի է խոսել համայնքի գոյավորման մասին: Հետևաբար, մայրենի լեզվի ու դավանանքի պահպանումն է առաջին հերթին մարմնավորում ազգային կեցությունը, ինքնությունը, համայնքի առկայությունը:


Ինչպես արդեն նշվեց, Մոսկվայի հայ բնակիչները ստվարանում և առևտրատնտեսական կյանքով իրար հետ



Մոսկվայի Ս.Խաչ հայկական եկեղեցին (1883 թ. լուսանկար)

*կապված էին, սեփական դավանանքն ու ազգային սովորու-
թյունները պահպանելու համար պահանջ էին դրում եկե-
ղեցի ունենալու: Լազարյանների հովանավորությամբ
1770-ական թթ. Ստոլոպովի նրբանցքի տարածքում նշանա-*

վոր ճարտարապետ Յուրի Ֆելտենի⁶⁴ նախագծով կառուցվեց Ս.Խաչ եկեղեցին, որը վերակառուցվեց 1820-ական թթ. (ճարտարապետ՝ Ի.Պրոստակով, քանդակագործ՝ Ի.Վիտալի) և 1858 թ. (ճարտարապետ՝ Դ.Կորիցկի): Եկեղեցու գործելու ժամանակվանից այդ թաղամասը, փաստորեն, դարձավ Հայ Համայնքի կենտրոնը: Քանի որ տարիներ անց այդտեղ կառուցվեց Լազարյան ճեմարանը, թաղամասը հետագայում ևս պահպանեց Հայկական կենտրոնի իր բնույթը: Ստույգորեն նրբանցքն այդ ժամանակվանից կոչվեց Արմյանսկի (Հայկական) նրբանցք: Ս.Խաչ եկեղեցին խորհրդային իշխանության ներկայանալիս կողմից քանդվեց 1930-ական թթ.:



Մոսկվայի Ս.Աստվածածին հայկ. եկեղեցին

Լազարյանները կարողացան վերցնել Վազանկոյան գերեզմանատան մի մասը և այդտեղ XVIII դ. վերջին կառուցեցին Ս.Հարություն եկեղեցին, որը Մոսկվայում ցարդ պահպանված միակ Հայկական եկեղեցին է:

Հայ Համայնքը միավորող հոգևոր այդ հաստատությունները քանի որ կյանքի էին կոչվել գերազանցապես Լազարյանների կողմից, նրանք էլ հոգ էին տանում դրանց պահպանման և իրենց նպատակին ծառայեցնելու մասին: Ռուսահայ թեմի նոր առաջնորդ արքեպիսկոպոս Եփրեմի հրամանով 1800 թ. Մոսկվայի Հայկական Համայնքում

⁶⁴ Յու.Մ.Ֆելտենը (1730–1801) ուսումնասիրել է ճարտարապետությունը, որուսական կլասիցիզմի վաղ շրջանի ներկայացուցիչ: 1754 թ. սկսում է աշխատել հռչակավոր Վ.Ռաստրեյիի հետ և Չմեռային պալատի կառուցման գործում դառնում նրա հիմնական օգնականներից մեկը: Հեղինակ է Ամառային այգու նշանավոր պարսպի և այլ գործերի: 1789–1794 թթ. ղեկավարել է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան:

հիմնվում է հոգևոր կառավարչություն, և Մինաս Լաղարյանը կարգվում է քաղաքի հայկական եկեղեցիների հոգաբարձու⁶⁵: Վերջինս, համոզվելով, որ եկեղեցիներում կարգու կանոնը պատշաճ ձևով չի պահպանվում, 13 կետից բաղկացած հատուկ կարգադրությամբ սահմանում է հոգևորա-



Մոսկվայի Ս.Հարություն հայկական եկեղեցին

կանների պարտականությունները, ճշգրտում տնտեսական հարցերի և գործավարության ստույգ կարգը⁶⁶: Հետագայում՝ Մինաս և Հովակիմ Լաղարյանների մահից հետո, նույն հետևողականությամբ եկեղեցիների գործունեությունը հետևում էին այդ նույն գերդաստանի հաջորդ սերունդների ներկայացուցիչները:

⁶⁵ Տե՛ս Центральный исторический архив Москвы (ЦИАМ), ф. 2050, оп. 1, д. 45, л. 1–2:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 51, ք. 4–5:

3. Պետերբուրգի հայկական համայնքի ձևավորումը

Հայտնի է, որ Սանկտ Պետերբուրգի տարածքը աշխարհագրական հարմար դիրք ունենալու շնորհիվ դեռևս միջին դարերից եղել է պայքարի վայր: Սկզբնապես՝ IX–X դդ., պատկանում էր նովգորոդցիներին: Հետագայում՝ XIII–XVII դդ., այդ երկրամասը եղել է շվեդների և գերմանացիների պայքարի առարկան: Ի վերջո, շվեդներին հաջողվել է գրավել այդ տարածքների մի զգալի մասը և ամրանալ այդտեղ:

Ռուս-շվեդական քսանամյա կամ Հյուսիսային պատերազմի սկզբնական փուլում՝ 1703 թ., ռուսներին հաջողվեց գրավել Նևայի գետաբերանը և ամուր հաստատվել Բալթիկ ծովի ափին: Գետաբերանի կղզիներից մեկում Պետրոս Մեծը հիմնեց Պետրոպավլովյան ամրոցը: Նույն՝ 1703 թ. սկսվեց քաղաքի կառուցումը: Առաջին կառույցներից էին Կրոնշտադ և Ադմիրալտեյսկայա ամրոցները: Սկզբնական տարիների շինությունները երևան են գալիս Պետրոգրադյան և Վասիլևյան կղզիներում:

Պետերբուրգի հիմնադրումով ավարտվում է Բալթիկ ծով դուրս գալու Ռուսաստանի դարավոր պայքարը: Պետրոս Մեծը ճիշտ էր բնորոշել ապագա քաղաքի հեռանկարները: Ֆիննական ծոցից Բալթիկ ծովով ճանապարհ էր բացվում դեպի Եվրոպա, իսկ Նևայով՝ դեպի Ռուսաստանի կենտրոնները, մանավանդ, երբ հատուկ ջրանցքով կապվեց Վոլգայի հետ:

Պետերբուրգը 1712 թ. դարձավ Ռուսաստանի մայրաքաղաքը: Այդ հանգամանքը վճռական նշանակություն

ուենեցավ քաղաքի կառուցապատման ու բարգավաճման համար: Կայսեր հրամանով 1714 թ. արգելվում է մյուս քաղաքներում քարե շենքեր կառուցելը, և քարագործ վարպետները տեղափոխվում են նոր մայրաքաղաքի շինարարական հրապարակները: Միաժամանակ քաղաքում բնակություն են հաստատում տարբեր մասնագիտության 300 վարպետ, 350 ազնվական և 300 վաճառական: 1717 թ. Պետերբուրգում արդեն բնակվում էր 4200–4500 ընտանիք⁶⁷: Քաղաքը կառուցապատվում էր հատուկ նախագծով:

XVIII դ. առաջին քառորդում արդեն քաղաքում գործում էին գիտական, ուսումնական հաստատություններ, հրատարակվում գրքեր, թերթեր, ամսագրեր: 1719 թ. կազմակերպվում է ծովային ակադեմիան, 1721 թ.՝ Հրետանային դպրոցը, իսկ 1725 թ.՝ գիտությունների ակադեմիան: Սկսում են կառուցվել Հյուրանոցներ, վաճառատներ, փոստ, կառավարական շենք, արտադրական ձեռնարկություններ և այլն:

Պետրոս I-ի տված արտոնությունների շնորհիվ արագ թափով կառուցվող ու բարեկարգվող քաղաքը տարբեր վայրերից գեպի իրեն էր ձգում նորանոր բնակիչների: Հայ-ռուսական հարաբերությունները հետազոտող պատմաբան Ս.Գլինկան իրավամբ նշում է, որ հայերը, ունկնդրելով Պետրոս կայսրի՝ Ռուսաստան հրավիրելու կոչերին, որոնք շատ համահունչ էին իրենց սրտերին, գալիս հաստատվում էին մայրաքաղաքում և Ռուսաստանի այլ վայրերում: Պետերբուրգ մեկնող, այնտեղ հաստատվող և գործունեություն ծավալող բնակիչների առաջին շարքերում էին հայ վաճառականները: Որոշ տվյալների համաձայն՝ քաղաքի հիմնադրման առաջին տարիներին հայ վաճառականները հետաքրքրվում էին Պետերբուրգով և բնա-

⁶⁷ Стів Л.Н.Семенова, Быт и население Санкт-Петербурга (XVIII в.), Санкт-Петербург, 1998, էջ 5:

կուլթյունն հաստատում այդտեղ: Զուղայի հայկական առևտրական ընկերության ճանաչված գործիչ Սաֆար Վասիլևը, որը Վասիլևներ-Մակարովներ-Խաստատովներ տոհմի հիմնադիրն էր, 1707 թ. դիմում է ուղղում Պետրոս I-ին՝ խնդրելով հատկացնել արտասահմանի հետ կապվելու շահավետ ուղի, քանի որ Արխանգելսկով անցնող ուղին երկար է և թանկ է նստում: Կայսրը հայ վաճառականին թույլատրում է Մոսկվայից անցնել Նարվա, ապա Սանկտ Պետերբուրգ և ծովով մեկնել արտասահման⁶⁸: 1710 թ. հայ վաճառականները բնակուլթյունն են հաստատում այդտեղ և բացում իրենց առևտրական գրասենյակները⁶⁹: Այդ նույն ժամանակ արտաքին կապերի առյանում (Պոսոլսկի պրիկազ) թարգմանիչ էր աշխատում հայ Աֆանասի Պանկրատովը⁷⁰:

Պետերբուրգի հիմնադրման առաջին տասնամյակներում այդտեղ հայերի բնակուլթյունն հաստատելու մասին է վկայում նաև այն փաստը, որ Իսրայել Օրոն գինակից Մինաս վարդապետը 1714 թ. նոյեմբերի 20-ին դիմել էր բարձրագույն առյաններին՝ խնդրելով թույլտվությունն Պետերբուրգում կառուցելու հայկական եկեղեցի⁷¹: Մինաս

⁶⁸ St'u Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. 2, ч. I, под ред. А.Иоаннисяна, Ереван, 1964, док. 16–17, էջ 28–30:

⁶⁹ St'u Российский государственный исторический архив (РГИА), ф. 880, оп. 5, д. 108, л. 12:

⁷⁰ St'u Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, Москва, 1833, էջ 355, 357:

⁷¹ St'u Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. 2, ч. I, док. 146, էջ 355–357: Մինաս վարդապետը կամ Մինաս Տիգրանակերտցի (1658–1740) եղել է Անգեղակոթի 1699 թ. գաղտնի խորհրդակցության մասնակիցներից: Նա Իսրայել Օրոն ընկերակցել է Եվրոպա և Ռուսաստան կատարած ուղևորության ժամանակ: XVIII դ. սկզբում հաստատվել է Ռուսաստանում և Իսրայել Օրոն մահվանից հետո (1711 թ.) շարունակել նրա սկսած գործը: Երկար տարիներ մնալով ռուսական մայրաքաղաքներում՝ խորացրել է

վարդապետը մշտապես նպաստում էր Հայերի՝ Ռուսաստան տեղափոխվելու և այնտեղ բնակություն հաստատելու գործընթացին: Նա 1722 թ. դիմեց արտաքին գործերի կոլեգիա և Պետրոս I-ին, որպեսզի Թուրքիայից, Պարսկաստանից, ինչպես նաև Լեհաստանից Հայերին հրավիրեն Ռուսաստան: Նա իր խնդրանքը կոնկրետ ու գործնական էր դարձնում և առաջարկում Սանկտ Պետերբուրգում տարածք հատկացնել Հայկական եկեղեցի կառուցելու, գերեզմանոց ունենալու և 50 ընտանիք, իսկ Մոսկվայում՝ 100 ընտանիք բնակեցնելու համար⁷²:

Առևտրաարդյունաբերական և մշակույթի ճանաչված կենտրոն դարձող ռուսական պետութայան մայրաքաղաքները դեպի իրենց էին ձգում ոչ միայն Հայաստանի, այլ նաև ուրիշ երկրների Հայերին: Պետրոս I-ի՝ Ամստերդամում եղած ժամանակ, ինչպես արդեն նշվել է, նրա հետ շփվել ու կապեր են հաստատել XVII դ. և XVIII դ. սկզբներին Ամստերդամի աշխույժ կյանքով ապրող Հայկական գաղութի բնակիչները: Պետրոս Մեծը նրանց համար Ռուսաստան տեղափոխվելու նպաստավոր պայմաններ է ստեղծում, որից մեծապես օգտվում էին Հայ վաճառականները:

1707 թ. կոմս Յա.Շրեյդերը մի խումբ Հայ վաճառականների հետ և նրանց օգնութայամբ Հոլանդիայից գալիս է Ռուսաստան:

իր ծանոթություններն ու կապերը ռուսական միջավայրի, ռուս գործիչների և արքունիքի հետ: 1716 թվից նա ռուսահայերի հոգևոր առաջնորդի պարտավորություններն է կատարել: Նկատի առնելով Մրնաս վարդապետի ծառայությունները՝ Ռուսաստանի կառավարությունը 1735 թ. նրան հատուկ թոշակ է նշանակել: Նա, 40 տարի իրեն նվիրելով ռուս-հայկական հարաբերություններին, փաստորեն դարձել էր Հայաստանի ու հայերի ճանաչված ներկայացուցիչը Ռուսաստանում:

Կայսրը 1712 թ. թուլյատրում է հայ վաճառական Մերկուլ Աղազարովին ընտանիքով Հոլանդիայից տեղափոխվել Մոսկվա և զբաղվել առևտրով: Զմյուռնիայի նշանավոր վաճառական Պետրոս Աբրոն Հոլանդիայում ռուսաց կայսրին է դիմում և իր պատրաստակամությունը հայտնում Աբրամ և Ստեփան եղբայրների հետ Պարսկաստան գնալու և վոլգյան ջրային ուղիով պարսկական ապրանքները Մոսկվա և Պետերբուրգ տեղափոխելու: Պետրոս Մեծն ընդառաջում է նրան, և նաև Զմյուռնիայի առևտրականների վրա է տարածում մինչ այդ Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերությանը տրված արտոնությունները⁷³:

Պետերբուրգում հաստատվող առաջին հայերից էին Լուկա Շիրվանովը (Ղուկաս Շիրվանյան) և նրա եղբայր Կարապետը կամ, ինչպես նրան անվանում են, Իվան Կարապետը: Վերջինս Պարսկաստան ուղարկված դիվանագիտական աշխատող էր և որպես Պետրոս Մեծի ներկայացուցիչ գործում էր Ղարաբաղում ու զբաղվում սղնախներում զինական ուժեր կազմակերպելով: Նա իր մահկանացուն կնքել է 1730-ական թթ. վերջերին՝ իր ուշագրավ անձնական հայերեն գրագրությունները թողնելով եղբորը՝ Լ. Շիրվանովին:

Լ.Շիրվանովը ծնվել է Պարսկաստանի Սպահան քաղաքում: Մի քանի տարի ապրել է Երուսաղեմում, Հռոմում, ապա մեկնել Հոլանդիա՝ Ամստերդամ: Ամստերդամից հայ վաճառականների օրինակով առևտրական նավով ժամանել է Սանկտ Պետերբուրգ⁷⁴: Նա մայրաքաղաքի առաջին հայ բնակիչներից էր: Մինաս վարդապետի՝ արտաքին գործերի կոլեգիայում կամ այլ կազմակերպություններում

⁷² Տե՛ս նույն տեղում, վավ. 163, էջ 385–387, վավ. 164, էջ 387–388:

⁷³ Տե՛ս նույն տեղում, վավ. 33, էջ 77, վավ. 42, էջ 105–107:

⁷⁴ Տե՛ս РГИА, ф. 796, оп. 6, д. 299, л. 12–13:

Հարցեր կարգավորելու վերաբերյալ նրան ուղղած նամակներից երևում է, որ Լ.Շիրվանովը ճանաչված անձնավորութուն էր և կապերի մեջ էր տեղի հայերի ու պետական գործիչների հետ: Նա 1710 թ. էր բնակութուն հաստատել Պետերբուրգում: Վասիլևյան կղզում ունեւ սեփական քարե տուն, որտեղ իջևանում էին նշանավոր հայերը: Նա երեք զավակների հայր էր: Նրա մոտ որպես գործավորներ աշխատում էին տարբեր ազգության ներկայացուցիչներ ու ճորտեր: Նա էր թարգմանում արքունիք կամ պետական առանձին պաշտոնյաներին հասցեագրված հայերեն կարևոր գրութունները:

Լ.Շիրվանովը Մինաս վարդապետի հետ եղավ XVIII դ. առաջին կեսի ռուսական մայրաքաղաքների հայ համայնքների և ռուսահայ կյանքի նշանավոր գործիչներից: Նա հեռևողականորեն հետամուտ եղավ մի կողմից՝ արտագրութուն ձեռնարկելու, մյուս կողմից՝ ազգային դավանանքը պահպանելու խնդիրներին և նկատելի հաջողութունների հասավ:

Մոսկվայում և Պետերբուրգում հաստատված հայերը, չնայած փոքր թվաքանակին, այնուամենայնիվ անմիջապես ձեռնամուխ են եղել եկեղեցիներ հիմնելու, հայ առաքելական հավատքը, դավանանքը պահպանելու գործին և մեծ ջանքեր դործադրել այդ ուղղությամբ: Մեծաքանակ ու խայտաբղետ բնակչութուն ունեցող հզոր մայրաքաղաքներում ազգային ինքնութունը, նկարագիրը պահպանելու, ամենակուլ հոծ զանգվածին չձուլվելու, չանհետանալու հիմնական լծակը եկեղեցին էր: Անտարակույս, դրանով էր պայմանավորված հայերի՝ հայկական եկեղեցիներ հիմնադրելու հետևողական պայքարը: Երկու հայկական համայնքների կյանքում էլ եկեղեցու դերը շատ մեծ է եղել թե՛ այդ գաղութների ձևավորման և թե՛ հետագա ամբողջ պատմության ընթացքում:

Որոշ ժամանակ անց՝ 1739 թ., Լ.Շիրվանովն ինքն է անձամբ դիմում Աննա Իվանովնային եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Նա հինգ հիմնական գործոն է նշում իր խնդրանքը հիմնավորված լինելու մեջ կայսրուհուն համոզելու համար:

1. Ռուսաց կայսրերի հրամաններով Պարսկաստանից առևտրական հայեր են եկել Աստրախան և կառուցել սեփական դավանանքի եկեղեցիներ, որոնք գործում են: Դրանից բացի՝ եվրոպական մյուս քրիստոնյա ժողովուրդներն իրենց դավանանքի եկեղեցիներ ունեն ինչպես Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում, այնպես էլ Աստրախանում:

2. Հավատարիմ ծառայություն համար կայսրուհու հրամանով իրեն 1738 թ. տրվել է մշտական հսկատակություն ու Սանկտ Պետերբուրգի քաղաքացիություն իրավունք և թույլատրվել առևտուր անել կայսրության ամբողջ տարածքում՝ վճարելով միայն սովորական մաքս: Ի տարբերություն մյուս վաճառականների՝ իրեն ամեն ինչում ազատություն է տրվել:

3. Աստծուն ծառայելու համար եվրոպական քրիստոնյա մյուս ժողովուրդներն այդտեղ՝ Սանկտ Պետերբուրգում, եկեղեցիներ ունեն, իսկ հայերը՝ ոչ: Եվ դա այն պարագայում, երբ շատ հայ վաճառականներ են դալիս ու հաստատվում կայսրությունում:

4. Վասիլևյան կղզու Յրդ գծում ինքն ունի հողամաս, որտեղ սեփական միջոցներով կառուցել է ոչ փոքր տուն: Տան բակում կա ընդարձակ տարածություն եկեղեցի կառուցելու համար:

5. Եթե Եվրոպայի քրիստոնյա ժողովուրդների օրինակով թույլատրվի սեփական միջոցներով տան բակում կառուցել հայկական դավանանքի քարե փոքր եկեղեցի, ապա այդ վեհանձնությունը տեսնելով՝ շատ հայեր կգան ու կհաստատվեն Պետերբուրգում: Դրանից կշահեն և՛

կայսրությունը, և՛ գանձարանը, քանի որ մաքսային վճարները կբազմապատկվեն:

Աննա Իվանովնայի հրամանով 1740 թ. խնդրանքը բավարարվում է⁷⁷:

Այսպիսով, Մոսկվայում և Պետերբուրգում թեպետև Հայ բնակչությունը փոքրաքանակ էր, բայց և այնպես իր հոգևոր պահանջները բավարարելու համար ունեւ եկեղեցիներ: Մակայն ոուս հոգևորականության սրտովը չէր, որ հայերի վարդապետությունն իրենց հետ չէր նույնանում, ընդհակառակը, շեղվում էր հունառուսական ուղղափառ եկեղեցու դավանանքից: Նրանք Հայ առաքելական եկեղեցին դիտում էին որպես աղանդ և երկյուղ կրելով նրա տարածվելուց՝ փորձում էին խոչընդոտել: Նովգորոդի, Պսկովի, Սուզդալի և երեք այլ հոգևոր կենտրոնների եպիսկոպոսներ հատուկ գրությամբ դիմում են սինոդին, որ արգելի հայկական եկեղեցիների կառուցումը: Սինոդն իր հերթին խնդրում է կայսրուհուն հրաման արձակել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Աստրախանի հայկական եկեղեցիները վերացնելու վերաբերյալ՝ բացի Աստրախանի քարե մեկ եկեղեցուց⁷⁸: 1742 թ. հրապարակվում է Ելիզավետա Պետրովնայի հրամանը հայկական բոլոր եկեղեցիները, բացի Աստրախանի քարե մեկ եկեղեցուց, Աստրախանում, Մոսկվայում և Պետերբուրգում վերացնելու մասին⁷⁹:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 60, ք. 2-4:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 22, գ. 697, ք. 1-4:

⁷⁹ Տե՛ս ՈՅՅ, տ. 16, Санкт-Петербург, 1830, էջ 280: Աստրախանում գոյություն ուներ փայտյա եկեղեցի: Հայազգի Բոգդան Գուրովի խնդրանքով Պետրոս Մեծը 1706 թ. թույլատրում է փայտյա եկեղեցու տեղը կառուցել քարե եկեղեցի: Այդպես էլ արվում է: Բացառություները արվում է հենց այդ եկեղեցու նկատմամբ (տե՛ս նույն տեղում, էջ 277, Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 145, վավ. 358, էջ 2):

Հայկական եկեղեցիները վերացնելու նպատակով սինոդի կողմից կայսրին դիմում հղելն իսկ հավաստում է, որ նշված քաղաքներում կային հայկական գործող եկեղեցիներ: Դրանք առանց հատուկ թույլտվության կառուցված փոքր, մեծ մասամբ փայտյա եկեղեցիներ կամ աղոթատներ էին: Կայսերական հրամանից հետո դադարեցվում է եկեղեցիների կառուցումը: Ճարտարապետ Պ.Տրեգլինի միջոցով Լ.Շիրվանովը հասցրել էր կիսով չափ կառուցել իր տան բակի եկեղեցին, որը ծառայում էր որպես աղոթատեղի⁸⁰:

Հայերը չէին հաշտվում ստեղծված իրավիճակի հետ և Մոսկվայից ու Պետերբուրգից հիմնավորված դիմումներ էին հղում իշխանություններին: 1751 թ. Մոսկվայի քաղաքացի Վասիլի Մակարովը և ջուղայական ընկերության վաճառական Արտեմ Նազարովը քաղաքի Կիտայ թաղամասում կամ Պրեսնայի հայկական գերեզմանոցում եկեղեցի կառուցելու թույլտվություն են խնդրում: Նրանք հիշեցնում էին Պետրոս I-ի՝ հայերի նկատմամբ ուշադիր լինելու և արտոնյալ պայմաններով Ռուսաստան հրավիրելու քաղաքականությունը: Ապա ուշադրություն էին հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայ վաճառականների մաքսային մուծումների շնորհիվ պետությունը զգալի եկամուտներ է ստանում: Այդ եկամուտները կարող են մեծապես աճել, եթե հայերի նոր ներհոսք կատարվի, որը տեղի կունենա դավանանքի հարցում ազատություն տալու պարագայում: Վերջում նշվում է ստեղծված ոչ իրավահավասար վիճակը: Մյուս բոլոր ժողովուրդները, այդ թվում և մահմեդականները, ազատ են դավանանքի հարցում, իսկ հայերին չի տրվում այդ ազատությունը⁸¹: Հավանաբար այդ դիմումը հղվել էր Լ.Շիրվանովի իմացությամբ, քանի

⁸⁰ Ст'у РГИА, ф. 796, оп. 41, д. 145, л. 48:

⁸¹ Ст'у Гюльн տեղում, р. 45-47:

որ կրկնվում էին տարիներ առաջ նրա նշած Հարցադրումները, և բացի դրանից՝ դիմումի տակ Ա.Նազարովի փոխարեն ստորագրել էր Լ.Շիրվանովը:

1760 թ. արդեն խոր ծերության մեջ, այս Հարցում իր նախկին ձեռնարկումները վերապատմելով, Լ.Շիրվանովը կրկին դիմում է հղում իշխանություններին, սակայն ապարդյուն, քանի որ 1742 թ. պետական արգելքը դեռևս մնում էր ուժի մեջ⁸²:

Հայկական եկեղեցիները վերացնելու կայսերական գործող հրամանագրի պայմաններում անգամ պետական ատյաններում ուշադրության էին արժանանում Հայերի դիմումներում բերված կովանները: Արտաքին գործերի կոլեգիան 1760 թ. սինոդին հանձնարարում է Հայկական եկեղեցիներ հիմնելու հարցերի քննարկման ժամանակ նկատի առնել հետևյալ պահանջները: Ժամանակին Պետրոս Մեծը Ռուսաստան տեղափոխվող Հայերին տվել է արտոնություններ, պետական դանձարանը Հայ վաճառականների մուծումների շնորհիվ շահել է, և եթե դավանանքի հարցում սահմանափակումներ չլինեն, շատ Հայ վաճառականներ Պարսկաստանից կտեղափոխվեն Ռուսաստան, և ավելի կմեծանան պետության եկամուտները⁸³:

Օտարերկրացիների նկատմամբ տարվող քաղաքականությունը դրականորեն փոփոխվեց, երբ գահ բարձրացավ Եկատերինա II-ը (1762–1796): Նա հենց 1762 թ. դեկտեմբերին հատուկ մանիֆեստով թուլյատրեց օտարերկրացիներին գալ և բնակություն հաստատել կայսրությունում: Եվ քանի որ ներգաղթողներին վերապահվում էր ազատորեն հետևել իրենց դավանանքին, իսկ սահմանափակումը կատարվում էր միայն Հայերի նկատմամբ, կառա-

⁸² Տե՛ս նույն տեղում, ք. 48–50:

⁸³ Տե՛ս Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века (сборник документов), т. 3, Ереван, 1978, док. 227, т. 329–333:

վարական սենատը 1763 թ. հունիսի 9-ին հատուկ հրամանով հայերին թուլլատրեց կառուցել եկեղեցիներ⁸⁴: Դրանով ուժը կորցնում էր 1742 թ. եկեղեցիների կառուցումն արգելող որոշումը:

Եկատերինա II կայսրուհին որդեգրեց Պետրոս Մեծի ակտիվ արտաքին քաղաքականությունը և մեծ եռանդով ձեռնամուխ եղավ այն իրականացնելուն: Դեպի արևելյան շուկաները դուրս գալու համար անհրաժեշտ էր գրեթե անմարդաբնակ Հարավային Ռուսաստանի տարածքները կամ Նովորոսիան բնակեցնել, տնտեսապես յուրացնել և հետագա առաջընթացի հենարան ստեղծել: Այդ նպատակով նա ոչ միայն 1762 թ., այլև հաջորդ տարիներին մի շարք հրովարտականերով առանձնաշնորհումներ տվեց կայսրության սահմաններում, մասնավորապես Նովորոսիայում բնակություն հաստատող օտարերկրացիներին: Նման քաղաքականության արդյունքով հիմնվեցին նաև Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի, Գրիգորիոպոլի գաղութները: Ստվարացան նաև մյուս, այդ թվում Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքները:

Հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում ստեղծված նպաստավոր մթնոլորտում կատարվեց այնպիսի իրադարձություն, որն ավելի խթանեց դրական այդ տեղաշարժերը: 1763 թ. էջմիածնում կաթողիկոսական դահ բարձրացավ ժամանակի կրթված ու գործունյա հոգևորականներից մեկը՝ Սիմեոն Երևանցին: Նա ջանք ու եռանդ չէր խնայում Մայր աթոռի հեղինակությունը բարձրացնելու հարցում: Այդ ուղղությամբ նրա ձեռնարկած կարևոր քայլերից էր ռուսահայ թեմը էջմիածնի Մայր աթոռի դերակայությանը ենթարկելը:

⁸⁴ Стѣн ПСЗ, т. 16, էջ 287–289, Армяно-русские отношения в XVIII веке, 1760–1800 гг. (сборник документов), т. 4, Ереван, 1990, док. 22, էջ 56–57:

Ինչպես հայտնի է, այդ թեմը ձևավորվել էր տակավին 1718 թ. Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանի կողմից: Թեմի առաջին առաջնորդն էր դարձել Մինաս վարդապետը: Նորընտիր կաթողիկոսը մտադիր էր ուսուսահայ թեմը հանել Գանձասարի աթոռի իրավասությունից և ենթարկել Մայր աթոռին: Այդ նպատակով 1766 թ. նա Ռուսաստան ուղարկեց իր պատվիրակ Դավիթ վարդապետին: Վերջինս իր հետ տանում է Սիմեոն Երևանցու դիմումը՝ ուղղված Եկատերինա II կայսրուհուն⁸⁵:

Անձամբ իր ձեռքով գրած նամակում վեհափառը ուսուսաց կայսրուհուն ծանոթացնում է գոյություն ունեցող իրավիճակին: Նա հայտնում է, որ թեպետև Հայաստանը գտնվում է Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության ներքո, սակայն երկու երկրներում ապրող հայերը հոգևոր առումով ենթարկվում են Մայր աթոռ Ա.Էջմիածնին: Հետևաբար նպատակահարմար է գտնում և խնդրում նման դրություն մեջ դնել նաև Ռուսաստանում ապրող հայերին, քանի որ, ինչպես նշվում է նամակում, «ազգն մեր, որք ընդ իշխանութեան նոցին են (Թուրքիայի և Պարսկաստանի – Վ.Բ.), ընդ հնազանդութեամբ մերով մնայցեն ի հաւատս և ի յորէնս մեր: Արդ, ի յորհնեալ յերկիրդ և յիշխանութիւնս աստուածապահի թագաւորութեանդ ձերոյ ևս գտանին ոչ սակաւ յազգէս հայոց, որք մեծաւ շնորհակալութեամբ կեան զխնամոց ձերոց և լաւապէս կենցաղավարին ըստ մարմնոյ, որք են ի Զուղայու, ի Նախիջևանու, ի յԱրարատեան երկրէս, ի Թիֆլիզու, ի Շամախու և յայլոց տեղեաց, որք ի մարմնաւոր կողմանէն, որպէս ամենայնիւ պարտին ձեզ հնազանդել և հաւատարմապէս ծառայել, որովհետև ի խնամս ձեր են: Նոյնպէս ի հոգևոր կողմանէ, որովհետև են հայկածինք և լուսաւորչակրօնք, մեզ էին յառաջ քան զայս ի բնէ անտի հնա-

⁸⁵ St u Армяно-русские отношения в XVIII веке, т. 4, док. 33, էջ 68–72:

զանդք ըստ ամենայնի, որ եմք պատրիարք ամենայն Հայոց և փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»⁸⁶: Այնուհետև ավելացնում է, որ ուսաստանայրի հոգևոր իշխանությունը կիրականացնի իր կողմից նշանակված եպիսկոպոսը: «Զի ի քրիստոսազարդ տէրութենէ ձերմէ հրաման հանիցեք օրհնեալ երկիրդ ձեր, զի որքան հայկածինք և լուսաւորչակրօնք ժողովուրդք գոն ընդ իշխանութեամբ ձերով ի հնազանդութեան սրբոյ Աթոռոյս էջմիածնի և Լուսաւորչի փոխանորդացս մնայցեն ամենայնիւ, ըստ հաւատոյն, ըստ կրօնից և ըստ աւանդութեանց եկեղեցւոյս Հայաստանեայց, և եպիսկոպոսն դոցա ի մենջ և հրամանաւ մերով նստիցի ի հովուել զդոցա...»⁸⁷:

Այդ կոնդակի հետ մեկտեղ կային նամակներ Աստրախանի Հայ Հասարակայնությանը, Մոսկվայի և Պետերբուրգի նշանավոր հայերին՝ Աղազար Լազարյանին, նրա որդիներին, Մանուչարյան եղբայրներին, որպեսզի օժանդակեն կաթողիկոսի մտայնության իրականացմանը: Մայրաքաղաքի Հայ աղաների և առաջին հերթին Հովհաննես Լազարյանի աջակցութեամբ Դավիթ վարդապետին ըմբռնումով ընդունեցին Պետերբուրգում և հաջող ընթացք սովեցին նրա առաքելությանը, մանավանդ որ այն համընկնում էր Ռուսաստանի վարած քաղաքականությանը:

Եկատերինա II-ը սիրահոժար համաձայնություն սովեց և կաթողիկոսին ուղղած պատասխան գրություն-հրովարտակում նրան և ողջ Հայ ժողովրդին հավաստում էր իր կայսերական «ողորմածությունը և բարեհաճությունը»⁸⁸:

⁸⁶ Նույն տեղում, էջ 70:

⁸⁷ Նույն տեղում, էջ 71:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, վավ. 38, էջ 76-77:

Քանի որ Հայաստանը գտնվում էր Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության ներքո, հոգևոր առումով ռուսահայերին էլքմիածնին ենթակա դարձնելը նշանակում էր հայ ժողովրդին ու Հայաստանին Ռուսաստանի հետ կապող գլխավոր լծակը դարձնել ռուսահայ թեմը: Եվ հասկանալի է, թե ինչու առանձնահատուկ նշանակություն էր տրվում թեմի առաջնորդի ընտրությանը: Դրանում նախանձախնդիր էին նաև Պետերբուրգի հայերը, հատկապես ակտիվ ու նշանավոր գործիչները: Հովհաննես Լազարյանը 1768 թ. սեպտեմբերին հատուկ նամակով կաթողիկոսին տեղյակ է պահում նրա մեծ ձեռնարկումը հաջողեցնելու մասին և խորհուրդներ տալիս ռուսահայերի հոգևոր առաջնորդի թեկնածուության հարցում: Նա գտնում էր, որ Ռուսաստանի թեմի առաջնորդը պետք է լինի գիտուն, լայնախոհ, քաղաքավարի, ոչ փառասեր, անհրաժեշտ դիվանագիտական ճկունություն ունեցող անձնավորություն: «...Ձի յայսմ հետէ, — գրում է նա, — ըստ խնդրոյ ազգիս մերոյ զառաքեցեալն ի սրբութենէդ ձեռմէ եպիսկոպոս կամ այլ կարգաւոր ի Հաշտարխան լինիցի գիտուն և իմաստուն և տեղեակ Հին և Նոր կտակարանաց, որպէս և վայել է սուրբ հաւատոյս մերոյ, սրբոյ Աթոռոյդ և ձեզ: Մանաւանդ լինիցի աշխարհատես և քաղաքավար ըստ ամենայնի: Մի՞ չափազանց խստապարանոց ի յօրէնս, մի՞ ազահ, մի՞ ընդ վայր բարկացող, մի՞ փառասէր, մի՞ ինքնահաւան և ամբարտաւան, որպէսզի մի լինիցի վերջին փոշմանութիւնն յաւիտեանական և զաշխատութիւնս անօգուտս ձեզ և մեզ յայսպիսի օտարազնեայ յաշխարհւոյս»⁸⁹: Նամակի վերջում խորհուրդ է տալիս շնորհակալական գրություններ հղել կայսրուհուն և արքունիքի ծանրակշիռ գործիչներին:

⁸⁹ Նույն տեղում, վավ. 40, էջ 78:

Անշուշտ, առանց դրսից եկող հորդորների էլ Սիմեոն Երևանցին ըստ ամենայնի հասկանում էր այդ ամենը: Եվ կաթողիկոսը փնտրտուքի մեջ էր: Ի վերջո, նրա ընտրությունը կանգ առավ երիտասարդ, խելացի ու եռանդուն եպիսկոպոս Հովսեփ Արղությանի վրա: 1773 թ. նորընտիր թեմակալը ժամանեց ռուսահայ թեմի առաջնորդական կենտրոն՝ Աստրախան:

Ամենայն հայոց հայրապետի և Ռուսաստանի բարձրագույն իշխանությունների հոգացողությամբ կյանքի կոչված ռուսահայ թեմով դեպի ապագան միտված նոր ու արգասավոր հարաբերությունների հիմքեր էին դրվում երկու ժողովուրդների միջև: Բնականաբար այդ հարաբերությունների կենտրոն են դառնում Ռուսաստանի մայրաքաղաքները և այդտեղ գտնվող հայկական համայնքները:

Ահա հայ-ռուսական հարաբերություններում լայն դաշտ ու պարարտ հող ստեղծված ընդհանուր այդ մթնոլորտում ծավալվեց Լազարյանների ազգային-մշակութային և առևտրատնտեսական գործունեությունը:

Նշանավոր այդ տոհմը, ինչպես Շահրիմանյանները, ծնունդ են XVII-XVIII դդ. առևտրատնտեսական, ինչպես և մշակույթի ասպարեզում մեծ հաջողությունների հասած, բարգավաճ կյանքով ապրող Նոր Զուղա հայաքաղաքի: Ռուսաստանում այդ գերդաստանի հիմնադիրն էր Աղազար Նազարեթի Լազարյանը: Նա իր եղբայրների (Հարություն, Մանուկ) հետ Պարսկաստանում 1741 թ. ստեղծել էր ընկերություն և Ռուսաստանի հետ առևտուր էր անում: Նադիր շահի սպանությունից հետո ծայր առած խռովությունների, ստեղծված անապահով ու վտանգավոր դրության պատճառով նա Պարսկաստանից տեղափոխվում է Աստրախան, իսկ մի քանի տարի անց՝ Մոսկվա: Այդտեղ ծավալվում է Լազարյանների առևտրարդյունաբերական եռանդուն գործունեությունը: Կարճ ժամանակամիջոցում նրանք

դառնում են Ռուսաստանի տնտեսական կյանքի և ռուսահայուլթյան նշանավոր դեմքերից⁹⁰:

«Լազարյանների համար խիստ բնորոշ է այն առանձնահատկությունը, – իրավամբ գրում է Վ. Դիլոյանը, – որ Ռուսաստանում հասնելով բավական բարձր աստիճանների, կուտակելով մեծ հարստություն և դառնալով ժամանակի ամենահարուստ արդյունաբերողներից և կալվածատերերից մեկը, չմոռացան իրենց լեզուն, իրենց ծնող ժողովրդին, իրենց կրոնական դավանանքը և մինչև վերջ բավական նշանակալից ծառայություններ մատուցեցին իրենց հայրենիքին»⁹¹:

Նոր Զուղայում ծնված Աղազարի երեք զավակները Հովհաննես, Մինաս և Հովակիմ Լազարյանները, ակնառու գործունեություն ծավալեցին ինչպես Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքների, այնպես էլ ամբողջ ռուսահայ կյանքում: Ազգային շահերին ծառայելու Լազարյան տոհմի նվիրվածությունը հետևողականորեն շարունակվեց նաև նրանց ժառանգների կողմից:

1775 թ. Լազարյանները ստացան ռուսական ազնվականության տիտղոս⁹²:

⁹⁰ Լազարյանների XVIII դ. երկրորդ կեսի գործունեության համակողմանի լուսաբանությունը տես՝ Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դ. երկրորդ կես), Երևան, 1966:

⁹¹ Նույն տեղում, էջ 137:

⁹² Ազնվականությունը արտոնություններ ունեցող ոչ մեծաքանակ դաս էր Ռուսաստանում: 1785 թ. կայսերական հրովարտակով ավելի ամրապնդվեցին ազնվականության իրավունքները, գերակայությունը: Ազնվական ուներ արտոնություններ: Նա կարող էր ունենալ հողային տարածքներ, տնօրինել դրանց ընդերքն ու անտառները, գնել ու վաճառել գյուղեր: Կային ազնվականի արժանապատվության մշակված կանոններ, որոնք անցնում էին ժառանգաբար: Նրա անձն անձեռնմխելի էր: Նա ուներ իր արխիվը, կնիքը, գանձաբանը: Ազնվականն իրավասու էր կրելու իր նախնիների շքանշանները, պատվոգրերը: Առավելություններ էին տրվում ազնվականական ժողովներին

Լազարյանների ընտանիքի ամենանշանավոր ներկայացուցիչը ավագ եղբայր Հովհաննես Լազարյանն էր (1735–1801): Նա Մոսկվայում երկար չմնաց, 1758 թ. գրասենյակ բացեց Պետերբուրգում և ապա տեղափոխվելով իր գործունեությունը ծավալեց երկրի նոր մայրաքաղաքում: Մեծ ունակությունների տեր անձնավորություն լինելով՝ նա խելամտորեն օգտագործում էր պալատական ոսկերիչ լինելու հանգամանքը և մտերմական կապեր հաստատում պետության բարձրաստիճան պաշտոնյաների հետ:



Հովհաննես Լազարյան

Որոշ ժամանակ անց նա իր մի քանի կուսակիցներով դիմում է կառավարությունը՝ խնդրելով Մոսկվայում և Պետերբուրգում հկեղեցիներ կառուցելու թույլտվություն: Բարձրագույն հրամանով տրվում է թույլտվությունը և հանձնարարվում ոստիկանությունը հկեղեցիների համար հատկացնել հարմարավետ տեղ: Եկեղեցու և հարակից շինությունների համար 1770 թ. Պետերբուրգում հողամաս է հատկացվում Նևսկի պողոտայում⁹³: Նշանավոր ճարտարապետ Յուրի Ֆելտենի նախագծով քաղաքի կենտրոնում

և այլն (տե՛ս Российское законодательство X–XX веков. Законодательство периода расцвета абсолютизма, т. 5, Москва, 1987, էջ 22–45):

⁹³ St'u ПСЗ, т. 19, Санкт-Петербург, 1830, էջ 59 (13457, 13464, 13525):

կառուցվում է օտար դավանանքի պարզ ու գրավիչ չորս եկեղեցի:



Մանկտ Պետերբուրգի Ս.Կատարինե հայկական եկեղեցին

Առաջինը կառուցվում է Ս.Կատարինե Հայկական եկեղեցին Նևսկի պողոտայի կենտրոնական մասում՝ «Գոստինի դվոր»-ի (քարվանսարա) դիմաց: Նրա թեթև գմբեթը բարձրանում է չորս սյուների վրա: Ճակատի մասը և սյուների դասավորությունը հիշեցնում են բարոկկոյի ժամանակները՝ թեկուզև կլասիցիզմի ազդեցութամբ: Եկեղեցու ներսի մասը հատուկ ծածկով բաժանվում է երկու հարկի: 1906 թ. վերականգնման ժամանակ ճարտարապետ Ա.Թամանյանի կողմից բացվել են ներքին հարդա-

րանքի մասերը՝ մարմարով երեսապատված սյուները, քիվերը⁹⁴։ 1791 թ. հայկական դերեզմանատանը նույնպես Հովհաննես Լազարյանի միջոցներով կառուցվում է Ս.Հարություն եկեղեցին։



Սանկտ Պետերբուրգի հայկական գերեզմանատան Ս.Հարություն եկեղեցին

Ինչպես Մոսկվայի, այնպես էլ Պետերբուրգի հոգևոր կյանքին հետևում, եկեղեցիների կենսունակութունը ապահովում և նրանց գործունեությունը, հիմնադրումից սկսած, տնօրինում էին Լազարյանները։

Այսպիսով, XVIII դ. արշալույսին Ռուսաստանի նոր մայրաքաղաքում հայերը սկսեցին հաստատվել քաղաքի հիմնադրման հենց առաջին տասնամյակներին և իրենց դավանանքն ու ազգային ինքնությունը պաշտպանելու

⁹⁴ Տե՛ս Ա.Ս.Պավլով, Храмы Санкт-Петербурга, Санкт-Петербург, 1995, էջ 101–102։ Եկեղեցին, որը մինչ այդ պահեստի դեր է կատարել, 1993 թ. վերադարձվել է տեղի հայ համայնքին և դարձել գործող եկեղեցի։

Համար հիմնել եկեղեցիներ: Հետագայում ավելի ուժեղացավ հայերի հոսքը:



Մատուտ Սանկտ Պետերբուրգի հայկական գերեզմանատանը

XVIII դ. կեսերին՝ հատկապես 60–70-ական թթ., այդտեղ բնակութուն են հաստատում առևտրականներ, արհեստավորներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ, պետական չինովնիկներ, տարբեր ծառայութուններ կատարող հայեր: Այդտեղ, Լազարյաններից բացի, հանդիպում ենք վաճառական Հովհաննես Իզմայիլովին, Արտեմի Շերիմանին, Լուկա Շիրվանովին, մետաքսագործական ձեռնարկատերեր Արտեմի Մանուիլովին, Բոգդան Հախվերդովին, Պետրոս Շիրվանովին, Իսախանով եղբայրներին և ուրիշներին: Հենց այդ ժամանակ էլ վերջնականապես ձևավորվում է Պետերբուրգի փոքրաքանակ, բայց կաղմակերպված ու կենսունակ հայկական համայնքը:

Գլուխ երկրորդ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ
ԿՅԱՆՔԸ

1. Եկեղեցական խորհուրդը

Միջնադարից դեպի նոր շրջան անցումը կյանքի բոլոր ոլորտներում հասկանչվեց ազատամտական գաղափարների տարածումով: Համընդհանուր դարթոնքի մթնոլորտում XVII–XVIII դդ. հայկական գաղութները նույնպես իրենց վրա կրեցին այդ հեղաբեկումների բարերար ազդեցությունը: Արևելյան Եվրոպայի երկրներում հայկական գաղութները կառավարությունների կողմից ստացան բավականաչափ լայն արտոնություններ, ինքնավարություն:

Նույնը կատարվեց նաև Ռուսաստանում: Այդտեղ հայկական գաղութների առաջացումը համընկավ նաև XVIII դ. երկրորդ կեսին հայ-ռուսական հարաբերությունների աշխուժացման հետ: Հայ համայնքները ստացան ազգային լեզուն ու դասկանանքը պահպանելու և ազաս: տնտեսական գործունեություն ծավալելու ինքնավարություն: Նրանց ինքնավարությունը մարմնավորող կազմակերպություններն անվանվում էին ռաթհաուզ (Ղրիմ, Աստրախան, Հյուսիսային Կովկաս) կամ մադիստրատ (Նոր Նախիջևան, Գրիգորիոպոլ): Ռաթհաուզներն ու մադիստրատներն ունեին գատական, ոստիկանական և դործադիր իշխանության որոշակի իրավասություններ:

Մոսկվայում և Պետերբուրգում հայերի թվաքանակն այնքան փոքր ու չնչին էր, որ նրանք որևէ տեսակարար կշիռ չունեին այդ խոշոր քաղաքների բնակչության ընդհանուր կազմում: Այդ պատճառով առանձին ուշադրություն չարժանացան և հատուկ հրամանագրերով առանձնաշնորհումներ չստացան: Մայրաքաղաքների հայերի վրա թեպետև պաշտոնապես չտարածվեց մյուս համայնքներին տրված ինքնավարություն ունենալու իրավասությունը, սակայն առևտրատնտեսական կյանքում, լեզվի, դավանանքի և մյուս հարցերում նրանք օգտվում էին միևնույն իրավունքներից:

Այդուհանդերձ, թեկուզ շատ փոքրաքանակ հայերին ազգային ոգով համախմբելու համար անհրաժեշտ էր ունենալ համայնքային ինչ-որ մարմին: Եկեղեցին էր մնում տեղի հայությունը միավորող և հայրենիքի հետ կապող միակ կազմակերպությունը: Ինչպես նշվեց, Ռուսաստանի հայկական գաղութները հոգևոր առումով միավորված էին Աստրախանի թեմի մեջ և ենթարկվում էին էջմիածնի Մայր աթոռին: Հայ առաքելական եկեղեցու տեղական ներկայացուցչությունը աշխարհիկ թեև ակտիվ ու ղեկավար մասնակցությունը աստիճանաբար իր վրա վերցրեց մայրաքաղաքների հայ համայնքների տնօրինումը:

Հովսեփ Արղունթյանի գործունյա սաներից Գրիգոր արքեպիսկոպոսը՝ որպես հոգևոր հովիվ, 1809 թ. հրավիրվում է Բեսարաբիա, որտեղ կար գործող հայկական հինգ եկեղեցի: Նա ակտիվ գործունեություն է ծավալում, որը բարձր գնահատականի է արժանանում իշխանությունների կողմից: Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո շարունակում է մնալ Բեսարաբիայում: Նա առաջարկում էր Նոր Նախիջևանի, Ղրիմի, Խերսոնի հայությունը միավորել Բեսարաբիայի հոգևոր իշխանության ներքո: Հայոց կաթողիկոսը, նկատի առնելով, որ դրանով Աստրախանի թեմը կթուլանա, կպակասեն նրա եկամուտները, ընդդիմանում է

այդ առաջարկին¹: 1826 թ. նորից բարձրացվում է նոր թեմ կազմավորելու հարցը, որը դարձյալ լուծում էի ստանում: Նախարարների կոմիտեն նպատակահարմար չէր գտնում երկրում ունենալ երկու հայկական թեմ²:

Սակայն ընդամենը մի քանի տարի անց՝ 1830 թ., Նիկոլայ I-ի հրամանով անսպասելի ստեղծվում է նոր Նախիջևանի և Բեսարաբիայի նոր թեմ, և վիրահայոց առաջնորդ Ռուսաստանի շահերի պաշտպան Ներսես Աշտարակեցին նշանակվում է թեմակալ³: Հավաստի պետք է համարել պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետը, ըստ որի՝ Ներսես Աշտարակեցուն Հայաստանից հեռացնելը պայմանավորվում է գեներալ Ի.Պասկևիչի հետ ունեցած նրա հակամարտություններով: Տարածում գտած այդ տեսակետն առավել ստույգ է դառնում, երբ ծանոթանում ենք Ի.Պասկևիչին Նիկոլայ I-ի հղած անձնական նամակներին: Այդ նամակներից պարզ է դառնում, որ գեներալը ոչ թե պաշտոնի բերումով, այլ տակավին պատանեկան տարիներից շատ մտերմիկ հարաբերությունների մեջ է եղել ռուսաց կայսեր հետ: Նրա համար դժվար չէր վերջինիս համոզել ազգային ինքնավարության ջատագով Ներսես արքեպիսկոպոսին Հայաստանից հեռացնել և նրան այլ պաշտոն տալու նպատակով Ռուսաստանում ստեղծել նոր թեմ:

Մոսկվայի և Պետերբուրգի համայնքները, որոնք սկզբնապես ենթարկվում էին Աստրախանի թեմին, 1830 թ. ընդգրկվում են նորաստեղծ թեմի կազմում: Այդ քաղաքների փոքրաքանակ հայ համայնքները համախմբվում են տեղի եկեղեցիների շուրջը: Հենց սկզբից հոգ էր տարվում և առանձնահատուկ ուշադրություն դարձվում եկեղեցիներ-

¹ Տե՛ս ԱՊԱՄ, փ. 2050, օր. 1, Ժ. 55, յ. 5:

² Տե՛ս նույն տեղում, ք. 6:

³ Տե՛ս նույն տեղում:

րը բարվոք վիճակում պահելու և արժանավոր հոգևոր ծառայողներ ունենալու խնդրին:

Քանի որ Լազարյաններն էին կառուցել եկեղեցիները, նրանք էլ մտահոգ հետևում էին դրանց պահպանմանն ու գործունեությանը: Հովհ. Լազարյանը 1788 թ. հատուկ նամակով դիմում է ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ.Արղուլթյանին Սանկտ Պետերբուրգում իր միջոցներով կառուցած երկու եկեղեցիները, նրանց տնտեսությունը բարվոք վիճակում պահպանելու հարցով⁴: Թեմակալ առաջնորդը պատասխան նամակով հայտնում է եկեղեցիներում հոգևոր սպասավորներ կարգելու և այն մասին, որ կարգադրություն է արել Ս.Կատարինե և Ս.Հարություն եկեղեցիների բոլոր հոգևորականներին, որ մշտապես կատարեն նրա եկեղեցիների հիմնադրի առաջարկներն ու ցանկությունները: Ապա Հ.Արղուլթյանը դրվատում է Լազարյանների մեծ ծառայությունները տակավին իր որպես թեմական առաջնորդ, Ռուսաստան գալուց առաջ⁵:

Հովհ. Լազարյանը Ս.Կատարինե եկեղեցու երկու կողմերի դատարկ տարածություններում 1784 և 1789 թթ. կառուցում է երկու չորսհարկանի քարե շենք⁶: Նա 1800 թ. դիմում է արդեն Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Հովսեփ Արղուլթյանին և հայտնում, որ եկեղեցուն կից իր կառուցած երկու շենքերը նվիրում է Ս.Պետերբուրգի եկեղեցիներին: Նա միաժամանակ սահմանում է շենքերը տնօրինելու հետևյալ կարգը: Մինչև իր և իր տիկնոջ՝ Եկատերինա Հովհաննեսովնայի մահը այդ շենքերը և դրանցից

⁴ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 206, վավ. 1905, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 331:

⁵ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 10, վավ. 23:

⁶ Տե՛ս **И.И.Пушкарев**, Николаевский Петербург, Санкт-Петербург, 2000, էջ 228: Հետագայում՝ 1835–1837 թթ., քառահարկ այդ շինությունների մակերեսում է մեկ հարկ ևս, և դառնում են հիմնգիարկանի քարե կառույցներ (տե՛ս Արաքս, գիրք Ա, 1887, էջ 151–153):

ստացվող եկամուտները տնօրինելու են իրենք: Իրենց մահից հետո.

1. Եկեղեցու ձախ կողմի շենքի, առընթեր կրպակների և Ս.Հարություն եկեղեցու հարակից տարածքի տնօրինումն անցնում էր եկեղեցական հոգաբարձությանը: Հոգաբարձությունը կազմված էր լինելու 4 հոգուց՝ մեկը իրենց ժառանգներից, 2 հոգի պատվավոր քաղաքացիներից և մեկ հոգի հոգևորականներից: Շենքերից ստացված եկամուտը պետք է բաժանվեր 3 մասի: Մի մասը պետք է հատկացվեր եկեղեցուն առընթեր փոքր դպրոցին, եկեղեցու՝ ժառայողներին և շինությունների պահպանմանը: Երկրորդ մասը դրվելու էր բանկում կամ գրավատանը, և ստացված տոկոսներով պետք է վերանորոգչական աշխատանքներ կատարվեին, պարսպապատվեին եկեղեցիները: Երրորդ մասը հոգաբարձուները պետք է օգտագործեին հօգուտ աղքատների և բարեգործական այլ նպատակներով:

2. Եկեղեցու աջ կողմի շենքը՝ հարակից շինություններով, իրենց մահից հետո բնակվելու համար տրվելու էր Լազարյանների արական սեռի ավագին՝ մինչև երկրորդ սերունդը: Դրա դիմաց նա տարեկան 2 հազար ռուբլի էր մուծելու եկեղեցուն: Երեք սերունդ հետո տնօրինությունը անցնելու էր հոգաբարձությանը⁷:

Իր հարազատները հետևելու էին դրանց բարեկարգմանը և իրավունք պետք է ունենային թաղվելու Ս.Հարություն եկեղեցում և մյուս գերեզմանոցներում: Կնոջն էր թողնում և հանձնարարում մինչև կյանքի վերջը տեղ լինել իր կառուցած երկու շենքերին և աղատորեն օգտվել դրանցից: Ժառանգ չունենալու պատճառով նա իր ամբողջ

⁷ Տե՛ս Մատենադարան, Պատկանյանների արխիվ, քոթ. 145, վավ. 358, ք. 5-6, նաև նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, քոթ. 227, վավ. 85:

ուռնեցվածքը կտակում է եղբորը՝ Հովակիմին ու նրա տղաներին⁸:

Հովհ. Լազարյանի մահից հետո (1801 թ.) կինը և եղբայրը համաձայնության են գալիս և հօգուտ եկեղեցու հրաժարվում հանգուցյալի կտակով իրենց վերապահված բոլոր իրավունքներից: Նրանք խնդրում են բարձրագույն իշխանությանը հաստատել գործարքը:

Այդ խնդրագրին ընդառաջելով՝ 1804 թ. հուլիսի 19-ին կայսրը Պետերբուրգի ռազմական նահանգապետին հրահանգում է հետևյալը: Նկատի առնելով, որ եկեղեցիների հիմնադրի և նրա հաջորդների կողմից այդ ամենը արվում է ի շահ եկեղեցու, Լազարյանների ժառանգները մինչև երկրորդ սերունդը պարտավոր են հոգատար լինել հայկական եկեղեցու նկատմամբ և հիմնադրի նման կատարել բոլոր պարտավորությունները: Հայկական եկեղեցիների կառավարումը և հոգաբարձուների ընտրությունը վերապահվում են Լազարյանների ժառանգներին: Եկեղեցուն կից երկու շենքերը դառնում են եկեղեցու լիիրավ սեփականությունը: Եկեղեցիներն ազատվում են բոլոր պարհակներից այնպես, ինչպես ազատ են դրանցից մյուս քրիստոնյա դավանանքի եկեղեցիները⁹:

Սույն հրամանագրից հետո եկեղեցիների ամբողջ կառավարումն իրականացնում էին հայ հասարակության կողմից ընտրված հոգաբարձուները:

Եկեղեցիների կարգավիճակը նույն ձևով համակարգվում է նաև Մոսկվայում: Ռուսահայերի հոգևոր նոր առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի դեռևս 1800 թ. հրամանով Մոսկվայում բացվում է հոգևոր կառավարչություն:

⁸ Տե՛ս նույն տեղում, Պատկանյանների արխիվ, թղթ. 145, վավ. 358, ք. 6:

⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 7-8:

Հովհ. Լազարյանի եղբայրը՝ Մինաս Լազարյանը, կարգվում է քաղաքի հայկական եկեղեցիների հոգաբարձու¹⁰:

Մ.Լազարյանը հատուկ կարգադրությամբ սահմանում է Մոսկվայի Ս.Խաչ և Ս.Աստվածածին եկեղեցիների սպասարկումը: Հոգևոր կառավարչությունը պարտավոր էր հատուկ մատչանում խնամքով գրանցել ծննդի, պսակի և մահվան բոլոր դեպքերը, պատարագ մատուցել, քահանաներից մեկը պետք է մշտապես լիներ իր խցում: Ապա սահմանում է գրագրություններ վարելու կարգը և մյուս հարցերը¹¹:

Մայրաքաղաքների հոգևոր իշխանությունները թեպետև գործում էին ինքնուրույն, սակայն սլայմանների բերումով հաճախ շփումների և գործարար հարաբերությունների մեջ էին:

Օտարերկրյա դավանանքի հոգևոր գործերի գլխավոր վարչության պետ Ա.Գոլիցինը Աստրախանի թեմից 1813 թ. պահանջում է մանրամասն տեղեկատվություն հայկական եկեղեցիների, դրանց եկամուտների, ծախսերի, ծխականների, ծիսակատարության, այլ խոսքով՝ ամբողջ գործունեության մասին: Թեմակալ Հովհաննես արքեպիսկոպոսի հարցերին չեն կարողանում գոհացուցիչ պատասխաններ տալ, քանի որ չկար հստակ ու կանոնակարգված գործավար-

¹⁰ Տե՛ս ԱԿԱՄ, փ. 2050, օր. 1, ժ. 45, յ. 1-2:

¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 51, ք. 4-5: Հոգաբարձուն երկու եկեղեցիների համար պատշաճ էր համարում պահել 7 հոգևորականի՝ 3 քահանա, 2 սարկավագ և 2 տիրացու: Քահանաներից Հովհաննես Վարդանյանին դարձնում է հոգևոր կառավարչության նախագահ, իսկ Հակոբ Ավագյանին և Մինաս Հովհաննիսյանին՝ անդամ: Կառավարչությանը մեկ սեմյակ էր հատկացվում Ս.Խաչ եկեղեցում: Կառավարչությունն ուներ կայսերական կնիք, որը մինչ այդ պահվում էր Աստրախանի առաջնորդի մոտ: Տեր Մինասը մշտապես մնալու էր տեղում: Նրան էր հանձնվում եկեղեցիների ամբողջ գույքը: Տեր Հովհաննեսը, մեկ սարկավագ և մեկ տիրացու բնակվելու էին Ս.Աստվածածին եկեղեցում և կիրակի օրերը կատարելու էին ժամերգություն:

րություն: Իրավիճակը բարելավելու նպատակով ռուսահայերի հոգևոր առաջնորդը որոշ ձեռնարկումներ է կատարում: 1819 թ. հատուկ գրությամբ հայտնում է Հովակիմ Լազարյանին, որ նրան նշանակում է Մոսկվայի և Պետերբուրգի եկեղեցիների հոգաբարձու և գլխավոր կառավարիչ: Նա էր տնօրինելու եկեղեցիների և հոգևորականության հետ առնչվող բոլոր գործերը¹²: Դրանով մայրաքաղաքների եկեղեցիների կառավարչությունը միավորվում է մեկ հոգաբարձության մեջ:

1826 թ. մահացավ Հովակիմ Լազարյանը: Երկու քաղաքների եկեղեցիների, ինչպես նաև ճեմարանի հոգաբարձությունն անցավ նրա որդիներին՝ Հովհաննես և Խաչատուր կամ Քրիստափոր Լազարյաններին:

1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիեով», որը սահմանում էր հայ եկեղեցու իրավասությունները, Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիներին որևէ բացառություն կամ վերապահում չէին արվում: Նրանք ենթակա էին այդ կանոնադրությամբ ամրագրված ընդհանուր կանոններին:

Մեկ տարի անց՝ 1837 թ., Խ.Լազարյանը, հենվելով «Պոլոժենիեի» ընձեռած հնարավորությունների վրա, դիմում է ներքին գործերի նախարար Դ.Բլուդովին (այդ նախարարության կազմում էր օտարերկրյա դավանանքի հոգևոր գործերի վարչությունը), Լազարյան ճեմարանի գլխավոր պետ Ա.Բենկենդորֆին ու Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Կարբեցուն և ներկայացնում հետևյալ նախագիծը: Պետերբուրգի և Մոսկվայի հինգ եկեղեցիների կայուն և անփոփոխ գոյության համար նա առաջարկում է դրանք միավորել այնպես, որ կազմեն անբաժան մի ամբողջություն: Միավորել այնպիսի եղանակով, որ եկեղեցիները հնարավորություն ունենան սեփական միջոցներով բարեկեցիկ դրության մեջ լինելու, և որ հնարավոր լինի մեկի

¹² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 34, վավ. 132 I:

միջոցների պակասը լրացնել մյուսի հաշվին: Ապա դրանց միացնել նաև Լաղարյան ճեմարանը: Բոլորի համատեղ կառավարումը թողնել հոգաբարձուի վրա, որը ենթակա կլինի թեմական առաջնորդին: Լաղարյան ճեմարանում բացել հոգևորականներ պատրաստող հատուկ բաժին, որի ծախսերի հոգսը դնել մայրաքաղաքների հայկական եկեղեցիների վրա: Հոգաբարձուի պաշտոնը ժառանգաբար ղբաղեցնելու իրավասությունը վերապահել Լաղարյաններին: Մայրաքաղաքներից յուրաքանչյուրը կռնենա ընտրովի մեկ ավագ, որը կհաստատվի հոգաբարձուի կողմից: Եկեղեցական ավագը որևէ ուրիշ աշխատանք կամ զբաղմունք չպետք է ունենա: Եկեղեցիները և Լաղարյան ճեմարանը ազատ պետք է լինեն պետական ու քաղաքային բոլոր հարկերից¹³:

1841 թ. հրապարակվեց բարձրագույն հրաման Լաղարյան ճեմարանում հոգևոր բաժին բացելու մասին: Երկու քաղաքների եկեղեցիների ամբողջ ունեցվածքը միացվում էր ճեմարանի միջոցներին՝ ենթարկելով հոգաբարձության տնօրինմանը: Լաղարյանները ցմահ ճանաչվում էին ճեմարանի և հայկական եկեղեցիների հոգաբարձուներ:

Հովհաննես և Խաչատուր Լաղարյան եղբայրները եկեղեցիների և ճեմարանի կառավարման մեջ վերափոխումներ կատարելու հետ մեկտեղ զորեղացնում էին հայկական եկեղեցիները, մեծացնում նրանց կարողությունները: Նրանք իրենց պատկանող բավականաչափ ծավալուն հողամասը և 12 հազար ռուբլի գումար են տալիս ռուսական Ս.Նիկողայ եկեղեցուն և նրանից նույն չափի տարածք վերցնում ու հանձնում հայկական եկեղեցուն: Այդ գործարքը հաջողվում է կատարել շնորհիվ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջամտության: Լաղարյան

¹³ Տե՛ս նույն տեղում, Լաղարյանների արխիվ, քոթ. 118, վավ. 16, նույն տեղում, Ալեքսանդր Երիցյանի արխիվ, քոթ. 152, վավ. 3:

ճեմարանի գլխավոր պետ Ա.Բենկենդորֆը տարածքների փոխանակումը Համաձայնեցնում է Մոսկվայի միտրոպոլիտի, գեներալ-նահանգապետի և սինոդի դատախազի հետ: Հարցն իրավական լուծում է ստանում, քանի որ Հաստատվում է պետական խորհրդի տնտեսական դեպարտամենտի կողմից¹⁴: Այդ ամենն արվում էր ճեմարանի ֆինանսական հոգսերը թեթևացնելու և նորաստեղծ հոգևոր բաժինը պահպանելու համար:

Խ.Լազարյանը նախանձախնդիր կերպով զբաղվում էր ինչպես մայրաքաղաքների եկեղեցիների կառավարման և նրանց տնտեսական հնարավորությունները Հայ Համայնքի շահերին ծառայեցնելու, այնպես էլ եկեղեցու ներքին կյանքի հարցերով: Նա նախանձախնդիր էր մասնավորապես եկեղեցիներում ընդունված կարգն ու հոգևոր ծառայությունը ժամանակին ու պատշաճ ձևով կատարելու խնդիրներում: Քանիցս Հանձնարարականներով նա պահանջում է Մոսկվայի և Պետերբուրգի հոգևոր վարչություններից պատարագը, ժամերգությունը, կնունքը, ծննդի ու թաղման ծեսերը կատարել ժամանակին ու սահմանված կարգով և վերացնել եղած թերացումները¹⁵: Ավելին, նա՝ որպես մայրաքաղաքների եկեղեցիների և Լազարյան ճեմարանի հոգաբարձու, 1860 թ. դիմում է Մոսկվայի հոգևոր վարչությանը և ազգային այլ Հաստատությունների՝ եկեղեցիների եկամուտները Հայ հարուստների միջոցով ավելացնելու առաջարկով: Կարևորը, սակայն, այն է, որ եկեղեցիների միջոցները նա անհրաժեշտ էր համարում ծառայեցնել գլխավորապես ժողովրդի լուսավորությանը: «Ամենուրեք, բոլոր երկրներում, – գրում է նա, – միլիոնատերները և հարուստները բարեխղճորեն կատարում են իրենց քրիստոնեական պարտականություններն ու զգացումները: Նրանք չապլ

¹⁴ Տե՛ս նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 102, վավ. 27:

¹⁵ Տե՛ս ԱՊԱՄ, փ. 2050, օր. 1, ձ. 159, լ. 10–17:

քայլեր ու նվիրաբերութիւններ են կատարում՝ ի հիշատակ իրենց հանգուցյալների և հատկապես ուսումնարաններ, աղքատանոցներ հիմնելու կամ այլ անհրաժեշտ եկեղեցական և ազգային հասարակական շահեր հետապնդող նպատակներով: Այդտեղ հարուստների կողմից խնայողութիւն կատարելը անտեղի, անվայելուչ, անգամ դատապարտելի է»: Եվ ապա կրկին նշելով, որ հարստութիւն ունեցողն իր միջոցներն առաջին հերթին պետք է ուղղի հասարակական շահերին, ավելացնում է՝ «հօգուտ եկեղեցու և հայ ժողովրդի, որը պահանջ ունի և ծարավի է կրթութեան ու գիտութեան»¹⁶:

1871 թ. վախճանվում է Լազարյան տոհմի արական սեռի վերջին ժառանգը՝ Խ.Լազարյանը¹⁷:

Լազարյան ճեմարանը, որը հիմնվել և պահպանվում էր Լազարյանների միջոցներով, գիմնադրայի կարգավիճակով անցնում է ժողովրդական լուսավորութեան տնօրինութեան ներքո: Բարձրագույն իշխանութիւնների կողմից

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 7, 9:

¹⁷ Հովհ. Լազարյանի եղբայր Մինասը գերագնացապես բարեգործութեամբ է զբաղվել: Նա 1809 թ. իր ամբողջ ունեցվածքն ու լիազորությունները կուսկեց կրտսեր եղբորը՝ Հովակիմին, իսկ մի քանի տարի անց կնքեց իր մահկանացուն: Մյուս եղբայրը՝ Հովակիմը, իր 4 զավակներով շարունակեց Լազարյանների գործունեությունը: Նրա երկու որդիները զինվորական էին: Նրանցից մեկը սպանվեց 1813 թ. Լայպցիգի ճակատամարտում, մյուսը՝ Լազար Լազարյանը, մասնակցեց ռուս-պարսկական 1826–1828 թթ. պատերազմին: Նա պարսկահայերի 1828–1829 թթ. ներգաղթի գլխավոր կազմակերպիչներից էր: Հովհաննեսն ու Խաչատուրը հոր մահից հետո Մոսկվայում և Պետերբուրգում հետևում էին Լազարյանների գործերին: Հովհաննեսը մահացավ 1858 թ.: Խաչատուրի ուսերին մնաց Լազարյան գերդաստանի թողած ամբողջ ժառանգության տնօրինումը: Նրա միակ արուզավակը՝ Հովհաննեսը, վախճանվեց մանուկ հասակում: Այդ կորստով Խ.Լազարյանի մահից հետո ընդհատվեց Լազարյանների տոհմի շարունակությունը (տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 112, վավ. 102):

Հաստատված 1872 թ. դեկտեմբերի 16-ի կանոնադրության համաձայն՝ ճեմարանում վերացվում է հոգևոր բաժինը¹⁸: Լազարյան տոհմի ընդհատումով և Լազարյան ինստիտուտում հոգևոր բաժինը վերացնելով՝ անիմաստ էր դառնում մայրաքաղաքների եկեղեցական ունեցվածքը տնօրինելու գոյություն ունեցող կարգի պահպանումը: Դրա հետ մեկտեղ նկատի էր առնվում նաև այն հանգամանքը, որ նման կարգ գոյություն չունեի ո՛չ հայ եկեղեցու և ո՛չ էլ ուրիշ քրիստոնեական եկեղեցիների մեջ, երբ եկեղեցու գործերը, ունեցվածքը տնօրինվում էին միանձնյա: Բոլոր պարագաներում անհրաժեշտ էր այն փոխարինել կոլեգիալ ղեկավարությունը¹⁹:

Լազարյան գերդաստանի վերջին նշանավոր ժառանգորդը՝ Խաչատուրը, ուներ երկու դուստր, որոնք ամուսնացած էին նշանավոր անձնավորությունների հետ²⁰: Նրանցից Սիմեոն Աբամելիքը դարձավ Լազարյանների ժառանգորդը: Նա միացրեց երկու իշխանական գերդաստանները, որն այդուհետ անվանվեց Աբամելիք-Լազարյան: Իշխան Աբամելիքը նշանակվեց Լազարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձու, այնպես, ինչպես արվում էր նախարարության մյուս ուսումնական հաստատություններում: Մայրաքաղաքների եկեղեցիների հոգաբարձությունը Խ.Լազարյանի մահից հետո, փաստորեն, դադարել էր գոյություն ունենալուց:

¹⁸ Տես Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 145, վավ. 358:

¹⁹ Տես նույն տեղում:

²⁰ Եփրեմ վարդապետ Ալբունյանը 1852 թ. հայտնում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսին, որ Խ.Լազարյանի դուստրերի երկու պսակադրություն է եղել: Սիմեոն Աբամելիք իշխանն ամուսնացել է Եղիաբեթի, իսկ պետական պաշտոնյա Հովհաննես Դավթի Դեյանովը՝ Աննա Լազարյանի հետ (տես նույն տեղում, Ալեքսանդր Երիցյանի արխիվ, թղթ. 152, վավ. 64):

* * *

Կատարվող տեղաշարժերը երկյուղ էին առաջացնում Հայկական Համայնքներում, մասնավորապես դրանց առաջադեմ գործիչների շրջանում: Նրանք մտորում էին, որ աստիճանաբար կարող են կորցնել ճեմարանը, ինչպես նաև եկեղեցիները, մանավանդ վերջիններիս տնտեսական կարողություններն ազգային նպատակներով օգտագործելու իրավասությունները: Դրանք, ենթարկվելով պետական ընդհանուր կառույցներին, աստիճանաբար կկորցնեին ազգային պատկանելիությունը:

Մոսկվայի և Պետերբուրգի Հայ Հասարակայնությունների կայացուցիչները՝ Մ.Շմինը, Ի.Անանովը, Գ.Քանանյանը (Քանանով), Հ.Դելյանովը, Ն.Ներսիսյանը, Զ.Մսերյանցը, 1875 թ. հատուկ գրությունը դիմում են իշխան Ս.Աբամելիք-Լազարյանին: Հիշեցնելով Հայկական եկեղեցիների հիմնադիր Հովհաննես Լազարյանի հիշատակի նկատմամբ իրենց խոր հարգանքը՝ հորդորում էին նրան՝ որպես ժառանգորդի, ստանձնել հոգաբարձուի պաշտոնը և տնօրինել եկեղեցու գործերը: «Եկեղեցիները թանկարժեք հասարակական հաստատություններ են, — գրում են նրանք, — Դուք, Լազարյանների սուրբ անունը կրելով, այդ պատվավոր պարտականությունը ևս պետք է կատարեք»: Եվ հավելում են. «Սակայն Հայ Հասարակությունը եկեղեցիներից լրիվ հեռու պահելը արդարությունը, օրենքի և հասարակական շահերին հակասող երևույթ կլինի: Դա կհակասի նաև եկեղեցիների հիմնադրի (Հովհաննես Լազարյանի — Վ.Բ.) դավաբաններին»²¹:

Հաջորդ տարում Հայ Հասարակությունն ավելի բազմաձև ներկայացուցիչներ դիմում են Գևորգ Դ կաթողիկոսին և հիշեցնում, որ ժամանակին Հովհ. Լազարյանը սահմանել էր եկեղեցիների կառավարումն իրականացնող 4

²¹ Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 227, վավ. 87:

Հոգուց բաղկացած Հոգաբարձություն: Խնդրում էին գոյություն ունեցած նախկին կարգը վերականգնել և Ս.Աբամելիք-Լազարյանին համոզել, որ ստանձնի այդ պարտականությունը, քանի որ նրա ստանձնած պաշտոնը պատվաբան է, բայց ոչ գործնական: Պատվավոր Հոգաբարձուն իրավունքներ չունի, տեղյակ ու պատասխանատու չէ ամենակարևորի՝ ֆինանսների համար²²:

Ս.Աբամելիք-Լազարյանը ներքին գործերի նախարարին ներկայացնում է մայրաքաղաքների եկեղեցիների հիմնադրման ու կառավարման պատմությունը և խնդրում իրեն ճանաչել սոսկ որպես Հոգաբարձուներից մեկը²³:

Ներքին գործերի նախարարութայն Հոգևոր գործերի ղեկարտամենտից 1877 թ. դիմում են Ամենայն Հայոց կաթողիկոսին: Նրան հատուկ գրությունք տեղեկացնում են, որ Պետերբուրգի և Մոսկվայի Հայ հասարակությունը եկեղեցական Հոգաբարձությունը վերականգնելու և Ս.Աբամելիք-Լազարյանին (որը հրաժարվում է) Հոգաբարձու նշանակելու հարց են բարձրացրել և Հայցում են նրա կարծիքն այդ խնդրում²⁴:

Մայրաքաղաքների եկեղեցիների, մասնավորապես դրանց շարժական ու անշարժ ունեցվածքի միանձնյա տնօրինումն անբավականություն և տարակարծություններ առաջացնող հարց էր: Մայրաքաղաքների Հայ ծխականներն իրենց հերթին ներքին գործերի նախարարի ուշադրությունն են ներկայացնում եկեղեցիների կալվածքների միանձնյա կառավարման ձևը փոխելու անհրաժեշտությունը: Նրանք նպատակահարմար էին գտնում նախկին ձևով կառավարումն իրականացնել 4 Հոգուց բաղկացած Հոգաբարձութայն միջոցով. Հոգաբարձուներից մեկը՝ Հոգևորա-

²² Տե՛ս նույն տեղում, վավ. 94:

²³ Տե՛ս նույն տեղում, վավ. 98:

²⁴ Տե՛ս նույն տեղում, վավ. 96:

կան, երկուսը՝ աշխարհիկ: Առաջարկվում էր հոգաբարձու նշանակել Ս.Աբամելիք-Լազարյանին, և այդ պաշտոնը դարձնել ժառանգական²⁵:

Ի վերջո, կառավարութունը 1880-ական թթ. սկզբներին անդրադարձավ և հիմնավոր լուծում տվեց այդ խնդրին:

Նախարարների կոմիտեն 1883 թ. նոյեմբերի 18-ին Ս.Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղեցիների ունեցվածքը և գործերի վարումը կարգավորող հետևյալ որոշումն ընդունեց.

ա. Երկու քաղաքներում ստեղծվում են 6 հոգուց բաղկացած եկեղեցական խորհուրդներ, որոնց անդամներին իրենց միջից ընտրում են ծխականները 3 տարի ժամկետով:

բ. Եկեղեցական երկու խորհուրդների նախագահ է դառնում մայրաքաղաքների հայկական եկեղեցիների հոգաբարձու իշխան Ս.Աբամելիք-Լազարյանը՝ ժառանգաբար:

գ. Յուրաքանչյուր խորհրդի գծով ընտրվում են 2 թեկնածուներ՝ խորհրդի անդամների բացակայութան պարագայում նրանց փոխարինելու համար:

դ. Ընտրութունները կատարվում են ծխականների ընդհանուր ժողովներում ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայնի իրավունքից օգտվում են արական սեռի 25-ից բարձր տարիք ունեցող բոլոր ծխականները:

ե. Ընտրված անդամները 3 տարին լրանալուց հետո խորհրդի կազմից դուրս են գալիս հերթականությամբ՝ տարին մեկ հոգի: Նրանց իրավունք է վերապահվում կրկին ընտրվելու:

զ. Խորհրդի նիստերն օրինական են համարվում, եթե մասնակցում է անդամների կեսը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

²⁵ Տե՛ս Արժագանք, 1883, 44:

է. Խորհուրդներին ենթակա են եկեղեցիների ավագները, որոնց ամեն մի եկեղեցու համար 3 տարի ժամկետով ընտրում են ծխականները:

ը. Անհրաժեշտության դեպքում հոգաբարձուն՝ որպես եկեղեցական խորհրդի նախագահ, հարաբերությունների մեջ է մտնում պետական իշխանությունների հետ: Վերջիններս օրենքի սահմաններում ընթացք են տալիս նրա բարձրացրած հարցերին:

թ. Հանձնարարվում է հոգաբարձուին և թեմական առաջնորդին սույն որոշման հիման վրա կազմել խորհուրդների ու եկեղեցիների հետ կապված բոլոր գործառու-թյունների կանոնակարգը²⁶:

Եկեղեցական խորհուրդների նախագահ Ս.Աբամելիք-Լաղարյանը և Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գրիգորը 1883 թ. վերոհիշյալ կանոնադրության որոշ կետերի վերաբերյալ մեկնաբանություններ են ստանում ներքին գործերի նախարարության այլադավանների դեպարտամենտից: Հստակեցվում է ծխականի կարգավիճակը: Միսական է համարվում այն հայը, ով գրանցված է համայնքի համապատասխան ցուցակում և 2 տարուց ոչ պակաս ժամանակ բնակվում է մայրաքաղաքներից որևէ մեկում: Չայնի իրավունք չունեցող անձանց արգելվում է ներկա լինել ընտրություններին: Եկեղեցական խորհուրդը հեռու պետք է մնար սեփական իրավասություններն ընդլայնելու և իրեն չվերաբերող գործերը քննարկելու փորձերից և այլն²⁷:

Հարցերը հստակեցնելուց հետո նրանք կազմում են եկեղեցական խորհուրդների, ծխականների ընդհանուր ժողովների, հաշվետվությունների և այլ խնդիրների հանգամանալի հրահանգ-կանոնադրություն: Դրա համաձայն՝

²⁶ Стѹ ПГИА, ф. 821, оп. 7, д. 181, л. 197–1 98:

²⁷ Стѹ նույն տեղում, ք. 199:

եկեղեցական խորհուրդների պարտականութունն էր Համարվում եկեղեցիների ունեցվածքի, ֆինանսների տնօրինումը, շարժական և անշարժ գույքի ստույգ գրանցումը: Նրանք պարտավոր էին ֆինանսներն ավելացնելու եղանակներ գտնել, օգնել չքավոր ուսանողներին, բարեգործական և ուսումնական հաստատություններին, աղքատներին:

Ամենամյա հաշվետվություններում համապատասխան փաստաթղթային հիմնավորումներով հանգամանորեն տրվելու էին եկամուտների ու ծախսերի և մյուս գործերի հաշվետվությունները, որոնք ներկայացվելու էին թեմի առաջնորդարան: Եկեղեցական խորհրդի անդամը չէր կարող միաժամանակ լինել նաև եկեղեցու ավագ, եկեղեցապատկան տների կամ այլ ունեցվածքի կառավարիչ, քանի որ դրանց գործունեությունն անմիջականորեն վերահսկում է խորհուրդը: Խորհրդի նիստերը հրավիրվելու էին ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Ծխականների ընդհանուր ժողովը (հոգաբարձուի նախագահությամբ) հրավիրվելու էր տարին մեկ անգամ: Ժողովի կայացման տեղի և ժամանակի մասին հոգաբարձությունը տեղյակ էր պահելու քաղաքագլխին և ոստիկանության բաժանմունքին²⁸:

Եկեղեցու ավագը երաշխավորվում և ընտրվում էր եկեղեցական խորհրդի կողմից: Նա տնօրինում և պատասխանատու էր սվյալ եկեղեցու ամբողջ ունեցվածքի համար: Նրա պարտավորությունների մեջ էր մտնում Մայր աթոռի, էջմիածնի ճեմարանի և Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի

²⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 200–203: Կանոնադրություն-հրահանգում ստույգ սահմանվում էր նաև բազմաթիվ այլ հարցերի կարգը: Ինչպես, ասենք, եկեղեցական գումարները պետք է պահվե՞ն միայն պետական բանկում, այն փոխառությամբ չի տրվելու, եթե անգամ շահութաբեր է: Նշվում էին եկեղեցական տները վարձով տալու պայմանները, գործավարության ողջ համակարգը և այլն:

Թեմի այրիների ու որբերի համար դրամական միջոցների հավաքումը²⁹:

Այսպիսով, նախարարների կոմիտեի որոշման հիման վրա մշակվեց մայրաքաղաքների եկեղեցական երկու խորհուրդների, դրանք միավորող մեկ միասնական խորհրդի և հոգևոր կյանքի հետ կապված բոլոր հարցերի հստակ կանոնակարգը:

Թեպետև Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիներն ինքնուրույն խորհուրդներ ունեին, սակայն դրանք եկեղեցական մի ընդհանուր խորհրդի մեջ միավորելը ճիշտ մտահղացում էր և գործնականում իրեն լիովին արդարացրեց: Միմյանց սերտորեն առնչվող երկու քաղաքների հոգևոր իշխանությունների միավորումը ստեղծում էր հզոր կազմակերպություն, որն ի գորու էր լուծելու մեծ ու ծավալուն խնդիրներ: Դրանից բացի՝ նրանք փոխադարձաբար աջակցում և լրացնում էին մեկը մյուսին: Հաճախ Մոսկվայի հայկական եկեղեցիների եկամուտները չէին բավականացնում մարելու կատարված ծախսերը: Դժվարին կացությունից դուրս գալու, ճեղքվածքը ծածկելու գործում օգնության ձեռք էր մեկնում Պետերբուրգի համազոր հաստատությունը: Բազում փաստերից հիշատակենք միայն մեկը:

Մոսկվայի հայկական եկեղեցիների խորհուրդը 1898 թ. մարտի 24-ի նիստում (նախագահ՝ Լ.Սարգսյան, անդամներ՝ Գ.Սուլթանյան, է.Պոպով, Ս.Վարդազարյանց, Ի.Տերյան) քննարկում է ստեղծված իրավիճակը և ծախսերի պակասը լրացնելու նախնական մի տարբերակ ներկայացնելով՝ դիմում է եկեղեցիների միացյալ խորհրդի նախագահ Ս.Աբամելիք-Լազարյանին: Վերջինս հավանություն է տալիս Մոսկվայի հայկական նրբանցքի ազատ տարածքում չորսհարկանի քարե շենք կառուցելու ներկայացված նախա-

²⁹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 399, ց. 1, գ. 1227, ք. 13-14:

գծին: Մանրակրկիտ հաշվարկները հավաստում են, որ 150 հազար գումարով կարող է կառուցվել նախատեսվող շենքը: Այն շահագործման հանձնելով՝ կարելի է տարեկան 9 հազար մաքուր եկամուտ ստանալ:



Սիմեոն Ս. Արամյան-Լազարյան

Ս.Արամյանի ք-Լազարյանը դիմում է Ս.Պետերբուրգի խորհրդին և առաջարկում եկամուտների ավելացած մասից նշված գումարը հատկացնել: Ի հարգանս մայրաքաղաքների եկեղեցիների հիմնադիր Հովհ. Լազարյանի հիշատակի՝ նրա մահվան 100-ամյակի առիթով Պետերբուրգի եկեղեցիների խորհուրդը 150 հազար ռուբլի փոխառությամբ տալիս է Մոսկվայի եկեղեցական խորհրդին³⁰: Դրանով վերանում էր պետական բանկի կողմից Մոսկվայի հայ-

կական եկեղեցիների ունեցվածքը հարկադրաբար վաճառքի հանելու վտանգը:

Մայրաքաղաքների խորհուրդները և միացյալ խորհուրդը թեպետև հոգևոր կազմակերպություններ էին և ունեին գույք կրոնական անվանում, սակայն, ըստ էության, աշխարհիկ հաստատություններ էին: Ավելի ճիշտ, ինչպես տեղին նշվել է մասնագիտական գրականություն մեջ,

³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 991, ք. 4-16:

դրանք միավորում էին հոգևորն ու աշխարհիկը՝ վերջինիս որոշակի գերակշռությամբ³¹։

Խորհուրդների կառուցվածքը հենց այդ էր թելադրում։ Դրանք գլխավորում էին աշխարհիկ անձնավորությունները։ Միացյալ խորհուրդը ղեկավարում էին Աբամելիք-Լազարյանները, իսկ կազմում ընդգրկված էին մեծ մասամբ աշխարհիկ գործիչներ։ Նրանց գործունեությունն այնքան բազմաբնույթ դարձավ և այնպիսի մեծ ծավալներ ընդունեց, որ խորհուրդներում ընտրվում էին հատկապես նշանավոր մտավորականներ։

Եկեղեցական խորհուրդները հավաքվում էին պարբերաբար, տարեկան ունենում 20–25 նիստ։ Դրանք հոգևոր գործերի կողքին և դրա հետ գերազանցապես զբաղվում էին աշխարհիկ կյանքի հարցերով։ Գիտակրթական և սոցիալական համահայկական մեծածավալ աշխատանքներից բացի՝ զբաղվում էին համայնքի մեծ ու փոքր ամենատարբեր խնդիրներով, ինչպես, ասենք, բնակելի տարածքները (պահեստ, խանութ, գրասենյակ և այլն) տարբեր նպատակներով վարձով տալը, մինչև անգամ շենքերի պատերին ցուցատախտակներ փակցնելու թույլտվություն վերապահելը և այլն։ Եկեղեցական խորհուրդների հետ գործակցել կամ նրանց հետ հարաբերվել են գիտամշակութային ոլորտի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Նիկողայոս Մառը, Գարեգին Հովսեփյանը, Երվանդ Լալայանցը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Ստեփան Մալխասյանցը և ճանաչված բազմաթիվ այլ մտավոր գործիչներ։

Մայրաքաղաքների եկեղեցիները և դրանք միավորող խորհուրդները գործում էին Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական կարգի և պետություն կողմից ընդունված կանոնադրության շրջանակներում։ Ասել է թե ինչպես

³¹ Տե՛ս Գ.Անանու, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870–1900), հ. 2, Էջմիածին, 1922, էջ 120։

Ռուսաստանի Հայկական մյուս եկեղեցիները, այնպես էլ մայրաքաղաքների եկեղեցիները ենթակա էին թեմական առաջնորդարաններին: Մոսկվայի և Պետերբուրգի Հայկական եկեղեցիները, ինչպես նշեցինք, գտնվում էին Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի կազմում և Հաշվետու էին նրան: Չնայած այդ Հանգամանքին՝ նրանց գործունեության շառավիղը շատ ավելի ընդարձակ էր և, փաստորեն, տարածվում էր Համայն Հայության վրա: Արևելյան և Արևմտյան Հայաստանի, ռուսահայության կրթական գործին, մշակույթի այլևայլ բնագավառներին, գրահրատարակությանը, բարեկործական Հաստատություններին, որբանոցներին աջակցելու խնդրում մայրաքաղաքների Հոգևոր խորհուրդներն իրենց վիթխարի նպաստն են բերել: Այդ ամենի մասին խոսք կլինի աշխատության վերջին բաժիններում:

Այսպիսով, ի տարբերություն Ռուսաստանի տարածքում ձևավորված մյուս Հայկական գաղութների, որոնց ինքնավարությունը մարմնավորում էին ռաթհառուղները կամ մագիստրատները, Մոսկվայի և Պետերբուրգի պարագայում այդ դերը կատարում էր Հայերին միավորող միակ ազգային կազմակերպությունը՝ Հայոց եկեղեցին: Սկզբնապես այդ միավորումը դրսևորվում էր Հոգաբարձության, իսկ XIX դ. 80-ական թթ. սկսած՝ եկեղեցական խորհրդի միջոցով: Վերջինս դարձավ Հզոր և գործունեության Համահայկական ընդգրկում ունեցող կազմակերպություն:

Ահա թե ինչու Հայկական այդ Համայնքներում մշտապես առանձնահատուկ նշանակություն է տրվել եկեղեցական խորհրդի գործունեությանը, նրա անդամների և առհասարակ Հոգևոր գործիչների ընտրության խնդիրներին: Դրանք եղել են ծխականների ժողովի, ասել է թե Հասարակության ուղադրության կենտրոնում: Երբեմն եկեղեցական խորհրդում ընտրվելն այնպիսի սուր բնույթ է կրել,

որ արձագանք է գտել համազգային ընդգրկում ունեցող մամուլի էջերում³²:

Խորհրդի անդամ ընտրելուն այնքան մեծ նշանակություն էր տրվում, որ դրան միջամտում էր անգամ Ամենայն հայոց կաթողիկոսը: Մակար կաթողիկոսը Սանկտ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամ ընտրելու համար առաջարկում է Խորեն վարդապետ Ստեփաննի թեկնածուներունը, ով իր ունակություններով և լեզվի իմացությամբ հարմար էր այդ պատասխանատու աշխատանքի համար: Միացյալ խորհրդի նախագահ Ս.Աբամելիք-Լազարյանը տեղեկացնում է կաթողիկոսին, որ նրա մատնանշած թեկնածուն հավանություն է արժանացել³³:

Մայրաքաղաքների հայ համայնքները հաճախ են արժանավոր հոգևորականների կարիք զգացել: Հենց այդ նույն ժամանակ Մ.Բարխուդարյանն ահազանգում էր այն մասին, որ մինչև 1884 թ. Մոսկվայում կար մի հոգևորական՝ Հակոբ Սուրենյանցը, ով աչքի էր ընկնում հասարակական աշխույժ գործունեությամբ, բանիմաց ու խելացի քարոզներով: Նրա մահից հետո նման նկարագիր ունեցող հոգևորականի պահանջը շատ է զգացվում: Համանման վիճակ էր նաև մայրաքաղաք Պետերբուրգում: Ահա այդ ընդհանուր մթնոլորտում հասունացավ Խ.Ստեփաննի թեկնածուները: Վատառողջության պատճառով նա հրաժարվում է, սակայն, ի վերջո, համաձայնություն է տալիս և մեկնում Պետերբուրգ:

³² Մոսկվայի հայ ծխականների միջև 1888 թ. եկեղեցական խորհրդի երկու անդամների ընտրության ժամանակ այնպիսի վիճաբանություն է սկսվում, որ միտղք փակվում է (տե՛ս Արձագանք, 1888, 27): Տարիներ անց ժողովը նույնպես անավարտ փակվում է եկեղեցական խորհրդի անդամ ընտրելիս թեկնածուների հարցում հաճախաբար չգալու պատճառով (տե՛ս Մշակ, 1895, 61) և այլմ:

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1219, թ. 2:

Կարճ ժամանակամիջոցում նա իր հոգևոր ծառայությամբ, հասարակական, մանկավարժական գործունեությամբ նվաճում է մայրաքաղաքների հայության սերն ու հարգանքը: Գործունեության մեկ տարին չլրացած՝ «Մշակ» թերթի թղթակիցը Մոսկվայից հաղորդում է, որ վերջին 20–30 տարում Գ.Այվազյանից, Խ.Նարպեյից, Վ.Բաստամյանից հետո Մոսկվայի հայ հասարակայնությունն առաջին անգամ է ընդունում նման ուսյալ և զարգացած հոգևորականի: Վեհափառ Հայրապետը նրան նշանակել է Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների և հոգևոր կյանքի վրա, որպեսզի մայրաքաղաքների հայությանն ավելի մերձեցնի Մայր աթոռ Ս.Էջմիածնին³⁴: Ս.Պետերբուրգից գրում են, որ ինն ամիս գործելով մայրաքաղաքում՝ Խ.Ստեփանեն բոլորին գերեց իր հաստատած կարգ ու կանոնով, հայրենասիրական քարոզներով: Գաղութի հոգևոր սպասարկումն անմխիթար վիճակում էր, նրա գալով ամեն ինչ բարեփոխվեց: Սակայն սինոդը Էջմիածին վերադառնալու հրաման է արձակել: Եկեղեցական խորհուրդը և ծխականները վեհափառ կաթողիկոսին խնդրում էին Խ.Ստեփանեին կրկին վերադարձնել Պետերբուրգ, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա Պետերբուրգում նշանակել կրթված ու բանիմաց մի հոգևորականի³⁵:

Նշանավոր հասարակական գործիչ Կ.Կուսիկյանը, կարևորելով հոգևոր առաջնորդի դերը, գրում է, որ Մոսկվայի հայ համայնքը Ռուսաստանում հայի հայելին է: Նրա թույլ կողմերով ու պակասություններով պիտի դատեն հայի մասին, նրա արժանավորություններով պիտի գովաբանեն հային: Նրա լավը հայի լավն է, նրա վատը հայի վատն է: Ուրեմն Մոսկվայի հայ հասարակայնությունն է մարմնացած ազգը Ռուսաստանում, և կասկած չկա, որ նրա

³⁴ Տե՛ս Մշակ, 1887, 78:

³⁵ Տե՛ս Առաջին տետր, 1887, 119, 1888, 141:

Հոգևոր առաջնորդը պիտի լինի հմուտ, գործունյա և խելացի, լուսավորված և զեկավարի ընդունակություն ունեցող մարդ³⁶:

Անգամ ուսանողությունը նախանձախնդիր ու տարբերակող վերաբերմունք ուներ Հոգևորականների նկատմամբ: Մոսկվայի թղթակիցն անհրաժեշտ էր գտնում մամուլի միջոցով ընթերցողներին հասցնել այն իրողությունը, որ մայրաքաղաքների ուսանողությունը մեծ համակրանքով է վերաբերվում Երեմիա և Արիստակես եպիսկոպոսներին, որոնք դրան արժանի են: Նրանք շատ մեծ չափերով տարբերվում են «լճացած ու ոչ գիտուն» Հոգևորականներից: Ապա, կարևորելով այդ վերաբերմունքը, նշում է, որ ուսանողությունը՝ որպես ազնիվ և մաքուր խիղճ ունեցող հասարակական շերտ, միշտ արդարամիտ է³⁷:

Հոգևորականներին գնահատելը, նրանց նկատմամբ ուշադիր վերաբերմունքը դրսևորվում էին նաև նրանց վաստակը արժևորելով, հոբելյաններ կազմակերպելով և այլ եղանակներով մեծարելով: Պետերբուրգում հանդիսավոր տոնախմբությամբ նշվում է հայր Գրիգորիի քահանայության 25-ամյակը: Հանդիսությանը մասնակցում էին հայ հասարակայնության շատ ներկայացուցիչներ: Ընթերցվում են կաթողիկոսի կոնդակը, Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդի օրհնության խոսքը: Եկեղեցական խորհրդի ուղերձը հրապարակում է պրոֆ. Վ.Վարդանյանը, հայ համայնքի ուղերձը՝ Գ.Սուլթանչազը, մատուցվում են նվերներ³⁸: Հայաստանում կամ հայկական մյուս գաղթօջախներում հազիվ թե նվիրապետական ցածր աստիճանում գտնվող Հոգևորականին նման պատիվների արժանացնեին:

³⁶ Տե՛ս Արձագանք, 1887, 1:

³⁷ Տե՛ս Մշակ, 1896, 58:

³⁸ Տե՛ս Առյուծ տեղում, 1913, 77:

Եկեղեցական խորհուրդները, հայ համայնքների ինքնավարութիւնը մարմնավորող հաստատութիւնն լինելով, որն, ինչպես նշվեց, ճանաչվում էին պետութեան կողմից, միաժամանակ տեղի հայութեան ազգային ինքնութիւնը պաշտպանող մարմիններ էին: Այդ պարագան առաջին հերթին արտահայտվում էր ազգային դիմադրիժը պահպանելու գլխավոր միջոցի՝ հայոց լեզվի հարցում: Պարբերաբար բարձրացվում էր հայկական համայնքների ինքնավարութիւնն ու գործավարութիւնը միմիայն հայոց լեզվով կատարելու վերաբերյալ հարցը:

Տեղի մտավորականութեան ներկայացուցիչները լայն տարածում ունեցող պարբերականների էջերում հասարակութեան ուշադրութիւնն էին հրավիրում այդ հանգամանքին: Նրանք, հիշատակելով, որ հատկապես Մոսկվայի եկեղեցական խորհրդի արձանագրութիւնները հաճախ կազմվում են ոչ հայերենով, նշում են, որ խորհրդի քարտուղարը օտարերկրացի է, և արդարացի ու տեղին կլինեն, եթե նրան փոխարինեն նյութական միջոցների կարոտութիւնն ունեցող մի հայ ուսանող³⁹: Այդ հարցը բարձրացվում էր նաև խորհրդի նիստերում:

Երկու համայնքների միացյալ եկեղեցական խորհուրդը, որը, որպես հոգաբարձու, երկար ժամանակ գլխավորում էր Ս.Աբամելիք-Լազարյանը, որպես կանոն, գործունեութիւնն էր ծավալում ոչ այնքան մայրաքաղաքների հայութեան, որքան համահայկական շրջանակներում: Պետերբուրգի եկեղեցական խորհրդի եկամուտները մեծ էին, ուստի խորհուրդն ի զորու էր ազդօգուտ ավելի բազմազան ու ծավալուն գործեր կատարելու: Պատկերացում կազմելու համար հիշատակենք 1890 թ. նրա 20 նիստերում քննարկված հարցերը: Խորհուրդը քննարկել է կառուցվող շենքերի նախագծերը և կառուցման գործընթացը, եկեղեցական

³⁹ Տե՛ս Արձագանք, 1888, 37, 1889, 3:

գույքի տնօրինման, բնակարաններ տրամադրելու, միջոցներ չունեցողներին նյութական օգնութիւն Հատկացնելու, բնական աղետներից տուժածներին օգնութիւն կազմակերպելու, հայկական գերեզմանոցը կարգավորելու, եկեղեցու տները, բանջարանոցը վարձով տալու, ուսման վարձ վճարելու, շրջանավարտ ուսանողների ճանապարհածախսը Հատկացնելու և համանման բազում այլ խնդիրներ: Նիստերը հաճախ վարել է Ս.Աբամելիք-Լազարյանը, երբեմն՝ Գ.Յաղուբյանը⁴⁰:

Տարբեր ժամանակներում Պետերբուրգի եկեղեցական խորհրդի կազմում աշխատել են Մ.Սանասարյանը, Կ.Եղյանը, Ք.Պատկանյանը, Ս.Հարութիւնյանը, Գ.Յաղուբյանը, Վ.Վարդանյանը, Գ.Տիգրանովը, Ն.Ադոնցը, Ս.Բուդագովը, Ի.Բագրամովը, Գ.Սուլթանշահը, Լ.Մալխասյանը, Ն.Կարա-

⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 7: Եկեղեցական խորհուրդները զբաղվում էին նաև փոքրածավալ բազմաբնույթ խնդիրներով: Մոսկվայի եկեղեցական խորհրդի 1895 թ. առաջին ամիսների միստերի արձանագրութուններին ծանոթանալը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նրա աշխատանքների բնույթի մասին: Հունվարի 28-ի միստին մասնակցում էին խորհրդի փոխնախագահ Ս.Հովհաննիսյանը, անդամներ Գ.Խալաթյանը, Մ.Բարխուդարյանը, Մ.Մուրադյանը, Մ.Քանանյանը և Ս.Ջարգարյանը: Տնտեսական բնույթի որոշ հարցերի շարքում որոշվում է եկեղեցու երգեցիկ խմբին զգեստով ապահովելու համար անհրաժեշտ 300 ռ. գումարը ձեռք բերել մասնավոր նվիրատուներին դիմելու միջոցով: Փետրվարի 17-ի միստը կայանում է խորհրդի նույն կազմով: Գ.Խալաթյանը հաղորդում է, որ տիկին Վարվառա Քանանյանը 40 վերնաշապիկ է նվիրել երգեցիկ խմբի համար: Խորհուրդը շնորհակալություն է հայտնում նվիրաբերողին: Մ.Մուրադյանը հայտնում է, որ տիկին Դյուլբենշին 702 ռուբլի է նվիրել եկեղեցական խորհրդին՝ ջրավորների տրամադրելու նպատակով: Խորհուրդը վճռում է այդ գումարը տնօրինել այլ կերպ. այն հատկացնել բանտում վատ վիճակում գտնվող կալանավորներին: Փետրվարի 28-ի միստում խորհուրդը հարգում է դպիր Ասրյանի աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ հոգաբարձու Ս.Աբամելիք-Լազարյանի առաջարկը և այլն (տե՛ս ԸՊԱՄ, ֆ. 2050, օր. 1, Ժ. 18, յ. 5-7):

կաշը, Ս.Գյուլամիրյանը, Հ.Բաղրամյանը և շատ ուրիշներ: Դժվար չէ նկատել, որ ընդգրկված են եղել ճանաչված ու հեղինակավոր անձնավորություններ, մեծ մասամբ մտավորականներ: Նույն ձևով է ընտրվել նաև Մոսկվայի եկեղեցական խորհրդի կազմը: Նրանում աշխատել են Ս.Մամիկոնյանը, Ս.Հովհաննիսյանը, Գ.Խալաթյանը, Մ.Բարխուդարյանը, Մ.Քանանյանը, Մ.Մուրադյանը, Զ.Մսերյանցը, Ս.Զարգարյանը, Մ.Պոպովյանը, Ա.Տեր-Մկրտչյանը և ուրիշներ:

Այժմ անդրադառնանք այն հիմնախնդրին, թե նման մեծածավալ գործունեություն համար ինչ ֆինանսական միջոցներ կային, ինչպես էին գոյանում և ինչ ձևով ծախսվում:

2. Եկամուտներն ու ծախսերը

Մոսկվայի ու Պետերբուրգի Հայկական Համայնքների կյանքը, ինչպես տեսանք, կազմակերպվում էր հոգևոր իշխանության միջոցով ու նրա շուրջը: Բնականաբար, առանձնահատուկ ուշադրություն էր արժանանալու եկեղեցին: Նախանձախնդիր այդ վերաբերմունքը դրսևորվում էր պատշաճ մակարդակի ու պարտաճանաչ հոգևորականներ ծառայություն կոչելու, եկեղեցիները բարվոք վիճակում պահելու, կրոնական արարողություններն անչեղ կատարելու և հատկապես եկամուտներին ու ծախսերին հետևելու միջոցով: Ստեղծվել էր եկամուտների ու ծախսերի շատ ստույգ գործավարություն: Ամեն տարի, իսկ հաճախ ամիս առ ամիս մանրամասն գրավոր հաշվետվություն էր ներկայացվում: Այդ հաշվետվությունները տպագրվում էին առանձին գրքույկով, ինչը հասարակայնությունը հնարավորություն էր տալիս հետևելու և վերահսկելու եկամուտների ու ծախսերի գործընթացը:

Եկամուտները գոյանում էին վարձով տրվող շենքերից, բնակարաններից, առանձին անհատների նվիրատվություններից, բանկում պահվող գումարների՝ վարկերի, փոխառությունների և այլ հաշիվներից ստացվող տոկոսներից: Հասույթ էր գոյանում նաև հյուրանոցների, խանութների վարձից, եկեղեցիների գանձանակից, ծեսերից (ծնունդ, օծում, պսակ, թաղում), գերեզմանոցում տեղ

Հատկացնելուց, մոմի վաճառքից և բազմաթիվ այլ աղբյուրներից⁴¹:

Տարբեր եղանակներով գոյացած Հասույթը ծախսվում էր Հոգևորականների և սպասարկող անձնակազմի աշխատավարձի, բազմաբնույթ օգնութեան կամ նվիրատվութիւնների, եկեղեցիները, բնակելի տները և դրանց գույքը վերանորոգելու, եկեղեցական երգչախմբի ու թեմական դպրոցի պահպանման, վառելիքի (փայտ, ածուխ), պարենի, փոխադրամիջոցի, փոստի, ձեթ, խոունկ, մոմ ձեռք բերելու և բազմաթիվ մեծ ու փոքր երբեմն չնախատեսված, բայց անհրաժեշտ Հատկացումների վրա:

Եկամուտների և ծախսերի, դրանց Հետևողական աճի ու տատանումների և երկու քաղաքների Հայ Համայնքների Հասույթների որոշ առանձնահատկութիւնների մասին պատկերացում կազմելու համար ծանոթանանք ներքոբերյալ աղյուսակների տվյալներին⁴²:

⁴¹ Նվիրատվությունը շնախատեսված եկամուտների լավագույն աղբյուրներից էր, որը մայրաքաղաքների, հատկապես Պետերբուրգի բնակիչների շրջանում կատարվում էր հաճախակի և բավականաչափ պատկանելի գումարներով: Դա վաստեց մի քանի օրինակներով: Պետերբուրգում Հովսեփ Իզմիրյանը իր մահից հետո եկեղեցում կտակով թողել էր 25 հազար ռուբլի, իսկ Աննա Դեյյանովը՝ 40 հազար ռուբլի՝ ամուրի կանանց պատսպարելու համար: Մոսկվայում մահանում է Հովհաննես Հովհաննիսյանը, ով հովանավորում էր հայ մշակույթը՝ նույն նպատակի համար թողնելով 5 հազար ռուբլի (տես Մշակ, 1884, 26, ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1499, Արձագանք, 1888, 18):

⁴² Աղյուսակ 1-ը կազմվել է (ըստ տարեթվերի հաջորդականության) հետևյալ աղբյուրների հիման վրա՝ ՀԱԱ, ֆ. 400, ց. 1, գ. 11, ք. 17, գ. 8, ք. 239-240, ֆ. 399, ց. 1, գ. 1291, ք. 449, գ. 1294, ք. 11-14, Հաշիւ Սանկտպետերբուրգի հայոց եկեղեցական ստացուածքների կառավարութեան ընդ տնօրինութեամբ խորհրդի 1892 տարի, Ս. Պետերբուրգ, 1893, էջ 3, ՐԿԻԱ, ֆ. 821, օպ. 7, ժ. 244, լ. 32, իսկ աղյուսակ 2-ը (ըստ տարեթվերի հաջորդականության)՝ հետևյալ աղբյուրների հիման վրա՝ ԸԻԱՄ, ֆ. 2050, օպ. 1, ժ. 291, լ. 4-5, 34-35, ՀԱԱ, ֆ. 400, ց. 1, գ. 8, ք. 288-289, ԸԻԱՄ, ֆ. 2050, օպ. 1, ժ. 291, լ. 72-73, 42-44, ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 291, ք. 17-18:

Աղյուսակ 1. Պետերբուրգի եկեղեցիների եկամուտները և ծախսերը

	1815	1840	1850	1860	1892	1909
Եկամուտները ռուբլիներով	40355	54404	35753	44288	66264	191648
Ծախսերը ռուբլիներով	–	15587	25950	19386	54400	177792

Աղյուսակ 2. Մոսկվայի եկեղեցիների եկամուտները և ծախսերը

	1815	1831	1842	1860	1893	1900
Եկամուտները ռուբլիներով	6035	11446	10436	65033	14543	18428
Ծախսերը ռուբլիներով	4574	11446	6055	31821	14553	23010

Աղյուսակներում բերված տվյալներից ակնառու է դառնում, որ Պետերբուրգի եկեղեցիների հասույթներն անհամեմատ ավելի մեծ են եղել: Այսպես, օրինակ, 1815 թ. եթե Մոսկվայի եկեղեցիների եկամուտները կլորացված թվերով կազմել էին 6 հազար ռուբլի, ապա մայրաքաղաքում հասնում էին 40 հազար ռուբլու: 1893 թ. Մոսկվայում հասույթը 14,5 հազար ռուբլի էր, իսկ Պետերբուրգում այդ նույն ժամանակ՝ 1992 թ.՝ 66 հազար ռուբլի:

Նույն համամասնությամբ էլ կատարվում էին ծախսերը: Սակայն այդտեղ նկատվում է մի առանձնահատկություն: Մայրաքաղաքի եկեղեցիների հասույթների մի զգալի մասը չէր ծախսվում, ավելանում և փոխանցվում էր հաջորդ տարի: Մոսկվայի համայնքում տնտեսումը փոքր էր, հաճախ եկամուտների քանակով էլ կատարվում էին ծախսումները, իսկ երբեմն էլ ճեղքվածք էր առաջանում. ծախսերը գերազանցում էին եկամուտները: 1900 թ. 18428 ռուբլի եկամտի պայմաններում ծախսերը եղել են 23 հազար ռուբլի: Ինչպես արդեն նշվել է, նման պարագայում օգնություն էր հասնում մայրաքաղաքի հայ համայնքը:

Ժամանակի ընթացքում եկամուտների աստիճանական հետևողական աճի պայմաններում երբեմն անսպասելի

և առաջին Հայացքից անհասկանալի կերպով ուժգին վերելք էր տեղի ունենում: Պետերբուրգի Հայ Համայնքի Հասույթները 1840 թ. բարձր էին, Հասնում էին 54 Հազար ռուբլու, իսկ Հետագա երկու տասնամյակներում աճելու փոխարեն անկում են ապրում, 1850 և 1860 թթ. կազմում էին Համապատասխանաբար 35 և 44 Հազար ռուբլի: Այդ երեույթն ավելի ցայտունորեն դրսևորվում է մյուս Համայնքի պարագայում: 1860 թ. Մոսկվայի եկեղեցիների Հասույթը Հասնում էր 65 Հազար ռուբլու: Նման բարձր եկամուտներ նա երբեք չունեցավ ո՛չ նախորդ տասնամյակներում և ո՛չ էլ Հետագայում:

Անտարակույս, Հասույթների նման անբնական աճի պատճառները չպետք է որոնել եկամտի մշտական աղբյուրների ոլորտում կատարված էական փոփոխությունների մեջ, այլ Հարկ է առնել գերազանցապես բարեպատեհ պատահականություններին: Երկու քաղաքների Համայնքների կյանքում նվիրատվություններն էական նշանակություն ունեին: Առևտրատնտեսական ոլորտի մեծահարուստները, բարձրաստիճան Հայ չինովնիկները, առհասարակ Հայ ազնվականության ներկայացուցիչները բնակվում էին մայրաքաղաքներում: Նրանք տարբեր առիթներով Հայ առաքելական եկեղեցուն բերում էին իրենց նպաստը: Այդ նվիրատվությունները եկամտի մշտական աղբյուրներ չէին, կատարվում էին տարբեր առիթներով, դեպքից դեպք, ինչն էլ տեղիք էր տալիս մեծ տատանումների այս կամ այն տարվա եկամուտների մեջ: Մեծ նվիրատվությունների Հետ մեկտեղ կատարվում էին ոչ շատ մեծ գումարի, սակայն առավել պարբերական բնույթ կրող նվիրատվություններ:

Բազմաթիվ փաստերից հիշատակենք մեզ արդեն ծանոթ նշանավոր անձնավորությունների Հետ կապված մի դեպք: Եկեղեցական խորհուրդների նախագահ Ս.Աբամելիք-Լազարյանը Հայտնում է մայրաքաղաքի եկեղեցական խորհրդին, որ 1895 թ. Պետերբուրգում մահացել է կոմսու-

Հի Աննա Դելյանովը և իր ծնողների, քույրերի և փոքրահասակ եղբոր հոգեհանգստի պատարագի համար թողել 10 հազար ռուբլի: Անհրաժեշտ է տնօրինել այդ գումարը⁴³: Երկու տարի անց նա հայտնում է նաև նրա ամուսնու կոմս Հովհաննես Դելյանովի մահվան մասին, որը Ս.Կատարինե եկեղեցու անունով թողել է 500 ռուբլի գումար⁴⁴:

Ներկայացված աղյուսակների հիման վրա արվող հետևությունները հաստատելու և, որ գլխավորն է, պարզելու համար, թե կոնկրետ ինչպիսի աղբյուրներից էին գոյանում հիմնական հասույթները և ինչ նպատակներով ծախսվում, ծանոթանանք մի քանի տարվա ցուցանիշներին:

Աղյուսակ 3. Պետերբուրգի հայկական եկեղեցիներ⁴⁵

	1896 թ.	1897 թ.	1898 թ.
Եկամուտները			
Քաղաքի բնակարանների վարձից	83250	84817	95119
Գերեզմանոցի եկեղեցում մոմի վաճառքից. գումար հավաքելուց	2168	2270	2945
Կապիտալի տոկոսներից	3917	5443	8308
	89336	92531	106374
Ծախսերը			
Քաղաքի եկեղեցու հոգևորականների և ծառայողների աշխատավարձ	7370	7250	7280
Եկեղեցու երգչախմբի աշխատավարձ	3107	3266	3896
Եկեղեցիների պահպանման համար	1441	742	2899
Տարբեր ծախսեր	1501	1374	1415
Գերեզմանոցի եկեղեցու և տան պահպանման և այլ ծախսեր	1793	2262	2746
Ծառայողների աշխատավարձ և տան պահպանման և այլ ծախսեր	22044	22552	24456
Հոգևոր վարչության համար	67	65	11
Լազարյան ինստիտուտի, Էջմիածնի ճեմարանի ուսանողների թոշակ	25229	30407	31031
Այլ հողվածներով	3132	1830	1034
	65688	69750	74970
Եկամուտներից ավելացած գումարը	23647	22781	31403

⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.399, ց. 1, գ. 1491, թ. 1:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 1492, թ. 1:

⁴⁵ Տե՛ս РГИА, ф. 821, оп. 7, д. 181, л. 263:

Աղյուսակ 4. Մոսկվայի հայկական եկեղեցիներ⁴⁶

	1896 թ.	1897 թ.	1898 թ.
Եկամուտները			
Քաղաքի բնակարանների վարձից	11902	12923	13267
Գերեզմանոցի եկեղեցուն մոմի վաճառքից, զումար հավաքելուց	2394	3702	2408
Կապիտալի տոկոսներից	1383	1341	1278
Ժամանակավոր նվիրատվություններ և պատահական եկամուտներ	309	310	233
Նվիրատվություն ուսանողների համար	—	—	883
	15988	18277	18071
			515
			18586
Ծախսերը			
Ս.Խաչ եկեղեցու հոգևորականների և ծառայող- ների աշխատավարձը	3404	3893	4055
Եկեղեցու երգչախմբի աշխատավարձը	600	600	600
Եկեղեցու պահպանման համար	1967	1637	2442
Ս.Աստվածածին եկեղեցու պահպանման և վերա- նորոգման համար	1257	270	331
Քրիստոսի Գարության եկեղեցու ծառայողների աշ- խատավարձը	248	813	785
Ս.Խաչ եկեղեցու տան ծառայողների աշխատա- վարձը և այլ ծախսեր	7118	7008	8656
Գոզևոր վարչության համար	23	19	20
Տարբեր թղչակներ	548	387	1217
Այլ հոգվածներով	418	306	475
	15587	14935	18586
Եկամուտներից ավելացած զումարը	401	3342	—

Աղյուսակներում բերված 3 տարվա ցուցանիշներն ակնառու են դարձնում այն հանգամանքը, որ եկամուտների առյուծի բաժինը գոյանում էր բնակարանների վարձից: Բավական է նշել, որ 1896 թ. մայրաքաղաքի եկեղեցիների 89 հազար ռուբլի հասույթի 83 հազարը, իսկ 1898 թ. 106 հազար ռուբլի հասույթի 95 հազարը ստացվել էին բնակարանների վարձից: Այդ գումարը գոյանում էր հատկապես Ս.Կատարինե եկեղեցու երկու կողմում կառուցած հինգհարկանի շենքերը վարձակալութան տալուց: Իրողութունը նույնն էր նաև մյուս համայնքում, միայն այն տարբերութամբ, որ այնտեղ ստացվող եկամուտն

⁴⁶ Տես նույն տեղում, թ. 264:

անհամեմատ փոքր էր, քանի որ սահմանափակ էր վարձով տրվող բնակարանների քանակը: 1896 թ. Մոսկվայի եկեղեցիների շուրջ 16 հազար ուղբլի եկամտի 12 հազարը, 1898 թ. 18 հազար ուղբլի հասույթի 13 հազարը մոտազգրվում էին միայն բնակարանների վարձից: Բնակարանների վարձը տարեցտարի բարձրանում էր, համապատասխանաբար ավելանում էին նաև եկամուտները: Երկու տարվա ընթացքում բնակարանների վարձը Պետերբուրգում աճել էր շուրջ 2 հազար ուղբլով, իսկ Մոսկվայում՝ 1,5 հազար ուղբլով:

Եկեղեցիների հասույթի երկրորդ գլխավոր աղբյուրը, ինչպես երևում է աղյուսակներից, բանկերում պահվող կապիտալի տոկոսներն էին: Այդ օրինաչափությունը ևս հատուկ էր երկու համայնքներին:

Եկամուտների և ծախսերի հարաբերությունը հարցում բերված ցուցանիշները (աղյուսակ 3, 4) գալիս են հաստատելու վերոբերյալ աղյուսակների (1, 2) հիման վրա արված եզրակացությունը: Պետերբուրգի պարագայում եթե եկամուտները 20–30 հազար ուղբլի գումարով գերազանցում էին ծախսերը, և տարբերությունը փոխանցվում էր հաջորդ տարի, ապա Մոսկվայում կամ շատ փոքր գումար էր փոխանցվում, կամ էլ եկամուտներն ու ծախսերը հավասարակշռում, ծածկում էին իրար:

Ծախսերի հանդեպ եկամուտների պատկառելի գումար ավել լինելու հանգամանքը հնարավորություն էր ընձեռում մայրաքաղաքների եկեղեցական միացյալ խորհրդին օգնություն հասնելու Հայաստանի ու հայաբնակ վայրերի կրթական-լուսավորական ոլորտին: Միջոցներ ունենալով՝ ազգային-մշակութային կարիքավոր կենտրոններին առաջին հերթին օգնություն ձեռք էր մեկնում Պետերբուրգի խորհուրդը:

Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի կազմում գտնվող 38 եկեղեցիներն ու վանքերը համապատասխան մոծոճումներ էին անում Նոր Նախիջևանի թեմական դպրո-

ցի պահպանման համար: XX դ. սկզբին այդ գումարը կազմում էր 4130 ռուբլի: Դրանից 1000 ռուբլին բաժին էր ընկնում Մոսկվային և Պետերբուրգին⁴⁷: Թեմական դպրոցը այդ և այլ աղբյուրներից ստացված հասույթներով չէր կարողանում հոգալ անհրաժեշտ ծախսերը, ուստի Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը տարեկան 3 հազար ռուբլի մշտական նպաստ էր նշանակել: Այդ օգնությունը բավարար չլինելով՝ դպրոցի տնօրինությունը կրկին դիմում է հոգևոր խորհրդին. «Հոգաբարձությունս կարծում է, թէ միակ հաստատությունը, — գրում է հոգաբարձությունս փոխնախագահ Խաչատուր Զարիֆյանցը, — որ ձեռնհաս էր հանել Հոգաբարձությանս դրամական այս անձուկ վիճակից, դա Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցեաց խորհուրդն է;՝ որ առատօրեն սփռում է իւր բարիքները ազգային լուսաւորութեան անդաստանում: Ահա այս բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով, Հոգաբարձությունս վստահանում է ի նորո դիմել եւ խոնարհաբար խնդրել, որ Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը բարեհաճի իւր սրտին մօտիկ առնելու Դպրոցանոցիս արդի նեղ վիճակը, ուր ուսանում են մինչեւ 350 հայ մանուկներ և որոնց մեծագոյն մասը չքաւոր ընտանիքի զաւակներ են: Եվ բացի մի անգամ սահմանած երեք հազար ռուբլի գումարի մշտական նպաստից՝ ներկայ 1904–1905 ուսումնական տարուայ ընթացքում դպրոցանոցիս կառավարութեան եւ պահպանութեան համար յատկացնել այլեւս երեք հազար ռուբլի իբրեւ միանուագ և ժամանակաւոր նպաստ»⁴⁸:

Պետերբուրգի Հայ Համայնքի հասույթների ծանրակշիռ լինելու մասին հստակ պատկերացում կազմելու համար համեմատենք Ռուսաստանի ամենամեծ գաղութի՝ Նոր Նախիջևանի հետ: Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նո-

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 931, ք. 94:

⁴⁸ Նույն տեղում, ք. 112:

յեմբերի 14-ի հրովարտակով, ինչպես Հայտնի է, Նոր Նախիջևանը վիթխարի տարածք և առևտրատնտեսական արտոնություններ ստացավ: Քաղաքի գանձարանը հարստանում էր վարելահողերից, խոտհարքներից, արոտավայրերից, բազմաթիվ ձեռնարկություններից, կրպակներից, Դոն գետի կամրջից օգտվելու համար ստացվող վարձերից, 6 եկեղեցիների ու վանքի հասույթներից և այլ աղբյուրներից: Այդ ամենից գոյացած եկամուտը 1870 թ. կազմում էր ընդամենը 34047 ռուբլի⁴⁹, այն պարագայում, երբ Պետերբուրգում այդ նույն տարում եկամուտը հասնում էր 49400 ռուբլու⁵⁰: Նշանակում է, Պետերբուրգի Հայ համայնքի եկամուտները մեկուկես անգամով գերազանցում էին Հայկական հզոր այդ գաղութի եկամուտները:

Ավելորդ չէ նշել, որ Պետերբուրգի Հայ համայնքի անչարժ գույքի արժեքը մոտենում էր մեկ միլիոն ռուբլու սահմաններին, իսկ XX դ. սկզբներին հասնում էր երկու միլիոնի:

Դրականն ու դրվատելին այն է, որ մայրաքաղաքների համայնքների եկամուտներն օգտագործվում էին ոչ այնքան ներգաղութային պահանջները բավարարելու, որքան համազգային նպատակներով:

⁴⁹ Տե՛ս Վ.Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), Երևան, 1985, էջ 44:

⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1304, թ. 17:

3. Բնակչությունը

Մայրաքաղաքների հայ համայնքների բնակչութունը թե՛ թվաքանակով և թե՛ աճի տեմպերով որոշակի առանձնահատկութիւններ ունենր:

Հայտնի է, որ Ռուսական կայսրութիւնում 1861 թ. գյուղացիական ռեֆորմը բնակչութիւնի տեղաշարժերի հնարավորութիւն ստեղծեց: Դրա շնորհիւ բազմաթիւ բնակավայրերում, հատկապես քաղաքներում գրանցվեց բնակչութիւնի որոշակի աճ: Ժողովրդագրական այդ տեղաշարժերը կատարվեցին ոչ այնքան բնական եղանակով, որքան արհեստական ճանապարհով՝ դրսից կատարվող ներհոսքի հաշվին: Վիթխարի աճ ունեցան մասնավորապես կայսրութիւնի նոր բնակեցված և ազատ տարածքներով հարուստ հարավի բնակավայրերը:

Ռուսաստանի հայկական գաղութների ժողովրդագրութիւնը այդ գործոնն առհասարակ հատուկ էէր: Նրանք իրենց արտոնութիւններն ու ինքնավար գոյութիւնը պահպանելու նպատակով ամեն կերպ խոչընդոտում էին դրսի բնակչութիւն, այդ թիւում նաև հայերի ներհոսքը: Այդ պատճառով հայ համայնքների բնակչութիւնի թվաքանակը փոքր էր և իր աճի տեմպերով մեծ չափերով զիջում էր ռուսական բնակավայրերին: Հիշատակենք մեր այս միտքը հավաստող մեկ փաստ: Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքի բնակչութիւնի թվաքանակը 1812 թ. հասնում էր 8484

մարդու⁵¹, իսկ 1914 թ. Հասավ 49523 մարդու⁵²: Նշանակում է՝ 100 տարում բնակչությունն աճեց ընդամենը 5,5 անգամ: Նրա մերձավոր հարևան Դոնի Ռոստովի բնակչությունն թվաքանակն այդ նույն ժամանակ (1811 թ.) կիսով չափ պակաս էր Նոր Նախիջևանի ազգաբնակչության թվաքանակից, իսկ 1914 թ. Հասավ վիթխարի չափերի՝ 172,3 հազար մարդու⁵³: Այդտեղ բնակչությունն թվաքանակն աճեց 43 անգամ:

Ռուսական կայսրության Հայաբնակ կենտրոններում ժողովրդագրական փոփոխություններ սպասելի էին XIX դ. առաջին տասնամյակներում, երբ Արևելյան Հայաստանը մտավ կայսրության կազմի մեջ: Սակայն բնակչության որոշակի աճ կատարվեց միայն Հայաստանում երկրի արևելյան և արևմտյան հատվածներից կատարված ներգաղթի շնորհիվ: Կայսրության մյուս մասերի Հայկական գաղութներում ժողովրդագրական տեղաշարժերն արտահայտվեցին շատ աննշան չափերով, իսկ մայրաքաղաքների Հայ Համայնքներում որևէ նկատելի տեղաշարժ չկատարվեց: Այդտեղ Հայ բնակչությունը փոքրաքանակ էր և երբեք ստվար չդարձավ: Ամենևին պատահական չէ, որ Մոսկվա և Պետերբուրգ քաղաքների բնակչության մասին հրատարակի վրա եղած մեծաքանակ վիճակագրական-տեղեկատվական գրականություն մեջ Հայերի մասին, սակավ բացառությամբ, տվյալներ չկան: Ռուսական մայրաքաղաքների հոծ բնակչության մեջ Հայերի թվաքանակն այնքան աննշան է եղել, որ տեսակարար կշիռ չի ունեցել և, բնականաբար, ուշադրության չի արժանացել:

⁵¹ Ст.у РГИА, ф. 1281, оп. 11, д. 134, л. 179:

⁵² Ст.у Алфавитный список населенных мест области войска Донского, Новочеркасск, 1915:

⁵³ Ст.у А.Г.Рашии, Население России за 100 лет (1811–1913 гг.), статистические очерки, Москва, 1956, էջ 89:

Հայ համայնքների բնակչուլթյունը քանակական առումով ուներ (մոտավոր տվյալներով) հետևյալ պատկերը⁵⁴:

Աղյուսակ 5⁵⁵

Քաղաքները	1840 թ.	1865 թ.	1894 թ.	1910 թ.
Մոսկվա	196 հոգի	223	500	786
Պետերբուրգ	244	—	509	787

Բնակչուլթյան թվաքանակի մասին տվյալները քաղել ենք առանձին եկեղեցիների գրառումներից կամ հոգևոր վարչուլթյունների գործերից: Այդ աղբյուրներում կարող էին տեղ գտնել միայն եկեղեցի հաճախող կամ հոգևոր իշխանուլթյան հետ կապված անձինք: Բնակչուլթյան մյուս մասը՝ մանկահասակները կամ ծխականների թվում չգրանցված մեծահասակները, ուսանողները դուրս են մնացել այդ ցուցակներից: Իռուսաստանի մայրաքաղաքներում բավականաչափ աշխուլթ էր հայերի երթևեկը: Տարբեր պատճառներով ու առիթներով այնտեղ էին մեկնում ինչպես մոտավոր ոլորտի, այնպես էլ առավել մեծ չափերով, առևտրատնտեսական ասպարեզի գործարար՝ ներկայացուցիչները: Նրանք որոշ ժամանակ, երբեմն էլ երկար ժամանակ մնում էին Մոսկվայում ու Պետերբուրգում, բայց տեղի բնակիչ չէին

⁵⁴ Մույն՝ աղյուսակ 5-ի տվյալները մոտավոր ենք համարում, որովհետև բնակիչների քանակի կոնկրետ թվական տվյալների փոխարեն որոշ տարիների համար հիմք ենք ընդունում ըմտանիքների քանակը: Այդպիսի տվյալներով նույնպես բնակչուլթյան ընդհանուր պատկերը իրական ու վստահելի է դառնում:

⁵⁵ Աղյուսակը կազմվել է (ըստ տարեթվերի հաջորդականության) հետևյալ աղբյուրների հիման վրա՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 323, ՀԱԱ, ֆ. 400, ց. 144, ЦИАМ, ֆ. 2050, օր. 1, Ժ. 140, Լ. 5, Ժ. 202, Լ. 2-5օԵ., 8-8օԵ, РГИА, ֆ. 821, օր. 7, Ժ. 219, Լ. 16, Ժ. 232, Լ. 19:

Համարվում և դուրս էին մնում ծխականների ցուցակներից: Անգամ եթե համարենք, որ եղել են ծխականների թվաքանակից 2,5, 3 անգամ կամ դրանից ավելի բնակիչներ, որոնք դուրս են մնացել գրանցումից, ապա յուրաքանչյուր հայկական համայնքում բնակչության թվաքանակը անգամ XX դ. սկզբներին չէր անցնում 2,5 հազարից: Ուրիշ խոսքով, Մոսկվայի և Պետերբուրգի հայ բնակչությունը տևականորեն եղել է փոքրաքանակ:

Մայրաքաղաքների հայ համայնքների բնակչության թվաքանակի մասին հստակ պատկերացում կարելի է կազմել, եթե այն դիտարկենք Ռուսաստանի տարբեր բնակավայրերում հանգրվան գտած ամբողջ հայ բնակչության թվաքանակի համատեքստում: Այդ նպատակով ծանոթանանք Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի և Աստրախանի թեմերի բնակչության քանակական կազմին: Ներկայացնում ենք երկու տարբեր տարիների տվյալները, որպեսզի հնարավոր լինի հետևել նաև ժողովրդագրական տեղաշարժերին: Ընդ որում, աղյուսակներում բերված բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են այնպես, ինչպես մայրաքաղաքների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները (աղյուսակ 5), և նմանապես ավելի փոքրաքանակ են ցույց տրված, քան եղել են իրականում: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով եկեղեցի հաճախողների թվաքանակը, որը բնակչության իրական թվաքանակից շատ քիչ էր⁵⁶:

⁵⁶ Աղյուսակները կազմվել են (ըստ տարեթվերի հաջորդականության) հետևյալ աղբյուրների հիման վրա՝ աղյուսակ 6՝ РГИА, ф. 821, оп. 7, д. 219, л. 16. д. 243, л. 5, աղյուսակ 7՝ նույն տեղում, գ. 219, р. 547, գ. 243, р. 2:

Աղյուսակ 6. Նոր Նախիջևանի և Բեսարաբլայի թեմ

h/h	Բնակավայրը	Եկեղեցիների քանակը	Եկեղեցի համախողների քանակը			
			1895 թ.		1900 թ.	
			արական	իգական	արական	իգական
1	Քիչինև	1	105	135	150	135
2	Ակերնան	1	203	313	177	265
3	Օդեսա	1	350	250	600	400
4	Գրիգորիոպոլ	2	121	156	180	190
5	Պետերբուրգ	2	400	150	386	195
6	Մոսկվա	3	350	200	442	321
7	Նոր Նախիջևան	7	5147	4743	2345	2304
8	Զալդր գյուղ	1	2535	2271	775	707
9	Թոփտի գյուղ	2	2244	2146	665	662
10	Մեծ Սալա գյուղ	1	1173	1228	477	465
11	Փոքր Սալա գյուղ	1	598	574	169	130
12	Նեսվիտա գյուղ	1	515	508	195	176
13	Ս.Խաչ վանքի ավան	1	113	98	40	34
14	Խարկով		95	61	120	95
15	Սիմֆերոպոլ	2	471	525	577	613
16	Ղարասուբազար	1	208	202	185	184
17	Թեոդոսիա	4	226	229	235	269

Աղյուսակ 7. Աստրախանի թեմ

h/h	Բնակավայրը	Եկեղեցիների քանակը	Եկեղեցի համախողների քանակը			
			1895 թ.		1900 թ.	
			արական	իգական	արական	իգական
1	Աստրախան	5	2182	2336	3852	3951
2	Ստավրոպոլ	2	285	255	601	512
3	Ս.Խաչ բնակավայր	3	1678	1512	1894	1783
4	Էդեսիա վայրում	1	1619	1436	1669	1452
5	Վլադիկավկազ	1	784	688	957	835
6	Ղզլար	4	2581	2073	2658	2082
7	Գրոզնի	1	104	86	240	216
8	Մոզդոկ	3	1138	1035	1142	1063
9	Գորգիևսկ	1	324	406	97	89
10	Պյատիգորսկ	1	138	126	296	292
11	Կարաջալիխ գյուղ	1	260	252	272	263
12	Եկատերինոդար	1	532	422	683	610
13	Բատալբաշինսկ	1	65	58	117	115
14	Եյսկ	1	111	101	125	1118
15	Արմավիր	2	2067	1851	2992	2731
16	Աշխաբադ	1	800	1011	853	1082
17	Ղզըլ-Արվադ	1	178	200	205	225
18	Մերվ	1	418	118	450	151

Ինչպես նշվեց, աղյուսակներում Հայ բնակչության թվաքանակն ավելի փոքր է ներկայացված, քան եղել է իրականում: Դա ավելի հավաստի է դառնում, երբ բերված տվյալները համադրում ենք Ռուսաստանում կատարված մարդահամարի տվյալների հետ: Մոսկվայում 1902 թ. անցկացված մարդահամարի համաձայն՝ Հայերի թվաքանակը հասնում էր 1153-մարդու⁵⁷ այն պարագայում, երբ Հայ հոգևոր գործիչների տվյալներով կազմած աղյուսակում 1910 թ. ցուցանիչներով Հայերի թվաքանակը կազմում էր ընդամենը 786 մարդ: 1902 թ. տվյալը, որ ստույգ է, երևում է նաև 10 տարի անց՝ 1911-1912 թթ. եղած վիճակագրական տվյալներից: Հայ բնակչության թվաքանակն աճելով այդ ժամանակ հասել էր 1396 մարդու⁵⁸:

Դրանից բացի՝ Նոր Նախիջևանի և Հայկական Հինգ գյուղերի 1895 թ. տվյալները (աղյուսակ 6) վերաբերում են ոչ թե ծխականների, այլ ամբողջ բնակչության թվաքանակին: Դա հնարավորություն է ընձեռում պարզելու եկեղեցի հաճախողների և ամբողջ բնակչության թվաքանակի հարաբերակցությունը: Աղյուսակում բերված թվական տվյալների համաձայն՝ բնակչության ընդհանուր թվաքանակը եկեղեցի հաճախողների համեմատ 2,5-3 անգամով ավելի էր:

Ինչո՞վ էր պայմանավորված մայրաքաղաքների Հայ բնակչության փոքրաքանակությունը: Նախ՝ խիստ ցածր էր բնական աճը՝ ծննդաբերությունը: Հաճախ ծնունդների թվաքանակը ցածր էր կամ չնչին չափով էր դերազանցում մահացածների թվաքանակը: Այսպես, օրինակ, Մոսկվայի Հայ համայնքում 1851 թ. ծնվել է 10 երեխա, եղել է 2 պսակ, մահացել է 16 հոգի⁵⁹: 1868 թ. ծնվել է 12 երեխա,

⁵⁷ Стѹ Перепись Москвы 1902 года, ч. I, население, Москва, 1906, էջ 215:

⁵⁸ Стѹ Статистический ежегодник города Москвы, издание Статистического отдела Московской городской управы, Москва, 1916, էջ 20:

⁵⁹ Стѹ ЦИАМ, ф. 2050, оп. 1, д. 205, л. 16:

կատարվել է 3 պսակադրություն, վախճանվել է 14 հոգի⁶⁰: 1870 թ. ծնվել է 12 երեխա, մահացել՝ 9 հոգի⁶¹: Փաստորեն, չկար բնակչուլթյան բնական աճ: Եվ դա այն պարագայում, երբ Ռուսաստանում 1860-ական թթ. բնական աճը հասնում էր 13 տոկոսի, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 15 տոկոսի⁶²:

Հայերի թվաքանակը փոքր էր, բայց ավելի էր, քան մյուս ազգերի բնակչուլթյան թվաքանակը: Այսպես՝ 1869 թ. Պետերբուրգում հաշվվում էր ընդամենը 370 հայ: Անգամ այդ թվաքանակով նրանք գերակշռում էին մայրաքաղաքում ապրող արաբներին, պարսիկներին, դնչուներին, թուրքերին, բաշկիրներին, մոնղոլներին, չինացիներին, ճապոնացիներին, հունգարացիներին: Փոքրաքանակ էին հրեաներից, ֆիններից, թաթար բուխարացիներից⁶³:

Մայրաքաղաքներում բնակուլթյուն էին հաստատում հիմնականում առևտրատնտեսական ոլորտի քիչ թե շատ զորեղ ներկայացուցիչները, բարձրաստիճան չինովնիկները, մշակուլթի ասպարեզի ճանաչում ունեցող մտավորականները, ուրիշ խոսքով՝ այն շերտերի ներկայացուցիչները, որոնց ընտանիքներում ծնունդը, երեխաների թվաքանակը շատ փոքր էր և չէր կարող համեմատվել ռուսահայ մյուս գաղուլթիների, առավել ևս Հայաստանի ու նրա գավառների բնակչուլթյան հետ:

Բնակչուլթյան հասարակ շերտերին չէր հաջողվում բնակուլթյուն հաստատել Ռուսաստանի մայրաքաղաքներում աշխատանք չգտնելու, օթևան չունենալու և այլ դժվարուլթյունների պատճառով: Նրանք, անգործ մնալով, թափառականի վիճակի մեջ էին հայտնվում և, որպես կա-

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 135, ք. 20:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 116, ք. 11, 16:

⁶² Տե՛ս А.Г.Рашии, նշվ. աշխ., էջ 5:

⁶³ Տե՛ս Санкт-Петербург по переписи 10 декабря 1869 года, вып. I, Санкт-Петербург, 1872, էջ 99:

նոն, վերադառնում էին իրենց բնակության վայրերը: Խ.Լազարյանը 1864 թ. նամակով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Ա-ին՝ մտահոգիչ այդ Հիմնախնդիրը կարգավորելու նպատակով: Նա տեղեկացնում է, որ Հայաստանից և Հայաբնակ այլևայլ վայրերից պարբերաբար Հայեր են ժամանում Պետերբուրգ և Մոսկվա: Նրանք գալիս են որևէ զբաղմունք գտնելու, աշխատելու, եկեղեցում ծառայելու կամ սովորելու հույսով: Եկողներն իրենց նպատակին չեն հասնում, մնում են անգործ, սկսում են թափառական կյանք վարել, անգամ մուրացկանությամբ զբաղվել: Դրա հետևանքով, նշում է Խ.Լազարյանը, Հայ համայնքներում դժվարին իրավիճակ է ստեղծվում: Համայնքը փորձում է օգնել նրանց, միջոցներ գտնել, վերադարձի ծախսերը հոգալ կամ ինչ-որ ձևով օգտակար լինել: Խ.Լազարյանը խնդրում է կարգ սահմանել, որ առանց կաթողիկոսի երաշխավորության մարդիկ չգնան Պետերբուրգ կամ Մոսկվա՝ բնակվելու մտադրությամբ⁶⁴:

Այսպիսով, հասկանալի է, որ դեպի մայրաքաղաքներ աշխատավորական շերտերի հոսքը խոչընդոտվում էր համապատասխան պայմանների բացակայության և արգելքներ հարուցելու եղանակով: Այդուհանդերձ, Հայկական համայնքների թեկուզև փոքրաքանակ բնակչությունը 70 տարվա ընթացքում (1840–1910 թթ.) ավելացավ շուրջ 3,5–4 անգամ: Հայերի բնական աճը ցածր էր ոչ միայն Ռուսաստանի հարավի, այլ նաև հյուսիսում գտնվող քաղաքների բնական աճի մակարդակից: Պետերբուրգում 100 տարվա ընթացքում (1811–1914 թթ.) աճը հասնում էր 6,3, իսկ Մոսկվայում՝ 6,5 տոկոսի⁶⁵:

Հայ համայնքներում անգամ այդ ոչ բարձր աճը կատարվում էր դրսեկ բնակչության Հաշվին: Ճիշտ է, մայրա-

⁶⁴ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 198, վավ. 37:

⁶⁵ Տե՛ս А.Г.Рашин, նշվ. աշխ., էջ 93:

քաղաքներ այցելող, միջոցներ ու աշխատանք չունեցող մարդկանց համար դժվար ու գրեթե անհնարին էր այդտեղ հաստատվելը, արմատներ գցելը, բայց անհամեմատ դյուրին էր ունևոր շերտերի համար: Առևտրով, ձեռնարկատիրու-
թյամբ զբաղվողները, պետական պաշտոններ զբաղեցնող-
ները, մասնագետ մտավորականները, սպայական աստիճան
ունեցող զինվորականները հաստատվում էին ռուսական
մայրաքաղաքներում և ստվարացնում համայնքների ան-
դամների թվաքանակը: Այդ քաղաքներում հայտնի էին
Լազարյանների, Աբամելիքների, Շահրիմանյանների, Իսա-
խանովների, Դելյանովների, Մանուչարյանների և այլ գեր-
դաստաններ:

Հարկ է նշել, որ Մոսկվայի և Պետերբուրգի ուսում-
նական հաստատուլթյուններում բավականաչափ հայ երի-
տասարդներ էին սովորում: Նրանք բոլորը չէ, որ մասնա-
գիտուլթյուն ձեռք բերելուց հետո հաշտվում էին մայրա-
քաղաքը թողնելու մտքի հետ և բռնում հայրենիք տանող
ճանապարհը: Այդ առիթով ևս ահազանգեք էին հնչում:
«Մշակ» թերթում հրատարակված «Նամակ Մոսկվայից»
թղթակցուլթյունում բարձրացվում էր այն հարցը, որ գա-
վառներից եկած երիտասարդները, ավարտելով ուսումը, չեն
ցանկանում թողնել մայրաքաղաքը և մեկնել իրենց ծննդա-
վայրը՝ աշխատելու⁶⁶: Բնակուլթյուն էին հաստատում, թե-
կուզև սահմանափակ թվաքանակով, նաև տարբեր վայրերից
ժամանած արհեստավորներ ու այլ մասնագետներ: Այդ ճա-
նապարհով ևս ավելանում էր բնակչուլթյան թվաքանակը:

* * *

Ռուսաստանի երկու գլխավոր քաղաքների հայ հա-
մայնքների բնակչուլթյան զբաղմունքի և ոչ միայն նրանց,
այլև առհասարակ մայրաքաղաքների հետ կապված հայերի

⁶⁶ Տե՛ս Մշակ, 1881, 224:

գործունեություն մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նկատի առնել Ռուսաստանի կառավարությունից վարած տնտեսական քաղաքականությունը, դրա յուրահատկությունները:

Հայտնի է, որ ռուսական արքունիքը միջնադարից դեպի նոր դարաշրջան անցնելու փուլում՝ XVI–XVIII դդ., ձգտում էր երկրի սահմաններն ընդարձակել, տարածվել հատկապես դեպի հարավ-արևելք և առևտրի լայն հնարավորություններ ստանալ: Կառավարությունից վարած արևելյան քաղաքականության մեջ առաջնային էր Պարսկաստանի հետ առևտրական բանուկ կապերի հաստատումը: Այդ դարաշրջանում առևտրի գլխավոր ապրանքը մետաքսն էր, մանավանդ հում մետաքսը: Մոսկվայում 1667 թ. Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերություն կնքած պայմանագրի համաձայն՝ Հայ վաճառականները պարտավորվում էին պարսկական մետաքսը ներմուծել միայն Ռուսաստան՝ դրա դիմաց ստանալով համապատասխան արտոնություններ:

Այդ պայմանագրի ընձեռած հնարավորությունները Հայ վաճառականներն օգտագործում էին և միաժամանակ առևտրական կապեր էին հաստատում նաև եվրոպական երկրների հետ: 1676 թ. Յակոբ Պոդոսովը խնդրում է Մոսկվայի կենտրոնում իրեն առևտրական կրպակների տեղ հատկացնել: Նրան այդ հնարավորությունը տրվում է՝ նկատի առնելով, որ նա Մոսկվա է եկել ոչ թե ինքնակամ, այլ կնքված պայմանագրի համաձայն: Հաջորդ տարում հայազգի Սերգեյ Սերգեևը խնդրում է համապատասխան վճարով փոխադրամիջոց հատկացնել իր մեծաքանակ ապրանքները Մոսկվայից Աստրախան տեղափոխելու համար: Նույն այդ վաճառականը 1681 թ. Հայրապետ Մատվեևի հետ Հոլանդիայից ապրանքներ է բերում Մոսկվա: Մի քանի տարի անց վաճառական Յաղոբ Գրիգորևը Հոլանդիա-

յից պարանք է ներմուծում՝ Մոսկվայում և Աստրախանում վաճառելու համար⁶⁷:

Մետաքսը, բամբակը և այլ անհրաժեշտ պարագաներ հայ վաճառականները Ռուսաստան էին ներմուծում գլխավորապես Աստրախանով՝ Կասպից ծով – Վոլգա ջրային ուղիով: Այդ հանգամանքը երկրորդական դեր չկատարեց Ռուսաստանի տարածքում առաջին հայկական գաղութների՝ հենց Աստրախանում և Մոսկվայում ձևավորվելու և զարգանալու գործում: Աստրախանում առաջին մանուֆակտուրան հիմնվում է 1740–1741 թթ. մի խումբ հայ վաճառականների՝ Լ.Շիրվանովի, Գասպար Բոգդանովի և Մակարով եղբայրների կողմից: Նրանք Կասպից ծովում ունեին իրենց առևտրական նավերը և աշխույժ առևտուր էին անում Պարսկաստանի հետ: Մի քանի տարի անց՝ 1746 թ., կառավարութունն ընդառաջ է գնում նրանց նոր դիմումին և թույլատրում մետաքսագործական այդ մանուֆակտուրան տեղափոխել Մոսկվա: Դրանով այնտեղ ձևավորվում է Շիրվանովի և Խաստատովի (նա վերոհիշյալ Մակարովներից էր)՝ XVIII դ. կեսերի Ռուսաստանի խոշոր ֆաբրիկաներից մեկը⁶⁸:

Իսախանով եղբայրները (Մանվել, Արտեմ, Բոգդան, Նիկիտա) 1752 թ. ուսական հպատակութուն են ընդունում և զբանցվում որպես Պետերբուրգի քաղաքացիներ: Նրանց առաջարկին ընդառաջ գնալով՝ կառավարիչ սենատը 1758 թ. նոյեմբերի 19-ի հրամանագրով ստեղծում է Պարսկաստանի հետ առևտուր անող բաժնետիրական ընկերութուն, որի տնօրենը Մանվել Իսախանովն էր⁶⁹:

⁶⁷ Տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, էջ 142, 153, 161, 169:

⁶⁸ Տե՛ս П.Г.Любомиров, Очерки по истории русской промышленности XVII, XVIII и начало XIX века, Москва, 1947, էջ 638:

⁶⁹ Տե՛ս Վ.Գիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 30:

Այսպիսով, XVIII դ. Պետերբուրգում մշտապես կամ ժամանակավորապես հաստատվում են հայ վաճառականներ Իվան Իգմայիլովը, Արտեմ Շերիմանը, Իսախանով եղբայրները, մետաքսի ֆաբրիկաների տերեր Բոգդան Հախվերդովը, Պետրոս Շիրվանովը, Մարգար և Փիլիպոս Մանուչարյան եղբայրները և ուրիշներ: Այդտեղ է տեղափոխվում և սկսում գործել Գրիգոր Խալդարյանի նշանավոր տպարանը:

Մոսկվայի հետ, ինչպես արդեն նշվել է, հայերն առևտրատնտեսական կապերով վաղուց էին կապված: Տակավին XVII դ. 60-ական թթ. այդտեղ ստեղծվում է սեկի պատրաստման արտադրութուն, ինչի համար Մոսկվա է հրավիրվում Հայրապետ Մարտինովը իր աշակերտի և թարգմանչի հետ: Նրան փոխարինում է Մարտին Մարդյասովը, որը նույնպես աշակերտներ էր պատրաստում՝ սեկի արտադրութունը յուրացնելու համար:

XVIII դ. առաջին տասնամյակներում՝ 1721 թ., հայ վաճառական Իգնատի Ֆրանցևը ռուս գործընկերների հետ հիմնեց Մոսկվայի մետաքսագործական առաջին ֆաբրիկաներից մեկը: Նա շուտով դուրս եկավ այդ ընկերութունից և հիմնեց իր սեփական մանուֆակտուրան⁷⁰: 1760-ական թթ. Մոսկվայում 3 մետաքսագործական ֆաբրիկաներ պատկանում էին հայերին, իսկ երկուսում էլ հայերը բաժնետերեր էին վրացի և ռուս վաճառականների հետ⁷¹: Հայ նշանավոր վաճառական Վասիլի Խաստատովն ուներ մետաքսագործական ֆաբրիկա, որը լավագույններից մեկն էր Ռուսաստանում: Նա առևտրական բաժնետիրական ընկերության տնօրենն էր: Այդ ընկերութունը Ադով-սեծով-

⁷⁰ Ст'ю Е.И.Заозерская, Развитие легкой промышленности в Москве в первой четверти XVIII в., Москва, 1953, էջ 308:

⁷¹ Ст'ю П.Г.Любомиров, նշվ. աշխ., էջ 578: .

յան ուղիով մետաքսի մենաշնորհային առևտուր էր անում Կ.Պոլսի ու Իտալիայի քաղաքների հետ⁷²:

Ռուսաստանի մայրաքաղաքներում XVIII դ. երկրորդ կեսից իրենց առևտրաարդյունաբերական գործունեությունը ծավալեցին և շատ նշանավոր դեր սկսեցին խաղալ Լազարյանները⁷³:

Նրանցից Աղազար Լազարյանը ընտանիքով 1755 թ. Աստրախանից տեղափոխվում է Մոսկվա: Մի քանի տարի անց Ջաքար Շերիմանից նա գնում է Ֆրյանովո գյուղի մետաքսագործական մանուֆակտուրան, որը լավագույններից մեկն էր Ռուսաստանում: Դրանով վաճառական այդ ընտանիքը ոտք էր դնում ապրանքային արտադրությունն ուղորտ: Լազարյանները շարունակում էին առևտրական կապեր պահպանել Պարսկաստանի հետ, միաժամանակ կապվել էին Հոլանդիայի, Իտալիայի քաղաքների հետ: Նրանք իրենց արտադրությունը տարածեցին նաև մեկ այլ ճյուղում՝ լեռնաարդյունաբերություն մեջ:

Ռուսաստանի կենտրոնական երկու քաղաքների Հայկական Համայնքների բնակչությունն տնտեսական գործունեությունը հետագայում ևս կաղմեցին առևտուրն ու թեթև արդյունաբերությունը, մասնավորապես մանածագործությունը: XIX դ. երկրորդ կեսին Մոսկվա-

⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 576:

⁷³ Լազարյաններն իրենց ժառանգական տոհմաձառը սկսում են XVIII դ. սկզբներից՝ Շահ Աբասի ժամանակներում գործող Մանուկ Աղազարյանից: Վերջինիս թոռան թոռն էր Աղազարը, որն իր ընտանիքով Պարսկաստանում Նադիր շահի ապամությունից հետո (1747 թ.) սկսված անիշխանական խառնակությունների ժամանակ գաղթում է Ռուսաստան՝ սկզբում՝ Աստրախան, ապա՝ Մոսկվա: Համբավվոր այդ գերդաստանի մասին տե՛ս Վ.Դիլոյանի «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» աշխատությունը, որի զգալի մասը (էջ 17–129) նվիրված է Լազարյանների տնտեսական գործունեությանը XVIII դ. երկրորդ կեսին:

յում գործում էր Նուսնասյանի թելի գործարանը⁷⁴: «Մշակ» թերթի թղթակիցը XIX դ. վերջերին հաղորդում է, որ քաղաքը, լինելով խոշոր առևտրաարդյունաբերական կենտրոն, իրեն է ձգում շատ հայ վաճառականների, որոնք գործարաններին կամ հում նյութ՝ բամբակ, մետաքս, թել, բուրդ են մատակարարում, կամ գնում են մեծաքանակ մանուֆակտուրային ապրանքներ և իրացնում Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում: Հետագայում հայերը մայրաքաղաքներում շարունակում էին զբաղվել մետաքսագործությամբ, ինչպես նաև արտադրության այլ ճյուղերով: Հայաստանի և Վրաստանի շատ հայ առևտրաարդյունաբերողներ իրենց առևտրական կամ արտադրական ձեռնարկություններն ունեին Մոսկվայում և Պետերբուրգում: Նրանց մի մասը գործունեություն էր ծավալում գործակալների միջոցով: Թիֆլիսից Մոսկվայում մանուֆակտուրային ձեռնարկություն ունեին Ի.Զիթխանովը, Օ.Սարգիսովը, Ս.Զալինովը: Բանկային գրասենյակներ ունեին Ա.Փրիզոնովը, Ա.Մանթաշևը, Ե.Ռոստինովը և շատ ուրիշներ: Շուշիից մետաքսի ֆաբրիկա ունեին Աբանյանց եղբայրները, Ա.Ադամովը, Պատվականով եղբայրները, Նախիջևանից՝ Մահտեսի Սահակը, Ղազարյանցը, Ադամյանցը, իսկ կաշվի գործարան՝ Կ.Կաֆիևը և այլն⁷⁵:

Պետերբուրգում, բացի կովկասյան գինու վաճառքից, նաև արևելյան ապրանքների առևտուրն էր հայերի ձեռքում, որոնց մեջ առանձնանում էր Խոջա Ինիաթովը: «Գոստինի դվորում» առևտուր էին անում Տեր-Ստեփանյանները, Զանիբեկովների ընկերությունը, Խարազովը, Ամիրագովը, Ա.Կորգանովը, Ա.Մանթաշևը, Դ.Սարաջևը և

⁷⁴ Տե՛ս Մշակ, 1882, 184:

⁷⁵ Տե՛ս Գ.Тер-Габриелян, Армянская колония в Москве и Петербурге, Москва, 1888, էջ 47-63:

չատ ուրիշներ: Գ.Տեր-Գաբրիելյանը նշում է, որ չափ չկար ամեն տարի Պետերբուրգ այցելող հայերի թվաքանակին⁷⁶:

Այդ ամբողջ հարյուրամյակում հետզհետե մայրաքաղաքներում ավելանում էր կրթական, գիտական ոլորտի հայ աշխատողների, զանազան պաշտոնյաների, գինվորականների թվաքանակը: Ուրիշ խոսքով, ռուսական մայրաքաղաքներն իրենց էին ձգում գործարար ու նախաձեռնող ինչպես տնտեսութան, այնպես էլ հատկապես մշակույթի գործիչներին:

⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 101–109:

Գլուխ երրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Քաղաքական մաքառումների քառուղիներում

Ռուսաստանի երկու մայրաքաղաքների հայկական համայնքները, ինչպես արդեն նշվեց, կազմավորվեցին հայ-ռուսական հարաբերությունների սերտացման, Հայաստանը Ռուսաստանի օգնությունը ազատագրելու ռուսական կողմնորոշման արմատավորման շրջանում: Նրանք դարձան նոր շրջանի հայ-ռուսական հարաբերությունների սերտացման ակտիվ ու գործուն մասնակիցները: Ակզբնական շրջանում մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը, հայ հասարակական միտքը, նաև հայ համայնքների ռուսական արքունիքին մոտ կանգնած նշանավոր գործիչները հետամուտ էին օտարի լուծը թոթափելու, հայրենի երկիրն ազատագրելու ուղղությամբ գործունեություն ծավալելու կենսական անհրաժեշտություն դարձած խնդրին: Հետագայում նրանց զբաղեցնում էր գերազանցապես արևմտահայության պատմական ճակատագրի հարցը:

Հայ համայնքների նշանավոր դեմքերից հատկապես Լազարյաններն էին նպաստավոր պայմաններ ստեղծում Ռուսաստանի միջոցով Հայաստանն ազատագրելու գաղափարակիր ուժերի, առաջին հերթին հայոց եկեղեցու համար: Ի մասնավորի հող էին նախապատրաստում և խթանում առանց այն էլ նման ուղղորդում ունեցող ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղունթյանի գործունեությունը: Այդ

գործընթացն սկսվեց Հենց Հայ Համայնքների ձևավորման շրջանից՝ XVIII դ. վերջին քառորդից:

Հ.Արղուլթյանը 1779 թ. հայրապետական այց է կատարում մայրաքաղաքների հայ համայնքներ: Հուճկարին նա ժամանում է Մոսկվա և շուրջ 6 ամիս մնում է այդտեղ: Այդ ընթացքում նրա հետ բազմիցս հանդիպումներ է ունենում և սիրալիր ընդունելություններ կազմակերպում Մոսկվայի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Պլատոնը: Նրանք միմյանց ծանոթացնում են իրենց դավանանքի, եկեղեցիների, երկրների պատմությունը: Հ.Արղուլթյանը լինում է Ուսպենսկի, Տրոյիցկի և ուրիշ եկեղեցիներում: Զատկի տոնին Պլատոն սրբազանը եկեղեցի է հրավիրում Հ.Արղուլթյանին, որտեղ վերջինս պատարագ է մատուցում: Այդ կապակցությամբ Հայ հոգևոր առաջնորդն իր օրագրություններում նշում է. «...բայց զկնի այսր մինչ յաճախեցին բազմութիւնք ի եկեղեցիս մեր ի ժամ պատարագելոյն մերոյ նախարարք և իշխանք, վաճառականք և հասարակ ժողովուրդք, թուլացաւ աղաւաղել նոցա և մանաւանդ թէ՛ յառաջինն էր այս տեսութիւն նոցա հայոց եպիսկոպոս իւրով ձեւով գտանիլ ի եկեղեցիս իւրեանց»¹:

Ապա օծում է Մոսկվայի նորաշեն Ս.Խաչ եկեղեցու հիմնաքարերը. «Մայիսի Ի.Ջ օժաք զհիմանց քարինս Մօսկովու նորաչէն՝ եկեղեցւոյն յոյժ հռչակաւ և մեծ հանդիսաւորութեամբ... և անուն եկեղեցւոյն անուանակոչեցաւ սուրբ Խաչվերաց. զի յիշատակ հանդուցեալ աղայ Խաչիկին կանգնեցին, որ էր երրորդ որդի Եղիազար աղային»²:

Ռուսահայ թեմի առաջնորդին մշտապես ուղեկցում, հոգևոր և աշխարհիկ իշխանավորներին ծանոթացնում և

¹ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ. Յովսէփ կաթողիկոս Արղուքեան, մասն Ա, 1778–1800, հրատարակեց Գիւտ Ա. քահանա Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 20:

² Նույն տեղում, էջ 21:

Թարգմանչի դեր էին կատարում Մոսկվայի համայնքի ճանաչված դեմքերը, առաջին հերթին Հովակիմ, Մինաս և Պետերբուրգից ժամանած Հովհաննես Լազարյան եղբայրները, Հովհաննես Սմբատովը և ուրիշներ:

1779 թ. հուլիսին Հ.Արղուժյանը Հ.Լազարյանի հետ մեկնում է Պետերբուրգ: Պետական ամենանշանավոր դեմքերից Նովորոսիայի կառավարիչ իշխան Գրիգորի Պոտյոմկինը, իմանալով նրանց ժամանելու մասին, նույն օրն ընդունում և երկու ժամ հարցուփորձ է անում հայոց եկեղեցու, նրա դավանանքի և այլ հարցերի շուրջ: Հաջորդ օրը եկեղեցում հանդիպում է կազմակերպվում կայսրուհու Եկատերինա II-ի հետ, որը իշխան Գ.Պոտյոմկինի միջոցով տեղեկանում էր նրանց մասին: «Թագուհին եկն ի սեղանն, – գրում է Հ.Արղուժյանը, – մեզ գլուխ ետ ծիծաղելով (ժպտալով – Վ.Բ.) և քնեազն ընդ նմա, նոյնպէս և մեք իւրն. անդ կալով և մեզ նայելով ի վերայ մեր խօսէր և քնեազն պատասխանէր»³:

Նովգորոդի և Պետերբուրգի հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Գաբրիելը Հ.Արղուժյանին ծանոթացնում է մայրաքաղաքի նշանավոր հուշարձաններին, կազմակերպում ընդունելություններ: Հ.Արղուժյանը հանդիպումներ է ունենում նաև պետական գործիչներ Ի.Գորիչի, Ն.Պանինի, Ա.Կուրակինի և ուրիշների հետ: Նրան այդտեղ ևս մշտապես ուղեկցում և հաճախ թարգմանչի դեր էին կատարում հայ համայնքի ճանաչված դեմքերը Մարգար և Փիլիպոս Մարգարյան եղբայրները, Հարություն Դավիդովը, Հովհաննես Խոջամալյանը: Հովհաննես Լազարյանը ուղիներ էր գտնում արքունիքի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպումներ կազմակերպելու համար և Հ.Արղուժյանին առաջնորդում էր նրանց և կայսրուհու հետ հանդիպումների: Զրույցները, մտքերի փոխանակում-

³ Նույն տեղում, էջ 23:

ներն ամենուրեք Հայաստանի իրավիճակի և նրա ազատագրման խնդիրների շուրջ էին:

1780 թ. հունվարի առաջին օրերին Հ.Լազարյանն ու Հ.Արղուժյանը առանձին-առանձին հանդիպում են Ի.Գորիչի, Ա.Սուվորովի և Գ.Պոտյոմկինի հետ: Այդ հանդիպումներում քննարկվում են դեպի Հարավային Կովկաս արշավանք կազմակերպելու հետ կապված՝ Պարսկաստանին, նրա վիճակին, բնակավայրերին, ռազմական ուժերին, Ղարաբաղի մելիքներին, էջմիածնին, Վրաստանին և Հերակլ II թագավորին առնչվող հարցերը: Քաղաքական բնույթ կրող այդ բանակցությունները հանգամանորեն լուսաբանվել են պատմագիտական ուսումնասիրություններում⁴: Իշխան Գ. Պոտյոմկինի առաջարկով Հ.Լազարյանը և Հ.Արղուժյանը մեկնում են Ցարսկոյե սելո, որտեղ Եկատերինա II-ը հարգանքով ընդունում է նրանց: Հ.Լազարյանը կայսրուհուն է հանձնում իրենց խնդրագիրը: Նրանց սիրալիր ընդունում է նաև կայսրուհու ժառանգը՝ Պավել Պետրովիչը: Նրանց ողջունում է նաև կայսրուհու թոռը՝ փոքրահասակ Ալեքսանդր Պավլովիչը:

Նույն թվականի փետրվարին Հ.Արղուժյանը հանդիսավոր պայմաններում օծում է Ս.Կատարինե եկեղեցու

⁴ Տե՛ս Ա.Р.Иоаннисян, Иосиф Эмин, Ереван. 1945 (1989), А.Р.Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1948 (1990), М.Г.Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга I, Ереван, 1956, М.Г.Нерсисян, А.В.Суворов и русско-армянские отношения в 1770–1780-х годах, Ереван, 1981, О.П.Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII века, Москва, 1966, Վ.Ա.Դիրոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դ. երկրորդ կես), Երևան, 1966, Պ.Չոբանյան, Հայ-ռուսական-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս.Էջմիածին, 2006, Армяно-русские отношения во II половине XVIII века (сборник документов), под ред. М.Г.Нерсисяна, т. 4, Ереван, 1990 և բազմաթիվ այլ աշխատանքներ:

Հիմնադրումը: «Սույն ամսոյ 18 օժաք զեկեղեցին մեծաւ Հանդիսաւորութեամբ յանուն սուրբ կուսին Կատարինէի, որում կցորդիւր և մեծ թագուհին. եկն պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեմկինն և ամենայն նախարարքն և մեք գեղեցիկ արարողութեամբ Հաճոյացուցաք զմիտս ամենից, որ բոլորեքեան Հաւանեցան բարեզարդ արարողութեան մերոյս եկեղեցւոյն: Քարոզ էաք պատրաստեալ և ուսուցիչն թարգմանեալ. յորժամ մեք կանգնեցաք ասել զքարոզն Հայկական, նոքա զթարգմանեալսն բաժանեցին իշխանացն ուստաց մինչև Հինգ Հարիւր Հատ: Մատուցաք պայծառափայլ քնեազին և վասն ողորմած թագուհւոյն, որ յատկապէս էաք կաղմեալ, նոյնպէս և վասն ժառանգոյն մեծ իշխան Պաւլ Պետրովիչին և մեծ դշխոյ Մարիա Ֆեօդովնային, զորս Աղայ Յովհաննիսի ձեռամբ մատուցաք ի տան վեզիր ազամ գրաֆ Նիկիտայ Իււանիչ Պանինին, որք ընկալեալ յարգեալ էին»⁵:

Իրադարձությունների բերումով փաստորեն Հայաստանը ներկայացնող գործիչը պատմութեան մեջ առաջին անգամ էր պաշտոնապես Հանդիպում Ռուսաստանի կայսրի և պետական նշանավոր գործիչների հետ: Հանդիպման առիթը նշանակալի էր: Կայսրութեան մայրաքաղաքի կենտրոնում ոչ միայն արտոնվել էր Հիմնել Հայկական եկեղեցի, այլև դրա Հիմնադրման Հանդեսին մասնակցում էր երկրի ողջ ղեկավարութիւնը:

Հետաքրքիր է պարզել, թե ինչ նշանակութիւն էր տալիս և ինչպիսի հարցադրումներով էր ներկայանում Հայկական կողմը: Այդ Հանդիպումը դիտում էր սոսկ որպէս եկեղեցու օժման արարողութիւն, թե՞ օգտագործում էր պահը և հնչեցնում նաև այդ օրերին պետական գործիչների հետ քննարկվող Հայաստանի ազատագրութեան հար-

⁵ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, մասն Ա, էջ 26–27, Պ.Չորանյան, նշվ. աշխ., էջ 306–307:

ցերը: Եթե անդրադառնում էր դրանց, ապա ինչպիսի՞ մոտեցմամբ:



Հովսեփ Արղության

քրիստոնեական հավատի⁶: Արևելքից եկող տևական չարիքի հետևանքով հայոց տաճարներն ավերվում են, ժողովուրդը հալածանքների է ենթարկվում: Հոգևոր առաջնորդը հանգամանորեն ներկայացնում է անհավատների տիրապետության ներքո երկրի ու ժողովրդի ծանր դրությունը: Ապա հավելում է, որ եկեղեցին ևս հանգիստ ու անվտանգ հանգրվան չէր գտնում:

Սակայն Տերը հայ ժողովրդին խղճաց և ուղղորդեց դեպի փառապանծ Ռուսաստան: Պետրոս Մեծը համախմբեց, իր հովանու տակ առավ հայ ժողովրդին: Ցավոք, շուտով զրկվեցինք նրանից: Նախախնամության կամքով դահ

⁶ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 110, վավ. 5, ք. 3-4:

Հ.Արղուժյանը ավելի քան կես ժամ տևող երկարաշունչ խոսքում ներկաներին տեղյակ է պահում, որ տակավին վաղ անցյալում առաքյալների միջոցով Հայաստանում տարածում է գտել քրիստոնեությունը: Այդ շրջանում տարածված էր նաև կուսպաշտությունը: Մ. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ Թագավորի հավանությամբ երկրից քշում է անհավատներին և ամենուրեք եկեղեցիներ կառուցում ու հայ ժողովրդին բերում

բարձրացավ Պետրոս Մեծի գործը շարունակող Եկատերինա Ալեքսեևնան: Նա կայսրության սահմաններում Հայ ժողովրդին տվեց ամուր և անվտանգ պայմաններ, թույլատրեց ամենուր կառուցել եկեղեցիներ: Վերջապես արտոնեց մայրաքաղաքում հիմնել նշանավոր այս շինությունը:

Այնուհետև Հ.Արղունթյանը նշում է, որ եկեղեցին նվիրված է սուրբ նահատակ Եկատերինային: Հետագա սերունդները կարող են զոհաբերություն կատարել՝ հիշատակելով տաճարի հիմնադիր կայսրուհուն: Այդ տաճարն իրենք ընդունում են որպես Աստծո և Նորին կայսերական մեծության պարգև: Ապա բարեմաղթություններ է հղում կայսերական գերդաստանին, ռուսական ուղղափառ եկեղեցուն, հոգևորականությանը, պետական պաշտոնյաներին: Խոսքն ավարտում է նրանով, որ աղոթում է կայսրուհու համար, որը մշտապես պաշտպան է կանգնում քրիստոնյաներին⁷:

Այսպիսով, հայոց հոգևոր առաջնորդը ռուսներին ծանոթացնում է հայերի՝ քրիստոնեական հավատի գալու պատմությանը: Ապա պատմում է հետագա շրջանում մահմեդականների ավերիչ գործունեություն, երկրի ու ժողովրդի կրած հալածանքների ու տառապանքների մասին: Եվ, որ կարևորն է, քրիստոնյա ժողովուրդների պաշտպանությունը կապում է Ռուսաստանի և անձամբ Եկատերինա կայսրուհու անվան հետ: Հ.Արղունթյանն ու Հ.Լազարյանը Ռուսաստանի պատասխանատու պաշտոնյաների հետ եթե քննարկում էին պարսկական արչավանքի և Հայաստանի ազատագրությունն առնչվող կոնկրետ խնդիրներ, ապա այստեղ այդ նույն հիմնահարցերը ներկայացվում էին ավելի լայն տեսադաշտում: Քարոզում, շեշտվում էր հայերի՝ քրիստոնեական հավատին գալու և առհասարակ քրիստոնյաների պաշտպանություն հարցում Ռուսաստանի մեծ

⁷ Տես նույն տեղում, ք. 4-8:

առաքելությունը: Ռուսաստանին գրեթե անծանոթ, ոռու պաշտոնյաների հետ հանդիպումների փորձ չունեցող նորանշանակ հոգևոր առաջնորդի խոսքը, անտարակույս, կազմվել էր Հովհաննես Լազարյանի ակտիվ մասնակցությամբ: Այն ոռուսահայ շրջանների մտայնության արգասիքն էր:

Հաջորդ տարում Հ.Արղղությանը մեկնում է Մոսկվա և 1781 թ. սեպտեմբերի 9-ին քաղաքի դեներալ նահանգապետ Վասիլ Դոլգորուկովի և հոգևոր ու աշխարհիկ այլ մեծամեծների մասնակցությամբ օծում Հ.Լազարյանի հիմնած Ա.Նաչ եկեղեցին⁸:

Մայր հայրենիքի պատմական ճակատագրով մշտապես մտահոգ լինելու՝ ոռուսահայ գաղութների և առաջին հերթին մայրաքաղաքների հայ համայնքների վերաբերմունքը շարունակվեց նաև հետագա տարիներին: Հայ-ռուսական հարաբերությունների սերտացման այդ շրջանում Հայաստանն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խնդիրը թվում էր այնքան իրական, որ ոռուսահայ առաջադեմ գործիչները մշակում և ոռուսական արքունիք են ներկայացնում վերականգնվելիք հայկական պետականության և Ռուսական կայսրության հարաբերություններին նվիրված դաշնագրեր:

Հայտնի է, որ դեռևս 1769 թ. Աստրախանի առևտրաարդյունաբերական շրջանների նշանավոր ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանը կազմում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ուղագրով նախագիծ: Դրա մշակմանը մասնակցում կամ հեղինակին խրախուսում են Ռուսաստանի ազդեցիկ հայերից Գ.Կամպանյանը, Հ.Լազարյանը և ուրիշներ: 1783 թ. Հ.Արղղությանը ներկայացնում է հայկական պետականությունը վերականգնելու մեկ այլ՝ առավել ծավալուն ու հիմնավոր նախագիծ, որն անվան-

⁸ Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, մասն Ա, էջ 44-45:

վում էր «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկու ազգաց Ռուսաց և Հայոց»⁹: Այն արտահայտում էր Ռուսաստանի հայկական համայնքների, հատկապես մայրաքաղաքների հայ բնակչութեան մտայնութիւնը և կազմվել էր Հ.Լազարյանի մասնակցութեամբ կամ հավանութեամբ: Նախագիծը, փաստորեն, նվիրված էր Ռուսաստանի հովանու տակ վերականգնվող ապագա Հայաստանի քաղաքական կառուցվածքին, հայկական պետութեան և Ռուսական կայսրութեան փոխհարաբերութիւններին: Հայոց թագավորի, որը պետք է դավաներ Հայոց եկեղեցուն, ընտրութեան իրավունքը վերապահվում էր ռուսաց կայսրին: Հայկական թագավորութեան մայրաքաղաքը նախատեսվում էր Վաղարշապատը կամ Անին և կամ Արարատյան նահանգի որևէ այլ պատշաճավոր բնակավայր: Հայաստանն ունենալու էր իր պետական կնիքը, դրոշը, պատվո նշանները: Ինչպես Հայտնի է, այդ ծրագրերն ուղադրութեան չարժանացան:

Հետագա շրջանում, հատկապես XIX դարում ընդհանուր իրադրութեան փոփոխութեան հետ տարբեր ձևեր էին ընդունում մեզ հետաքրքրող գաղութների բնակչութեան հայրենի երկրին ու հայութեանն աջակցելու մեթոդները, բայց այդ ձգտումը և այդ ուղղութեամբ կատարվող գործնական քայլերը մշտապես մնում էին անփոփոխ:

Ռուս-թուրքական 1806–1812 թթ. և 1828–1829 թթ. պատերազմների բաղկանյան ռազմաճակատում ռուսական զենքի հաղթանակին նպաստելու և տեղի հայ բնակչութեան հոգսերը դարմանելու նպատակով այդտեղ շխուշ գործունեութիւն էին ծավալել մի շարք հայեր, այդ թվում հոգևոր գործիչներից Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը և Լազարյան գերդաստանի նշանավոր դեմքերից Նաչատուր Լազարյանը: Գ.Զաքարյանը ռուս-թուրքական առաջին պատերազմի ժամանակ, 150 զինվորների գլուխ անցած,

⁹ Տե՛ս նույն տեղում, գիրք Դ, Թիֆլիս, 1894, էջ 731–734:

կռվում էր թուրքական զորքերի դեմ: Նա մասնակցում է Ռուսչուկ քաղաքի գրավմանը և ցուցաբերած արիությունը համար պարգևատրվում Ս.Աննայի երկրորդ աստիճանի շքանշանով¹⁰: Կայսրի հանձնարարությունները Խ.Լազարյանը մեկնում է գործող բանակ և ընդգրկվում ռուս հրամանատարությունների կազմում, միաժամանակ գործակցում ու արժանահիշատակ գործունեություններ ծավալում այդ պատերազմների ակտիվ մասնակից նշանավոր Մանուկ Բեյի հետ, որի դատեր հետ էլ ամուսնանում է 1819 թ.:

Խ.Լազարյանն ամեն ինչ անում էր Դանուբյան երկրների հայությունը դժվարին կացությունից դուրս բերելու, նրա բաղմապիսի հոգսերը թեթևացնելու համար: Այդ նպատակով նա 1828 թ. և հետագայում բազմիցս, մանավանդ դավանանքի հարցերով, դիմում է Մոլդովայի և Վալախիայի իշխանավորներին, որոնք անմիջապես արձագանքում են նրա բարձրացրած հարցերին: Մոլդովայում Ս.Աստվածածին և Վալախիայում Ս.Գևորգ եկեղեցիներն անբարեկարգ վիճակում էին, իսկ վերջինս դարձրել էին միթերանոց: Մեծ Հեղինակությունից օգտվող Խ.Լազարյանի միջնորդությամբ ամեն ինչ կարգավորվում է, վերափոխվում ու բարեկարգվում են եկեղեցիները: Նա մեծ օգնություն է կազմակերպում Բուքրեշի դպրոցին, եկեղեցուն, բնակչությունը և հայերին հորդորում լինել միասնական: Ռուս-թուրքական պատերազմներում մատուցած ծառայությունների համար Խ.Լազարյանը պարգևատրվում է կառավարական բարձր շքանշաններով¹¹:

Մոլդովահայերը չէին մոռանում Խ.Լազարյանի սրտացավ վերաբերմունքը և մեկ տասնամյակ անց՝ 1839թ.,

¹⁰ Տե՛ս Ա.Աղամյան, Վավերագրեր ռուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809–1911). – ՀԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1954, 9, էջ 98–100:

¹¹ Տե՛ս Հակոբ Սիրունի, Նյութեր Ռուսներ երկրներու հայոց անցյալեն. – ԲՀԱ, 1972, 2, էջ 164–170:

կրկին դիմում են նրա օգնությունը: Նրանք Հայտնում են իրենց անձուկ պայմանների, իշխանավորների ապօրինությունների ու ճնշումների մասին և խնդրում դիմել Հայոց կաթողիկոսին, որ վերջինս ազդի տեղի մեծամեծների վրա: Խ.Լազարյանն անմիջապես արձագանքում է նրանց խնդրանքին: Նա Բոթոշանի Հայերին Հայտնում է, որ ինքն այդ հարցով դիմել է կաթողիկոսին: Դրանից բացի՝ նրանց հոգսերը թեթևացնելու նպատակով դիմում է ոչ թե տեղական իշխանություններին, այլ ավելի բարձր աստիճանի մեծ ազդեցություն ու հեղինակություն ունեցող պաշտոնական անձնավորության՝ կոմս Ա.Բենկենդորֆին¹²:

Մայրաքաղաքների Հայ Համայնքների նշանավոր դեմքերը, ռուս-թուրքական պատերազմի բալկանյան ռազմաճակատից բացի, նույնիսկ դրանից առաջ ուղիուղով հետևում էին կովկասյան ռազմաբեմում կատարվող անցքերին: Բանն այն է, որ տակավին ռուս-պարսկական պատերազմի ընթացքում՝ 1827 թ. աշնանը, մանավանդ Երևանը գրավելուց հետո, երբ ակնհայտ էին դարձել Պարսկաստանի պարտությունը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցը, Պետերբուրգի մի խումբ Հայրենասեր մտավորականներ Ռուսաստանի կազմում Հայաստանի իրավաքաղաքական կարգավիճակը սահմանող նախագիծ են մշակում: Այդ առումով միանգամայն հասկանալի է, թե ինչու մայրաքաղաքների Հայ Համայնքներին հատուկ տեղյակ է պահվում 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու մասին¹³: Նախագծի հեղինակը Խ.Լազարյանն էր: Նախագծի կազմմանը ակտիվորեն մասնակցել էին Խ.Լազարյանի հետ սերտորեն կապված իշխան Կոստանդին Արզուլ-

¹² Տե՛ս Առյուծ տեղում, էջ 184–189, Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 162:

¹³ Տե՛ս ЦИАМ, ф. 2050, оп. 1, д. 62, л. 2:

յան-Երկայնաբազուկը և նշանավոր բանասեր Ալեքսանդր Խուդաբաշյանը¹⁴։

Նախագծի հեղինակները ջանացել էին Ռուսաստանի կազմում ապահովել Հայաստանի լայն ինքնավարությունը։ Նրանք, փաստորեն, առաջարկում էին վերականգնել հայկական թագավորությունը և Նիկոլայ I-ի թվարկվող տիտղոսների թվում ավելացնել նաև «Հայոց թագավոր» տիտղոսը։ Այդ պարագայում հայ ժողովուրդը կանցներ ռուսաց կայսեր հովանու ներքո, մանավանդ որ ազգի գլուխ կանգնած վեհափառ հայրապետը բարձրագույն հրովարտակով (կոնդակով) կօրհներ այդ պատմական իրադարձությունը։ Նրանք նշում էին նաև այն կարևոր հանգամանքը, որ հայկական թագավորության վերածնունդը դրական մեծ ազդեցություն կգործի Եվրոպայի և Ասիայի երկրներում բնակվող հայերի վրա։ Նախատեսվող հայկական թագավորությունը ձևավորվելու էր հին հայկական պետության գլխավոր շրջաններից՝ Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Ծափի, Ծամախի գավառներից և Էջմիածնի Մայր աթոռից։

Հայկական պետականությունը վերականգնելու կամ լայն ինքնավարություն ստեղծելու հեղինակների մտայնությունը երևում է նաև հետևյալ փաստից։ Կ.Արղուժյան-Երկայնաբազուկը, որ Հովսեփ Արղուժյանի թոռն էր, Խ.Լազարյանին ուղղած նամակներում հայտնում է, որ պապի թղթերում գտել է մի պայմանագրի տեքստ հայկական թագավորության մասին, և այժմ հնարավորություն է

¹⁴ Հայ հայրենասերների խմբի կազմած նախագծի մի տարբերակը Մոսկվայի ռազմապատմական արխիվի Լազարյանների ֆոնդում հայտնաբերել է անվանի պատմաբան Վ.Պարսամյանը և որպես արխիվային փաստաթուղթ՝ հավելվածի ձևով տեղադրել իր «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» (Երևան, 1947) աշխատության վերջում (էջ 245–261)։ Այդ փաստաթղթից՝ որպես սկզբնաղբյուրի, օգտվում ենք մենք։

ստեղծվել կրկին վերադառնալու այդ գաղափարին¹⁵: Խոսքը վերաբերում է Հ.Արղունթյանի և Հ.Լազարյանի կազմած վերը հիշատակված նախագծին: Հատկանշական է, որ Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչների ժառանգները շուրջ կես դար անց նվիրումով հետևում էին իրենց նախորդների օրինակին, նրանց ուղենշած գաղափարներին:

Նախագծի հիմնական հեղինակ Խ.Լազարյանը ուսուպարսկական պատերազմի ավարտման փուլում սերտ կապերի մեջ էր վիրահայոց թեմի առաջնորդ, ազգային նշանավոր գործիչ Ներսես Աշտարակեցու հետ: Լազարյանների արխիվում պահպանվել են Խ.Լազարյանին հասցեագրված Ն.Աշտարակեցու կողմից պարբերաբար ուղարկվող նամակները՝ սկսած 1827 թ. ապրիլ ամսից, որոնցում նա տեղեկութուններ էր հաղորդում ռազմական գործողությունների, տեղում տիրող ընդհանուր դրություն մասին¹⁶:

Ահա, ստեղծված իրավիճակին քաջատեղյակ լինելը, պատերազմը շուտով ավարտին հասնելու հետ կապված պատմական հարմար պահը ազգի շահերին ծառայեցնելու ձգտումը իրենց արտացոլումն են գտել նախագծում:

Ռուսաստանի տիրապետություն տակ անցնող Հայաստանում բնակչության քանակն ավելացնելու նպատակով նախագծի 5-րդ հոդվածով անհրաժեշտ էր համարվում Պարսկաստանից Հայ բնակչության ներգաղթ կազմակերպելը: Պահանջվում էր հատուկ օրենսդրությամբ հաստատագրել, որ արգելք չհարուցվի գաղթող հայերի նկատմամբ, իսկ Հայաստանում նրանցից յուրաքանչյուրի և բոլորի անվտանգությունն ապահովվի:

Գնահատելին այն է, որ հեռավոր Պետերբուրգում ապրող Հայ հայրենասերներն այնքան լավատեղյակ էին

¹⁵ Տե՛ս Վ.Պարսամյան, նշվ. աշխ., էջ 146:

¹⁶ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 13, 30, 53, 69, 153:

Անդրկովկասի ժողովրդագրական վիճակին, որ տեսնում էին ներգաղթ կազմակերպելու հույժ կարևորությունը: Թերևս պատահական չպետք է համարել, որ ներգաղթի կազմակերպման հանձնախմբի մեջ ներսես Աշտարակեցու, գեներալ Կրասովսկու հետ միասին ընդգրկվեց նաև Պետերբուրգից հատուկ հրավիրված Լազարյան տոհմի ներկայացուցիչ Խ.Լազարյանի եղբայրը՝ գնդապետ Եղիազար Լազարյանը, որը եռանդուն գործունեություն ծավալեց ներգաղթի կազմակերպման ուղղությամբ:

Նախագծում մեծ տեղ էր տրվում երկրի սահմանների պաշտպանությանը (հոդված 1, 6, 7, 8, 9, 10, 11), մանավանդ որ Հայաստանը միացնելով ընդարձակվելու էր Ռուսաստանի հարավային սահմանը: Լեռնականների հարձակումներից և հարևան պետություններից սպասվող վտանգներից պաշտպանվելու համար անհրաժեշտ էին գտնում սահմանամերձ տարածքներում բնակեցնել Ռուսաստանին հավատարիմ քրիստոնյաների, հատկապես հայերի:

Նախագծի հեղինակներն այդքանով չէին բավարարվում, առաջարկում էին ստեղծել ներքին սահմանապահ զորք տեղի բնակիչներից, քանի որ ռուս զինվորները, կլիմային չհարմարվելով, հիվանդանում և մեծ քանակով մահանում էին: Սահմանապահ զորքի բոլոր հարցերը հստակ սահմանելու նպատակով անհրաժեշտ էր համարվում ունենալ կանոնադրություն: Այն մշակելու համար առաջարկվում էր բանիմաց անձնավորություններից Պետերբուրգում ստեղծել հատուկ կոմիտե: Առաջարկվում էր սահմանափակ զորամասերի լավագույն ծառայողներից ձևավորել դվարդիական դրուժինա, որի կադրերի պատրաստումն իրականացվելու էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (հոդված 14):

Խ.Լազարյանը մասնակցում է նաև Հայաստանի սահմանների հարցի բարձրացմանը: Ներսես արքեպիսկոպոսը բանակցությունների ժամանակ ջանում է Պարսկաստանի

Հետ Հայաստանի սահմանագիծ դարձնել ոչ թե Արաքս գետը, այլ Արարատյան լեռնաշղթան, որպեսզի Մակուհի գավառը ևս միացվի Հայաստանին, որն իր լեռներով ու կիրճերով կդառնար բնական պատվար: Դա իրականացնելու համար ներսես արքեպիսկոպոսը քանիցս դիմում է Խ.Լազարյանին՝ խնդրելով միջնորդել բարձրագույն իշխանությունների առջև, ինչը Խ.Լազարյանը կատարում է: Ցավոք, գեներալ Ի.Պասկևիչն անդրդվելի է մնում, և հարցը դրական լուծում չի ստանում¹⁷:

Նախագծում տեղ գտած գրեթե բոլոր առաջարկներն իրականացնելու գործում հույժ կարևորություն էր տրվում եկեղեցուն, նրա հոգևոր պետերի մասնակցությանը: Ի դեպ, հոգևոր իշխանությանն առաջնային նշանակություն տալը, նրան մեծ իրավունքներ վերապահելը հատուկ է եղել Լազարյաններին: Հայտնի է, որ եկեղեցու հոգևոր պետերի միահեծան իշխանությունը սահմանափակելու և կոլեկտիվ ղեկավարում մտցնելու գաղափարը ևս մարմնավորվեց Լազարյանների միջավայրում: Տակավին 1805 թ. Մինաս Լազարյանի մոտ հղանում է սինոդ ստեղծելու անհրաժեշտությունը, և նույն տարվա սեպտեմբերին նա ներկայացնում է սինոդի՝ 22 կանոններից բաղկացած կանոնադրությունը¹⁸:

Խ.Լազարյանը ամեն կերպ փորձում էր համոզել երրորդ բաժանմունքի պետ, Նիկոլայ I կայսեր մերձավոր, 1828 թվականից Լազարյան ճեմարանի ղլխավոր պետ Ա.Բենկենդորֆին, որ իր մոտ հրավիրի Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ դարձած Ներսես սրբազանին: Նա պետական գործչին առաջարկում էր ունկնդրել

¹⁷ Տե՛ս Վ.Պարսամյան, Գշվ. աշխ., էջ 108–109:

¹⁸ Տե՛ս Վ.Ա.Դիլոյան, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսուցամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 278–279:

Հայ հոգևոր գործչին Հայ ժողովրդի և Հայ եկեղեցու հրատապ հարցերի մասին և թերևս նրան վերադարձնել Հայաստան ու ծերացած Եփրեմի փոխարեն նստեցնել կաթողիկոսական գահին, քանի որ նա իր ընդունակություններով ու արժանիքներով վայելում է ժողովրդի հարգանքն ու սերը¹⁹:

Նախագծի հեղինակները կարևոր նշանակություն էին տալիս երկրի ներքին բարեկարգության, բնակչության իրավական պաշտպանվածության հարցերին: Բնակչության սեփականության պահպանումը, նրանց իրավունքներն ու պարտականությունները պետք է ամրագրված լինեն օրենքներով: Կալվածատերերի իրավունքները պետք է տարածվեն միայն նրանց տրված և օրինական փաստաթղթերով հիմնավորված հողատարածությունների վրա: Հայ հայրենասերները դեմ էին արտահայտվում ճորտատիրությանը, քանի որ դրանից տեղի է ունենում աղքատ դասակարգի քայքայման անվերջ գործընթաց: Նրանք ճորտությունը դիտում էին որպես հասարակական կյանքում բացասական երևույթներ առաջացնող համակարգ: Նախագծի հեղինակներն առաջարկում էին Վրաստանում վերացնել կամ գոնե խիստ սահմանափակել ճորտությունը /հոդված 4/:

Գնահատելին այն է, որ հայրենասերների խումբը, ապրելով մայրաքաղաքում, իսկ նրանցից Խ.Լազարյանը, օգտվելով ազնվականի պատվաբեր տիտղոսից, մտերմական կապերի մեջ լինելով արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, չէր համերաշխվում բարձր իշխանությունների կողմնորոշումներին: Հայ հայրենասերները Խ.Լազարյանի գլխավորութամբ, անտեսելով կառավարական միտումները, հայրենի երկրի ու ժողովրդի համար համարձակորեն կենսական նշանակություն ունեցող հարցեր էին բարձրացնում: Ավելին, ճորտությունը վերացնելու առաջարկով նրանք կանգնում էին ժամանակի առաջադիմական գաղա-

¹⁹ Стів РГИА, ф. 880, оп. 5, д. 24, л. 63–64:

փարնեբրի պաշտպանության դիրքերում, այն աստիճան, որ ընդգրկմանում էին անգամ երկրում տիրող կարգերին:

Հայկական պետականությունը վերականգնելու կամ Հայոց ինքնությունը պաշտպանելու հիմնական գաղափարներով սույն նախագիծն արձագանքում էր 1783 թ. ներկայացված Հայ-ռուս դաշնագրության նախագծին: Տարբերությունները մեծ մասամբ պայմանավորված էին ժամանակի ընթացքում քաղաքական կյանքում կատարված փոփոխություններով: Արդուլթյան-Լազարյան նախագծում Հայերից էր ընտրվում Հայոց թագավորը, իսկ Հայրենասերների նախագծում այն վերապահվում էր ռուսաց կայսրին: Անտեսելով Գեորգիևսկի դաշնագիրը՝ Վրաստանն ուղղակի կայսրությանը միացնելուց և զենքի ուժով Հայաստանը գրավելուց հետո ակնհայտ էր դառնում, որ նախկին առաջարկը նոր պայմաններում անիրագործելի է և այլն:

Նախագիծը դրական ընթացք չի ստանում, մերժվում է, բայց, անտարակույս, ունենում է էական նշանակություն Հայաստանի անունով առանձին վարչական միավոր՝ Հայկական մարզ ստեղծելու գործում: Մի իրողություն, որը չկատարվեց Վրաստանի պարագայում:

Մոսկվայի ու Պետերբուրգի Համայնքների գործիչների՝ Հայաստանում կատարվող իրադարձություններին լավատեղյակ լինելը, Հայրենիքի առաջ ծառայած մեծ ու փոքր խնդիրների լուծմանն ամեն կերպ նպաստելու ջանքերը լավագույնս վկայում են, թե Հայկական գաղութները որչափ են կապված եղել Հայրենիքի հետ և ապրել նրա պատմական ճակատագրով: Հարկավ, Հայկական այդ Համայնքների ու նրանց գործիչների օրինակը մյուս գաղութների վրա տարածելն իրավացի չէր լինի: Մայրաքաղաքների Համայնքների, նրա գործիչների պայմաններն ու հնարավորություններն անհամեմատ բարենպաստ ու ընդարձակ էին: Հայկական մյուս գաղութները կամ Համայնքները, անտարակույս, Հայրենիքի հանդեպ նույն ուղղվածությունն ու

նվիրումն են ունեցել, սակայն դրա դրսևորումը կախված է եղել նրանց պայմաններից, կարողութունների աստիճանից, հայրենիքի հետ կապեր պահպանելու հնարավորություններից և այլ հանգամանքներից: Հնարավոր է, որ հայ համայնքների՝ հայրենիքի հետ կապերն ու շփումները որևէ ձևով դրսևորում չգտնեն: Սակայն դրանից չպետք է հետևություն անել, թե հայկական այդ զանգվածի մեջ վերացել են ազգային ոգին, հայրենիքի գաղափարը: Այս կամ այն համայնքում երբ ջանում են ազգային դպրոց, եկեղեցի ունենալ, պահպանել հայոց լեզուն, հետևել ազգային դավանանքին, վկայություն է մայր հայրենիքի հետ հոգևոր կապերի պահպանման մասին:

Ավելին, հայ համայնքի հենց գոյատևումն ինքնին ազգայինը պահպանելու խոստեն վկայություն է, այլապես դադարել (համայնքը) վերացած, ձուլված կլիներ:

* * *

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո բնականաբար հայություն ու շարունակությունը բեռավեց թուրքական լծից Արևմտյան Հայաստանն ազատագրելու կամ արևմտահայությունը դրությունը բարելավելու հարցերի վրա:

Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմում ռուսների վճռական հաղթանակը ազատագրական հույսերի մեծ ալիք առաջացրեց հայություն շրջանում, այդ թվում նաև հայկական գաղթախարհում: Ազատագրական նկրտումների արտահայտություններից էր Պետերբուրգից տեղի հայ համայնքի մտայնությունն արտացոլող Մ.Շովրյանի (Խ.Հովհաննիսյան) թղթակցությունը²⁰: Գ.Յաղուբյանը, խոսելով Բուլինի համաժողովի մասին, արևմտահայություն հարցը լուծելու ակնկալիքով դիմում է

²⁰ Տե՛ս Մեղու Հայաստանի, 1879, 3:

«Մշակ» թերթի խմբագրութանը: Նա առաջարկում է սատար կանգնել, բարոյապես ոգեշնչել պատրիարք Ներսես Վարժապետյանին, որպեսզի նրա ձայնն ուժգին հնչի և լսելի դառնա Եվրոպայի մեծ պետություններին²¹:

Ինչպես հայտնի է, Բեռլինի Համաժողովում իրենց անձնական շահերին հետամուտ խոշոր պետությունների անհոգի վերաբերմունքի հետևանքով լրջորեն չքննարկվեցին արևմտահայութան խնդիրները: Դրանք դարձան հզոր տերությունների դիվանագիտական խաղերի միջոց, ինչը և մեծ անբավականության ու զայրույթի ալիք առաջացրեց արդարացի լուծման սպասելիքներով համակված համայն հայութան շրջանում: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ հենց Համաժողովին Հաջորդած տարիներին լայն շարժում սկսվեց փոքր ազգերի նկատմամբ Թուրքիայում կատարվող հալածանքներն ու ապօրինությունները բացահայտելու և քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը դրանց վրա հրավիրելու ուղղությամբ: Համահայկական այդ շարժումը դրսևորվեց տարբեր ձևերով ու եղանակներով:

Իր ժողովրդի պատմական ճակատագրի խնդրում մշտապես նախանձախնդիր ուսուսական մայրաքաղաքների հայ համայնքները չէին կարող անտարբեր մնալ և ակտիվորեն չարձագանքել այդ իրադարձություններին: Պետերբուրգի համայնքի մտավոր շրջաններից Խ.Ենգիբարյանը տեղեկացնում է, որ մայրաքաղաքի հայերն ուրախությամբ ընդունեցին Ֆրանսիացի հայագետ պրոֆեսոր Էդուարդ Դյուլոփի մտահղացումը Հայ դատը պաշտպանելու համար Փարիզում պարբերաթերթ հիմնելու մասին: Ռուսական թերթերը, նշում է նա, հազվադեպ են հոդվածներ արտատպում «Մշակից» ու «Մեղուից», իսկ տարբեր պարբերականներում եղած հոդվածները եթե տպագրվեն Փարիզում

²¹ Տե՛ս Մշակ, 1881, 17:

նախատեսվող պարբերականում, ապա ռուսական թերթերը կարտատպեն, և ռուս հասարակայնությունը կծանոթանա Հայկական հարցին: Խ.Ննգիբարյանը հորդորում է պաշտպանել հայասեր ֆրանսիացու առաջարկը և միասնաբար միջոցներ գտնել նախատեսվող պարբերականի համար: Վերջում հոգվածագիրը կարևորում է թերթի ստեղծումը Հայկական հարցին եվրոպայի հասարակայնությանը ծանոթացնելու և Բեռլինի համաժողովի ճշմարիտ հոգվածը կիրառելու գործում²²: Մայրաքաղաքից մեկ այլ մտավորական՝ Գասպար Յաղուբյանը, գրեթե նույն ժամանակ գրում է, որ պրոֆեսոր է. Դյուլորիեի՝ հայկական պարբերական հիմնելու նախաձեռնությունը լավագույն միջոց կլինի Հայկական հարցը եվրոպայում քարոզելու համար: Հուլյաները երազում են, շարունակում է նա, նման հնարավորություն ունենալու մասին, իսկ մենք անտարբեր ենք կամ հապաղում ենք այն կյանքի կոչելու հարցում²³:

Այդ նույն տարիներին արևմտահայությունը ազատագրման նպատակով հայ երիտասարդները՝ գերազանցապես ռուսանոցներ, Մոսկվայում կյանքի կոչեցին «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որն ուներ իր պաշտոնաթերթը՝ «Ազատության ավետաբեր» խորագրով: Կազմակերպության աչքի ընկնող անդամներից էին Ն.Աբելյանը, Դ.Ներսիսյանը, Թ.Ադամյանը, Ա.Դաստակյանը, Մ.Զալյանը, Ա.Արտեմյանը և ուրիշներ: Երիտասարդները կարողանում էին թափանցել երևույթների խորքը և ճիշտ գնահատել հզոր տերությունների վարած քաղաքականությունը: Կազմակերպությունը չորս համար անլեզալ տպագրած թերթի և թռուցիկների միջոցով քննադատում էր եվրոպական երկրների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի հարցում: Արևմտահայությունը ազատագրումը

²² Տե՛ս նույն տեղում, 1881, 116:

²³ Տե՛ս նույն տեղում, 1881, 134:

նրանք կապում էին զինված պայքարի և Ռուսաստանի ռազմական օգնություն հետ: Անկախությունն ձեռք բերելու խնդրում Հայրենակիցներին կոչ էին անում հետևել հույների, բուլղարների օրինակին: Ազատագրական գաղափարներով առաջնորդվող երիտասարդները թերթի միջոցով միաժամանակ քարոզում էին ժողովուրդների համերաշխություն, յուրաքանչյուր ազգի անկախությունը, լեզուն, կրոնը հարգելու գաղափարը: Ցարական հետապնդումների հետևանքով կազմակերպության գործունեությունը խաթարվեց 1884 թ., թեպետև իր գոյությունը պահպանեց ևս երկու տարի:

Սեփական ուժերին ապավինելու և ժողովրդին ազատագրական պայքարի նախապատրաստելու նպատակով Պետերբուրգի Հայ ուսանողները գրավոր քարոզչություն են ծավալում: Նույն XIX դ. 80-ական թթ. նրանք ազատագրական պայքարի կոչող 3 գրքույկ են հրատարակում և լայնորեն տարածում բնակչության մեջ. «Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում», որի նյութն առնված է Արևմտյան Հայաստանի կյանքից, Լ.Կարավելովի «Բուլղար ավազակապետ» երկը, որը ներկայացնում է Բուլղարիայի ազատագրական շարժման որոշ դրվագներ, և «Ժաննա դը-Արկ» գործը՝ նվիրված Հերոսուհու Հայրենի Ճրանսիան անգլիացիներից ազատագրելու պատմությանը²⁴:

Նրանք «Մշակ» թերթի խմբագրությունը հայտնում են, որ հրատարակել են նաև «Դոնչո», Լ.Կարավելովի «Նեդա», Վ.Օստրոգորսկու «Վիլհելմ Տելլ», «Գաղթական» գրքույկները, և որ մոտ ապագայում լույս կտեսնի ևս 5 գրքույկ: Յոթերորդ գրքույկը՝ «Գաղթական» խորագրով, խնդրում են տարածել Վասպուրականում, քանի որ գրված է Մուշի բարբառով: Դրանում պատմվում է Հայրենիքը

²⁴ Տես Արձագանք, 1887, 20:

Թողնելու, արտագաղթելու վնասարար հետևանքների մասին, և դատապարտվում են նման երևույթները: Միաժամանակ հայտնում են, որ հրապարակված գրքուկները՝ 12 հազար օրինակ, տարածված են Ռուսաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում և եվրոպական երկրներում²⁵:

Հայ համայնքների ամբողջ կյանքը բնականաբար կապված էր երկրի, մասնավորապես կենտրոնական քաղաքների սոցիալ-քաղաքական, մշակութային կյանքում կատարվող հասարակական բնույթ կրող երևույթների հետ: Ուսանող երիտասարդության մեջ արմատավորվել էր ժողովրդին ծառայելու, նրան լուսավորելու, ազատագրելու գաղափարը, ուստի և այդ երևույթներին առաջին հերթին արձագանքում էր երիտասարդությունը՝ դրանք զուգակցելով ազգային ընդհանուր բնույթ կրող երևույթների հետ: Հաճախ երիտասարդությունը փորձում էր հասարակական, սոցիալ-քաղաքական երևույթներին հաղորդել նաև ազգային բնույթ: 1870–1880-ական թթ. բարձրացող նարոդնիկական շարժման ալիքն իր ոլորտի մեջ էր առնում նաև արևելահայ երիտասարդության շերտերին:

Հայ իրականության մեջ նարոդնիկական շարժման համար, փաստորեն, ուղի հարթեց Մ.Նալբանդյանը և դարձավ այդ շարժման նախահայրը: Հողային հարցի մասին Մ.Նալբանդյանի մտորումներն ու դատողությունները հիմք դարձան նարոդնիկության համար: Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, երբ, անդրադառնալով նարոդնիկական շարժմանը, գրում է. «Իր բոլոր առանձնահատկությունների հետ մեկտեղ՝ 70-ական թթ. հայ հեղափոխական նարոդնիկների հասարակական-քաղաքական միտքը իր վրա կրում էր ազգակից նախորդի՝ Մ.Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքների ու գործունեության ազդեցության պարզ հետքերը:

²⁵ Տե՛ս Մշակ, 1888, 37:

Հարցն այլ կերպ պատկերացնելը նշանակում է ոչ միայն ծուռ հայելու մեջ ներկայացնել Հայ Հասարակական մտքի զարգացման ընթացքը, այլև գիտակցաբար կամ անգիտորեն աչք գոցել այն խոր ակոսի վրա, որ բացել էր XIX դարի Հայ Հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ հեղափոխական դեմոկրատ Նալբանդյանը»²⁶:

1873–1874 թթ. Պետերբուրգում գործում էր ուսանողական կենտրոնական մի խմբակ՝ «Վրացական խմբակ» անվամբ, որի Հիմնադիրն էր Իգնատի Իոսելիանին: Հայերից այդ խմբակում կարևոր դեր էր կատարում Օ.Քանանովան: Խմբակի աշխատանքներին մասնակցում էին Արշակ, Օլգա և Վարվառա Սաֆարյանները²⁷: Նարոդնիկական շարժումների մեջ ընդգրկված էին Կովկասից և Ռուսաստանի տարբեր վայրերից Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում և այլ ուսումնական հաստատություններում սովորող Հայ երիտասարդներ: Նոր Նախիջևան-Ռոստով քաղաքներից Հայտնի էին Ա.Փեշեքերովը, Հ.Շապովալովը, Ռ.Զերնիշևը, Մ.Կայալովը և շատ ուրիշներ:

Մեսրոպ Փեշեքերովը սովորում էր Պետերբուրգի տեխնոլոգիական, իսկ Մելքոն Կայալովը՝ լեռնային ինստիտուտներում: Նրանք, ընդգրկված լինելով և ակտիվորեն գործելով համառուսական նարոդնիկական շարժման մեջ, միաժամանակ Հայրենի քաղաքում կազմակերպում էին խմբակներ, տարածում գրականություն, թուղթիկներ: Մ.Փեշեքերովը բանտարկվում և աքսորվում է Սիբիր: Լազարյան ճեմարանի նախկին սան Մ.Կայալովը, Նոր Նախիջևանի Ս.Խաչ վանքում արտասանելով «Մայր Հայրենիք», «Ազատն Աստված» բանաստեղծությունները, իր ընկերնե-

²⁶ Ա.Գ.Հովհաննիսյան, Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860–70-ական թթ.) – ՊԲՀ, 1968, 1, էջ 23:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

րի հետ 1879 թ. նշում է Մ.Նալբանդյանի ծննդյան 50-ամյակը: Նա ևս բանտարկվում է և աքսորվում: Դոնի հայ նարողնիկները կապ էին պահպանում կենտրոնի՝ Պետերբուրգի և տեղական կաղմակերպությունների միջև: Նարողնիկական շարժման նշանավոր գործիչ էր Պետերբուրգի համալսարանի ուսանող Հովհաննես Մանուչարյանը²⁸:

Մոսկվայի հողագործական ակադեմիայի ուսանող Գրիգորի Արաղովը նարողնիկական խմբակների գործունեությանն ակտիվորեն մասնակցելու համար բանտարկվում է: Հիվանդության պատճառով ազատվում է բանտից և շուտով մահանում: Նրա ընկերները, հատկապես հայերը հայկական եկեղեցում հոգեհանգիստ են կաղմակերպում և նրա աճյունը թաղում հայկական գերեզմանոցում:

Պետերբուրգի նարողնիկական խմբակների գործունեությանն ակտիվորեն մասնակցել են Հովհաննես և Ալեքսանդր Վերմիշև եղբայրները, Գ.Դելյանովը, Ա.Բաղդասարյանը և ուրիշներ: Շատ հայ երիտասարդներ մասնակցում էին 1886 թ. հիմնված խմբակի աշխատանքներին: Խմբակը կապեր էր հաստատել Մոսկվայի և Կաղանի հայ ուսանողների հետ և ուներ գանձարկղ, որով օգնում էր կարիքավոր հայ ուսանողներին:

Պետերբուրգի և Մոսկվայի՝ հայկական կաղմ ունեցող նարողնիկական խմբակներն աստիճանաբար անյնում են ազգային հարցերի արժարժմանը՝ ձգտելով նարողնիկական գաղափարները հարմարեցնել ազգային խնդիրներին²⁹:

Ինչպես հայտնի է, XIX դ. 90-ական թթ. կեսերին Թուրքիան Արևմտյան Հայաստանում կաղմակերպեց իսաղաղ հայ բնակչության կոտորած, որին զոհ դարձավ 300

²⁸ Տե՛ս Ա.Գ.Терещенко, Новоначичеванцы в революционном народническом движении. – ՊԲՀ, 1975, 4, էջ 85–102:

²⁹ Տե՛ս Մ.Գանիեյան, Հայերի մասնակցությունը Մոսկվայի և Պետերբուրգի նարողնիկական կաղմակերպությունների գործունեությանը. – ԲՀԱ, 2006, 1, էջ 204–210:

Հազար մարդ: Կոտորածներից փրկված և ահ ու սարսափի մեջ ընկած բնակչուկները բռնեց դեպի Եվրոպայի երկրներ, Ամերիկա և այլուր գաղթելու ճանապարհը: Ռուսաստանում և Պարսկաստանում հանգրվանեցին հոծ զանգվածներ, որոնք գտնվում էին անմխիթար վիճակում՝ ընչազուրկ, անօթևան, սովի մատնված:

Գաղթականությունը պատսպարելու լայն շարժում ծավալվեց Հայ իրականության մեջ, որին ակտիվորեն մասնակցեց արևելահայությունը, այդ թվում Ռուսաստանի հայկական գաղութների բնակչուկները: Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամ Ս. Գյուլամիրյանը գաղթականությանն օգնելու ահազանգ է հնչեցնում, իր խոսքն ուղղում առաջին հերթին հոգևոր այն խորհրդին, որի ներկայացուցիչն էր ինքը: Այդ առիթով հրավիրված եկեղեցական խորհրդի նիստը Ս. Աբամելիք-Լազարյանի առաջարկով որոշում է 3 հազար ռուբլի հատկացնել Երևանում, էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Իգդիրում գտնվող գաղթականներին: Թավրիզի ռուսական հյուպատոս Ա. Պետրովի միջոցով հազար ռուբլի է ուղարկվում Սալմաստում պատսպարված գաղթականներին³⁰: Մոսկվայում հրապարակվում է կաթողիկոսի կոնդակը, որը հայկական գաղութներին հորդորում է օգնության ձեռք մեկնել գաղթականությանը: Գաղութը պատրաստակամություն է հայտնում կազմակերպելու 30-40 հազար ռուբլու նվիրատվություն³¹:

Կառավարությունն իր հերթին միջամտում և փորձում է կազմակերպված բնույթ տալ գործընթացին: Կովկասի կառավարչապետը հատուկ շրջաբերականով հայտնում է, որ կայսրը թուլյատրել է ամբողջ կայսրությունում հանգանակություն կատարել թուրքիայից մեր երկրի սահմաններն անցած փախստականների օգտին այն պայմանով, որ դրա

³⁰ Տե՛ս Արաքս, 1897, էջ 165-166:

³¹ Տե՛ս Մշակ, 1897, 13:

վերահսկողութիւնը կատարվի կառավարական հաստատութիւնների կողմից³²:

Մոսկվայի և Պետերբուրգի եկեղեցական միացյալ խորհուրդը նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առջնորդից տեղեկանում է, որ կոտորածներից փախած և Ռուսաստանում հանգրվան գտած գաղթականներն անմխիթար վիճակում են: Խորհուրդը նրանց հատկացնում է 2 հազար ռուբլի՝ հագուստ գնելու և 1000 ռուբլի՝ այլ կարիքներ հոգալու նպատակով³³:

Պետերբուրգի գերմանական մի եկեղեցում հօգուտ գաղթականների կազմակերպվում է համերգ շնորհալի կատարողներ Նալբանդյանի, Շահլամանյանի աջակցութեամբ, որին մասնակցում էին նաև գերմանացիները: Մոսկվայում նախատեսվում է հրատարակել «գրական-գիտական ժողովածու», որի վաճառքից գոյացած հասուլթը հատկացվելու էր փախստականներին³⁴:

Պետերբուրգի եկեղեցիների հոգաբարձու Ս.Աբամելիք-Լազարյանը 1900 թ. տեղի եկեղեցական խորհրդին տեղեկացնում է, որ Թուրքիայում Ռուսական կայսրութեան դեսպան Իվան Զինովևը, ի պատասխան իրենց գրութեան, հայտնում է, որ ստացել է ուղարկված 13271 ֆրանկ գումարը, որը կազմում էր 5 հազար ռուբլի, և փոխանցել Կ.Պոլսի հայոց պատրիարքին՝ որբանոցներ հիմնելու Փոքր Ասիայի այն վայրերում, որտեղ անհրաժեշտ է: Պատրիարքը հայտնել է իր գոհունակութիւնը և վստահեցրել գումարը նպատակին ծառայեցնելու հարցում:

Հաջորդ տարի պատրիարք Մաղաբիա Օրմանյանը Ս.Աբամելիք-Լազարյանին տեղյակ է պահում գումարը ստանալու և գործադրելու մասին: Նա հայտնում է, որ Մշո

³² Տե՛ս նույն տեղում, 1897, 6:

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 970, ք. 2:

³⁴ Տե՛ս Մշակ, 1897, 6, 28:

Ս.Առաքելոց վանքում 54, Ս.Կարապետի վանքում 20 երեխաների համար որբանոց է ստեղծվել, որ գավառների 34 գյուղերում նախակրթական դպրոցներ են բացվել, և ավելացնում է. «Որբերը նախնական ուսում մը կ'ընդունին: Բայց Ս.Առաքելոց որբանոցի մէջ կայ նաև արհեստութեան մ'ալ և Այնթապէն բերուած վարպետ մը տղայոց կուսուցանէ ի մասնաւորի տարազագործութեան արհեստը, որ եթէ տարածուի Մշոյ մէջ՝ այս ընդարձակ երկրին ժողովուրդը պիտի կրնայ իր հագուստին համար պէտք եղած կերպասը գտնել, զոր դուրսէն գնել ստիպուած է հիմա և առևտուրի աղբիւր մ'ալ ունենալ: Իսկ դպրոցներու մէջ երկու հազար տղաք ամփոփուած են և նախնական ուսում մը կ'ընդունին, փրկուելով Ձեր շնոհիւ թափառաշրջիկ կեանքէ մը, որու պիտի մատնուէին, ենթարկուելով բազմաթիւ փորձութեանց...»³⁵:

1903 թ. դեկտեմբերին Մաղաքիա պատրիարքը Ս.Աբամելիք-Լազարյանին տեղեկացնում է երեք տարում ստացված 15 հազար ուռբլի գումարը գործադրելու մանրամասների մասին: Հանգամանորեն ներկայացնում է որբերին, վարպետներին, դպրոցներին հատկացված գումարի չափը: Ս.Կարապետի վանքի որբանոցին տրվող գումարի մի մասը հատկացվել է Մշո Ս.Հովհաննեսի վանքին, որտեղ ևս որբեր էին պատսպարվել: Գյուղերի 34 դպրոցներում, որտեղ 2 հազար աշակերտ է ուսանում, նոր ուսումնական տարում կվերաբացվի նրանց հատկացվող գումարը: Այն գյուղերը, որոնք կարողացել են ոտքի կանգնել, ի զորու են դպրոցի ծախսերը հոգալու, նրանց հատկացվող նպաստը կտրվի խիստ կարիք ունեցող ուրիշ գյուղերի: Վերջում պատրիարքը խնդրում է շուտափույթ ուղարկել որբանոցների, դպրոցների, արհեստանոցների չորրորդ տարվա

³⁵ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 989, ք. 12:

նպաստները, որպեսզի ձմռան եղանակներին հնարավոր լինի շարունակել նրանց գործունեությունը³⁶:

Այդ նույն ժամանակ Մոսկվայի հայ հասարակայնությունը Արևմտյան Հայաստանի սովի մատնված բնակչության համար ժողովում է 2488 ուրբլի և այն նույնպես ուղարկում Կ.Պոլսի հայոց պատրիարքարան³⁷:

Այսպիսով, հիշյալ փաստերը հավաստում են, որ XIX դ. վերջերին հյուսիսի զույգ հայկական համայնքները, փաստորեն, իրենց վրա էին վերցրել Արևմտյան Հայաստանի դպրոցներին, որբանոցներին, աղքատություն մատնված բնակչությանն աջակցելու գործի ծանրությունը զգալի մասը:

* * *

Հաջորդ հարյուրամյակը՝ XX դարը, հայ ժողովրդի համար սկսվեց առանց որևէ հուսադրող իրադարձության, եթե չասենք հակառակը: Նոր դարաշրջանի արշալույսին՝ 1903 թ., կառավարական հրամանագիր եղավ հայոց եկեղեցու ունեցվածքը պետականացնելու մասին: Հայկական կրթական համակարգի, լուսավորության դեմ ուղղված ցարական հրամանագրի երկու տարին չլրացած՝ սկսվեցին հայ-թաթարական կոտորածները:

Թեպետև հայոց եկեղեցու գույքը պետականացնելու օրենքը չէր տարածվում հայկական այս երկու համայնքների վրա, սակայն խորասլուծ հասկանալով դրա վնասակար հետևանքները՝ նրանք ևս ամեն կերպ նպաստում էին այդ օրենքի վերացմանը: Հատկանշական է, որ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանն անհրաժեշտ էր համարում Մոսկվայի հայ համայնքին հանգստացնել՝ հայտնելով, որ «... Հայոց եկեղեցական կալուածների յարքունիս գրավելու խնդիրը կը

³⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 23-24:

³⁷ Տե՛ս Մշակ, 1900, 101:

վերաքննվի, աքսորված Հոգևորականները կը վերադառնան, դպրոցական գործերը կը կարգաւորվեն և այլն»³⁸:

1905 թ. փետրվարի Բաքվի դեպքերով սկսված Հայ-թաթարական ընդհարումներին անմիջապես արձագանքեց Պետերբուրգի Հայկական գաղութը: Փետրվարի 22-ին քաղաքի ճարտարագետների միության ժողով է հրավիրվում՝ 350 անդամների մասնակցութամբ, որոնց մեջ քիչ չէին Հայ մասնագետները, և քննարկում Բաքվի աղետալի դեպքերը: Ժողովականներն իրենց զայրույթն են հայտնում կատարված ողբերգության կապակցութամբ և դատապարտում դեպքերի իրական պատասխանատուներին, որոնք քաղաքակիրթ աշխարհից թաքցնում են իրողությունը և սկսված ջարդերը մեկնաբանում ազգայնական ու կրոնական թշնամության երանգներով³⁹:

Անդրկովկասում կատարվող դեպքերին առանց հապաղելու արձագանքում է նաև Մոսկվայի Հայ Համայնքը: «Մոսկվայի Հայ գաղութի անշարժ կյանքում, – նշվում է այդ կապակցութամբ գրված թղթակցությունում, – մարտի 20-ը բաւական աչքի ընկնող եղաւ: Այդ օրը մեր եկեղեցում Հանդիսաւոր Հոգեհանգիստ կատարվեց վաղամեռիկ Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին: Ներկայ էր բաւական թւով երկսեռ ժողովուրդ տեղական ուսանողութեան հետ: Սովորութեան հակառակ, եկեղեցու մէջտեղը դրված էր դիասպորան, խաչն ու աւետարանը վրան՝ շրջապատված կենդանի ծաղիկներով: Վառված էին եկեղեցու բոլոր ջահերը, երգում էր Լազարեան ճեմարանի երգեցիկ խումբը: Մուշէ վարդապետ Դանաբեօզեանը Հանդիսապետ էր: Մի Հանդէս էլ նոյն օրը կատարվեց Գասպարեան անկելանոցի դահլիճում... Այս Հանդէսը այն մեծ Հանգուցեալի առիթով էր, որ աշխարհի աչքի առաջ, կրակի, սրի ու գնդակի կերակուր

³⁸ Նույն տեղում, 1905, 69:

³⁹ Տե՛ս նույն տեղում, 1905, 36:

դառաւ Բագուի մահահոտ փողոցներում, և որի անունն է՝ Կոտորածների Ձոհ»⁴⁰: Ելույթ են ունենում Հայ Համայնքի նշանավոր դեմքերից Ս.Մամիկոնյանը, պրոֆեսոր Գ.Նալաթյանցը, որոնք լայն Հայեցողությամբ և Համոզիչ լուսաբանում են կատարվող դեպքերը: Հայրենիքում ու Հարակից տարածքներում կատարվող իրադարձություններն ավելի Հասկանալի են դառնում, երբ Հանդես է գալիս կոտորածների վայրից եկած բժիշկ Ստեփանյանը: Նա խոշոր գումարի Հանգանակություն կազմակերպելու հրամայականի Հարց է բարձրացնում և Հանդիմանական խոսքեր ուղղում Հայ Համայնքին բավարար սրտացավություն Հանդես չբերելու համար: «Հայութիւն կոչված կուլտուրական ցեղի, – ասաց նա՝ ժողովականների Հավանությանը արժանանալով, – շատ բարեմասնութիւններով օժտված այս Հատուածին Հարկաւորվեց, որ կոտորածի տեղից աղաղակէին իր ականջում, թէ աղէտի պատճառած վէրքերը բուժելու համար իր օգնութիւնն էլ է կարևոր: Ամօթ մեզ, որ այս կամ այն ընկերութեան նախագահի դրդելով միայն պէտք է շարժվենք, մինչդեռ, ամեն այսպիսի արտասովոր դէպքերում, Կովկասի Հայութեան Հայեացքները դէպի մայրաքաղաքների Հայ գաղութներն են ուղղվում բնականապէս»⁴¹:

Ժողովականների միահամուռ կամեցողությամբ Բաքվի մարդասիրական ընկերությանն է ուղարկվում առկա 2553 ռուբլի գումարը, և որոշվում է սկսել Հանգանակություն: Միաժամանակ քաղաքի Հայերի անունից հեռագիր է հղվում Ամենայն Հայոց կաթողիկոսին, Շեյխ-ուլ-խլամին և Հայ Համայնքի կողմից պատգամավորություն է ուղարկվում երկաթուղային կայարան՝ դիմավորելու Կովկասի նոր փոխարքա Ի.Վորոնցով-Դաշկովին:

⁴⁰ Նույն տեղում, 1905, 58:

⁴¹ Նույն տեղում:

Մոսկվայում բնակվող մի խումբ շուշեցի հայեր ու թուրքեր (Ահարոնյանց, Եղիգարյանց, Սարգսյանց, Յուզբաշյան, Ղազյանց, Թադիև, Ազիմով) հեռագրում են գեներալ Գոլոշչակովին և հույս հայտնում, որ նա կարող է խաղաղեցնել իրենց սիրելի Ղարաբաղը և այնտեղ վերականգնել խաղաղ կյանքը⁴²:

* * *

Արևմտյան Հայաստանի հայության հարցը շարունակում էր մնալ ինչպես ամբողջ ազգի, այնպես էլ հայկական գաղթավայրերի և առաջին հերթին բարձր մակարդակի մտավորականութուն ունեցող ռուսական մայրաքաղաքների հայկական համայնքների մտահոգութունների հիմնական առանցքը: Ամեն անգամ միջազգային ոլորտներում արժարժվելու առիթով կամ առանց դրա նրանք պարբերաբար անդրադառնում և իրենց շահագրգիռ վերաբերմունքն էին արտահայտում:

Նիկողայոս Ադոնցը 1913 թ. մարտին Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անունից Ամենայն հայոց կաթողիկոսին հայտնում է, որ մայրաքաղաքի Հայ հասարակայնութունը պարբերաբար խորհրդակցութուններ է գումարում Հայկական հարցի վերաբերյալ: Ստեղծված է 4 հոգուց բաղկացած տնօրեն մի մարմին կամ բյուրո: Նրա մեջ մտնում են դոմայի պատգամավոր Մ.Բաբաջանյանը, Պ.Ղուկասյանը, Գ.Տիգրանյանը և Ն.Ադոնցը: 1914 թ. մայիսին կայացած բյուրոյի յոթերորդ նիստում որոշում է կայացվել բնակչության կրթալուսավորական և մշակութային կարիքներին ծառայեցնելու նպատակով Արևմտյան Հայաստանում հիմնել բանկ: Մշակվել է հիմնադրվելիք բանկի կանոնադրութունը⁴³: Ցավոք, համաշխարհային պատերազմ

⁴² Տե՛ս նույն տեղում, 1906, 127:

⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 55:

բռնկվելու հետևանքով այդ խելամիտ նախաձեռնությունը հետագա ընթացք չստացավ:

Առաջին աշխարհամարտն սկսվելուց մի քանի ամիս անց, երբ Թուրքիան՝ որպես Գերմանիայի դաշնակից, մտավ պատերազմի մեջ, Հայկական Համայնքները Արևմտյան Հայաստանն աղատագրելու հույսով աշխույժ գործունեություն ծավալեցին: Մոսկվայում 1914 թ. հոկտեմբերի 22-ին տեղի հայություն մեծ հավաք հրավիրվեց: Ժողովը նախագահող Ս.Մամիկոնյանը Հայրենասիրական ջերմ ելույթ ունեցավ: Նա, սկսելով Բեռլինի Համաժողովից, նկարագրեց արևմտահայերի Համար ստեղծված դժվարին կացությունը և հորդորեց ամեն կերպ սատար կանգնել ազգակից եղբայրներին: Անվանի գիտնական, հրապարակախոս Ա.Զիվելիգովը ժողովականներին Հայտնեց Հայկական կոմիտե ստեղծվելու մասին, որի նպատակը պատերազմի պատճառով ծանր կացություն մեջ Հայտնվածներին օգնելն է: Կոմիտեն միայնակ, ինքնին անկարող է շատ բան անել, ուստի հայցում է Հայ և ռուս Հասարակայնություն աջակցությունը: Ուսանողների անունից Հանդես եկավ Տեր-Դավիթյանը: Նա Հավաստեց Հայրենիքին ծառայելու երիտասարդություն միակամ վերաբերմունքը և ավելացրեց, որ իրենք պատրաստակամ են զոհելու անգամ սեփական կյանքը Հանուն Թուրքական լծի տակ տառապող իրենց եղբայրներին⁴⁴:

Նոր Նախիջևանի Հայկական գաղութի անվանի Հասարակական գործիչ Գ.Չալխուշյանն այդ օրերին «Հայ ուսանողությունը մեր ողջունը» խորագրով հոդված տպագրեց «Մշակ» թերթում՝ նշելով, որ Հայ ուսանողությունը խորապես ըմբռնել է ներկա պատմական պահը, Մոսկվայից և Պետերբուրգից նրանք շտապում են դեպի Հայոց երկիրը՝ անձնվիրաբար մարտնչելու Հանուն Հայրենիքի⁴⁵: Մամուլի

⁴⁴ Տե՛ս Մշակ, 1914, 245:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, 1914, 248:

մեկ այլ հրապարակման մեջ նշվում է, որ «Նույն օրը (1914 թ. հոկտեմբերի 25-ին – Վ.Բ.) երեկոյան գնացքով Կովկաս ճանապարհվեցին Մոսկվայի առաջին Հայ կամաւորները, գլխաւորապէս ուսանողներ: Պատրաստվում են դէպի Կովկաս ու այնուհետև Տաճկահայաստան կամաւորների երկրորդ խմբակը և մի սանիտարական խմբակ»⁴⁶:

Հայությունը Հայկական հարցի լուծումը տեսնում էր Ռուսաստանի, ռուսական զենքի հաջողութեան մեջ: Նման մոտեցումը միայն ռուսահայութեան մտայնությունը չէր. այն համընդհանուր բնույթ էր կրում: Ռուսաստանից մշտապես կտրված, հեռու Փրանսիայում բնակվող, բայց ազգային խնդիրներով ու նրա պատմական ճակատագրով ապրող անվանի հրապարակախոս ու մտածող Արշակ Չոպանյանը Հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակութիւն ունեցող հարցերի լուծումը ևս կապում էր Ռուսաստանի հետ: Ըստ նրա՝ Ռուսաստանը կոչված է գերակշիռ դեր կատարելու Հայկական հարցի լուծման մեջ, ինչ ձևով էլ որ լինի այդ լուծումը⁴⁷:

Նորընտիր կաթողիկոս Խրիմյան Հայրիկը այցելում է Պետերբուրգ: Ժողովրդի բազմութեան առաջ հանդես է գալիս ազգային խնդիրներին վերաբերող հագեցված խոսքով և նշելով, որ քրիստոնյա ժողովուրդներին միշտ պաշտպան է կանգնած եղել Ռուսաստանը, ավելացնում է. «Սորա համար բովանդակ Հայոց ակնկալութեան աչք կը հառին դէպի Մեծ դատաւոր և թագաւորն Ռուսիոյ, որ իւր բարեացակամ հաճութեամբ պսակէ և վախճան դնէ Հայոց վաղեմի և հնացեալ խնդրոյն...»⁴⁸:

Արևմտահայութեան դրութիւնը Ռուսաստանի աջակցութեամբ բարվոքելու հույսերը ոչ միայն չիրականա-

⁴⁶ Գաղութ, 1914, 34:

⁴⁷ Տես Կ. Կալլաքյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 321:

⁴⁸ Արաքս, 1894–1895, գիրք Ա, Ս. Պետերբուրգ, 1895, էջ 229:

ցան, այլև կատարվեց մարդկային պատմություն մեջ նախադեպը չունեցող ողբերգություն: Երիտթուրքերի կառավարությունն ամենաբարբարոսական մեթոդներով կազմակերպեց Հայերի ցեղասպանություն, որին զոհ դարձավ շուրջ մեկուկես միլիոն խաղաղ բնակչություն: Արևելյան Հայաստանը լցվեց հարազատներին կորցրած, տուն ու տեղից, ապրուստի միջոցներից զրկված, սովի ու համաճարակային հիվանդությունների մեջ ընկած անօթևան գաղթականներով, որբերով:

Համայն Հայություն շրջանում լայն շարժում սկսվեց փախստականներին պատսպարելու, մահվան ճիրաններից փրկելու համար: Այդ նպատակով անհապաղ ձևավորվեցին բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ: Մայրաքաղաքների հայկական համայնքներն ակտիվ ու գործուն մասնակցություն ունեցան, մանավանդ որ նրանք ունեին ֆինանսատնտեսական հնարավորություններ և նման պարագաներում հայրենակիցներին օգնության ձեռք մեկնելու փորձ:

Պատերազմի ժամանակ տակավին 1915 թ. փետրվարին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն դիմում է Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, 25 հազար ռուբլի գումար պահանջում թշվառ վիճակում գտնվող գաղթականների համար: «Անհնարին է, — գրում է նա, — առանց արտասուց նայիլ ի վերայ սոսկալի տառապանաց զաւակացս և տեսանել զգաղթական կանայս, զժերս և զանմնղ մանկունս, յուսաՀատ կացուլթիւն որոց յուզէ զմիտս և զսիբիտս ամենեցուն»⁴⁹:

Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդին «Ա. էջմիածնի եղբայրական օգնության դլխավոր կարդադիր հանձնաժողովը» հայտնում է, որ գաղթականների համար բացել է հիվանդանոց, որբանոց, բաժանում են սնունդ, հա-

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1077, ք. 42:

գուստ, բայց արվածը բավարար չէ անգամ նրանց ամենահամեստ պահանջները բավարարելու համար: Հանձնաժողովը խնդրում է դրամական միջոցներ և պարեն, հագուստեղեն, այն ամենը, ինչով հնարավոր է կազմակերպել նրանց կենցաղը⁵⁰:

Մոսկվայի Հայ ճարտարապետների ժողովը վեհափառ Հայրապետին հայտնում է իր հոժար ծառայութունը որբանոցներ, գաղթականների համար կացարաններ կառուցելու գործում⁵¹:

Մոսկվայի Հայոց կոմիտեին առընթեր գործող «Հայ առևտրականների, առևտրաարդյունաբերական ծառայողների և արհեստավորների վարչութունը» 548 ոււրլի է դնում կաթողիկոսի տրամադրության տակ՝ օգնելու պատերազմից տուժած եղբայրներին⁵²:

Ն.Ագոնցը 1915 թ. սեպտեմբերի 2-ին էջմիածնից հեռագրում է Պետերբուրգի եկեղեցական խորհրդին և հայտնում, որ շատ գաղթականների պատսպարել են շրջակա գյուղերում, բայց 30 հազար հոգի մնացել է աննկարագրելի ծանր դրության մեջ: Կազմակերպվում է որոշ եղբայրական օգնություն, բայց դա դրությունը չի փրկում: Աճում է մահացողների թվաքանակը, միայն նախորդ օրը այն կադմել է 302 մարդ, 500 դիակ մնում է առանց թաղելու: Նա, կոնկրետ թվեր նշելով, պահանջում է կազմակերպել օգնություն և անհապաղ դիմել վճռական ու կտրուկ միջոցների փրկելու դրությունը⁵³:

Պետրոգրադի եկեղեցական խորհուրդը 10 հազար ուրլի է հատկացնում «պատերազմի մասնակից և պատե-

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, ք. 55:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, ք. 57, գ. 2, գ. 1268, ք. 1:

⁵² Տե՛ս նույն տեղում, գ. 1257, ք. 4:

⁵³ Տե՛ս նույն տեղում, ք. 399, գ. 1, գ. 1077, ք. 77-78:

րազմի հետևանքով տուժած աղքատ ընտանիքների միու-
թյան կոմիտեին»:

Ստեղծված դժվարին պայմաններում անգամ ուշա-
դրուլթյունից դուրս չէր մնում, ընդհակառակը, հատուկ
հոգ էր տարվում մանուկների ուսուցումը կազմակերպելու
ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվել և դործում էին
հատուկ կազմակերպություններ: «Կովկասի հայոց դպրոց-
ների ուսուցիչների և վարժուհիների միության» Ալեք-
սանդրապոլի վարչությունը մանուկների ուսման համար
նույնպես դիմում է Պետերբուրգի եկեղեցական խորհրդի
օգնությանը. «Հալածական հայ ժողովրդի մի մեծ հատու-
ծը՝ մոտ 23000 հոգի, տեղաւորւած է Ալեքսանդրապոլ
քաղաքում և նրա գաւառում: Մինչ այժմ բաւարարուլթիւն
է տւած նրա ծով կարիքների ամենաչնչին մասին... Փնփռք
Կովկասի հայութեան, որ լայն բաց արաւ իր դուռը հալածա-
կան եղբայրների և քոյրերի առաջ և իր աղքատիկ սեղանից
բաժին հանեց նրան ապաստարան, կերակուր և հազուստ
մատակարարելով»⁵⁴:

Աչքաթող չէին արվում նաև մատաղ սերնդի կարիք-
ները: Փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Նրա բարո-
յական ու մտաւոր կրթութեան պահանջին ընդառաջ դնա-
լով մեզանում՝ Բագուի ինտերնացիօնալ կոմիտէի նպաս-
տով և տեղական ինտելիգենցիայի ջանքերով բացուած է
փախստականների երեխաների համար դպրոց, ուր սովորում
են հայ և յոյն երկսեռ երեխաներ՝ 416 հոգի»: Ապա նշվում
է, որ միությունը հաջողեցրեց աշակերտներին «առանց
ազգի ու կրօնի խտրութեան» նախաճաշ տալ: Դիմում-
խնդրանքն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Առանց
յարգոյ խորհրդիդ օգնութեան՝ ուսուցչական միութիւնս
պիտի դժուարանայ կատարել իր սրբազան պարտքը դէպի
հալածական ժողովրդի մանուկ սերնդի դաստիարակութեան

⁵⁴ Նույն տեղում, ք. 89:

պանծալի գործը: Մանուկ սերնդի վերքերը սպեղանի են պահանջում, դարմանեցէ՛ք նրանց և Հաւատացած եղէ՛ք, որ դարէդար ապրելու էք նրա խոցոտւած, բայց անբիծ սրտերում»⁵⁵:

Եկեղեցական խորհուրդները և երկու քաղաքների միացյալ խորհուրդը ջանում և լիովին կամ մասնակի ձևով բավարար լուծում էին տալիս օգնություն Հայցող կազմակերպություններին, անհատներին:

Մայրաքաղաքների եկեղեցական խորհուրդները, ինչպես նաև գաղթականությանն օգնության Հասնող մյուս կազմակերպությունները սոսկ օժանդակություն Հատկացնողների պասիվ դերում չէին: Նրանք շահագրգիռ Հետևում և սեփական նախաձեռնությամբ աջակցում էին օգնության անհապաղ պահանջ ունեցողներին կամ տարբեր անուններով այն կազմակերպություններին, որոնք առավել արդյունավետ էին գործում: Բազում փաստերից Հիշատակենք մեկը: Պետերբուրգի եկեղեցական խորհուրդն իր նախաձեռնությամբ 150 Հազար ռուբլի գումար է առանձնացնում, որից 50 Հազարը դնում է Թիֆլիսի կենտրոնական բյուրոյի տրամադրության տակ՝ ըստ անհրաժեշտության գործադրելու, իսկ 100 Հազարը Հատկացնում է դեղորայք, սնունդ մատակարարող այն կենտրոններին, որոնք պահի, ստեղծված իրավիճակի խոր գիտակցությամբ կազմակերպված ու արդյունավետ աշխատանք էին կատարում⁵⁶:

Մայրաքաղաքի եկեղեցական խորհուրդն անհրաժեշտ էր Համարում դուրս գալ ազգային շրջանակներից և օգնություն կազմակերպել նաև առհասարակ պատերազմից տուժածներին: Նա Հատուկ գրություն է ուղղում պատերազմի ժամանակ տուժածներին օգնող Թիֆլիսի կոմիտեին և խնդրում տեղեկացնել դաշտային Հիվանդների Համար

⁵⁵ Նույն տեղում, ք. 89, 91:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 6:

դեղսրայքի, սննդի հայթայթման հարցում առկա դժվարությունների մասին: Միաժամանակ հայտնում է, որ փորձում է Կարմիր խաչի հետ կապեր հաստատել և նրան ընդգրկել օգնություն կազմակերպողների շարքում: Նրա գործունեության բարեգործական ուղղությունն այն աստիճան ճանաչում էր գտել, որ նրան էին դիմում նաև ռուսական կազմակերպությունները: Համառուսական քաղաքների Պետրոգրադի մարզային կոմիտեի ռազմագերիների բաժինը դիմում է եկեղեցիների միացյալ խորհրդին, տեղյակ պահում թշնամական երկրներում գտնվող ռազմագերիների ծանր դրության մասին և խնդրում օժանդակություն⁵⁷:

Պատերազմի առաջին տարում՝ 1914 թ. աշնանը, եկեղեցական խորհրդի և ազգային ուղղվածության հասարակական մյուս կազմակերպությունների գործունեությանը զուգահեռ երկու քաղաքների համայնքներում ստեղծվեցին հայկական կոմիտեներ: Նրանք կոչված էին օգնություն կազմակերպելու պատերազմում վիրավորվածներին, փախստականներին, առհասարակ տուժածներին: Մոսկվայում հայկական կոմիտեի նախագահ ընտրվեց հայ համայնքի ճանաչված գործիչ Հրապարակախոս Ստեփան Մամիկոնյանը: Կոմիտեի գործունեությանն ակտիվորեն մասնակցում էին հայ անվանի գործիչներից Ա.Ջիվելեզովը, բանաստեղծ Ա.Ծատուրյանը և ուրիշներ: Կոմիտեն իր միջոցներով 1916–1918 թթ. հրատարակեց «Армянский вестник» հանդեսը: Հանդեսի խմբագիր-հրատարակիչն էր Իվան Ամիրովը: Նրա փաստական խմբագիրը նշանավոր պատմաբան, արվեստաբան, հրապարակախոս պրոֆեսոր Ա.Ջիվելեզովն էր: Պարբերականը հրապարակ էր եկել հենց ռուս հասարակայնությանը ծանոթացնելու հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, մասնավորապես պատերազմի հետևանքով նրա համար ստեղծված ողբերգական ու դժվարին կացու-

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, ք. 9–10, 82:

Թյանը: Հայ մտավորականներից բացի՝ Հանդեսին մասնակցում էին նաև ռուս նշանավոր գրողներ Վալերի Բրյուսովը, Հայր և որդի Ալեքսեյ և Յուրի Վեսելովսկիները, Վասիլի Նեմիրովիչ-Պանչենկոն և ուրիշներ: Հայկական կոմիտեի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին Հայ ռուսանոցները, մանավանդ փախստականներին օգնելու հարցում:

Մայրաքաղաքների Հայ Համայնքները փախստականներին օգնելու, նրանց համար քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու համար օգտագործում էին Հնարավոր բոլոր միջոցները, անգամ դիմում ծայրահեղ քայլերի: Մոսկվայի փախստականների կոմիտեն Ֆինանսական Հանձնաժողովի նախագահ Խ.Գենչ-Օղլուևի ստորագրությամբ 1917 թ. Հատուկ նամակ է ուղարկում Հայ Համայնքի անդամներին: Նամակում նշվում է, որ արդեն երեք տարի է, ինչ պատերազմը շարունակվում է, և այդ ընթացքում կոմիտեն հարյուրավոր փախստականների ապահովել է սննդով, ապրելատեղով, հազարավոր որբերի է հավաքել, լուծել նրանց սննդի, հագուստի, կրթության հարցերը, հիվանդանոցները հարյուրավոր հիվանդների կյանք են փրկել: Ամենուր դրվատանքի են արժանանում Մոսկվայի Հայերի սրտացավ վերաբերմունքը, նրանց ակտիվ գործունեությունը: Մայրաքաղաքների Հայ Համայնքների հետ միասին տեղերում նպաստավոր աշխատանքներ են կատարել նաև քաղաքների միության «Եղբայրական օգնություն» և ուրիշ կազմակերպություններ: Կառավարությունը ևս նշանակալի գումարով օգնության ձեռք է մեկնել փախստականներին: Սակայն արվածը բավարար չէ: «Մենք ոչ մի ընդհանուր չպետք է մոռանանք, – նշվում էր նամակում, – որ Մոսկվայի Հայկական գաղութը Հայ ժողովրդի մտավոր և նյութական ուժերի կենտրոնատեղին է, և որ նրա Հայացքն ուղղված է մեզ վրա»: Մանավանդ որ տակավին շատ-շատ են փախստականների հոգսերը: Մոսկվայի Հայկա-

կան կոմիտեան նպատակահարմար է գտնում, չնվազեցնելով նյութական աջակցությունը, միաժամանակ այնպիսի օգնություն կազմակերպել, որ փախստականները կարողանան ցանքս կատարել և աստիճանաբար ձևավորել իրենց տնտեսությունը: Նախապես ստանալով Հայ Համայնքի Համաձայնությունը՝ ընտրվել է Հանձնաժողով, որը սահմանել է Հայկական գաղութի յուրաքանչյուր անձի վճարելիք գումարի չափը: Խնդրվում էր հնարավոր կարճ ժամանակամիջոցում մոծոժմները կատարել ժամհարյանների գրասենյակի Մոսկվայի Հայկական կոմիտեի ընթացիկ Հաշվի վրա⁵⁸:

Մեծ եղեռնի հետևանքները՝ փախստականների հիմնախնդիրները Համակողմանիորեն քննարկելու և Համակարգելու հարցում շահագրգիռ վերաբերմունքի արտահայտություն էր նաև այն, որ Մոսկվայի և Պետերբուրգի Հայկական կոմիտեները նախաձեռնեցին Պետերբուրգում 1916 թ. մայիսի 10-ից 12-ը հրավիրել Հայ փախստականների հարցերով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների Համագումար: Համագումարի հրավիրումը հրամայական պահանջ էր դարձել: Այն պայմանավորված էր փախստականների հարցում տիրող տնայնագործական խառնաշփոթ գործընթացով, միասնական կենտրոնի և ընդհանուր մշակված ծրագրերի բացակայությամբ:

Փախստականներին ծանր դրությունից Հանելու, նրանց հետ տարվող աշխատանքները կանոնակարգելու նպատակով Համագումարի հրավիրումը խիստ անհրաժեշտ էին Համարում նաև ժամանակի նշանավոր գործիչները, որ քաջատեղյակ էին իրավիճակին: Ա.Ջիվելեգովը, որը հրատապ էր համարում փախստականներին աջակցող կազմակերպությունների Համագումարի հրավիրումը, նշում է, որ Ռուսաստանում տեղական և ազգային բազմաթիվ կազմակերպություններ կան, որոնցից մեկը փող ունի, փորձ չու-

⁵⁸ Стѣн Армянский вестник, 1917, 17, էջ 14:

նի, մյուսը փորձ ունի, փող չունի, ուրիշներն այլ առավել-լուծթյուններ ու պակասուծթյուններ ունեն: Նրանք դժգոհում, բանավիճում են իրար հետ, որից, սակայն, փախստականների վիճակը չի թեթևանում: Նրա կարծիքով՝ համագումարը երեք հիմնական հարց է լուծելու. նպատակին ծառայեցնել կառավարութայն հատկացրած միջոցները, արդյունավետորեն տնօրինել Հայ հասարակական կազմակերպութայնների միջոցները և աշխատանքի բաժանում կատարել պետական մարմինների, «Կոփկասի քաղաքների միութայն» և հասարակական կազմակերպութայնների միջև⁵⁹:

Բարձրագույն իշխանութայններից համագումար հրավիրելու թույլտվութայն ստանալու դժվարութայնը Մոսկվայի և Պետերբուրգի՝ փախստականներին օգնող կոմիտեների առջարկով իր վրա է վերցնում պետական դոմայի անդամ Միքայել Պապաշանովը: Վերջինս ստանում է ներքին գործերի նախարարութայն՝ համագումարի կայացման և նախապես ծրագրված մարտ ամսից մայիսի 10-ից 12-ը տեղափոխելու թույլտվութայնը: Նախարարութայնը միաժամանակ պահանջում էր համակողմանի տեղեկութայններ համագումարի մասին⁶⁰:

Մոսկվայի և Պետերբուրգի համագումարի կազմակերպական կոմիտեի անունից Պետերբուրգի՝ փախստականներին օգնող բյուրոյի նախագահ Ա.Ասրիբեկովը հեռա-

⁵⁹ Տե՛ս А.Дживелегов, Армянский съезд. – Армянский вестник, 1916, 23, նաև՝ Дж.Киракосян, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие, Ереван, 2007, էջ 137–139, 157–160:

⁶⁰ Տե՛ս Армянский вестник, 1916, 12–13, էջ 24: Համագումար հրավիրող կազմակերպական կոմիտեի կազմում Պետերբուրգից մտնում էին պետական դոմայի երկու անդամներ՝ Մ.Պապաշանովն ու Մ.Աճեմովը, Ն.Արոնցը, Ա.Ասրիբեկովը, Բերբերովը, Հ.Լուկասովը, Ռոստոմյանը, Մարուխանը և Տիգրանյանը, իսկ Մոսկվայից՝ Զ.Աճեմովը, Ի.Ամիրովը, Ա.Միքայելյանը, Մ.Թադևոսյանը, Հ.Տեր-Հովհաննիսյանը և Խարմազը (տե՛ս նույն տեղում, էջ 24):

գրում է բոլոր կազմակերպություններին, միություններին, թերթերի խմբագրություններին համագումարի հրավիրման մասին: Ինչպես նախատեսված էր, մայիսի 10-ին Պետերբուրգում բացվում է համագումարը: Համագումարին մասնակցում էին երկրի տարբեր վայրերից, գլխավորապես Ռուսաստանի շրջաններից ժամանած 175 ներկայացուցիչներ: Պատգամավորների մեծամասնությունը կազմում էին Պետերբուրգի, Մոսկվայի և Ռուսաստանի հայկական այլ հայաշատ շրջանների ներկայացուցիչները: Համագումարին մասնակցում էին նաև սենատորներ Նեյդգարտը, Նիկիտինը, ակադեմիկոս Ն.Մառը, Ս.Աբամելիք-Լազարյանը, պետական դոմայի հայ անդամները, գեներալներ Հ.Բաղրամովը, Վ.Թամաձևը և ուրիշներ⁶¹: Համագումարի նախագահ է ընտրվում Ս.Մամիկոնյանը, տեղակալներ՝ Գ.Չալխուշյանը, Վ.Վարդանյանը և Ա.Ասիրբեկովը: Նախագահողը, բացելով համագումարը, փախստականների նկատմամբ հոգատար վերաբերմունքի համար հայ ժողովրդի անունից երախտագիտության խոսք է ուղղում Ռուսաստանի բարձրագույն իշխանություններին: Ապա տեղեկացնում է, որ 270 հազար փախստականներ պատսպարվել են Ռուսաստանում, մի քանի հարյուր հազար հայեր անմխիթար վիճակում գտնվում են Միջագետքի անապատներում: Ի՞նչ անել, ինչպե՞ս նրանց օգնել, ահա այն գլխավոր հարցերը, որոնցով զբաղվելու է համագումարը: Ս.Մամիկոնյանը միաժամանակ հույս է հայտնում, որ Ռուսաստանի և նրա դաշնակիցների կողմից պատերազմում հաղթանակ տանելուց հետո Հայաստանի համար կբացվի պայծառ հեռանկար: Բազմաթիվ ելույթներում արվում են տարբեր առաջարկներ: Նոր նախիջևանի ներկայացուցիչ, նշանավոր հասարակական գոր-

⁶¹ Հանգամանորեն տե՛ս Ա.Հարությունյան, Պետրոգրադի գաղթականական համագումարը և նրա նշանակությունը. - Էջմիածին, 2008, Դ, էջ 75-79:

ծիչ Գ. Չալխուռչյանն անդրադառնում է ոչ միայն փախստականների, այլև գերիների խնդրին: Մ. Պապաջանովը բարձրացնում է կառավարութան հատկացրած օգնությունն արդյունավետորեն օգտագործելու հարցը և շեշտում այն պարագան, որ փախստականներին օգնելու հարցում բոլորից լավ իրենց դրսևորում են Հայ գյուղացիները:

Փախստականների հետ կապված բոլոր խնդիրները քննարկում են կազմակերպական, դպրոցակրթական, ֆինանսատնտեսական, բժշկասանիտարական, գյուղատնտեսական, իրավական և ընդհանուր հարցերի մասնաճյուղերում և կանխորոշում հետագա անելիքները⁶²:

Հասարակայնությունը ընդհանուր կարծիքն է արտահայտում Ա. Զիվելեգովը, երբ մի շարք առումներով բարձր է գնահատում համագումարի նշանակությունը: Նա գտնում է, որ հաջողվեց փախստականներին աջակցող կազմակերպությունների աշխատանքները համակարգել, միավորել մեկ միասնական կենտրոնի մեջ: Գործնական լուծում տրվեց գյուղատնտեսության, սանիտարական, դպրոցական, իրավական և այլ կենսական նշանակություն ունեցող հարցերին: Դրանով հանդերձ՝ նա համագումարի հիմնական արդյունքն է համարում այն, որ ոռուս հասարակայնությունն իմացավ, թե ինչպիսի ողբերգություն է ապրել Հայ ժողովուրդը թուրքիայում, և թե փախստականներն ինչպիսի թշվառ վիճակում են Ռուսաստանում: Եվ պակաս կարևոր չէ այն պարագան, որ համագումարը ոռուսական հասարակական մտքին նյութ տվեց Հայկական հարցի մա-

⁶² Ст'я Арммянский вестник., 1916, 16, էջ 11–12: Համագումարում նախագահող, Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Ս. Մամիկոնյանին ռազմական գործողությունների պատճառով տուժածներին օգնելու գործում ցուցաբերած ակտիվ աշխատանքի համար Նորին կայսերական մեծության մեծ իշխանուհի Տառյանա Նիկողլանյան պարգևատրում է առաջին կարգի կրծքանշանով (տե՛ս նույն տեղում, 1916, 37–38, էջ 31)

սին: Համագումարում գրեթե չհնչեցին Հայ իրականության մեջ այնքան սուր արտահայտվող կուսակցական տարակարծությունները: Բոլորը մտածում էին ընդհանուր գործի մասին և հասկանում, որ կուսակցական հակամարտությունը կարող է վնասել ընդհանուր գործին: Մեծանուն հրապարակախոսը վստահություն է հայտնում, որ ստեղծված համերաշխությունը շարունակական կլինի, քանի որ դա է պահանջում Հայաստանի շահը⁶³:

Խուսաստանում ապաստան գտած արևմտահայ գաղթականները ջանում էին հոգալ իրենց ամենօրյա ապրուստի միջոցները և ըստ կարողության պատրաստում էին կյանքի ու կենցաղի, արվեստի բազմատեսակ իրեր: Գաղթականներին օգնություն կազմակերպող համառուսական կոմիտեն Տասյանա Նիկոլաևնայի գլխավորությունով որոշում է Պետրոգրադում կազմակերպել տարբեր ժողովուրդների գաղթականների ձեռքի աշխատանքների ցուցահանդես: Ցուցահանդեսի կազմակերպիչների նպատակն էր ուսու հասարակայնությանը ծանոթացնել գաղթականների վիճակին, նրանց կենցաղին, կատարած աշխատանքներին: Տասյանա Նիկոլաևնայի կոմիտեն խնդրում է պատերազմի ժամանակ ձևավորված Պետրոգրադի կոմիտեին իր վրա վերցնել ցուցահանդեսի հայկական բաժնի կազմակերպումը: Առաջարկն ընդունվում է, և կոմիտեն ձեռնամուխ է լինում այդ աշխատանքներին:

1917 թ. ապրիլին Պետրոգրադում բացվում է ցուցահանդեսը, որի բաժիններում ներկայացված էին կանանց ձեռագործ, հագուստեղեն, կոշիկեղեն, մանածագործական արտադրանք, փականագործների, դարբինների, զամբյուղագործների աշխատանքներ, ուսումնական պաշտպանական առարկաներ, ուսումնական ձեռնարկներ, արվեստի ստեղծագործություններ: Այլ խոսքով, ներկայացված էին ազգա-

⁶³ Տե՛ս նույն տեղում, 1916, 17, էջ 1-2:

գրական և մշակութային արժեք ներկայացնող իրեր: Ցուցադրված էին նաև գաղթականների անմխիթար վիճակն արտահայտող լուսանկարներ, հուշամատյաններ, քարտեզներ և այլն: Ցուցահանդեսը ռուս հասարակայնությանը ըստ կարելիության ներկայացնում էր արևմտահայության ժողովրդական մշակույթը, կենցաղը, վարքն ու բարքը: Ցուցահանդեսը միաժամանակ ցույց տվեց, որ գաղթականները ծանր պայմաններում աշխատում, ամեն ինչ անում են իրենց կյանքն ապահովելու համար: Ստահող են տարածված լուրերը, թե նրանք, ձեռնածալ նստած, հույսերը կապում են միայն ստացվող օգնության հետ⁶⁴:

Ինչպես տեսանք, եկեղեցական խորհրդին զուգահեռ գործում և Հայ Համայնքի ղեկավարությունը, փաստորեն, ստանձնել էր Հայկական կոմիտեն: Փետրվարյան, անգամ Հոկտեմբերյան հեղաշրջումներից հետո, թեկուզ և շատ կարճ ժամանակ, կոմիտեն պահպանում էր իր այդ դերը: Նրան 1918 թ. սկզբներից փոխարինելու եկավ խորհրդային կառավարության ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմում 1917 թ. դեկտեմբերին ստեղծված Հայկական գործերի կոմիսարիատը: Վերջինիս կոմիսար նշանակվեց անվանի բոլշևիկ Վառլամ Ավանեսովը, իսկ տեղակալ՝ Վահան Տերյանը: Կոմիսարիատի կազմում տարբեր տախների աշխատել են Պ.Մակինցյանը, Հ.Զառայանը, Հ.Հովսեփյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Ս.Լուկաչինը և ուրիշներ: Կոմիսարիատն իր բաժանմունքներն ուներ հայաշատ գաղութներում, իսկ մի շարք քաղաքներում, այդ թվում և Պետերբուրգում ուներ լիազորություններ⁶⁵:

⁶⁴ Տե՛ս Ա.Հարությունյան, Պետրոգրադի 1917 թվականի հայ գաղթականների ցուցահանդեսը. – Արվեստ, 1990, 4, էջ 54–55:

⁶⁵ Տե՛ս Ս.Արիսանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958, էջ 22–27:

Կոմիսարիատի գլխավոր խնդիրն էր հայ բնակչու-
թյան մեջ խորհրդային իշխանության և բուլշևիկյան կու-
սակցության քաղաքականության քարոզումը: Դրանով
հանդերձ՝ կոմիսարիատը նկատելի աշխատանք կատարեց
ռուսահայերի շրջանում փախստականների հոգսերը թե-
թեացնելու ուղղությամբ: Քաղաքական փոթորկալից այդ
տարիներին կատարվող իրադարձություններին հայ բնակ-
չությանը ծանոթացնելու և նոր գաղափարախոսությունը
քարոզելու նպատակով կոմիսարիատը 1918 թ. հրատարա-
կեց «Կոմունիստ» (խմբագիր՝ Վ.Տերյան), իսկ 1919 թ.
«Կարմիր դրոշակ» (խմբագիր՝ Ա.Կարինյան) թերթերը,
որոնք շատ կարճ կյանք ունեցան: Հայկական գործերի կո-
միսարիատը գոյատևեց մինչև 1921 թվականը: Մինչ այդ
իրենց գործունեությունը դադարեցրել էին եկեղեցական
խորհուրդը և ազգային մյուս կազմակերպությունները:

Այսպիսով, արևելյան երկու պետությունների՝
Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ գտնվող հայրենի
երկրի ազատագրումը մշտապես եղել է հայ մտավոր կենտ-
րոն դարձած Մոսկվայի և Պետերբուրգի հայկական հա-
մայնքների հասարակայնությանը զբաղեցնող ամենակա-
րևոր հիմնախնդիրներից մեկը: Սակայն նրանք չեն բավա-
րարվել սոսկ հայրենասիրական, հրապարակախոսական
բնույթի կրոյ մտահոգություններով: Ինչպես տեսանք, իսկ
հետագա շարադրանքի ընթացքում առավել ևս կհամոզ-
վենք, որ հայրենիքին ու հայրենակիցներին ամեն կերպ
սատար կանգնելու, աջակցելու նպատակով երկու հայահա-
մայնքները գնահատելի գործնական ձեռնարկումներ են
արել և իրենց որոշակի ներդրումը կատարել:

2. Հայ-ռուսական հասարակական կապերի ոլորտում

Գաղթաշխարհի ընդհանուր պատմության հիմնական առանձնահատկությունը երկու հայրենիք ունենալու գաղափարի մարմնավորումն է: Այս կամ այն գաղութի գոյությունը եթե երկարատև է, անցնում է հարյուրամյակից, նորաբնակների մի քանի սերունդ բնակվում է հյուրընկալ երկրում, բնականաբար, այդ երկիրն ընկալվում է որպես հայրենիք: Մյուս կողմից՝ օտար երկրում հաստատված և համայնքային կյանքով ապրող զանգվածը պահպանում է իր լեզուն, դավանանքը, սովորությունները, այլ խոսքով՝ ազգային հատկանիշները: Դրանք վկայությունն են այն բանի, որ նա մտավոր ու հոգևոր ներաշխարհում կրում է նախնիներից ավանդված ժառանգությունը, պայանական երկրի կամ մայր հայրենիքի զգացումը, գաղափարը:

Գաղութների բնակչությունը տարբեր ձևերով ու ներդրման տարբեր չափերով է կապված լինում և ջանում ծառայել հայրենիքին: Հյուրընկալ երկրի քաղաքացին լինելով՝ նա իր ամբողջ գործունեությամբ ծառայում է տվյալ երկրի բարեշինմանը: Հզոր գաղութները դրա հետ մեկտեղ ջանում են կապեր պահպանել, ներդրում ունենալ նաև մայր հայրենիքում: Օտար միջավայրում, նորահաստատ երկրում ազգային մշակութային արժեքների պահպանումն ու զարգացումը դրա լավագույն դրսևորումն են: Ակադեմիկոս Ն.Յորգան, անդրադառնալով իր երկրում բնակություն հաստատած հայերի վարքագծին, տվել է հետևյալ բնութագիրը. «Ռումինիայի հայերը կարողացան մեծ հմտությամբ զուգակցել երկու դժվարին և նրբին պարտա-

կանոլթյուններ՝ մեկը հավատարմոլթյունը դեպի իրենց հայրենի ավանդոլթյուններն ու իրենց ազգոլթյունը, որոնք բնավ մոռացած չեն, և մյուսը՝ դեպի այն երկիրը, ուր իրենք և իրենց նախնիները հաստատվել են շատ հին ժամանակներից ի վեր: Մեզ համար նրանք եղբայրներ են, ազնիվ եղբայրներ, միաժամանակ մնալով իրենց հնագույն հայրենիքի ընտրյալ որդիները»⁶⁶: Այս բնորոշումն առավել կամ պակաս չափերով կարելի է տարածել, առանց բացառոլթյան, բոլոր գաղոլթների վրա:

Գաղթավայրերի պատմոլթյան այդ առանձնահատկոլթյունը ըստ ամենայնի ընկալում էին նաև նրանց պատմոլթյանն առնչվող անձնավորոլթյունները: Սիմեոն Համալյանը «Մտքեր և խոհեր» վերտառոլթյամբ հոդվածում արժարժում է հենց Ռուսաստանի հայկական գաղոլթների երկակի այդ բնոլթը: Նա այն համոդմունքն է արտահայտում, որ ռուսահայը Ռուսաստանի լավ քաղաքացի պետք է լինի՝ միաժամանակ չմոռանալով մայրենի լեզուն, գրականոլթյունը. «Ռուսահայը, – գրում է նա, – պետք է լինի համայն Ռուսաստանի իսկական քաղաքացի և միաժամանակ հայ հասարակոլթեան իսկական դաւակ, գործունեայ անդամ»⁶⁷:

Հայկական գաղթավայրերի ընդհանուր բնոլթագիրը ներկայացնելիս երբ ասվում է, որ նրանց պատմոլթյունը նաև աշխարհի տարբեր ժողովուրդների հետ հայ ժողովուրդի պատմական կապերի պատմոլթյունն է, սոսկ գեղեցիկ բանաձևում չէ: Այն բովանդակում է նրանց անցած երկարատև ճանապարհի փորձի ընդհանրացումը: Աշխարհի շատ ժողովուրդներ իրենց երկրներում հանգրվան գտած հայ զանգվածների միջոցով են ծանոլթացել, գաղափար կաղմել հայերի ու Հայաստանի մասին: Գաղթավայրերում հայու-

⁶⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 676:

⁶⁷ Մարտ, 1912, երկրորդ տարի, 5–6, էջ 8:

թյունը շփվում, ծանոթանում է տվյալ երկրի պատմութ-
 յանն ու մշակույթին, ազդվում ու ազդում, նրանից վերց-
 նում այն նորն ու առաջադեմը, որոնց պահանջը զգացվում
 է: Այդ առումով Հայ գաղթավայրերի պատմության մեջ ա-
 ռանձնանում և յուրահատուկ նշանակություն են ձեռք բե-
 րում Մոսկվայի և Պետերբուրգի Հայկական Համայնքները:

XIX դ. կեսերից՝ Ղրիմի պատերազմից և հատկապես
 գյուղացիական ռեֆորմից հետո, Ռուսաստանը մտնում է
 ժողովրդավարական, ազատամտական զարգացման ուղի:
 Պետերբուրգը և Մոսկվան դառնում են լուսավորության,
 գիտության, հասարակական կյանքի աշխույժ շարժման, ազ-
 գային զարթոնքի կենտրոններ: Այդ քաղաքները դառնում
 են նաև Հայերի, մասնավորապես Հայ երիտասարդության,
 ուսանողության մտավոր կենտրոններ:

Հայ Համայնքների մտավորականության ճանաչված
 դեմքերն ուսանողությանը քարոզում են ճանաչել իր դերը,
 առաքելությունը: Նրանք երիտասարդությանը հորդորում
 են ձեռք բերել գիտելիքներ, հարստացնել մտավոր պաշարը,
 տիրապետել մայրենի լեզվին, ապա այդ ամենը փոխադրել
 Հայրենիք և պայքարելով հետամնացության, խավարա-
 մտության դեմ՝ լուսավորություն, քաղաքակրթություն
 տարածել:

Գ.Տատյանը Մոսկվայի Հայ ուսանողությանը հաս-
 ցեագրած նամակում պարտավորեցնում է իմանալ ազգային
 լեզուն, խորապես ուսումնասիրել պատմությունը, մշա-
 կույթը, նրա անցյալն ու ներկան և ապա լուրջ գիտելիք-
 ներով զինված՝ վերադառնալ Հայրենիք՝ փարատելու նրան
 շրջապատող խավարը, լուսավորելու նրա մութ կյանքը⁶⁸:
 Նույն մոտեցումն ունեւր Ղ.Աղայանը Պետերբուրգի Հայ
 ուսանողության նկատմամբ. «Մեր մտավոր վերածնության
 առաջին կարապետները, — գրում է նա, — Դորպատի Համալ-

⁶⁸ Տե՛ս Մշակ, 1897, 21:

սարանի Հայ ուսանողներն էին: Սրանց հաջորդեցին Պետերբուրգի Հայ ուսանողները: Պետերբուրգի մտավոր հեղափոխության շրջանում զարգացած Հայ ուսանողության մի ստվար մասը հայրենիք վերադառնալով՝ անկախ դիրք բռնեց և Հասարակական գործունեություն նվիրվեց»⁶⁹:

Սմբատ Շահազիզը նմանապես մեծ հույսեր էր կապում երիտասարդության և Հայրենիքին ծառայելու նրա մղումների հետ: «Այո՛, ես կամենում եմ հաւատալ, – հավաստում է նա, – որ այսօրեան սերունդը աշխատում է իւրացնել ժամանակիս առաջաւոր իդէաները և այդպէս մօտենալ քաղաքակիրթ կեանքի էական կազմակերպութեան, որ միակ ճանապարհ է տգիտութեան դէմ: Այդ գիտակցութեան շնորհիւ այսօրուայ սերունդը զգայիւն և կենդանի տրամաբանութեամբ ականջ է դնում և իւր Հայրենիքի ցաւերին և ուրախութիւններին, հետաքրքրւում է և դորա ընթացիկ հարցերով»⁷⁰: Իր ամբողջ կյանքը մայրաքաղաքներում անցկացրած և տեղի Հայ համայնքներին քաջածանոթ Վահան Տերյանը Հայերի հոգևոր միասնության, ինքնության պահպանման հարցում խիստ կարևորում էր մայրենի լեզվի իմացութիւնը: «Հոգևոր Հայաստան» հոգվածում նա գրում է. «Մինչդեռ մենք մի Մոսկվայում, ուր բազմահազար ու հարուստ գաղութ ունենք, չունենք գեթ մի փոքրիկ ընկերութիւն, մի Հիմնարկութիւն, որի նպատակը լիներ Հայոց լեզվի պահպանումն ու տարածումը, ոչ թե օտարների, այլ մերայինների՝ Հայերի մեջ»⁷¹:

Հայրենիքին ծառայելը, այնտեղ լուսավորութիւն տարածելը մշտապես մտահոգել է Հայ համայնքների գոր-

⁶⁹ Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1974, էջ 429–430:

⁷⁰ Սմբատ Ըահազիզեան, Յոբելեանական տարեդարձ, Մոսկուա, 1893, էջ 54–55:

⁷¹ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 114:

ծիչներին: «Донская речь» թերթը հաղորդագրություն է տպագրել այն մասին, որ Պետերբուրգի հայերի մեջ կազմվել է մի հանձնախումբ, որը նպատակ ունի հիմնելու մի ընկերություն՝ Ռուսաստանի հայերի մեջ լուսավորություն տարածելու համար, և մշակվում է նրա կանոնադրությունը: «Новости» լրագիրը հավելում է, որ ընկերության նպատակը Կովկասում գործելն է. այնտեղ բացել դպրոցներ, որտեղ հայ աշակերտները, ռուսերենից բացի, կսովորեն մայրենի լեզուն, և լուսավորական այլ ձեռնարկումներ կատարել⁷²:

Ուսանողությունը տարբեր բուհերում մասնագիտությանը տիրապետելուն զուգահեռ քայլեր էր կատարում հայոց պատմության ու մշակույթի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենալու ուղղությամբ: Նրանցից շատերը մասնակցում էին հայոց լեզվի խմբակային պարապմունքներին, հայագիտական թեմաներով կազմակերպվող դասախոսություններին: Պետերբուրգի տարբեր բուհերի ուսանողները 1881 թ. միահամուռ որոշում և շաբաթը մեկ օր հավաքվում ու լսում են պրոֆ. Բ. Պատկանյանի դասախոսությունները հայոց պատմության հիմնախնդիրների վերաբերյալ: Նրանք շաբաթական մեկ օր 2-3 ժամ տրամադրում են հայոց լեզվին ու գրականությանը, իսկ տակալին 1860-ական թթ. ստեղծել էին 600 գրքից բաղկացած իրենց սեփական գրադարանը: Գրադարանի պատասխանատու ուսանող Կարապետ Յաղուբյանը, տեղեկացնելով, որ գրադարանը, որը ձևավորվել է գերազանցապես Վենետիկի, Վիեննայի և Կ. Պոլսի հրատարակություններից, միակողմանի ուղղվածություն ունի, ուստի Կովկասի հրատարակիչներին և հեղինակներին խնդրում էր իրենց գրքերից մեկական օրինակ ուղարկել գրադարանին⁷³:

⁷² Տե՛ս Մշակ, 1901, 11, 12:

⁷³ Տե՛ս Մեղու Հայաստանի, 1882, 138, Արձագանք, 1883, 15:

Ռուսաստանի մայրաքաղաքների բարձրագույն ուսումնական Հաստատություններում սովորող Հայ ուսանողների թվաքանակը փոքր չէր և աստիճանաբար աճում էր: Մոսկվայի Համալսարանում 1850/1851 ուսումնական տարում ուսանում էին Հայ 16 երիտասարդներ, 10 տարի Հետո նրանց թվաքանակը Հասավ 46-ի⁷⁴: 1884/1885 ուսումնական տարում սովորում էին 66, իսկ 1897 թվականին՝ 119 երիտասարդներ⁷⁵: «Новое время» լրագրի տեղեկությունների համաձայն՝ 1888 թ. Պետերբուրգի տարբեր բուհերում սովորում էր Հայ 118 երիտասարդ⁷⁶:

Կարևոր ու գնահատելի է այն, որ ուսանողների բացարձակ մեծամասնությունը՝ 97–98 տոկոսը, Հայաստանից, Անդրկովկասի Հայաբնակ վայրերից և Ռուսաստանի Հայկական գաղութներից էին: Մոսկվայի Համալսարանի 1885 թ. 66 ուսանողներից 11-ը Թիֆլիսից էին, 15-ը՝ Երևանի նահանգից, 9-ը՝ Եկատերինոսլավից: Կային ուսանողներ Ալեքսանդրապոլից, Էջմիածնից և ուրիշ բնակավայրերից⁷⁷: 1889 թ. Պետերբուրգի բուհերն ավարտել են Գանձակից, Թիֆլիսից, Երևանից, Պետերբուրգից, Գորիսից, Մեղրիից, Օշականից, Շուշիից, Շամախիից, Ախալցխայից, Ղրիմից գնացած երիտասարդները⁷⁸:

Հայրենիքի Հետ կապվելու, նրա լուսավորությունը ծառայելու հարցում նվազ չէր Հազարյան ճեմարանի սանների Հասարակական դերը, որոնց մի մասը Մոսկվայից ու Պետերբուրգից էր, իսկ բացարձակ մեծամասնությունը նույն-

⁷⁴ Տե՛ս Ա.Արշարունի, Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 90:

⁷⁵ Տե՛ս Բ.Բ.Մանուկյան, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների դերը հայ մտավորականության պատրաստման գործում (19-րդ դարի երկրորդ կես), սեղմագիր, Երևան, 1997, էջ 10:

⁷⁶ Տե՛ս Արձագանք, 1888, 26:

⁷⁷ Տե՛ս Բ.Բ.Մանուկյան, նշվ. աշխ., էջ 10:

⁷⁸ Տե՛ս Մշակ, 1889, 80:

պես կազմում էին դրսեկ պատանիները: Նրանք ավարտելուց հետո, որպես կանոն, անմիջապես վերադառնում էին իրենց ծննդավայրերը, կամ էլ նրանց աննշան մասը ստանում էր բարձրագույն կրթություն և նոր միայն Հայացքն ուղղում դեպի հայրենիք: Նրանք մայրաքաղաքներում հասու էին դառնում լուսավորական, ժողովրդավարական շարժմանը և այդ ամենը առնչում հայ իրականությանը, որտեղ տիրող իրավիճակին ու կատարվող իրադարձություններին տեղյակ էին: «Մոսկվայի համալսարանում, – գրում է Ա.Երիցյանը, – հայ ուսանողների թիւը գրեթէ միշտ տասնեակներով կարելի էր հաշվել: Մրանք միշտ միջոց ունէին տեսնել հայրենիքից եկող անձնաւորութիւնների հետ, ընդունւած էին այստեղ բնակւող հայ ընտանիքների մէջ, ունէին հայ քահանայ, տօն օրերը ներկայ էին լինում Հայոց եկեղեցում...»⁷⁹:

Երիտասարդության ուժերը միավորելու մեջ մեծ էր այսպես կոչված ուսանողական «ժողովների» նշանակությունը: «Ժողով» անվանվող երիտասարդական հավաքներում փոխճանաչման մթնոլորտում հաղորդումներ, քննարկումներ, բանավեճեր էին տեղի ունենում:

1858 թ. Մոսկվայի ուսանողները, «Մայր Արաքս» երգելով, բացում են իրենց ուսանողական հավաքը: Այն ընկերական մի միություն էր, որը մեծ ազդեցություն գործեց հայրենիքից կտրված երիտասարդության վրա, նպաստեց շատերի ուսման ավարտին, շատերին դրեց ազգին ծառայելու շավիղի վրա: «Ժողովում» Հղացավ և 1859 թ. կազմակերպվեց առաջին թատերական ներկայացումը: «Ժողովի» եռուն ժամանակաշրջանը 1858–1863 թվականներն էին: Մ.Նալբանդյանը այդ շարժման կենտրոնում էր և օգտվում էր որոշակի հեղինակությունից: «Ի բնէ բարի և համակրելի

⁷⁹ Ա.Երիցեանց, Գրիգոր Արծրունու եւ նրա քսանը հինգ տարւայ գրական գործունէութեան առթիւ (1865–1890), Թիֆլիս, 1890, էջ 52:

բնաւորութեան տեր լինելով, — գրում է նրա մասին Հ:Բերբերյանը, — նա իւր խելացի դէմքով, սրախօսութեամբ և ընկերական վարմունքով բոլոր Հայ ուսանողներին, նաև աշակերտներին իւր կողմը գրաւեց»⁸⁰:

Դորպատում կրթություն ստացած երիտասարդների մի մասը XIX դ. կեսերին դնում էր Պետերբուրգ՝ կյանքի ասպարեզ մտնելու նպատակով: Տեղում առաջացած անհարմարություններն ու հոգսերը չէին խանգարում, որ պարագլուխ ունենալով Ռ.Պատկանյանին՝ ծառայեն ազգի շահերին: Նրանք Հայկական տառեր ձուլել՝ տվեցին, և շուտով հրապարակ եկան «Գամառ Քաթիպայի» արձակ և չափածո գործերը, որոնք ձեռքից ձեռք էին անցնում՝ մեծ բավականություն պատճառելով ամենքին: 1856 թ. հրապարակվեց «Արաքսի արտասուքը» կամ «Մայր Արաքսի փերով» բանաստեղծությունը, որը մեծ տպավորություն գործեց: Այն երգում էին ոչ միայն Ռուսաստանում, այլ անգամ Բոսֆորի փերին: Նույն տարում «Գամառ Քաթիպան» լույս աշխարհ հանեց «Ազգային երգարանը», որը շատ լայն տարածում գտավ⁸¹:

Երիտասարդությանը դեպի իրեն էր ձգում նաև Պետերբուրգի համալսարանը, որտեղ մեկնողներին թվում մեծ էր Թիֆլիսի գիմնազիայի աշակերտների քանակը: Մոսկվայի «ժողովի» նմանությամբ Պետերբուրգում 1864 թ. ստեղծվում է նման կազմակերպություն, որի եռուն փամանակաշրջանը տեղում է չորս տարի: «Ուսանողներից զատ, «ժողովին» մասնակցում էին հաճախ, — գրում է Աշ.Հովհաննիսյանը, — Պետերբուրգի Հայ գաղութի անդամները: Ազգային-քաղաքական սալոնի կերպարանք առած այս կազմակերպության նույն տարվա արձանագրությունների մեջ հիշատակվում են մի շարք ծանոթ անուններ՝ Կ.Եղյան,

⁸⁰ Նոր-դար, 1891, 138:

⁸¹ Տե՛ս Ա.Երիցեանց, նշվ. աշխ., էջ 53–54:

Անդրեաս և Գրիգոր Արծրունիներ, Գևորգ Եվանգուլյան, Ղ.Աղայան, Բ.Թավաքալյան, Աբգ. Հովհաննիսյան, Մարտիրոս Սիմոնյան և այլն: Հետզհետե դրանց միանում են Խ.Պատկանյանի, Մ.Միանսարյանի, Ա.Երիցյանի և այլոց անունները... Նպաստում էր «ժողովին» նյութապես Մ.Սանասարյանը»⁸²:

Պետերբուրգի երիտասարդական հավաքներում, ինչպես և Մոսկվայում, բազմակողմանի հարցեր էին առաջ քաշվում, երիտասարդները կատարում էին բեղմնավոր աշխատանքներ, զինվում մտավոր պաշարով: Նրանցից շատերը վերադարձան հայրենիք և նվիրվեցին հասարակական գործունեության: «Սուլյն այս խումբը, – գրում է խմբի աշխատանքներին մասնակից Ղ.Աղայանը, – դեռևս Պետերբուրգումն ունեն իր ապագա գործունեության ձգտումը: Այնտեղ դասագրքեր պատրաստելու հոգս էին քաշում, հորինում և թարգմանում էին. հետևում էին կրթական գործին, ուխտում էին ծառայել ազգի մտավոր և բարոյական զարգացմանը փոխադարձ ձեռնտվության»⁸³:

Պետերբուրգի երիտասարդական հավաքներում միավորող, ուղղորդվողն հաղորդող դերակատարություն ունեին երիտասարդ մագիստրոս Կարապետ Եղյանն ու նրա ընտանիքը: Նրան հաջողվեց երիտասարդական «ժողովներից» խուսափող Արծրունիներին կապել այդ հավաքների հետ և հասու դարձնել ազգային երևույթներին: Երիտասարդական այդ հավաքներին մասնակից Ա.Երիցյանը Կ.Եղյանի ընտանիքի մասին գրում է. «Այդտեղ նրա մայրը և քոյրը իրանց սիրալիր և գթասիրաբար ընդունելու թիւնով շատերին մոռացնել են տւել ընտանիքի և բարեկամների կարօտը: Այդտեղ շատերն են օգնութիւն ստացել, սփոփւել և մխիթար-

⁸² Աշ.Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, Երևան, 1956, էջ 195:

⁸³ Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 430:

ւել: Այդտեղ շատերն են բարի խորհուրդ լսել և պաշտպանութիւն գտել: Վերջապէս այդտեղ շատերն են սովորել ճանաչել իրանց պարտականութիւնները դէպի ընկերը, դէպի ընտանիքը, հայրենիքը և հասարակութիւնը: Եւ ահա պ. Եղեանցի տունը դարձել էր մի գրաւիչ կենդրոն մայրաքաղաքի հայ ուսանողների համար»⁸⁴:

Ժողովրդավարական, լուսավորական շարժման 1850–1860-ական թթ. վերելքի մթնոլորտում Մոսկվայում ծնունդ առան «Հյուսիսափայլ» և հակառակ ուղղութիւն ունեցող «Ճռաքաղ» պարբերականները: «Հյուսիսափայլ» ամսագիրը, հանձինս խմբագիր Ս.Նաղարյանի և Հիմնական աշխատող Մ.Նալբանդյանի, սուր և հետևողական պայքար ծավալեց հետամնացութեան, տգիտութեան դեմ հանուն առաջադիմութեան, լուսավորութեան: Պարբերականն անխնա մտրակում էր մայրաքաղաքների հայութեան և հայ իրականութեան մեջ գոյութիւն ունեցող թերութիւնները, ինչպես և առանձին անհատների, այդ թվում և հոգևորականների գործունեութեան անընդունելի կողմերը, խարազանելի բարքերը:

«Հյուսիսափայլ» ամսագրում տպագրված երկու հոդվածներ, որոնցում վիրավորական արտահայտութիւններ կային նաև որոշ հոգևորականների հասցեին, մեծ իրարանցում առաջացրին: Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գ.Այվազյանը բողոքեց կաթողիկոսին և Լազարյան ճեմարանի ու եկեղեցիների հոգաբարձու Խ.Լազարյանին: Վերջինս բացատրութիւն պահանջեց խմբագիր Ս.Նաղարյանից: Խմբագիրը հանգամանորեն ներկայացրեց ամսագրի հրապարակախոսական ուղղվածութիւնը, հանուն լուսավորութեան, հանուն հետամնացութեան դեմ ծավալած պայքարը և ավելացրեց, որ մեծապատիվ Գ.Այվազյանը

⁸⁴ Ա.Երիցեանց, 6շվ. աշխ., էջ 59:

շփոթում է հոգևորականութուն ընդհանուր հասկացութունը նրա առանձին անհատների հետ:

Այդ հարցում ի հայտ են գալիս հասարակական տարբեր խավերի մտայնությունը, մոտեցումների տարբերությունները: Ամսագրի խմբագիրը եթե շահեկան էր համարում խավարամոլություն խարաղանումը, ապա հոգաբարձու Խ.Լազարյանին առաջին հերթին հետաքրքրում էր ժողովրդի մեջ համերաշխության, միասնության գաղափարի արմատավորումը:

Խմբագրի բացատրությունից բավարարություն չստանալով՝ Խ.Լազարյանը, հավատարիմ մնալով ազգային երկպառակություն, լարվածություն չմտցնելու իր հավատամքին, ճեմարանի վերատեսուչ Հ.Դեյլյանովին գրում է. «Ես իբրև հոգաբարձու մայրաքաղաքների հայոց եկեղեցիների և միևնույն ժամանակ իբրև հոգաբարձու Լազարեան ճեմարանի՝ թէ խղճիս թեկադրութեամբ, թէ ի պաշտօնէ, աւելի ևս արդարութեան պահանջով ցաւ ի սիրտ ստիպւած եմ այստեղ առաջ բերել իսկական ճշմարտութեան փաստերը, որովհետև անբարեյոյս է և մեղաւոր այն անձը, որը տարածում է թշնամութեան սերմեր, որով վնասում է և անպատուում իր հայրենակիցներին... Որտեղ անձնական կիրքը և աջառութիւնն է դեր խաղում, այնտեղ բարիք սպասել չի կարելի»: Եվ ապա ավելացնում է. «Ճշմարիտ օգտակար ամսագրի գլխաւոր պարտականութիւնը և նպատակը պէտք է լինի որչափ կարելի է շուտ ամրացնել Հայ ժողովրդի մէջ խաղաղութիւն, համերաշխութիւն և բոլորին էլ տանել դէպի ընդհանուր բարի նպատակ. բայց ոչ մի դէպքում չը բաժանել, չը տարածել թշնամութեան սերմեր և չը գրգռել կրքեր և արատներ, որոնք առանց այն էլ չափազանց շատ են տարածւած անբարեյոյս հայերի մէջ»⁸⁵:

⁸⁵ Տե՛ս Լէօ, Հայ հրապարակախօսութեան յիսնամեակը. – Գրական-գիտական ժողովածու, Թիֆլիս, 1908, էջ 61, 62:

Անվանի պատմաբան Լեոն, իր հոդվածում մեջբերելով Ս.Նազարյանի բացատրությունը և այդ առթիվ Խ.Լազարյանի՝ Հ.Դելյանովին հասցեագրած ընդարձակ գրությունը, եզրակացնում է, որ հավանաբար Ս.Նազարյանը պաշտպանություն գտավ ռուսաց օրենքների մեջ, այդ պատճառով էլ «վեհազնեայ իշխանը (Խ.Լազարյանը – Վ.Բ.) դադարեցրեց իր հալածանքը «Հիւսիսսփայլի» դէմ»⁸⁶: Լեոն նկատի չի առնում, որ Խ.Լազարյանը եթե նման մտադրություն ունենար, կարող էր հասնել ամսագրի փակմանը, և դրանից բացի՝ չէ՞ որ նրա կամեցողությամբ էր, որ Ս.Նազարյանը շարունակեց մանկավարժական աշխատանքը Լազարյան ճեմարանում: Այդ ամենից բացի՝ նա շատ բարձր էր գնահատում հայերեն ամսագրի հրատարակումը, ուստի և նման քայլի երբեք չէր կարող դիմել: «Հրատարակել որ և է հայկական ամսագիր, – գրում է Խ.Լազարյանը, – նպատակ ունենալով ազգի թէ կրօնական-բարոյական կրթութիւնը և թէ լեզուների և գիտութիւնների, մանաւանդ պատմական գիտելիքների լայն տարածումը, օգտակար է և անհրաժեշտ նոր սերնդի, գլխաւորապէս հայ երիտասարդութեան ընդհանուր կրթութեան տեսակէտից, մանաւանդ եթէ յիշենք հայ թեմական դպրոցների, ծխական դպրոցների և զանազան ուսումնական ձեռնարկների պակասութիւնը»⁸⁷:

Ցավոք, մեծանուն պատմաբան Աշ.Հովհաննիսյանն անտեսել է Լազարյանների և մասնավորապես Խ.Լազարյանի ընդգծված ազգային ուղղվածությունը, լուսավորական շեշտված նկրտումները և նրա գործունեությունը դիտարկել է միայն սոցիալ-քաղաքական տեսանկյունից՝ բնութագրելով սոսկ որպէս ցարապաշտություն: Նա եզրակացնում է, որ Լազարյանների «շահերը սերտորեն կապված էին

⁸⁶ Նույն տեղում, էջ 63:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 61–62:

Ռուսաստանի ցարական-ճորտատիրական իշխող սիստեմի հետ»⁸⁸:

Վաստակաշատ պատմաբանն անհրաժեշտ չափով ուշադրութիւն չի դարձրել Լազարյանների՝ լուսավորութիւն, կրթութիւն տարածելու հարցում մշտական ուղղվածութիւն ունենալու և այդ ասպարեզներում կատարած մեծածավալ ձեռնարկումների, ինչպես նաև Հայ Հասարակայնութեանը միասնական տեսնելու նրանց դիրքորոշման վրա:

Խ.Լազարյանը «Հյուսիսսիսիայի» հետ կապված դիպվածում, Ն.Աշտարակեցուն հասցեագրած նամակներում և այլուր նշում էր ազգի միասնական լինելու անհրաժեշտութիւնը: Հարկ է հավաստել, որ տարբեր ժամանակներում ապրած մեծանուն գործիչները ազգի հաջողութեան գրավականը տեսնում էին միասնութեան մեջ: Եվ դա գալիս էր հայոց ազգային ճակատագրի խորամիտ գնահատումից: Տարբախտ պայմանների բերումով աշխարհով մեկ սփռված, տարբեր մտածելակերպով ու հոգեբանութեամբ ապրող հայութեան համար կենսական անհրաժեշտութիւն էին դարձել միավորվելը, ազգային ընդհանուր աշխարհայացք մշակելը: Խ.Լազարյանը և շատ ուրիշներ նախակարապետներ են եղել Եղիշե Չարենցի համար, որն ազգային միավորման մտորումները բանաձևեց բյուրեղացած ձևով. «Ո՛վ Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հավաքական ուժի մեջ է»:

Անվանի լիբերալ գործիչ Ստեփանոս Նազարյանցը ռուսահայութեանը կրթելու, լուսավորելու հատուկ հայեցակարգ էր մշակել: Նա տակավին 1862 թ. հանդես եկավ «Առաջարկութիւն» ծրագրային հոդվածով⁸⁹՝ մատնանշելով այն հանգամանքը, որ հայերը զրկված են լուս-

⁸⁸ Աշ.Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, էջ 21:

⁸⁹ Տե՛ս Հյուսիսսիսիայ, 1862, 7, էջ 43-53:

սավորությանը սատար կանգնող քաղաքական իշխանությունից, բնակվում են ցրված, բնակչության զգալի մասը նյութական կարիքի մեջ է, մանուկ սերունդը հաճախ հնարավորություն չի ունենում ուսում ստանալու: Ազգի ապագան նրա քաղաքակրթվելու մեջ տեսնող գործիչն առաջարկում էր Ռուսաստանում մի ընդհանուր ընկերություն ստեղծել: Այն կոչված էր բարվոքելու Հայերի նյութական և բարոյական կյանքը, մասնավորապես կազմակերպելու երիտասարդության ուսման հարցը երկրում կամ արտասահմանում, հիմնելու Հայկական հրատարակչություններ և կատարելու լուսավորական այլ ձեռնարկումներ: Երկրում ընկերություն ստեղծելու գաղափարը մնաց անկատար, բայց ճանաչված հրապարակախոսի առաջարկությունը, որ ընդառաջում էր մտավորականության հակումներին, ինչ-որ չափով խթանեց բարեգործական հասարակական կազմակերպչությունների ստեղծումը: Հենց 1860-ական թթ. հիմնվեցին Բաքվի մարդասիրական և Նոր Նախիջևանի բարեգործական ընկերությունները:

Մայրաքաղաքների հայկական գաղութներում բարեգործական նման ընկերություններ չստեղծվեցին, քանի որ նման գործունեություն կատարում էին եկեղեցական խորհուրդները: Պետերբուրգում եկեղեցական խորհուրդն ավելի ծավալուն բարեգործական խնդիրներ էր իրականացնում, քան որևէ ընկերություն: Մոսկվայի գաղութում այդ հարցը բարձրացվեց բավականաչափ հապաղումով և դրական ընթացք չստացավ: Այդտեղ 1882 թ. Գ.Սուլթանշահը նախաձեռնեց մշակել «Բարեգործական ընկերության» կանոնադրությունը: Այն ուղարկվեց համայնքի անդամներին, և ապա «Գասպարյան անկեղանոցի» դահլիճում կազմակերպվեց քննարկում: Շատերը դրվատանքի խոսքեր ուղղեցին անհրաժեշտ այդ նախաձեռնությանը: Գ.Քանանյանը հավաստեց, որ անհրաժեշտության պարագայում Լազարյան ճեմարանի սրահները կհատկացնեն ընկերությանը:

Ընտրվեց Հինգ Հոգուց բաղկացած Հանձնախումբ (Քանանյան, Ներսիսյանց, Զալալյան, Ծահազիզ և Սուլթանշահ)՝ խմբագրելու ընկերության կանոնադրությունը: Սակայն ներքին գործերի նախարարությունը, պատճառաբանելով հայկական բարեգործական բազմաթիվ ընկերությունների առկայությունը, մերժեց հասունացած այդ առաջարկը⁹⁰:

Մի խումբ Հայ Հարուստ տիկնայք մտադրություն են ունեցել Մոսկվայում հիմնել կանանց բարեգործական ընկերություն՝ օգնելու Հայ ուսանողուհիներին, որոնց մեջ կարիքավորների թվաքանակն անցնում էր 15 հոգուց: Այդ նպատակով նրանք մի քանի անգամ հավաքվել են, բայց այդ նախաձեռնությունը գործնական ընթացք չի ստացել:

Երիտասարդությունը տարբեր եղանակներով իր դերակատարությունն էր ունենում հասարակական կյանքում: Մոսկվայի Հայ ուսանողների առաջարկով Թիֆլիսի «Նոր դար» պարբերականում տպագրվում է նրանց նամակն այն մասին, որ Մոսկվայի Հայ ուսանողների ընկերությունը 1883/1884 ուսումնական տարում հրատարակելու է «չորս առակ»: Առաջին տետրում հորդորում է վերջ տալ անմիաբանությանը և մանուկներին է նվիրում իր առաջին հրատարակությունը: Ուսանողները հույս են հայտնում, որ հասարակայնությունն անտարբեր չի լինի, բարոյական և նյութական օգնություն կբերի ընկերությանը: Հայտնելով իրենց հասցեն (Լազարյան ճեմարան, Մկրտիչ Բարխուդարյանին)՝ հույս են հայտնում, որ խմբագրությունները կօգնեն ընկերության գրադարանը հարստացնելուն⁹¹:

Գաղութներում հանրային կյանքը խթանելու, համայնքի անդամներին համախմբելու, մտավոր շփումների, հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու համար հույս կարևոր էին համապատասխան

⁹⁰ Տե՛ս Մշակ, 1882, 9, 19:

⁹¹ Տե՛ս Արձագանք, 1884, 26:

օջախներ ունենալը, թատրոնի, գրադարանի և այլ Հաստատուլթյունների կողքին ու դրանց հետ ակումբ ունենալը: Հայտնի է, թե որքան բարձր է գնահատել Ռափայել Պատկանյանը Նոր Նախիջևանի ակումբի նշանակուլթյունը գաղուլթի Հասարակական կյանքում: «Մեր քաղաքացին, ինչպես որ ասացի, մտալոր զարգացման կողմանե, — նշում է անվանի գրողը, — ոչինչ բանի այնքան երախտապարտ չէ, որքան մեր քլուբին, ուր նա, ըստ կարելվույն, անցնում է յուր ժամանակը ուրախ և օգտալետ կերպով»: Եվ ապա ավելացնում է. «Բալականին հանգիստ և հարմար ընթերցասենյակ, բազմաթիվ և բազմատեսակ օրագիրներ և լրագիրներ, ազնիվ խոսակիցներ, վիճել պե՞տք է, որ այսպիսի դյուրուլթյունքը շուտ ծնեցնեին ամեն երիտասարդի զգայուն սրտի մեջ ընթերցանուլթյան սերը: Ամեն օր կարդալ օգտալետ գրքեր, կարդացածի վրա խոսել, դատել, վիճել՝ ահա՛ քեզ ժողովրդական համալսարան»⁹²:

Մայրաքաղաքում հայկական ակումբ հիմնելու գաղափարը վաղուց էր հասունացել, բայց իրականացավ ուշ՝ XX դ. սկզբներին՝ 1907 թ.: Ակումբը բացվում է քաղաքի կենտրոնում՝ լավ կահավորված հարմարալետ 6 սենյակներում: Հիմնադիրները ակումբի կոչումը տեսնում էին ազգային ու քաղաքական շավիղներում: Այն լինելու էր գաղուլթի ցրված հայուլթյանը ի մի բերող, միալորող, ներգաղուլթային և ազգային հարցեր արծարծող և պետական դումայի հայ պատգամալորների համար նյուլթեր պատրաստող հաստատուլթյուն: Ելուլթ են ունենում պետական դումայի պատգամալորներ Մ.Աճեմյանը (Աճեմով), Մուրզաևը և Պ.Սաղաթեւյանը: Նրանք հավաստում են հայ ժողովրդի պահանջների առանցքային հարցերի մասին փաստարկված նյուլթեր ունենալու մեծ կարիքը, մանալանդ որ մայրաքաղաքում չկա նման հարցերով զբաղվող կամ դրանից իրա-

⁹² Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 281–283:

զեկ որևէ հաստատուելիք: Միաժամանակ դիտարկվում է այն ցավալի երևույթը, որ մտավորականությունը ազգային հարցերում անտարբեր վերաբերմունք է որդեգրում, և հարուցվում է հասարակույթյան մտավոր շերտի ակտիվացման անհրաժեշտությունը⁹³:

Ակումբը տարիներ շարունակ գործում էր և կատարում հատկապես հասարակույթյան անդամներին հայ գրականույթյանն ու մշակույթին ծանոթացնելու իր առաքելությունը, միայն անհրաժեշտ էր համարվում ակումբից օգտվելը մատչելի դարձնելը, որպեսզի Հնարավորություն ստեղծվի ապահովելու ուսանողություն մասնակցությունը:

Հասարակական կարևոր նշանակություն ունեին արվեստի ճյուղերից հատկապես թատրոնը, ինչպես նաև երաժշտական «երեկույթները»: Թատրոնը ժողովրդին հոգևոր սնունդ տվող, նրան լուսավորող, նրա մտավոր զարգացմանը նպաստող, ազգային լեզուն, բարքերն ու սովորությունները հայ զանգվածների մեջ ամրապնդող հզոր ուժ էր: Թատերական ներկայացումները, համերգները միաժամանակ դառնում էին երկու ժողովուրդների շփումների, ռուսներին հայոց պատմամշակութային արժեքներին, վարք ու բարքին ծանոթացնելու միջոց:

Երկու համայնքներում արմատացած կարգ էր դարձել ուսանողների ուժերով հայ և ռուս հեղինակների դրամատիկական գործերից տարեկան գոնե մեկ ներկայացում կազմակերպելը: Այդ ներկայացումները կամ հանդեսները հրավիրվում էին, որպեսզի դրանց հասույթով օգնեն չքավոր ուսանողներին, նրանց հնարավորություն տան շարունակելու ուսումը: Կազմակերպվում էին նաև այլ ներկայացումներ, համերգներ, պարահանդեսներ, որոնց մասնակցում էին նաև ռուս հասարակայնություն ներկայացուցիչներ:

⁹³ Տես Մշակ, 1907, 188:

Մոսկվայում ուսանողները կազմակերպում էին երեկույթ, դահլիճը ձևավորում արևելյան հայկական ճաշակով, մոտքը զարդարում գույնզգույն լույսերով ողողված Մեծ և Փոքր Մասիսների մեծադիր պատկերներով: «Ձը պէտք է մոռանալ, – գրում է թղթակիցը, – որ այդ երեկոյթները Մոսկվայում բացի իրանց բարեգործական նպատակից, ունեն և մի ուրիշ նշանակութիւն: Նրանք տարուց տարի աւելի և աւելի են գրաւում մայրաքաղաքի այն հասարակութեան ուշադրութիւնը, որի կարծիքն ու վերաբերումը մեզ համար շատ թանգ պէտք է լինի: Նրանք միջոց են տալիս շատերին տեսնել հայութեան պատկերը աւելի համակրելի ձևով, քան թէ շատ անգամ տեսել ու լսել են նրա մասին»⁹⁴: Երգչախումբն ու նվագախումբը ղեկավարում էր Մոսկվայի կոնսերվատորիայից պրոֆեսոր Պ.Կորեչչենկոն, որը երեք տարի է, ինչ սիրահոժար իր վրա էր վերցրել այդ դժվարին պարտականությունը: «Русские ведомости» և «Московские ведомости» թերթերը դրվատալից հոդվածներ են տպագրում երեկոյի մասին, նշում Պ.Կորեչչենկոյի տաղանդը հայկական երգերի ու երաժշտության բնագավառում:

Պետերբուրգում հայ ուսանողների ջանքերով կազմակերպվում էր երեկույթ, որին մասնակցում էին հայ համայնքի վաճառականներ, պաշտոնյաներ, ծառայողներ, դիտուլթյան ու մշակույթի աշխատողներ, ռուս հասարակայնության ներկայացուցիչներ: «Ռուս հասարակութիւնն էլ, – նշվում է երեկույթի մասին, – բաւականին սիրով է վերաբերվում դէպի մեր «երեկոյթները» և պատրաստակամութեամբ յաճախում: Ուրախութեամբ դիտում ենք հայերս, թէ ինչպէս ռուս հասարակութիւնը հետաքրքրութեամբ լսում է հայկական եղանակները, հայ բանաստեղծների հեղինակութիւնները ռուս թարգմանութեամբ, նայում հայկական պարերին: Այս տեսակէտից «Հայոց երեկոյթները» մի ցանկալի

⁹⁴ Նույն տեղում, 1893, 24:

գործօն են, որ ծանօթացնում է մայրաքաղաքի ռուս Հասարակութեանը լայնատարած պետութեան հեռաւոր ծայրի հետ: Այս տեսակի փոխադարձ յարակցութիւններն այն հարմար միջոցն են ներկայացնում, որ կարող է ռուսահայատակ Հայերիս և բուն ռուսների մէջ սերտ մտաւոր և բարոյական մերձեցումն առաջ բերել. իսկ այդ մերձեցման բնական հետեանքը կը լինի կովկասահայերիս աւելի ու աւելի պինդ ու անխզելի միութիւնը Համայն պետութեան հետ...»⁹⁵:

Տարբեր ազգությունների միջավայրում գտնվող Հայկական Համայնքը դառնում էր նրանց շփումների ու Համագործակցության վայր: Մայրաքաղաք ուսանելու էին մեկնում թիֆլիսի Հայ և վրացի շատ երիտասարդներ: Նրանք այնտեղ էլ Համագործակցում և ընկերություններ էին հիմնում: Նման ընկերության մեջ ընդգրկված վրացի և Հայ երիտասարդները 1881 թ. վրացերեն ներկայացնում են Ցազարելիի «Ժամանակներն այժմ փոխված են», իսկ Հայերեն՝ «էս էլքի մոցիքուլութիւն» վոդեվիլները: Ներկայացումից հետո տեղի է ունենում շքեղ պարահանդես, որտեղ Հայերը, վրացիները և մահմեդական զինվորականները, ինչպես գրում է Հանդիսատեսը, անտեսելով իրենց ազգային ու դավանական տարբերությունները, Համատեղ մասնակցում էին պարահանդեսին⁹⁶:

Մայրաքաղաքի Հայությունն ըստ պատշաճի արձագանքում էր ռուսական կյանքի պատմամշակութային էական, հասարակական լայն հետաքրքրություն ներկայացնող երևույթներին: Դրանով նախ՝ դրսևորում էր իր վերաբերմունքը և ապա՝ Հայ իրականության մեջ տարածում, արժևորում տվյալ իրադարձությունը: Այդպիսի իրադարձություններ էին նշանավոր տարելիցները: Հայկական գա-

⁹⁵ Նույն տեղում, 1898, 224:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, 1881, 22:

ղութները հմտորեն համադրում և աշխուժորեն մասնակցում էին ինչպես Հայկական, այնպես էլ ռուսական հասարակական մեծ հնչեղություն ունեցող անցքերին: Հնարավոր է է պարբերաբար կատարվող այդ երևույթների ամբողջությունը ներկայացնել, և չկա էլ դրա անհրաժեշտությունը: Գաղափար կազմելու համար հիշատակենք միայն որոշ փաստեր, իրողություններ:

1910 թ. նոյեմբերի 8-ին Լազարյան ճեմարանի տնօրեն Վյաչեսլավ Միլլերի նախագահությամբ դասախոսների և ուսանողների հատուկ նիստ է հրավիրվում Լև Տոլստոյի մահվան առիթով: Պատվիրակություն է ընտրվում ճեմարանի անունից գերեզմանին պսակ դնելու համար: Հեռագիր է հղվում նրա տիկնոջը: Մեծ գրողի անունով ոսկե մեդալ է սահմանվում, որը տրվելու էր «Արևելքը Լ.Տոլստոյի գրվածքներում» ուսանողական լավագույն աշխատանքին: Ի նշան սպի՝ երեք օր դադարեցվում են պարապմունքները⁹⁷:

Միայն հոբելյանների ու տարելիցների առիթով է է, որ մայրաքաղաքների հայերը շփվում, հարաբերվում, կապեր էին հաստատում ռուս երևելի անձնավորությունների, արվեստի ու գրականության անվանի ներկայացուցիչների հետ: 1893–1894-ի ձմռանը Լազարյան ճեմարանի վերջին կուրսի ուսանողներ Յուրի Վեսելովսկին և Մինաս Բերբերյանը Մոսկվայում այցելում են Լ.Տոլստոյին: Առիթը իրենց կազմած «Հայ արձակագիրներ» ժողովածուն նվիրելն էր: Մեծանուն գրողը սիրալիր ընդունում է նրանց, հավաստում, որ անպայման կծանոթանա Հայ գրողների երկերին, որոնցից ինքն անտեղյակ է: Ապա ճեմարանի սանե-

⁹⁷ Տե՛ս Գույճ տեղում, 1910, 255:

րի հետ երկար զրուցում է Հայ կյանքի, գրականության հարցերի մասին⁹⁸:

Ա.Պուշկինի ծննդյան 100-ամյակի առիթով մի շարք հոդվածներ են նվիրվում մեծ պոետին, Ա.Մատուրյանը առանձին գրքով շքեղ հրատարակում է «Բախչիսարայի շատրվանը» պոեմը, որի նկարչական ձևավորումը կատարում է արդեն անուն հանած երիտասարդ նկարիչ Վարդգես Սուրենյանցը⁹⁹:

⁹⁸ Տե՛ս նույն տեղում, 1909, 67: Լ.Տոլստոյն առաջին հարցով ցանկանում է տեղեկանալ, թե գոյություն ունի՞ այն միությունը, որը հետամուտ էր ազգային նպատակների, ձգտում էր կռիվ միջոցով հասնել թուրքահայերի ազատագրմանը: Ուսանողները պատասխանում են, որ այդ կազմակերպությունը գործում է: Յու.Վեսելովսկին հավելում է, որ այդ նույն գաղափարն է դավանում մաև գրքի առաջին տեղում ներկայացվող հեղինակը՝ Բաֆֆին: Նա ևս գտնում է, որ միայն ազատագրական պայքարի, ապստամբության միջոցով կարող են փրկվել թուրքահայերը: Ռուս մեծանուն վիպասանը նկատում է, որ հայերը պակաս չեն ճնշվում հենց իրենց հայ մեծավորների կողմից: Բուլղարներն էլ պայքարեցին, ազատագրվեցին, բայց իրենց վիճակն ամենևին չլավացավ: Նույնը կատարվեց Իտալիայում, Հունաստանում: Թուրքահայերին, ասում է նա, ապստամբության չպետք է կոչել, այլ նրանց և ճնշողներին մարդասիրական, քրիստոնեական գաղափարներ քարոզել, որով կարող է բարելավվել ժողովրդի վիճակը: Մ.Բերբերյանը, նշելով մեծ գրողի խմբագրությամբ լույս տեսած Մոպսսանի պատմվածքների ժողովածուն, ավելացնում է, որ Տոլստոյի անունը կապվում է Մոպսսանի ստեղծագործությունները Ռուսաստանում ժողովրդականացնելու հետ: Լ.Տոլստոյն ասում է, որ Վիկտոր Հյուգոյից հետո Մոպսսանին համարում է նոր շրջանի լավագույն հեղինակը, և որ շուտով իր առաջաբանով կիրատարակվի նրա աշխատությունների հատորը: Լ.Տոլստոյի այն հարցին, թե նրանք չե՞ն չափազանցում հայ գրականության արժեքը, և այն գործերը, որոնք թարգմանել են, եվրոպական ոգով են գրված, թե՞ զուտ արևելյան: Ուսանողները պատասխանում են, որ երկուսն էլ առկա են, նույնիսկ կան հայ ժողովրդական հեքիաթների թարգմանություններ: Գրողը դա համարում է շատ հետաքրքրական, «թերևս մնացած բոլորից հետաքրքրականը»:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, 1899, 88: Վ.Սուրենյանցը մեծ պատասխանավորությամբ է վերաբերվում իրեն վերապահված հանձնարարությա-

Յուրահատուկ իմաստ են ստանում և հնչեղությամբ նշվում Հայ մշակույթի հետ կապված ռուս հեղինակների



Մոսկվայի հայ ուսանողները՝ Մ.Բարխուդարյանը, Ե.Խոջամիրյանը, Ռ.Պարոն-Սարկիսովը, Օ.Մերուրնուտովը (վերջին երկուսը՝ կենտրոնում) և ուրիշներ, մասնակցում են Լ.Տոլստոյի հուղարկավորությանը:

Հորեկյանները կամ նրանց հետ ծրագրած Հանդիպումները: Մոսկվայի հայկական շրջաններում նշվում է տակավին երիտասարդ Յուրի Վեսելովսկու գրական-հրապարակախոսական գործունեության 10-ամյակը: Մմբատ Շահազիզը Հանդես է գալիս ողջույնի ջերմ խոսքով, Ա.Ծատուրյանը հրապարակում է ողջույնի շուրջ 40 հեռագրեր, որոնք ստացվել էին հայաշատ այլևայլ վայրերից ու տարբեր կազմակերպություններից: Վերջում ելույթ է ունենում հայր Վեսելովսկին և պատմում, թե ինչպես է ընկել հայասերների շարքը: Հորեկյարը, գոհունակությու՛ն հայտնելով,

ընդ Խորապետ ուսումնասիրում է պոեմը, նրա պատկերները, մի քանի անգամ մեկնում Բախչիսարայ, կատարում 76 զարդանկար, պատկերներից հաղորդում արևելյան տարրեր:

որ իրեն ողջունել են Հասարակայնության լայն խավեր ուսանողներ, մանկավարժներ, հրատարակիչներ, մշակույթի գործիչներ, վերջում ավելացնում է, որ նման վերաբերմունքը նոր ուժ և եռանդ է ներշնչում իրեն նաև ապագայում շարունակելու իր գործունեությունը, կարողացածի չափով ուսև Հասարակությանը ծանոթացնելու Հայ ժողովրդի ցավերին ու կարիքներին, նրա քաղաքակրթական հակումներին, նրա բուն ազգային բնույթին¹⁰⁰:

Ռուսական կայսրության գործիչները ըստ արժանվույն էին գնահատում Հայ մշակույթի ասպարեզում և առհասարակ Հայության համար կատարած ծառայությունները: Նիկոլայ I կայսրը 1853 թ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով պարգևատրում է Լազարյան ճեմարանի դասախոս Մսեր Մսերյանին լավ աշխատանքի և հատկապես նրա «Հայոց լեզվի քերականություն» և լուսավորչական եկեղեցու դավանանքին նվիրված աշխատությունների համար¹⁰¹:

¹⁰⁰ Տե՛ս նույն տեղում, 1900, 24, 29: Հորեյարին բարեմադրություններ էին հղել Շուշիի և Երևանի դպրոցներ, Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի ուսանողներ, Բաքվի հայ դերասանական խումբը, Նոր Նախիջևանի և Շուշիի հայ կանաչք, Երևանի, Շուշիի, Բաթումի, Գրոզնիի հայ երիտասարդներ, Պետերբուրգի հայ վաճառականներ, Աստրախանի համակրողների խումբը, Էջմիածնի ճեմարանի ղեկավարությունը, Թիֆլիսի հայ գրագետներ և քերթերի խմբագրություններ: Մտացված հեռագրերի քարտեզը միաժամանակ վկայությունն է այն իրողության, որ մայրաքաղաքների համայնքները սերտ կապերի մեջ էին հայկական մյուս գաղութների ու հայաշատ կենտրոնների հետ: Այդ օրերին լույս է տեսնում Յու.Վեսելովսկու «Գրական ակնարկներ» ծավալուն ժողովածուն, որում ընդգրկված էին հայության հետ կապված հոդվածներ: Դրանցից են «Գրիբոյեդովը և հայերը», «Հայ թատրոնի հնագույն շրջանը», «Բայրոնը Միսիթարյանների մոտ», «Հայ կնոջ վիճակը հայ հեղինակների մոտ», «Բանաստեղծ Մ.Պեշկոպաշյանի կյանքն ու գործունեությունը», «Պուշկինը հայ գրականության մեջ» և այլն:

¹⁰¹ Տե՛ս ԱԻԱՄ, ֆ. 2050, օր. 1, ձ. 98:

«Русские ведомости» լրագրի Հաղորդման Համաձայն՝ Գ.Ջանշյանի մահվան տարելիցին Մոսկվայի եկեղեցական խորհրդի նախաձեռնությամբ Հայկական եկեղեցում Հոգեհանգիստ է կատարվում: Արարողությանը մասնակցում են երգվյալ Հավատարիմների խորհրդի նախագահ Կրյուկովը, խորհրդի անդամներ Ստոլպովսկին, Կոդրան, Վոկաչը, ռուսական թերթերի ներկայացուցիչներ: Հոգեհանգստի ավարտից Հետո սրտառուչ ելույթ է ունենում Ստոլպովսկին, որը բարձր է դնահատում Գ.Ջանշյանի վաստակը, նրա բարեգործական գործունեությունը Հատկապես 1894–1896 թթ. Թուրքիայում Հայկական կոտորածների ժամանակ: Երիտասարդ բանաստեղծ Ալեքսանդր Մատուռյանը նշում է, թե նա ինչ մեծ ջանքեր է թափել «Եղբայրական օգնություն...» ժողովածուն հրատարակելու և ամբողջ աշխարհին խաղաղ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների կատարած վայրագությունների մասին իրագեղ դարձնելու ուղղությամբ: Նա իր կրակոտ ելույթն ավարտում է «Այժմ որբերը աղօթում են նրա սիրառատ Հոգու համար» խոսքերով: Մոսկվայի Հայ Համայնքի պսակի վրա գրված էր՝ «Թշուառների բարեկամին»¹⁰²:

Ամենայն հայոց կաթողիկոսները դահ բարձրանալուց Հետո, որպես կանոն, մեկնում էին մայրաքաղաք, Հանդիպումներ ունենում արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների Հետ, ըստ անհրաժեշտության հարցեր բարձրացնում, միաժամանակ Հովվապետական այց կատարում Հայկական Համայնքներ: Վեհափառ Հայրապետների ուղևորություններն աշխուժություն էին Հաղորդում տեղի գաղութներին, ուժեղացնում կապերը Հայրենիքի Հետ: Դրանք միաժամանակ վերածվում էին Հայ-ռուսական հարաբերությունների սերտացման մի գրավիչ Հանդիսություն:

¹⁰² Տե՛ս Մշակ, 1901, 160:

Գևորգ Դ կաթողիկոսը 1867 թ. ժամանում է Պետերբուրգ: Հայ համայնքը նրան ընդունելու հատուկ ծրագիր է մշակում: Մկրտիչ Սանասարյանի առաջարկով որոշվում է հանգանակութուն կատարել և վեհափառի հայեցողությամբ գումարը նպատակաուղղել Արևմտյան Հայաստանում կրթական համակարգի բարելավմանը:

Կաթողիկոսին դիմավորելու համար առանձնացվում է հանձնաժողով՝ Ա.Սուլթանշահ, Կ.Եզյան, Ն.Շանշյան, Ս.Աստվածատուրյանց, իսկ ուսանողության կողմից՝ Գ.Եվանգուլյան: Երկաթուղային կայարանում նրանք հանդիսավոր կերպով դիմավորում են Ամենայն հայոց կաթողիկոսին, իսկ Ա.Սուլթանշահը հայ հասարակայնության անունից ողջույնի խոսք է ասում:

Ս.Կատարինես եկեղեցում արարողությունից հետո վեհափառը գնում է իր համար առանձնացված Խ.Լազարյանի բնակարանը, որտեղ նրան դիմավորում են Խ.Լազարյանը և Հ.Դելյանովը¹⁰³:

Հանգանակութունից, որին առաջին հերթին մասնակցում են համայնքի երեւելիները (Մ.Սանասարյան, Խ.Լազարյան, Ս.Աստվածատուրյանց, Հ.Լալայան, Հ.Դելյանով, Կ.Եզյան և ուրիշներ), ժողովվում է 2350 ռուբլի, որը վեհափառն օգտագործում է Արևմտյան Հայաստանում կրթության և այլ պետքերի համար:

1895 թ. երկու գաղութների ներկայացուցիչների ուղեկցությամբ Խրիմյան Հայրիկը ժամանում է Պետերբուրգ: Երկաթուղային կայարանում վեհափառին դիմավորում են տեղի հայության պատվիրակները: Հանդիսավոր ընդունելությունից հետո նրան այցելում են քաղաքապետը, լուսավորության նախարար Հ.Դելյանովը, ներքին գործերի նախարար Պ.Դուրնովոն: Կաթողիկոսը Պետերբուր-

¹⁰³ Տե՛ս Մեղու Հայաստանի, 1867, 42: Տիկիմ Դելյանովը և իշխանուհի Աբամելիքը սուրճ և պաքսիմատ են մատուցում:

գում այցելում է կայսրին և կայսրուհուն: Այցին Հայ հասարակայնություննից ներկա են լինում իշխան Կ.Բեհհրությանը, Ա.Ծատուրյանը, Գ.Սալթիքյանը, Վ.Վարդանյանը, բժիշկ Հ.Զավրյանը, Մ.Պոպովյանը, Ա.Թումայանը, Ս.Գյուլամիրյանը և Կ.Եղյանը: Խրիմյան Հայրիկն այցելում է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչին և արտաքին գործերի նախարարին: Նա հանդիպում է օտար դավանությունների վարչության պետ Մասլովի հետ և պաշտոնական գրություններ հանձնում ներքին գործերի նախարարին¹⁰⁴:

Վեհափառը ոգեշունչ խոսքով դիմում է հավատացյալներին, հորդորում կապված մնալ հայրենիքի հետ, հնարավորինս ծառայել ազգային շահերին և այդ առումով խիստ բարձր է գնահատում Լազարյան գերդաստանի ծառայությունները: Խոսքի վերջում, հավաստելով, որ քրիստոնյա ժողովուրդներին միշտ պաշտպան է եղել Ռուսաստանը, և այժմ նրա հետ են կապվում նրանց հույսերը, քարոզում է հավատարիմ ու անձնվիրաբար ծառայել ռուսաց պետությանը¹⁰⁵:

Խրիմյան Հայրիկին հաջորդած Մատթեոս Բ Իգմիրլյան կաթողիկոսի այցելությունը (1909 թ.) վերածում է հայրենիքի ու ժողովրդի հոգսերով մշտապես մտահոգ Մոսկվայի Հայ համայնքի հայրենիքին սատար կանգնելու մի հանդեսի: Գ.Խալաթյանցի և Ս.Մամիկոնյանի առաջարկով և ներկաների անվերապահ հավանությանն արժանացած հանգանակություն է սկսվում ջերմ մթնոլորտում և 12 հազար ռուբլի հավաքվում:

¹⁰⁴ Տե՛ս Մշակ, 1901, 160:

¹⁰⁵ Տե՛ս Արաքս, 1894-1895, գիրք Ա, Ս.Պետերբուրգ, էջ 219-229: Կաթողիկոսների այցելությունները հաճախ նշանավորվում են մակ որոշ այլ ձեռնարկումներով: Ի նշանավորումն այցի՝ հայ համայնքում կատարվում է մկրատություն՝ գոյացած գումարը վեհափառի հայեցողությամբ բարեգործական նպատակներով օգտագործելու համար:

Ուսանողների անունից Արմենակ Սարգսյանը վեհափառին է դիմում հետևյալ ուղերձով. «Ապրելով օտարութեան մէջ և վառ կարօտով հիշելով մեր չարաքաղդ հայրենիքը, մենք, հայ ուսանողներս, սրտի անհուն ցնծութեամբ ողջունում ենք ձեզ, իբր մի անձի, որի մէջ համասփիւռ հայութիւնը մարմնացնում է սև օրերից թելադրած իր բոլոր իղձերը: Արհաւրալից է մեր անցեալը, մռայլ է մեր ներկան, ապագայի յոյսերը կեանք են ներշնչում ուժասպառ ազգին, և մենք, սրտի տրոփիւնով նրան վշտակցող զաւակներս, փափագում ենք ձեզ կարողութիւն սփոփելու տառապած ժողովրդին, լոյս սփռելու նրա խաւար կեանքի մէջ, փափագում ենք, որ ձեր հովանու տակ ոգի առնի նրա ստեղծագործող միտքը և վերանայ նրան մաշող բարոյական մղձաւանջը: Այս տենչերով տոգորված Մօսկվայի ուսանողներս՝ բարի գալուստ ենք ասում ձեզ, ազգընտիր Հովապետ»¹⁰⁶:

Հայ հասարակական կյանքի երևույթներին արձագանքելու խնդրում ռուսական հասարակական-քաղաքական, մշակութային եռուն կյանքի միջավայրում գտնվող երկու գաղութներն առանձնանում էին մյուս համայնքներից, այդ թվում նաև ռուսահայ գաղութներից: Հարկավ, ռուսական պետութան տարածքում գտնվող մյուս գաղթօջախները, մանավանդ Նոր Նախիջևանի նման հայկական կենտրոն դարձած գաղութը նույնպես հետևում և արձագանքում էին ազգային հնչեղութուն ունեցող երևույթներին, սակայն կային տարբերութուններ: Նրանց ուշադրութունը հաճախ սևեռված էր լինում ներգաղութային խնդիրների, իսկ մայրաքաղաքների համայնքներինը՝ ազգային ընդհանուր հարցերի վրա: Եվ դա բնական է: Մյուս գաղութներում անհամեմատ քիչ էր բարձր մտավորականութունը, և որ գլխավորն է, չունեին ազգային-հասարա-

¹⁰⁶ Մշակ, 1909, 127:

կական զգացումներով տոգորված, ժողովրդավարական շարժումների ավանդարդում ընթացող ուսանող երիտասարդութուն:

Մայրաքաղաքների գաղութների՝ ազգային ավելի լայն ընդգրկում ունենալու հանգամանքն ակնառու կդառնա, երբ, թեկուզ շատ խիստ ընտրությամբ, ծանոթանանք որոշ փաստերի:

Հասարակական մեծ հնչեղութիւն էին ստանում հասարակական կյանքի, գրողների, գիտության ու մշակույթի անվանի դեմքերի հոբելյանները, ինչպես նաև նրանցից առմիշտ բաժանվելու արարողութիւնը՝ թաղումը: 1901 թ. լրանում է մայրաքաղաքների Հայ Համայնքների (և ոչ միայն նրանց) հոգևոր, տնտեսական ասպարեզում մեծ ներդրում ունեցած Հովհաննես Լազարյանի մահվան 100-րդ տարելիցը: Այդ կապակցությամբ կատարվում է հոգեհանգիստ, որին հոծ բազմության հետ ներկա էր նաև ուսանողութիւնը: Վերջիններիս ներկայացուցիչը դրվատանքի խոսքերով է հիշեցնում Հ.Լազարյանի և Լազարյանների ծառայութիւնները: Ուսանողները արծաթյա պսակ են դնում գերեզմանին: Մյուս գաղութում՝ Մոսկվայում, այդ օրերին այնքան շատ է խոսվում ու արծարծվում այդ գերդաստանի ներկայացուցիչների անունները, որ նոյեմբեր ամսվա առաջին օրերը համարվում են Լազարյանական շաբաթ: Այդտեղ Հ.Լազարյանի հիշատակը հավերժացնելու նպատակով հոգևորականներից, Գասպարյան անկելանոցի խորհրդի անդամներից, ճեմարանի ուսուցիչներից ընտրվում է հանձնախումբ: Առաջարկվում է Մոսկվայում բացել Լազարյանների անունը կրող իգական ուսումնարան: Ծխականների ժողովը հավանութիւն է տալիս ուսումնարան հիմնելու գաղափարին, որի կառուցումը նախատես-

վում է Ս.Խաչ եկեղեցու բակում, և հատկացնում 25-30 հազար ռուբլի¹⁰⁷:

Մխիթարյան միաբանության 200-ամյա հոբելյանի առթիվ երկու համայնքներից բազմաթիվ հեռագրեր, ուղերձներ են ուղարկվում: Լազարյան ճեմարանի ուսանողները հաղորդում են հետևյալը. «Ողջունում ենք սրտանց ձեր 200-ամեա յօթելեանը գրական-գիտական ասպարեզում ի փառս ազգի հայոց: Կեցցե՛ Մխիթարեանք»: Գաղութի և ուսանողության խնդրանքով կատարվում է Ղևոնդ Ալիշանի հոգեհանգիստը: Մասնակցում էին նրա գրական-գիտական գործերի շատ համակիրներ, այդ թվում և օտարազգիներ¹⁰⁸: Հատկանշական է, որ մայրաքաղաքների հայ համայնքներն այդ պարագայում և առհասարակ առաջնորդվում էին միայն հայագիտությունն ու հայ մշակույթը հարստացնելու, զարգացնելու նշանաբանով՝ ամենևին նկատի չառնելով, թե որտեղ է իրականացվել հեռավոր Իտալիայում, թե՞ բուն Հայաստանում և թե ի՞նչ դավանանքի հետևող հայերի կողմից է կատարվել:

Պետերբուրգից «Մշակ» թերթին հայտնում են, որ քաղաքի հայ և վրացի ուսանողները մտադիր են տոնել Գաբրիել Սունդուկյանի հոբելյանը¹⁰⁹:

Լազարյան ճեմարանում որոշում են Գրիգոր Խալաթյանցի 30-ամյա արդյունավետ գործունեությունը նշանավորել չքավոր հայ գյուղացիներին նրա անվան թոշակ նշանակելով: Այդ առիթով Լազարյան ճեմարանի վերատեսուչ Պ.Գրիգուլյանովը դիմում է նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդին՝ խնդրելով նյութապես օժանդակել այդ միջոցառմանը¹¹⁰:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, 1901, 248, 252:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, 1901, 213, 1902, 3:

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, 1888, 134:

¹¹⁰ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 328:

Պետերբուրգի Հայ ուսանողները «Մշակ» թերթի խմբագրություն են ուղարկում Հեռագիր՝ նշելով, որ սրտի ցավով են իմացել այն ծանր կորստի մասին, որ կրել է մայրենի գրականությունը իր ազնիվ մշակներից մեկի՝ Ծերենցի մահվամբ, և արտահայտում են իրենց սրտաբուխ ցավակցությունը¹¹¹: Մոսկվայից ստացվում է Հետևյալ Հեռագիրը. «Մոսկվայի Հայ եկեղեցիների խորհուրդը խորապես ցնցված է Ղազարոս Աղայանի մահվան գուլժը ստանալով, միանում է բոլոր Հայերի վշտին և աղոթքներին՝ անմահ գրողի և մանկավարժի համար»¹¹²:

Նոր Նախիջևանի Ս.Խաչ վանքի բաղում Ռ.Պատկանյանի մահարձանի բացման հանդիսավոր արարողությունը մասնակցելու համար Մոսկվայի հայկական գաղութը Հատուկ պատվիրակություն է ուղարկում, որի կազմում էին Ս.Մամիկոնյանը, Ս.Շահազիզը և Ա.Ծատուրյանը: Իր ելույթում Ա.Ծատուրյանը հրապարակում է Հայ ուսանողության սրտառուչ ուղերձը, ապա ընթերցում այդ առիթով գրած իր «Ո՛ր ես, Հայ բլբուլ» բանաստեղծությունը¹¹³:

Հաճախ երբ վաստակաշատ, ճանաչված անձնավորություններին վերջին հրաժեշտն էին տալիս, հանգուցյալի ծառայությունների սրտաբուխ վկայակոչումն ու մեծարումը վերածվում էին հանրային շահերին ծառայելու, հայկական ոգին բարձրացնելու, հայկականությունը պահպանելու քարոզչության յուրատեսակ մի հանդեսի: Սմբատ Շահազիզի թաղման ժամանակ Ա.Ծատուրյանը սրտառուչ ու ազդեցիկ խոսքով նշում է նրա ինքնանվիրումը, ազնիվ կեցված-

¹¹¹ Տե՛ս Մշակ, 1888, 22:

¹¹² Տե՛ս Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1967, էջ 128:

¹¹³ Տե՛ս Մշակ, 1901, 212:

քը և սգո մեծ բազմության առաջ հրապարակում նրա վերջին բանաստեղծութիւնը¹¹⁴:

Հոբելյաններին մեծ Հանդիսավորութիւնն էր տրվում, և դա, անշուշտ, հեղինակին արժանին մատուցելու, ինչպես նաև ներքին զգացողության թելադրանքով ներկաների վրա ազդեցութիւն թողնելու, մամուլի հաղորդումների և այլ միջոցներով Հասարակության լայն շերտերի վրա դաստիարակչական ներգործութիւն ունենալու միտումով: Այդպիսի տոնական բնույթ հաղորդվեց Ալեքսանդր Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյակին: Բանաստեղծի մեծարումը պատշաճ մակարդակով կատարելու համար ստեղծված էր հանձնաժողով՝ նշանավոր Հասարակական գործիչ Կ.Կուսիկյանի գլխավորութեամբ:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, 1908, 9: «Թող Սօսկվայի որբացած գաղութը, – ասում է Ա.Ծատուրյանը, – որ խոտն բազմութեամբ սզադէմ համախմբվել է իր քանկագին երգչի դագաղի շուրջը, թող այդ գաղութը, որի հոշակված բազմամեայ անդամն է իր դու, վերջին անգամ լսէ քո խօսքը, լսէ քո կարասի երգը...

Մեռա իմ մուգան հանգաւ և կրակ,
Անտառը լցուեց չոր տերևներով.
Երկինքը ծածկուեց, փախաւ արեգակ, –
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով...
Բայց թող հայկական որդիքն իմանան
Որ իմ սուգս նոցա վիճակն է եղել,
Որ երբէք վախլուկ զինտրի մնան
Թշնամուս առջև վահան չեմ ձգել...
Եւ թող հայկական որդիքն իմանան
Որ և այժմ, կանգնած հայրենեաց շենքին,
Լարում եմ ջղերս որ չը թուլանան
Դիմակաց լինել ահեղ փոթորկին.
Քշտիր կոներդ, կտրիճ անմնան.
Ա՛ռ սուր, հրացան, քլունգ ու կացին,
Դժուար ճանապարհն անցիր անասան, –
Աջ ու ձախ քանդիր, թէ որ արգելք կան!
Ահա նորածին և մանուկն եկաւ,
Մուրբ աղքատութեան տաճարին ընծայ,
Մանուկ Հայաստան տեղից շարժուեցաւ
Դիմեց համարձակ դէպի Գողգոթա!

Հավաքվել էր հասարակական տարբեր խավերի հոծ բազմութիւն: Հանդեսը սկսվում է հայոց կաթողիկոսի կոնդակը հոտնկայս լսելով, որն ընթերցում է հանձնաժողովի անդամ Ս.Մամիկոնյանը: Ապա իրար են հաջորդում կրթական-լուսավորական բազում հաստատութիւնների ներկայացուցիչների ջերմ ելույթները¹¹⁵:

Հայ-ռուսական հասարակական կապերում, հատկապես ոռւս հասարակայնութեանը հայ ժողովրդի մեծ ողբերգութեանը, ցեղասպանութեանը և հայոց պատմութեանն ու մշակութիւն ծանոթացնելու մեջ շատ մեծ է Մոսկվայում

¹¹⁵ Տե՛ս նույն տեղում, 1910, մայիս: Ողջույնի ճառով առաջինը հանդես է գալիս հանձնաժողովի նախագահը: «Նա ցոյց տուեց, – նշվում է հաղորդագրության մեջ, – որ այսօրվայ յօթելեանը հայ մտքի, հայ գրականութեան տօնն է. բանաստեղծը 25 երկար ու ձիգ տարիներ խորհել և երագել, այրվել և տանջվել է վեհ գաղափարներով, դա մի մեծագործութիւն է, որ յատուկ է քչերին... Այսօրվայ տօնը գալիս է որոշելու հոգևոր կորովի աստիճանն այն ազգի, որի մեջ բանաստեղծն է ծնվել»: Լազարյան ճեմարանի տեսուչ Ի.Թանգյանը ելույթ է ունենում ճեմարանի, Նոր Նախիջևանի թեմական, Գոգոյան օրիորդաց դպրոցների անունից: Լազարյան ճեմարանի ուղերձը հրատարակում է դասախոս Նարսկին: Ս.Մամիկոնյանը կարդում է Մոսկվայի հայ հասարակության հարյուրավոր ստորագրություններով վավերացված ուղերձը, որը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Թող բացվի այսօր ձեր սիրտը, թող ժպտայ հայրենիքի թախիծով այրված ձեր հոգին, թանկագին բանաստեղծ, հայրենի խանդավառ ու ազնի հոգի»: Ի.Պոպովը ողջույնի զգացված խոսք է ասում Մոսկվայի գրական-գեղարվեստական խմբակի և ռուսաց պարբերական մամուլի գործիչների ընկերության անունից: Արսեն սարկավազ Միմոնյանը ողջունում է Գևորգյան ճեմարանի, «Արարատ» ամսագրի, տիկին Կոսիկյանն ու Հակոբյանը՝ Մոսկվայի կամանց ընկերության կողմից: Քաղաքի հայ ուսանողների ուղերձը հրատարակում է Պողոս Մակինցյանը: Ուղերձում նշվում էր. «Եւ եթէ հայ կեանքի բորենիներով լի տխուր ու հեղձուկ հովիտը չը խեղդեց ձեր ձայնը, միտքն ու երազանքը, ապա ուրեմն այսօր ձեր փառաւոր յաղթանակն է տօնում հայ միտքը, և Մոսկվայի Հայ ուսանողական հայրենակցութիւնը բերել է իր ամենալաւ զգացմունքները, մաղթում է ձեզ կանաչ արև, նոր ոյժ, նոր թափ ձեր գրչին»:

Հիմնադրված «Армянский вестник» շաբաթաթերթի նշանակուելթյունը: Նրա աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն Հայ, այլև ռուս մտավորականուելթյան ներկայացուցիչները: Պարբերականն իր շուրջը Համախմբեց այնպիսի անվանի գործիչների, ինչպիսիք են Վ.Բրյուսուելը, Յու.Վեսելուելին, Ս.Գորոդեցկին, Ա.Կիզեվետերը, Ս.Կուլյարևսկին, Վ.Նեմիրուելիչ-Դանչենկոն, Ֆ.Սուլզուերը, և տասնյակ նշանավոր Հայ Հեղինակները:

Հայաստանի ու Հայաշատ բնակավայրերի Հետ կապերը Հանգամանքների բերուումով միշտ սերտ են եղել: Ռուսական մայրաքաղաքները եղել են Հայ երիտասարդուելթյան կրթուելթյուն ստանալու, Հայ մտավորականուելթյան՝ այնտեղ աշխատանքի անցնելու կամ մասնագիտական շփուումների վայրեր:

Հայ աուելտրատնտեսական ոլորտի աշխատողները, թիֆլիսից, Բաքուից և Անդրկուելկասի Հայաշատ մյուս բնակավայրերից բացի, տնտեսապես կապված էին մայրաքաղաքների Հետ: Նրանք այնտեղ ունեին իրենց գործակալները, գրասենյակները և աշխուելթ երթևեկի մեջ էին:

Մայրաքաղաքների Հայ Համայնքների կապերը ռուս և Հայ իրականուելթյան Հետ դրսևուելել են կյանքի բուելոր ոլորտներում, կազմել նրանց բուելն պատմուելթյան անքակտելի մասը: Այստեղ որոշ դրվագներ բերվեցին այդ կապերի խորուելթյան և արտահայտման ձևերի մասին պատկերացուում ունենալու Համար:

3.3. Սոցիալ-տնտեսական կապեր հայրենիքի հետ

Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող մայր Հայրենիքի, ինչպես և աշխարհասփյուռ Հայկական գաղութների բնակչությունը բազում պատճառներով, դիպվածներով ընկնում էր տնտեսական ծանր, անելանելի վիճակի մեջ: Հայրենասիրական ուժերը, հանձին Մայր աթոռ Ս.Էջմիածնի, բարեգործական կազմակերպությունների, ազգանվեր անհատների, նեղ կացությունից Հայրենակիցներին դուրս բերելու ցանկությունը դիմումներ էին ուղղում, գործի մեջ քաշում առաջին Հերթին տնտեսական հնարավորություններ ունեցող Հայկական գաղթօջախներին: Մայրաքաղաքների Հայկական գաղութների, հատկապես եկեղեցական խորհուրդների տնտեսական կարողությունները հայտնի էին Հայկական շրջաններին: Բնականաբար նրանց հայացքներն առաջին Հերթին ուղղվում էին դեպի հյուսիս, դեպի այնտեղ հաստատված Հայրենակիցների կողմը:

Մինչ այդ հարցերին անդրադառնալը տեսնենք, թե այդ գաղութներն ինչպիսի վերաբերմունք էին դրսևորում և ինչ եղանակներ գտնում՝ ամօքելու տեղում եղած կամ իրենց մոտ հայտնված ընչազուրկների վիճակը:

Պայմանների բերումով տարբեր խավերի շատ Հայեր մեկնում էին ռուսական մայրաքաղաքներ՝ գործ գտնելու, սովորելու կամ նույնիսկ այնտեղ բախտ որոնելու, գոյատևելու: Նման մարդկանց թվաքանակն այնքան է մեծանում, որ զգացվում է լայն ծավալ ընդունած և վարկաբեկիչ

բնույթ կրող այդ երևույթը համակարգելու անհրաժեշտություն:

Խաչատուր Լազարյանը, լավատեղյակ և մտահոգված լինելով դրանով, 1864 թ. դիմում է Ամենայն հայոց կաթողիկոսին և նրան իրագեկելով ստեղծված իրավիճակին առաջարկում է կարգ սահմանել, որ առանց Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցական հոգաբարձություն համաձայնություն մարդիկ ուսանելու, աշխատանք գտնելու պատրվակով չգան մայրաքաղաքներ: Նա վեհափառին հայտնում է, որ այդ մարդկանց մեջ կան նաև 12 հոգևորականներ (Եսայի վարդապետ Հակոբյանը, քահանա Բեգլույանցը, երեց Գրիգոր Սուքիասյանը, սարկավազ Արիստակեսը): Նրանք թափառական կյանք են վարում, ավելորդ բռն դառնում: Նրանցից ոմանց մեծ ծախսերով ու դժվարություններ են կարողանում հետ դարձնել¹¹⁶: Ավելի ուշ՝ 1890-ական թթ., կրկին ահազանգվում է Հայաստանի հեռավոր վայրերից եկած և Մոսկվայում թափառող ու փաստորեն մուրացկանություն անող մարդկանց մասին: Նրանց իրենց ծննդավայրը վերադարձնելու փորձերը, որպես կանոն, ավարտվում էին անհաջողությամբ¹¹⁷:

Հետագա տարիներին ևս այդ խնդիրը չի լուծվում, և խորհուրդ էր տրվում հետևել մայրաքաղաքի կանանց օրինակին, որոնք ընկերություն են ստեղծել և կարողանում են թեթևացնել իրենց սեռի երիտասարդների հոգսերը: Առաջարկում էին տղամարդկանց համար ևս համանման ընկերություն ստեղծել Գասպարյան անկելանոցին առընթեր և նրա խորհրդի հովանավորություն ներքո ամոքել արական սեռի ներկայացուցիչների հոգսերը¹¹⁸:

¹¹⁶ Տե՛ս Մատենադարան, Ա.Երիցյանի արխիվ, թղթ. 147, վավ. 95:

¹¹⁷ Տե՛ս Մշակ, 1898, 193:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղում, 1904, 56: «Վերջին տարիները, – ասվում է թղթակցության մեջ, – մեր երիտասարդ սերնդի երկու սեռից ահազին քով անհատներ գալիս լցվում են Մոսկվա՝ յագեցնելու համար

Մինչ այդ ահազանգերը հայկական համայնքների կյանքին ուղղուլթյուն տվող գործիչները մտահոգ էին ընչազուրկներին օգնելու, նրանց ծանր վիճակից դուրս բերելու հարցում: Հատկապես Մոսկվայում այդ երևույթն այնքան սուր է արտահայտված եղել, որ տարիներ առաջ՝ դեռևս 1841 թ. սկզբին, խնդիրը կարգավորելու փորձեր են արվել: Աղքատներին, անդամալուծներին օգնելու նպատակով Մոսկվայի հայ համայնքում նվիրատվություն է կազմակերպվում: Բարեգործական միջոցառմանը մասնակցում է 77 քաղաքացի: Ժողովվում է 12367 ռուբլի: Լազարյան Հովհաննես, Խաչատուր և Լազար եղբայրները, բարեգործություն նախաձեռնող չորս կազմակերպիչներին դիմելով, գեներալ Պավել (Պողոս) Մելիքովի անունով գրած նամակում լիովին հավանություն են տալիս այդ նախաձեռնությանը և իրենց հերթին 500 ռուբլի ներդնում: Մոսկվայի աղքատ հայերի համար նախատեսված ընդհանուր գումարը հասնում է 17367 ռուբլու, որը դրվում է բանկում, իսկ նրա տոկոսները ծառայեցվում են ծրագրված նպատակին¹¹⁹:

բարձր կրթութիւն ստանալու իրենց ծարաւը. դրանցից ահազին մեծամասնութիւն են կազմում չքատր և միջին դասակարգի մարդկանց զաւակները, որոնք յոյսերը դրած Մոսկվայի նման հարուստ հասարակութեան օգնութեան վրա, յաճախ առանց կօպէկի, միայն ճանապարհաձախսի փողով գալիս ընկնում են Մոսկվա: Գասպարեան անկելանոցը, որքան ներում են իր միջոցները, տալիս էր նպաստներ, բայց խնդրատուների թիւը այնքան մեծ էր լինում, որ շատերի խնդիրքը մերժվում էր: Մրանից 2-3 տարի առաջ տեղիս հայ կանայք միտք յղացան կազմել մի առանձին կանանց ընկերութիւն, որի նպատակը լինելու էր իրանց սեռի ուսանողուհիներին օգնել, թէ նիւթապէս և թէ այլ կերպ: Պատիւ հայ կանանց. պէտք է ասել, այդ առիթով կազմված ընկերութիւնը ահա քանի տարի է, ինչ որ գործում է ամեն տեսակ թեթևացնելով ուսանողուհիների դրութիւնը: Մնում էր տղամարդկանց ևս հետևել կանանց օրինակին...»:

¹¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 400, ց. 1, գ. 39, թ. 22-29: Մեծ գումար մուծած բարեգործների մեջ էին Հովհաննես Հայրապետյանը (600 ռուբլի),

Փաստորեն, բարեգործական այդ նախաձեռնությունները խթանեց, և դրա շարունակությունը դարձավ Գասպարյան աղքատանոցը կամ անկեղանոցը: Որոշ աղքյուրներում նշվում է, որ Սահակ Գասպարովին գեներալ Պ.Մելիքովն է խորհուրդ տվել աղքատանոց հիմնել¹²⁰: Այդ կարծիքը չի հաստատվում, քանի որ Ս.Գասպարովն անդրադարձել է այդ հարցին և տվել միանգամայն այլ մեկնություն: Նա նշել է, որ Լազարյան գերդաստանի բազմաթիվ բարեգործություններն իր մեջ ծնեցին հայրենակիցներին օգտակար լինելու մեծ ցանկություն: Աղքատանոցի գաղափարը վաղուց էր զբաղեցնում իրեն: Լազարյաններն իրենց բարեհոգությունը հաճույքով հողամաս հատկացրին տուն կառուցելու համար, ինքն էլ ձեռնարկեց այդ գործը¹²¹:

Մոսկվայի քաղաքացի Եսայի (Սահակ) Մուխեսի Գասպարովը 1844 թ. դեկտեմբերի 28-ին 12 կետից կազմված կտակ է անում քաղաքի Ս.Խաչ եկեղեցու մոտ՝ Մյասնիցիի թաղամասում, Մոսկվայի աղքատ հայերի համար տուն կառուցելու և աղքատանոցը պահպանելու մանրամասների մասին¹²²: Կտակակատար է նշանակում Խաչատուր Լազարյանին, գեներալ Պ.Մելիքովին և կոլեգիալ խորհրդական Եսայի Պողոսյանին: Ս.Գասպարովը գրավոր տեղյակ է պահում կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն կապիտալ

Պավել Մելիքովը (500 ռուբլի), Իսայի (Սահակ) Գասպարովը (500 ռուբլի), Բոգդանով եղբայրները (1000 ռուբլի), Վասիլի Բալանթարովը (500 ռուբլի), Գալուստ Շավերթովը (500 ռուբլի) և ուրիշներ:

¹²⁰ Տե՛ս Ե.Մ.Գասպարեանց և նորա աղքատանոցն ի Մոսկուա. – Փարոս (Մոսկվա, խմբ.՝ Չարմայր Մսերեանց), 1873, 2, էջ 33–34:

¹²¹ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 114, վավ. 592, թ. 14:

¹²² Տե՛ս նույն տեղում, թղթ. 130, վավ. 396: Աղքատանոցը ղեկավարելու էր 4 հոգուց բաղկացած խորհուրդը, որոնցից մեկը, որին նշանակում է Ս.Գասպարովը, պատասխանատու էր ֆինանսների համար: Որոշ գումար էր հատկացված մեկ ուսանող Լազարյան ճեմարանում սովորելու, որոշ գումար էլ՝ գերեզմանոցը պարսպապատելու համար:

ներդնելու և Հայ աղքատների Համար անկեղանոց Հիմնադրելու մասին: Միաժամանակ խնդրում է նրա աջակցությունը, որ նմանօրինակ Հաստատություններ Հիմնադրելու վերաբերյալ կառավարություն 1839 թ. որոշումը կիրառվի նաև Հայկական սուլյն ձեռնարկման նկատմամբ: Նման խնդրանքով վեհափառին դիմում են նաև Հայ Հասարակայնություն նշանավոր ներկայացուցիչները (Հ.Լազարյան և ուրիշներ):

Վեհափառն իր անունից դիմում է ներքին գործերի նախարարին: Ս.Գասպարովը զոհունակություն է հայտնում կաթողիկոսին իր նախաձեռնությունն ընթացք տալու, պետական բարձրագույն ատյաններին ներկայացնելու Համար: 1845 թ. մարտին Ս.Գասպարովը ստանում է նախարարություն Համաձայնությունը, որի մասին տեղեկացվում է վեհափառ Հայրապետին: Նախարարություն Հոգևոր գործերի դեպարտամենտից ևս Հոգաբարձու Հ.Լազարյանին Հայտնում են Հարցի դրական լուծում ստանալու մասին¹²³:

Մոսկվայում մշտապես բնակվողների Համար մշակվում է անկեղանոցի 27 կետից բաղկացած կանոնադրությունը: Աղքատանոցը կրելու էր Հիմնադրի անունը և լինելու էր Հայոց կաթողիկոսի ընդհանուր ղեկավարության ներքո: Այն կառավարելու էր երեք Հոգուց բաղկացած և երեք տարի ժամկետով ընտրված խորհուրդը: Խորհրդի ավագ անդամը վարելու էր նիստերը և աղքատանոցի գործունեություն մասին Հաշվետու էր լինելու Հասարակությունը: Հասարակությունն իրավասու էր պատվավոր անդամ ընտրելու անսահմանափակ քանակով: Ծխականների միահամուռ առաջարկով պատվավոր անդամներ են ընտրվում Հովհաննես և Խաչատուր Լազարյանները: Խորհրդի անփոփոխ անդամը վարելու էր Ֆինանսական գործերը և ամեն ամսվա վերջին Հաշվետու էր լինելու, որի

¹²³ Տես Գույն տեղում, թղթ. 114, վավ. 592:

Հիման վրա կազմվելու էր տարեկան Հաշվետվությունը: Մոսկվայի Հայ համայնքն ընտրելու էր 3 հոգուց կազմված Հանձնաժողով, որը ստուգելու էր Հաշվետվությունը և ներկայացնելու հոգաբարձուին, իսկ վերջինս իր հերթին՝ կաթողիկոսին: Աղքատանոցի միջոցներն էին 11 հազար արծաթ ուռբլի, որը պահվելու էր քաղաքի գանձարանում: Աղքատանոցում ընդունվելու էին երկսեռ Հայեր, որոնք զուրկ էին բնակարանից: Որբերին տեղավորելու էին այնպիսի տեղերում, որտեղ իրենց գոյությունը պահպանելու համար հնարավորություն կար արհեստ սովորելու: Անհրաժեշտության պարագայում խորհուրդը կարող էր օգնել նաև աղքատանոցից դուրս գտնվող ընչազուրկներին: Բարձրագույն ատյաններին հնարավոր է հարցումներ կատարել միայն կաթողիկոսի միջոցով՝ պահպանելով աստիճանականությունը. անկեղևանոցի խորհրդի անունից ներկայացվում է թեմակալ առաջնորդին կամ հոգաբարձու Լազարյանին, իսկ վերջիններս՝ կաթողիկոսին: Կանոնադրությունում մշակված էին միջոցների տնօրինման կարգը, անկեղևանոցի բարեգործական բնույթի հետ կապված հարցեր¹²⁴:

Անկեղևանոցը բացվում է 1849 թ. հունիսին: Գործունեություն մեկ տարին լրանալուց հետո խորհրդի անդամները հաշվետու են լինում կաթողիկոսին: Նրանք Հայտնում են, որ խորհրդի աշխատանքից Հայ հասարակայնությունը գոհ է մնացել: Խորհրդի անփոփոխ անդամ է ընտրվել Մինա Լազարևը, իսկ պատվավոր անդամ՝ 14 հոգի՝ Լազարյաններից բացի՝ Ա.Բաղդադովը, Ա.Խուդաբաշևը, Հ.Դելյանովը, Հ.Մանուկ Բեյը, Մարիա Դելյանովը և ուրիշներ: Խորհուրդը բավարարել է աստրախանցի Մատթեոս Կոտելնիկովի դիմումը իր դստերը աղքատանոցի հաշվին իգական ուսումնարանում տեղավորելու վերաբերյալ: Ս.Գասպարովի կտակակատարների մահվան պարագայում

¹²⁴ Տես նույն տեղում:

նրանց իրավասությունները փոխանցվելու էին խորհրդի անդամներին: Անկեղանոցում Ս.Գասպարովի կիսանդրին դնելու համար նվիրատվութուն է բացվել: Մեկ տարում անկեղանոցի եկամուտները կազմել են 20988 ռուբլի, իսկ ծախսերը՝ 2218 ռուբլի: Բավական մեծ չափերով՝ 18743 ռուբլի, եկամուտները գերազանցել են ծախսերը: Վեհափառին խնդրում են միջնորդել, որ «Московские новости»-ում հաղորդում գետեղվի Գասպարովի անկեղանոցի մասին: Ներսես կաթողիկոսն իր գոհունակությունն է հայտնում խորհրդի անդամներին և հորդորում ջանալ և օրինավոր աշխատանքով այսուհետ լավ վիճակում պահել աղքատանոցը¹²⁵:

Եկամուտների և ծախսերի դրական հարաբերակցությունը, երբ եկամուտները ավելի են, քան ծախսերը, հետագայում նույնպես պահպանվեց: Որոշ տարիների պատահում էր, որ դրանք հավասարազոր էին, ծածկում էին իրար, բայց հակառակը, երբ ծախսերն են գերազանցում եկամուտները, երբեք տեղի չունեցավ: 1850 թ. հաշվետվության համաձայն՝ երբ խորհրդի անփոփոխ անդամ Մ.Լազարևը սեփական միջոցներից բավականաչափ ծախսեր է կատարում անկեղանոցի համար, եկամուտները հասնում են 14742 ռուբլու, իսկ ծախսերը՝ ընդամենը 1557 ռուբլու, տարբերությունը կազմել է 13172 ռուբլի, որը մնացել է դանձարկղում¹²⁶: Հետագա շրջանում երբեմն եկամուտների և ծախսերի տարբերությունները գրեթե վերանում են: Անկեղանոցի խորհրդի (Հ.Հովհաննիսյան, Մ.Ստեփանյան, Մ.Փանիանց, Գ.Լիանոզով և ավագ քահանա Կեռքչյան) հասարակությանը 1875 թ. ներկայացրած հաշվետվության համաձայն՝ եկամուտները կազմել են 3147 ռուբլի, դրեթե նույն քանակի են եղել նաև ծախսերը: Պատկերացում կազ-

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, ք. 40–52:

¹²⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 65:

մելու համար ծանոթանանք այդ տարվա ընթացքում հաստատության կատարած ծախսումներին. անկելանոցում ապրող աղքատների վրա ծախսվել է 985 ռուբլի, շենքի պահպանման, վառելիքի և դրանց հետ կապված օժանդակ ծախսերին հատկացվել է 1070 ռուբլի, աղքատանոցից դուրս ընչազուրկներին տրվել է 800 ռուբլի, աղքատ ուսանողներին և չքավոր օրիորդներին տրվել է 230 ռուբլի: Նախորդ տարում՝ 1874 թ., աղքատանոցը ստացել է 852 ռուբլի նվիրատվություն: Աղքատանոցն ունի ընդամենը 56486 ռուբլի գումար¹²⁷: Հետագա տասնամյակներին ևս մշտապես պահպանվում էր եկամուտների և ծախսերի հավասարակշռությունը: Անկելանոցի ֆինանսատնտեսական դրական հաշվեկշիռը վկայում է հենց հիմնադրման ժամանակ գործը լավ հիմունքներով կազմակերպելու և խորհրդի ու անկելանոցի տնօրինության հստակ աշխատանքի մասին:

Գասպարյան անկելանոցը երկարակյաց և իր առաքելությունը լիովին արդարացնող հաստատություններից էր: Նա ավելի լայն ընդգրկում ունեցավ, քան ծրագրվում էր հիմնադրման ժամանակ՝ զբաղվել սոսկ մոսկվաբնակ աղքատներով:

Բարեգործական այդ հաստատությունը, անկախ բնակավայրերից, շատ ընչազուրկների օգնեց՝ ապահովելով օթեանով:

Իր կոչումից բացի՝ անկելանոցը դարձավ տեղի հայությունն իրար հետ կապող, միավորող, գաղութի հասարակական կարևոր հաստատություններից մեկը: Գաղութահայություն հավաքները, երեկույթները հաճախ հրավիրվում էին անկելանոցի՝ 600 հոգու համար նախատեսված ընդարձակ սրահում:

¹²⁷ Տե՛ս Մշակ, 1875, 18:

Ստեղծված անկանխատեսելի ու արտակարգ իրավիճակներում, Թուրքիայում կոտորածների հետևանքով տուժն ու տեղից զրկված փախստականներին օգնություն մեկնելով՝ չէին սպառվում հարազատ ժողովրդի սոցիալական, տնտեսական բոլոր հրատապ խնդիրները: Տեղական բնույթի անկելանոցներ հիմնելը դրական երևույթ էր, բայց մասնակի չափերով էր բավարարում եղած պահանջը:

Բնական աղետների՝ երկրաշարժի, երաշտի, հրդեհի և այլ պատահարների պատճառով հայրենակիցներին անմիջական օգնություն հասնելու անհրաժեշտություն էր առաջանում: Սակայն սովորական խաղաղ պայմաններում նույնպես մշտական աջակցության պահանջ էր առաջանում մշակույթի ասպարեզում և ուսումնական ոլորտում:

Ուսման նկատմամբ ավանդական մեծ սեր ու հակում ունեցող հայ ժողովրդի պատանիներն ու երիտասարդները ամեն կերպ ջանում էին կրթություն ստանալ: Հարկ էր տարրական ու միջնակարգ կրթության համար պահպանել ու հոգալ դպրոցների, ուսումնարանների կարիքները, աջակցել երիտասարդներին Ռուսաստանի կամ Եվրոպայի նշանավոր կենտրոններում ստանալու բարձրագույն կրթություն: Մայրաքաղաքի հայերը մեծամասնությամբ իրազեկ էին իրավիճակին և լավ հասկանում էին ընդհանուր դժվարին կացությունում իրենց պարտավորվածությունը: Նրանք համայնքի մյուս անդամների մեջ արթնացնում էին բարոյական պարտքի զգացումը և կոչում ակտիվություն: «Մշակ» թերթին ուղղված թղթակցություններից մեկում կարդում ենք. «... ոչ միայն խօսքով այլև գործով հաստատել, թէ հիրաւի մենք հեռի հիւսիսում ևս գիտենք հոգ տանել մեր սովեալ, տառապեալ և ուսումնաժարաւ թշվառ հայրենակիցների վրայ»¹²⁸:

¹²⁸ Նույն տեղում, 1881, 28:

Մոսկվայում և Պետերբուրգում Հայ ուսանողների թվաքանակը, ինչպես նշել ենք, հասնում էր Հարյուրների: Միայն Պետերբուրգի անտառային ճեմարանում XIX դ. 80-ական թթ. ուսանողների թվաքանակը հասնում էր 16-ի:

Բարձրագույն կրթությունն ստացող երիտասարդների զգալի մասը Հայաստանի տարբեր շրջաններից եկած չքավոր ընտանիքների զավակներ էին: Նրանցից շատերն ուսումը շարունակելու հնարավորություն չունեին: Պետերբուրգում եղած տարիների մասին Ղազարոս Աղայանը գրում է. «Չնայած իմ նեղ վիճակին, ինձանից ավելի ևս նեղացած (միջոցներից զուրկ – Վ.Բ.) ուսանողներ կային, դրանք էլ ինձ էին դիմում օգնության, տնտեսական թշվառությունը մի սովորական երևույթ էր մեզ համար, չէինք հուսահատվում»¹²⁹: Վերն արդեն նշվեց, որ լավ ավանդույթ էր դարձել չքավոր ուսանողներին օգնելու նպատակով տարին գոնե մեկ անգամ ուսանողական ներկայացումներ, երեկույթներ կազմակերպելը: Նման միջոցառումներից գոյանում էր 700–1000 ռուբլի գումար, որը բավարարում էր 15–20 ուսանողի ամենամահրաժեշտ կարիքները հոգալուն: Այդ եղանակով չքավոր ուսանողներին օգնելը այնպիսի արդյունավետ միջոց էր դարձել, որ Պետերբուրգի Հայ ուսանողները, երբ որոշում են մեկ տարի՝ 1896 թ., հրաժարվել երեկույթ հրավիրելուց, մտահոգված օգնություն սպասող ուսանողների ճակատագրով, անմիջապես դիմում են Կովկասի կարողություն ունեցող Հայերին՝ այդ տարում օգնելու չքավոր ուսանողներին¹³⁰:

Հարյուրավոր դիմումներից բերենք որոշ օրինակներ: Բժշկական ինստիտուտից Վարսենիկ Աբրահամյանը Պետերբուրգի եկեղեցական խորհրդին խնդրում է իրեն թոշակ նշանակել, որպեսզի կարողանա ուսումը շարունակել:

¹²⁹ Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 369:

¹³⁰ Տե՛ս Մշակ, 1896, 132:

Նույն խնդրանքով դիմում է Համալսարանի ուսանող Բաղդասար Ավագյանը: Ն.Ադոնցը նույնպես դիմել է մագիստրատուրայում սովորելու հնարավորություն ստանալու խնդրանքով: Հավանաբար խորհուրդը ցանկացել է տեղեկանալ նրա հետագա ծրագրերին: Ն.Ադոնցը բացատրություն է տվել, որ չի կարող որևէ կոնկրետ բան ասել իր ապագա ծրագրերի մասին: Իր խնդիրն է ծառայել Հայագիտությունը, մի ասպարեզ, որը տանում է ամեն տեղ, բացի փառասիրությունից¹³¹:

Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցական խորհուրդներին թոշակ ստանալու դիմումների և միջնորդությունների քանակն այնքան մեծ էր, որ դժվար էր լինում ճիշտ ու արդարացի բաշխում կատարել: Ընդունված կարգի համաձայն՝ չքավոր ուսանողը 5 ուսանողի երաշխավորությունամբ կարող էր թոշակ ստանալ: Ուսանողի համար դժվար էր 5 և ավելի ստորագրություն վերցնելը: Պետերբուրգից Հ.Մեդնիկյանը, դրվատելով եկեղեցական խորհրդի կողմից չքավոր ուսանողներին տարեկան 3 հազար ռուբլի գումար հատկացնելու հանգամանքը, հարց է բարձրացնում թոշակ նշանակելու եղանակը վերափոխելու վերաբերյալ: Նա եկեղեցական խորհրդին առաջարկում է ստեղծել հանձնախումբ և բոլոր դիմումները հանձնել նրան: Հանձնախումբը հանգամանորեն ծանոթանում է գործերին, կազմում և խորհրդին է ներկայացնում առավել կարիքավոր ուսանողների ցուցակը¹³²:

Մայրաքաղաքների չքավոր Հայ ուսանողների օգտին հանգանակություն էին կազմակերպում նաև Հայաստանի քաղաքներում ու հայկական գաղութներում: Հօգուտ Մոսկվայի կարոտյալ ուսանողների Ալեքսանդրապոլում, Կաղզվանում, Ախալքալաքում, Եկատերինոգարում, Ղուբա-

¹³¹ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 166, 167, 173:

¹³² ՏԵՍ Մշակ, 1895, 5:

յում Հանգանակությունն է կատարվում և առաքվում 500 ռուբլի: Դրա հետ մեկտեղ նրանք անհրաժեշտ են համարում այդուհետ Հանգանակությունը նախատեսել ոչ միայն Մոսկվայի, այլև Ռուսաստանի մյուս քաղաքների հայ ուսանողների համար¹³³: Մի պահանջ, որն իրականում կատարվում էր: Բավական է նշել, որ տարիներ առաջ հենց Մոսկվայում երիտասարդները կազմակերպում են նվազահանդես Հօգուտ Տուլայի հայ ուսանողների¹³⁴:

Պետերբուրգում հռչակավոր ծովանկարիչ Հ.Այվազովսկին ցուցահանդես է կազմակերպում, որի մուտքի ամբողջ գումարը հատկացնում է Գեղարվեստի ակադեմիայի չքավոր ուսանողներին: Մինչ այդ նա 1500 ռուբլի էր հատկացրել Հօգուտ չքավոր ուսանողների¹³⁵:

Սովորելու մեծ ձգտում ու ունակություններ ունեցող պատանիների փափազը իրականացնելու համար օգտագործվում էին բոլոր հնարավոր միջոցները: Ա.Ծատուրյանն այն կարծիքին էր, որ կազմակերպելով ուսանողական ներկայացումներ՝ հնարավոր չէ հոգալ չքավոր ուսանողների ամենաանհրաժեշտ կարիքները: Նա հայ հասարակայնությանն առաջարկում էր իր վրա վերցնել նրանց հոգսերի թեկուզ մի մասը: «Չը պէտք է մոռանալ, – գրում է նա Մոսկվայից «Մշակին» ուղարկած նամակում, – որ ներկայումս բարձրագույն ուսումնարանների նստարանի վրա նախող երիտասարդութիւնը իր ժամանակին ղեկավարելու է

¹³³ Տե՛ս նույն տեղում, 1898, 10:

¹³⁴ Տե՛ս Արձագանք, 1898, 11: Չքավոր ուսանողներին օգնելու համար օգտագործում էին ամեն մի հնարավորություն: Մոսկվայի եկեղեցական խորհրդում որպես քարտուղար աշխատում էր մի գերմանացի, որին վճարում էին տարեկան 600 ռուբլի: Հարց է բարձրացվում, և նպատակահարմար են գտնում գերմանացու փոխարեն աշխատանքի վերցնել մի աղքատ ուսանողի և նրա ուսման հարցին այդ եղանակով լուծում տալ (տե՛ս նույն տեղում, 1889, 3):

¹³⁵ Տե՛ս Մշակ, 1887, 16:

Հայրենի երկրի նիւթական և հոգևոր կեանքը: ... Այն մարդիկ, որոնց մենք ուզում ենք օգնել, – նրանց գիտութեան աստիճանից, եռանդից ու պարտաճանաչութիւնից պէտք է կախված լինի, թէ արդեօք մեր Հայրենիքը շիտակ և Հաստատուն կ'ընթանայ առաջադիմութեան շաւղով, թէ՞ նա կը սկսի թթուել ու դանդաղ շարունակել իր գոյութիւնը»: Նա իր բաց նամակը ավարտում է հետևյալ խոսքերով. «Թող Հայ Հասարակութիւնը, եթէ նա ճշմարիտ նախանձախնդիր է իր առաջադիմութեան և Հասկանում է իր «չարն ու բարին»... անսպառ սիրով, օգնող ձեռքով ոյժ և թև տայ իր ծաղկահասակ ուսանող սերնդին»¹³⁶:

Հայ Հասարակության տարբեր խավերից հորդորում, իրենց խոսքն էին ուղղում կարողությունների տեր ազգակիցներին՝ լծվելու Հասարակական կարևոր նշանակություն ունեցող գործին, երիտասարդության կրթությունն ապահովելու բարեգործությանը: Ուսանող Համազասպ Համբարձումյանը (ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի հայրը) նույնպես Մոսկվայից թերթին ուղղած նամակում նշում է, որ դպրոցներն ավարտող Հայ պատանիների շրջանում ուսումը շարունակելու, բարձրագույն կրթություն ստանալու մեծ ձգտում է նկատվում: Նրանք գալիս են նախապատրաստական բաժիններ, դժվարին պայմաններում, նյութական ծանր վիճակում պատրաստվում և ի վերջո Հասնում իրենց երազած նպատակին՝ ընդունվելով բարձրագույն դպրոց: Այդպիսի գեղեցիկ ցանկությամբ տողորված երիտասարդությունն ընդունելություն չի գտնում Հարուստ շերտերի կողմից: Վերջիններս մեծ մասամբ անտարբեր են մնում անծանոթ վայրում, անծանոթ միջավայրում մաքառող երիտասարդների նկատմամբ¹³⁷:

¹³⁶ Նույն տեղում, 1898, 215:

¹³⁷ Տես նույն տեղում, 1902, 240:

Երիտասարդութիան կրթութիւնն ստանալու ջանքերին ընդառաջ գնալու համար հայ համայնքների ներկայացուցիչները ձգտում էին օգտագործել բոլոր հնարավորութիւնները: Մայրաքաղաքներում ուսանելու ժամանակ մեծ դժվարութիւններ էին ստեղծվում ամենից առաջ օթեան ունենալու հարցում: Մոսկվայի հայ համայնքը հարց է բարձրացնում քաղաքում «հայ ուսանողական հանրակացարան» հիմնելու և դրանով սովորողների բնակվելու խնդիրը լուծելու վերաբերյալ: Հողատարածքը Մոսկվայում խիստ թանկ է գնահատվում, բայց հայերի համար այդ պարագան կարող էր դյուրին լուծում գտնել: Գրուզինսկի թաղամասի հայկական եկեղեցին ժամանակին ձեռք էր բերել հողամաս, որը մինչ այդ չէր օգտագործվել, հանրակացարանը կորելի էր այդտեղ կառուցել: Տարածք ունենալը մեծապես հեշտացնում էր կարևոր այդ ձեռնարկման իրականացումը: Առաջարկվում է ստեղծել հանձնաժողով՝ այդ գործով զբաղվելու համար: «Գաղութը պէտք է նկատի ունենայ նաև այն, – նշվում է թղթակցութիւնում, – որ շինելով այդ հանրակացարանը, նա միանգամայն ղերծ է մնալու այն անվերջ դիմումներից, որ միշտ ստանում է հայ ուսանողների կողմից օգնութեան նպատակով: Հիմնելով կացարանը, գաղութը չը պէտք է մոռնայ, որ ինքը դրանով բազմաթիւ ուսանողների միջոց տված կլինի շարունակելու իրանց ուսումը բարձրագոյն դպրոցներում, նպաստելու կրթական գործին»¹³⁸:

Մայրաքաղաքների հայկական համայնքները, առաջին հերթին Պետերբուրգի համայնքը, հանձին եկեղեցական խորհրդի, ուշադրութեան կենտրոնում էին պահում տնտեսական դժվարին կացութեան մեջ հայտնված որբանոցները: Նման օգնութիւնները տեւական բնույթ են ունեցել: Հիշա-

¹³⁸ Նույն տեղում, 1907, 168:

տակենք միայն Մշո Ս.Կարապետ նշանավոր վանքի որբանոցին օժանդակելու օրինակը: Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նիստը նախագահող Ն.Ադոնցը 1907 թ. հայտնում է Մաղաքիա պատրիարքին, որ լսելով բժիշկ Հակովբ Զավրյանի զեկուցումը Մշո Ս.Կարապետ վանքի դժվարին կացության մասին՝ եկեղեցական խորհուրդը հատկացրեց 600 ռ. գումար: Տարիներ անց՝ 1912 թ., եկեղեցական խորհուրդը կրկին Կ.Պոլսի պատրիարքին հայտնում է, որ Վանի առաջնորդ Հովսեփի եպիսկոպոսի միջնորդությամբ ընդառաջելով՝ խորհուրդը 500 ռուբլի նպաստ է տվել Ս.Կարապետ վանքի որբանոցին և նույնքան գումար՝ Վարազա վանքի որբանոց-վարժարանին¹³⁹:

Ավելի լարված դրուժյուն և արագ աջակցություն կազմակերպելու անհրաժեշտություն էր առաջանում անկանխատեսելի երևույթների, բնական աղետների ժամանակ:

1881 թ. Արևմտյան Հայաստանում անսովոր պայմանների բերումով երաշտի հետևանքով գյուղատնտեսությունը հայտնվում է ճգնաժամային վիճակում: Անբերրիություն հետևանքով սովն այնպես է իր ճիրանների մեջ առնում բնակչությանը, որ առանց դրսի օգնության հնարավոր էջր ստեղծված դժվարին կացությունից դուրս գալ: Ալեքսանդր II կայսրը, հավանաբար Մ.Լորիս-Մելիքովից տեղեկանալով Արևմտյան Հայաստանում սկսված սովի մասին, հայոց պատրիարքին ուղարկում է պատկառելի գումար և թույլատրում հանդանակություն կատարել: Հայ իրականության մեջ լայն արձագանք գտած այդ երևույթն իր շրջանակների մեջ է առնում նաև դաղթավայրերը: Մոսկվայի հայերը համայնքի անդամներին հորդորում են սրտացավ ու ակտիվ վերաբերմունք դրսևորել: Մոսկվայի հայ համայնքի հավաքին հայր Սուրենյանցը ներկայացնում է իրողությունը և ավելացնում, որ մանավանդ Վաս-

¹³⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 978, ք. 111, գ. 989, ք. 70:

պուրականի, Տարոնի և Կ.Պոլսի «Միացյալ ընկերությունը» մեծ պահանջ ունի օգնութեան սովի դեմ պայքարելու, գյուղացիներին սերմացուով ապահովելու առումով: Մ.Էմինը, Համերաշխելով զեկուցողի Հետ, ավելացնում է, որ մոռացութեան չպետք է տալ կրթական օջախները, հարկավոր է հանգանակութեանից բաժին հանել նաև ուսումնարաններին: Ստեղծվում է հանձնաժողով (Մ.Փանյանց, Լ.Խաչատրյանց, Մ.Շամխալյանց և ուրիշներ), որը հանգանակում է 4243 ուռբլի, որից 3500 ուռբլին «Մշակի» խմբագրութեան միջոցով ուղարկվում է Արևմտյան Հայաստանի սովյալներին և դպրոցներին: Միջոցառման իրականացման հարցում ակտիվ էին Հ.Հովհաննիսյանը, Մ.Էմինը, Զ.Մսերյանը, Ժամհարյան եղբայրները և ուրիշներ: Հատկանշական է, որ նվիրատվութեանը մասնակցեցին նաև օտարազգիներ՝ Շիշկինը, Կոտելնիկովը, Ստուկինը, Շպիսը, Մալյուտինը, Ուսեին Շախը և ուրիշներ¹⁴⁰: Օտարազգիներկայացուցիչների սրտացավ այդ վերաբերմունքը ցույց է տալիս հարևանութեամբ ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչների միջև գոյութեան ունեցող բարեկամական հարաբերութեաններն ու համագործակցութեանը: Այդ խոսուեն փաստը միաժամանակ վկայում է կողք կողքի ապրող ժողովուրդների ներկայացուցիչների՝ դրկից ժողովրդի պատմութեանը փոխադարձ ծանոթութեան մասին:

Արևմտյան Հայաստանում սովն այնպիսի չափեր էր ընդունել և այնպիսի վտանգ ստեղծել, որ անգամ միջոցների կարիքի մեջ գտնվող ուսանողութեանն է հանգանակութեան կազմակերպում: Պետերբուրգի Հայ ուսանողներին հաջողվում է ժողովել ընդամենը 48 ուռբլի: Տեսնելով, որ այդ գումարը շատ փոքր է, նրանք իրենց ուժերով երկու ներկայացում են տալիս («Դալալ Ղազո», «Գիշերվա սաբրը

¹⁴⁰ Տես Մշակ, 1881, 17, 67:

խեր է»), որպեսզի ստացված հասույթն ավելացնեն հանգանակած գումարին և ուղարկեն սովյալներին:

Մոսկվայի հայ ուսանողները հավաքում են 134 ոււրբլի 30 կոպեկ և նույնպես ուղարկում հայրենակիցներին¹⁴¹:

Հայաստանի տարբեր մասերում բնական աղետները, առաջին հերթին երկրաշարժերի գործած ավերածուծությունները տնտեսական, սոցիալական դժվարին կացության մեջ էին գցում բնակչությանը: Այդպիսի պարագաներում առավել ևս գաղութահայությունն անտարբեր դիտողի դերում էր մնում, անմիջապես օգնության էր հասնում հայրենակիցներին: 1889 թ. հղոր երկրաշարժը Ախալքալաքի ամբողջ գավառում բնակչությանը մեծ վնաս պատճառեց: Ավերածությունների ենթարկվեց 30 գյուղ, որտեղ տների մեծ մասը դարձավ կիսաքանդ, իսկ 672 տուն հիմնովին քանդվեց: Մարդկային զոհերի թվաքանակը հասավ 248 հոգու: Ոչնչացավ մեծաքանակ՝ 2357 անասուն: Ամբողջ երկրով մեկ աղետյալներին օգնելու շարժում սկսվեց: Նիկոլայ II կայսրը հանդես եկավ աղետյալներին օգնելու շրջաբերականով և անձնական միջոցներից հատկացումներ կատարեց աղետյալների հիմնադրամին: Խրիմյան Հայրիկը Մայր աթոռի միջոցներից գումար հատկացրեց և օգնություն կազմակերպելու կոնդակով դիմեց վերահայոց և մյուս թիմերին¹⁴²:

Մոսկվայի հայ հասարակայնությունը 2900 ուրբլի է հավաքում և ուղարկում երկրաշարժից տուժածներին: Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը հապշտապ 1000 ուրբլի գումար է տրամադրում նույն նպատակով¹⁴³: Մոսկվայի

¹⁴¹ Տես նույն տեղում, 1881, 20, 118:

¹⁴² Տես Ա.Մեքրոնյան, Չավախքը XIX դ. և XX դ. առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 234–235:

¹⁴³ Տես ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 987, ք. 1:

պատմության թանգարանի դահլիճում Յու.Վեսելովսկին հօգուտ Ախալքալաքի երկրաշարժից տուժածների դասախոսությունն է կարդում «Բայրոնը, նրա կյանքն ու գործունեությունը» թեմայով: Ստացված 584 ռուբլի գումարը Թիֆլիսի գլխավոր կոմիտեի միջոցով ուղարկվում է աղետի գոտի¹⁴⁴:

Այդ նույն տարիներին երկրաշարժից մեծապես տուժում են Էրզրումը, Շամախին: Մայրաքաղաքի «Մարինսկի» թատրոնում ներկայացում է դրվում, իսկ երկաթուղայինների ակումբում դերասանուհի Լ.Էլզինովայի աջակցությամբ երեկույթ է կազմակերպվում հօգուտ Շամախիի երկրաշարժից տուժածների¹⁴⁵: Պետերբուրգից թղթակիցը հաղորդում է, որ Էրզրումի աղետը մայրաքաղաքի հայությունը շրջանում մեծ արձագանք գտավ, եկեղեցական խորհուրդն անմիջապես 950 ռուբլի հատկացրեց երկրաշարժից տուժածների օգտին¹⁴⁶:

Պետերբուրգի հայ եկեղեցու առաջնորդ Խորեն վարդապետ Ստեփանյանը եկեղեցական խորհրդին հայտնում է, որ հրդեհի պատճառով Ջեյթունում մոխրի են վերածվել 7 եկեղեցի, 5 վարժարան, մեծապես տուժել է բնակչությունը: Կայսրը թույլատրել է կատարել հանգանակություն: Եկեղեցական խորհուրդը 500 ռուբլի գումար է հատկացնում սկսելով հանգանակության գործընթացը¹⁴⁷: Խորեն վարդապետը մեկնում է Մոսկվա, որտեղ բազմության առաջ սրտաշարժ քարոզ է կարդում Ջեյթունի անցյալի ու ներկայի մասին՝ մասնավորապես ծանրանալով հրկիզյալների թշվառ դրություն վրա: Անմիջապես հանգանակություն է սկսվում, պարոն Հովհաննես Հովհաննիսյանը 1000 ռուբլի

¹⁴⁴ Տե՛ս Մշակ, 1900, 68:

¹⁴⁵ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 399, ց. 1, գ. 1000, ք. 5:

¹⁴⁶ Տե՛ս Մշակ, 1902, 53:

¹⁴⁷ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 399, ց. 1, գ. 941, ք. 1:

է նվիրաբերում: Հանգանակությունը շարունակվում է: Տեղեկություն է ստացվում, որ Պետերբուրգում արդեն հավաքվել է 1664 ռուբլի գումար¹⁴⁸:

1884 թ. Ազուլիսում վիթխարի ջրհեղեղի հետևանքով քաղաքը քարուքանդ է լինում: Մոսկվայի հայ համայնքում, լսելով հայր Սուրենյանցի հաղորդումը պատահած ողբերգության մասին, մեծ հաջողությամբ օգնության ստորագրություններ են հավաքում և հայ մյուս համայնքներին կոչ անում հետևելու իրենց օրինակին¹⁴⁹:

Կարծում ենք՝ հիշատակված փաստերը բավարար են գաղափար կազմելու հեռու հյուսիսի հայկական երկու համայնքների՝ Հայրենիքի հետ կապվածության աստիճանի, ազգակիցներին նեղ վիճակից, տնտեսական ծանր դրությունից հանելու մասին:

¹⁴⁸ Տե՛ս Մշակ, 1887, 118, 119:

¹⁴⁹ Տե՛ս Արձագանք, 1884, 26:

Գլուխ չորրորդ

ՄՇԱԿՈՒՅԹ

Հայ ժողովուրդն առանձնահատուկ հակվածություն ունի դեպի մշակույթը և մշտապես հատուկ ունակություն է դրսևորել այդ ասպարեզում: Հնագույն ժամանակներից սկսած՝ մարդկային հասարակության պատմության բոլոր փուլերում մշակույթը Հայաստանում զարգացում է ապրել, իսկ անկախ պետականության և խաղաղ աշխատանքի պայմաններում՝ ունեցել փայլատակումներ: Նվաճողների տիրապետությունների ծանր ժամանակաշրջաններում, երբ հայրենիքում ստեղծագործելու հնարավորություններ չեն եղել, մշակույթը պահպանվել ու զարգացել է օտար երկնակամարների տակ ծվարած ու կենսահաստատ կյանքով ապրող հայկական համայնքներում:

Պատմության հարկադրանքով Հայ ժողովրդի անցած ուղին միաժամանակ համակված է եղել ազատագրական պայքարով: Պատահական չէ, որ հայ գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, մշակույթն ամբողջությամբ հագեցած են ազատագրական գաղափարախոսություններով:

Հայ ժողովուրդը պատմության հաջորդ փուլը՝ նոր շրջանը թևակոխեց, երբ ժամանակի ազատամտական զարթոնքը, նրա առաջադրած նոր խնդիրներն ազդակ էին դառնում ու խթանում մշակույթի զարգացումը: Հարկավոր էր ժողովրդին լուսավորել, ազգային ոգի ներարկել, բարձրացնել նրա ինքնագիտակցությունը: Բնականաբար, գիտու-

թյունը, արվեստը, գրականությունը, մամուլը արձագանքում էին ժամանակի առաջադրած խնդիրներին:

Նոր շրջանում պահպանվեց մշակույթի զարգացման ավանդական ընթացքը, նրա շարունակականությունը, բայց փոփոխվեցին նրա շեշտադրումները: Ռուսաստանը և նրա հետ արևելահայությունը դարձան ազգային գաղափարների հիմնական ջահակիրները: Հայ մտավոր կենտրոն դարձած Թիֆլիսի հետ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութները դարձան լուսավորության տարածման, հայ մշակույթի պահպանման ու զարգացման, քաղաքական ոգորումների հիմնական կենտրոններ:

Հատկապես նշանակալի էր եվրոպական գաղափարական կյանքի նվաճումներին հասու Ռուսաստանի առաջադեմ մտքի կենտրոններ Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքների դերը: Հայերը հաղորդակից էին դառնում հասարակական կյանքում, արվեստի, գիտության, լուսավորության ասպարեզներում ռուսական մտքի կենտրոններում կատարվող առաջընթացին: Նրանք ռուսական կյանքի նորն ու առաջադեմը լծորդում, անդրադարձ էին կատարում դեպի հայրենի երկիր, դեպի աշխարհասփյուռ հայությունը: Եվ դա կատարվում էր հասարակական կյանքի ու մշակույթի բոլոր բնագավառներում ու ազդակ դառնում հետամնացության ընդհանուր մթնոլորտը հաղթահարելուն: Հատկանշական է, որ Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական գաղութների գոյությունը, նրանց անցած ուղին ոչ այնքան ներհամայնքային, որքան համահայկական գիտակրթական, մշակութային կյանքի պատմություն է:

1. Կրթություն

Երբ խոսք է բացվում Մոսկվայի և Պետերբուրգի Հայ Համայնքների ուսումնական թրական գործի մասին, ապա, բնականաբար, Լազարյան ճեմարանն է հառնում մեր առաջ: Ուրիշ քիչ թե շատ նշանավոր կրթական հաստատություն չի եղել: Բնական է նաև այն, որ Հայ Համայնքների մշակույթի ուսումնասիրությունը պարտավորեցնում է հիմնավոր լուսաբանել այնպիսի գիտական հաստատության պատմությունը, ինչպիսին Լազարյան ճեմարանն է¹:

Լազարյան տոհմի նշանավոր ներկայացուցիչ, մայրաքաղաքների Հայկական եկեղեցիների հիմնադիր Հովհաննես Լազարյանը, մտահոգ լինելով Հայ մանուկների ուսման խնդրում, մահից առաջ՝ 1801 թ., 200 հազար ռուբլի է կտակում ուսումնարան հիմնելու համար և կտակակատար է նշանակում կրտսեր եղբորը՝ Հովակիմին: Վերջինս առանց շտապելու, որպեսզի հատկացված գումարը բանկային տոկոսներով աճի, մտորում էր կրթական օջախի հիմնադրման մասին: 1812 թ.՝ Հայրենական պատերազմն ավարտվելուց հետո, իր անձնական միջոցներից ևս նկատելի հատկացումներ կատարելով, նա գործնական բնույթ է տալիս ուսումնարանի հիմնադրմանը:

¹ Կրթական կարևոր այդ կենտրոնի մասին տարբեր բնույթի ու ծավալի շատ աշխատանքներ են հրատարակվել: Այդ պատճառով մեր ուշադրության կենտրոնում չպետք է պահենք նրա՝ որպես զուտ ուսումնական հաստատության ամբողջ գործընթացի մանրամասները: Մեր զլխավոր նպատակն է լինելու գերազանցապես հայ համայնքների և հայոց կյանքում Լազարյան ճեմարանի ունեցած գիտակրթական, լուսավորական գործունեության լուսաբանումը:

Նոր Նախիջևանի Հայկական գաղութում քաղաքի Հասարակայնության երևելի ներկայացուցիչները, տեղյակ լինելով կտակի մասին, քանիցս դիմում են Հովակիմ Լազարյանին: Նրանք, կռվան դարձնելով Նոր Նախիջևանի



Հովակիմ Լազարյանի դիմանկարը


Հայ բնակչության ստվար քանակը, համոզում էին ուսումնարանը հիմնել իրենց քաղաքում: Ավելին, նման հարցադրումն իրենց այնքան իրական էր թվում, մանավանդ որ նախապես այդպիսի տրամադրվածություն կար, և դա այնքան համոզիչ էր համարվում, որ Նոր Նախիջևանում առաջնորդական Հաջորդի պաշտոնավարող Ներսես Աշտարա-

կեցին կազմում է ապագա կրթօջախի կանոնակարգը: «Գաղափար կանոնագրին ուսումնարանի» խորագիրը կրող 12 կետից բաղկացած ծրագրային այդ փաստաթղթում սահմանվում են ուսման տևողությունը, վարձը, ծնողների և ուսումնարանի հարաբերությունները, ուսուցիչների իրավունքներն ու պարտականությունները և մյուս հարցերը²:

Լազարյան ճեմարանը 1815 թ. բացվեց Մոսկվայում, ինչը միանշանակ ճիշտ և բոլոր առումներով արդարացված ընտրություն էր: Այն հիմնադրվեց Եվրոպայի առաջավոր գաղափարներին հասու, գիտակրթական, մշակութային, հասարակական եռուն կյանքով ապրող կենտրոնում: Նշանավոր ճարտարապետներ Ի.Պողյաչևի և Տ.Պրոստակովի ղե-

² Տե՛ս Վ.Բարխուդարյան, Ներսես Աշտարակեցին և նրա ժամանակը. – ՊԲՀ, 2004, 3, էջ 9:

կավարուլթյամբ 1813 թ. հայկական եկեղեցու մոտակայքում՝ Լազարյանների նախնիներին պատկանող քարե տան մոտ, սկսվում է ուսումնարանի շենքի շինարարությունը: Քաղաքի այդ փոքրիկ թաղամասը հատուկ պահպանվել և չէր տուժել ֆրանսիական զորքերի կողմից հրդեհվելուց³:



Լազարյան ճեմարանի շենքը

Հիմնադրման առաջին տարիներին ճեմարանը Լազարյան հայկական ուսումնարան անունով տարրական գիտելիքներ սովոր դպրոց էր: Ընդունվում էին տարբեր ազգերի (հիմնականում՝ հայ, ավելի քիչ քանակով՝ ռուս) 10–14 տարեկան երեխաները: Ճեմարանի հիմնադիրը և նրա երկարամյա ղեկավարները՝ Հովակիմի ժառանգ Լազարյան եղբայրները, արևելյան և եվրոպական լեզուներ սովորեցնելուց, տարրական գիտելիքներ հաղորդելուց բացի, նշանակութուն էին տալիս նաև այն հանգամանքին, որ հայ և ռուս երեխաները, նույն պատերի ներսում կրթվելով, կմտերմանան: Լազարյանների նպատակն էր աղքատ հայ

³ Հովհաննես և Խաչատուր Լազարյանների հաղորդած տվյալների համաձայն՝ Նապոլեոնի սիրելի հայագգի մամուլուք Ռուստամը խնդրում է նրան, որ Պոկրովսկայայից մինչև Մյասնիցկի փողոցն ընկած թաղամասը՝ որպես հայկական եկեղեցու տարածք, պահպանվի հրդեհից: Այդտեղ կարգվում է հատուկ զինվորական, և թաղամասը գերծ է մնում հրդեհի ավերածություններից (տես Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 119, գ. 56, վավ. 94):

երեխաներին տալ եկեղեցաբարոյական դաստիարակութիւն և համապատասխան դիտելիքներ: Նրանք ուսման կազմակերպման հարցերում մշտապես եղել են ժողովրդավարական սկզբունքների պահպանման դիրքերում, ինչը պահպանվել է նաև ճեմարանում: Դեռևս ճեմարանը բացվելուց տարիներ առաջ է Խ.Լազարյանը Եփրեմ կաթողիկոսին գրել, որ դպրոցում ուսուցումը պետք է լինի «համեստ, թարց (առանց) իւրիք ցասման, բարկութեան, և դանից պատժոյ հմտեցուցանել, զի բարկութիւն, սպառնալեօք՝ ահացուցանել և խիստ պատժելն բարբարոսական է գործ, միշտ խռովեցուցիչ և յուսահատեցուցիչ աշակերտի, նմանապէս և տախտկութիւն... ուսուցչին»⁴:

Հայ պատանիներին կրթելու, դաստիարակելու Լազարյանների ձգտումը հասկանալի էր: Սակայն ինչպիսի միտումներ ունեւր և ի՞նչ նպատակների էր հետամուտ ուսական կառավարութիւնը՝ հավանութիւն տալով, ավելին, ընդառաջելով ճեմարանի բացմանը և նպաստելով նրա հետագա գործունեութեանը:

Ճեմարանի հիմնադրման պաշտոնական փաստաթղթերում երկու հիմնական խնդիր էր դրվում ուսումնարանի առջև: Առաջին՝ պատրաստել արևելյան լեզուների հիմնավոր իմացութեամբ թարգմանիչներ, որոնք անհրաժեշտ են Ռուսական կայսրութեանը՝ արևելյան երկրների ու ժողովուրդների հետ հարաբերութիւններ ունենալու և նրանց մասին եղած տեղեկատվութիւնը հարստացնելու համար: Երկրորդ՝ որպէս Ռուսաստանի հայկական բոլոր ուսումնարանների մեջ կարևոր կրթօջախ՝ պատրաստել

⁴ Տե՛ս Լեօ, Պատմութիւն Երեսնի հայոց քեմական հոգեւոր դպրոցի (1837–1912), Թիֆլիս, 1914, էջ 92: Այդ քաղվածքը մեջբերելուց հետո Լեոն, ճեմարանի հիմնադրումը նկատի առնելով, նշում է. «Հայ գաղութը – այս առաջին անգամ չէ, որ մենք տեսնում ենք – կարող էր հասնել այս աստիճան պայծառ գաղափարների» (էջ 93):

բարձրորակ ուսուցիչներ և կրթված հոգևոր գործիչներ, որոնց պահանջը շատ մեծ է:

Ռուսական պետութիւնը նկատի էր առնում նաև այն հանգամանքը, որ Հայաստանից ու տարբեր երկրներից եկած հայ պատանիները Մոսկվայում շփումների միջոցով կդաստիարակվեն ռուսական ոգով և ժամանակի ընթացքում իրենց հոգեբանությամբ շատ քիչ բանով կտարբերվեն բուն ռուսներից: Այդ հանգամանքին ևս այնքան էական նշանակութիւն էր տրվում, որ դա իր արտահայտութիւնն էր գտնում պաշտոնական փաստաթղթերում⁵: Այդ ամենից պարզորոշ է դառնում, որ պետութիւնը որոշակի հետաքրքրութիւններ ուներ այդպիսի ուղղվածութեան կրթօժիտ կյանքի կոչելու հարցում:

Ճեմարանն իր գոյութեան սկզբնական շրջանում⁶ առաջին տասնամյակում, տարաբնույթ բազում դժվարութիւնների է հանդիպում: Գտնվելով լուսավորութեան նախարարութեան ենթակայութեան ներքո՝ նախարարները (Ա.Գուլիցին, Կ.Լիվին, Ս.Ուվարով), ռուսմանական հաստատութիւնների հատուկ կոմիտեն, Մոսկվայի գեներալ նահանգապետ Ա.Տորմասովը հենց սկզբից, ռուսմանարանի շենքի կառուցումից սկսած, խոչընդոտում էին ճեմարանի բնականոն աշխատանքները: Այդ են վկայում ճեմարանի երկարամյա հոգաբարձուներ Հովհաննես և Խաչատուր Լազարյանները⁶: Հարուցվող արգելքները չեզոքացնելու նպատակով բարձր ատյաններին ուղղված գրութիւնները մնում էին անհետևանք: Ստեղծված դժվարին իրավիճակից ռուսմանարանը զերծ պահելու, լուսավորութեան նախարարութեան ենթակայութիւնից հանելու համար Լազարյանները, ի վերջո, խնդրի կարգավորման խելամիտ, իր նախա-

⁵ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 117, գ.52, վավ. 23, ք. 4:

⁶ Տե՛ս նույն տեղում, թղթ. 119, գ. 56, վավ. 94, ք. 153–154:

դեպը չունեցող եղանակ են գտնում: Նրանք փորձում են օգտագործել Ռուսաստանի կառավարության բարձրաստիճան գործիչների հետ իրենց ունեցած մտերմական կապերը և նրանց միջոցով ապահովել ճեմարանի կանոնակարգված գործունեությունը:

Ճեմարանի հիմնադիր Հովակիմ Լազարյանը 1824 թ. դիմում է պետական խորհրդի և նախարարների կոմիտեի անդամ կոմս Ալեքսեյ Արակչեևին, որ վայելում էր Ալեքսանդր I կայսրի վստահությունը: Նա հայցում է վերջինիս համաձայնությունը, որ ճեմարանը հանվի լուսավորության նախարարության ենթակայությունից և դրվի նրա գլխավոր ենթակայության տակ: Ստանալով Ա.Արակչեևի համաձայնությունը՝ եփրեմ կաթողիկոսը դիմում է Ալեքսանդր I-ին: Կայսրը հատուկ հրամանագրով թույլատրում է կատարել նման վերափոխություն: Լազարյան ճեմարանում գլխավոր պետ նշանակելը նախարարների կոմիտեն հիմնավորում էր հետևյալ կերպ. «Քանի որ Լազարյանների հայկական ուսումնարանը չի մտնում ուսումնական հաստատությունների ընդհանուր կազմի մեջ, այլ գերազանցապես հայ երեխաներին կրթություն տվող հատուկ հաստատություն է, ուստի այդ ուսումնարանը... հանել ժողովրդական լուսավորության նախարարության ենթակայությունից և դնել հատուկ պետի գերատեսչության ներքո...»⁷: Դրանից հետո շուրջ կես դար ինստիտուտի գլխավոր պետի պաշտոնը ստանձնում են ծանրակշիռ պետական պաշտոնյաներ, ինչի շնորհիվ հեշտությամբ հաղթահարվում էին առաջացող դժվարությունները և լուծվում ստանում ուսումնարանի առաջ ծառայած հիմնախնդիրները:

⁷ Стів Г.И.Кананов, Семидесятипятилетие Лазаревского института восточных языков, 1815–1890. Исторический очерк и приложения, Москва, 1891, т. 5, Собрание актов к обозрению истории армянского народа, ч. III, Москва, 1833, т. 93:

Կոմս Ա.Արակչեևը կարճատև շրջանում չի հասցնում ճեմարանի կյանքում քիչ թե շատ ձեռնարկումներ կատարել. նա 1827 թ. թողնում է այդ պաշտոնը: Լազարյան եղբայրների խնդրանքով ճեմարանի գլխավոր պետ է նշանակ-



Ալեքսեյ Արակչեև



Ալեքսանդր Բենկենդորֆ

վում ոստիկանության և երրորդ բաժանմունքի պետ Նիկոլայ I-ի մտերիմ գեներալ Ալեքսանդր Բենկենդորֆը: Նա երկարամյա աշխատանքի ընթացքում (1828–1844 թթ.) ակտիվ գործունեություն է ծավալում: Նրա մահից հետո 1844 թ., ճեմարանի գլխավոր պետի պաշտոնը ստանձնում է ոստիկանության և երրորդ բաժանմունքի նոր պետ, իսկ 1856 թ.՝ պետական խորհրդի և նախարարների կոմիտեի նախագահ Ալեքսանդր Օրլովը: Նա այդ պաշտոնը վարում է մինչև 1860 թ.: Նրան հաջորդում է նախարարների կոմիտեի անդամ, 1860-ական թթ. բարեփոխումների ակտիվ մասնակից Վլադիմիր Բուտկովը (1860–1870 թթ.), որ վայելում էր Ալեքսանդր II-ի վստահությունը: Այնուհետև այդ պաշտոնը վարում է լուսավորության նախարար Դմիտրի Տոլստոյը (1870–1872 թթ.): Գլխավոր պետի պաշտոնը վերացվում է 1872 թ.:

Ուսումնական հաստատութիւնները կոմիտեի անդամներ Շտորխի, արեւելագետներ Ադելունգի և Ֆրենի հետ Հովհաննես և Խաչատուր Լազարյան եղբայրները վերադասատյանների հանձնարարութեամբ 1828 թ. կազմեցին ճեմարանի կանոնադրութեան նախագիծ, որը պաշտոնապես ընդունվեց: Ուսումնական հաստատութիւնների կոմիտեի որոշմամբ ճեմարանն անվանվեց «Արեւելյան լեզուների Լազարյան ինստիտուտ»⁸: Ամրագրվեց նաև այն հանգամանքը, որ ինստիտուտը ապադասակարգային ուսումնական հաստատութիւն է, որտեղ ուսանում են տարբեր դասակարգերի ու խավերի պատկանող ընտանիքների զավակները:

Խորապես ըմբռնելով ինստիտուտում հրատարակչութիւն ունենալու անհրաժեշտութիւնը՝ Լազարյան եղբայրները, որոնք իրենց հոր՝ Հովակիմի մահվանից (1826 թ.) հետո ճեմարանի տնօրէններն էին, գործնական քայլեր են կատարում այդ ուղղութեամբ: Ի պատասխան իրենց դիմումի՝ շուտով հոգաբարձու Հովհաննես Լազարյանը ստանում է ներքին գործերի և ժողովրդական լուսավորութեան նախարարութիւնների թուղթովութիւնը տպարան հիմնելու վերաբերյալ: 1829 թ. սեփական միջոցներով Լազարյանները հիմնում են տպարանը, ձեռք բերում հայերեն, ռուսերեն, եվրոպական ու արեւելյան լեզուներով տառեր՝ մեծապես ընդլայնելով տպարանի հրատարակչական հնարավորութիւնները: Ինստիտուտը տարիների ընթացքում բազմաթիվ լեզուներով տպագրում է ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և ուսումնական այլ գրականութիւն, որն առաքվում է նաև երկրի այլևայլ վայրերի հայկական դպրոցներ: Այդտեղ տպագրում են պարբերականներ («Հյուսիսսփայլ»,

⁸ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 119, գ. 56, վավ. 94, ք. 55:

«Ճռաքաղ» և այլն) և տարաբնույթ գրքեր⁹: 1829 թ. ինստիտուտն ազատվում է շենքի համար քաղաքային հարկեր վճարելու պարտավորությունից:

Կանոնադրույթյան համաձայն՝ ինստիտուտի գլխավոր պետի պարտականությունը ստանձնած՝ պետական ամենապատասխանատու պաշտոնյաներին անմիջականորեն ենթարկվում էր հոգաբարձուն: Հոգաբարձուի պաշտոնը ժառանգաբար վերապահված էր Լազարյան տոհմի ներկայացուցիչներից ավագին: Այդ տոհմի շարունակականության ընդհատման պարագայում հոգաբարձուի պաշտոնը կարող էր զբաղեցնել նրանց մերձավոր հարազատներից որևէ մեկը: Հարազատ չլինելու դեպքում ուսուսհայ թեմի առաջնորդի համաձայնությամբ հոգաբարձու էր ընտրվում ազգությամբ հայ որևէ քաղաքացի:

Հոգաբարձուին ենթարկվում էր ինստիտուտի տնօրենը, իսկ վերջինիս տեսուչը կամ տեսուչները: Ինստիտուտի ընդհանուր ղեկավարությունը (ուսումնական, տնտեսական, վարչական) իրականացնում էր խորհուրդը, որի նախագահը հոգաբարձուն էր: Խորհրդի կազմում ներառվում էին տնօրենը, տեսուչը, երկու ավագ դասախոս և երկու հոգի սովորողների ծնողներից: Ամենայն հայոց կաթողիկոսը խորհրդի առաջնակարգ պատվավոր անդամ էր, իսկ ուսուսհայ թեմակալ արքեպիսկոպոսը՝ մշտական պատ-

⁹ Տե՛ս Տեառն Ներսիսի Սրբազան կաթողիկոսի հայոց Հռչակաւոր արօթք = Молитва, Մոսկով, 1830, Մ.Սալլանթեանց, Հրահանգ ճարտասանութեան կամ ճառարանութեան, Մոսկուա, 1836, Քերականութիւն Հայկական լեզուի, 1846. Կիրակոս վարդապետ Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1858, Հ. Միքայել վարդապետ Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Մոսկուա, 1859, Միսիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1860, Գ.Հեջուրեանց եւ Ն.Ալադաթեանց, Ընծայ խելօք եւ ուսումնասէր երեխայոց, Մոսկուա, 1860, Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Մոսկուա, 1861, Ստեփանոս Միւնեցի, Պատմութիւն տանն Միսական, ի լոյս ընծայեաց՝ Մ.Էմին, Մոսկուա, 1861 և այլն:

վալոր անդամ: Ինստիտուտն ուներ դասախոսներ, ավագ և կրտսեր ուսուցիչներ, վերահսկիչ, ինչպես նաև հիվանդանոց, գրադարան, ուսումնական համապատասխան մասնագիտացված կաբինետներ:

Ինստիտուտում դասախոսելու էին հրավիրում Մոսկվայի համալսարանի և պետական այլ ուսումնական հաստատութիւնների մասնագետներին: Այսպես՝ 1832 թ. ինստիտուտի տնօրինութիւնը հրավիրում է Մոսկվայի համալսարանի ճանաչված դասախոս և մանկավարժ ակադեմիկոս Իվան Դավիդովին: Վերջինս, երկար տարիներ՝ մինչև 1845 թ. աշխատելով, մեծապես նպաստում է պարսկմունքների որակի և Լազարյան ինստիտուտի հեղինակութիւն բարձրացմանը¹⁰:

Հոգաբարձուն, ստանալով տնօրենի՝ տեսուչների կողմից կազմված հաշվետվութիւնը ճեմարանի ամենամյա դրութիւն, ինչպես նաև նոր ձեռնարկումներ կատարելու մասին, ընդհանուր հաշվետվութիւն էր ներկայացնում հաստատութիւն գլխավոր պետին:

Լազարյան ինստիտուտ էին ընդունվում 10-14 տարեկան 30-40 հայ պատանիներ, որբեր, աղքատ ընտանիքների զավակներ և սովորում հասարակութիւն հաշիւին: Սովորում էին նաև հայ և տարբեր ազգերի պատկանող երեխաներ՝ լրիվ կամ զեղչ ուսման վարձ վճարելով: Ուսման ծրագիրը բավականաչափ ընդգրկուն էր: Ավանդվում էին առաջին հերթին հուլյն-ռուսական և հայկական դավանանք, Սուրբ գիրք և եկեղեցու պատմութիւն, ապա պատմութիւն, աշխարհագրութիւն, տրամաբանութիւն, քերականութիւն, թվաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, ճարտասանական արվեստ, նկարչութիւն, երգ, պար:

¹⁰ См А.Зиновьев, Исторический очерк Лазаревского института восточных языков с краткой биографией учредителей института и с приложениями к биографии и очерку, Москва, 1863, էջ 43:

Լեզուներից դասավանդվում էին ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն: Ուսուցումը կազմակերպվում էր 4 աստիճանով՝ բարձր, միջին, ցածր և նախապատրաստական դասարաններով:

Լազարյան ինստիտուտը եղել է ռուսմանդաստիարակչական գործընթացը լավ կազմակերպող ճանաչված հաստատություն: 1834 թ. Հոկտեմբերի 14-ին Ա.Բենկենդորֆի ուղեկցութեամբ ինստիտուտ է այցելում Նիկոլայ Իլը, հանգամանորեն ծանոթանում կատարվող աշխատանքներին: Մի քանի տարի անց այցելում է թագաժառանգ Ալեքսանդրը: Երկուսն էլ շատ գոհ են մնում և լավ արտահայտվում ինստիտուտի մասին:

Նախարարների կոմիտեի որոշմամբ 1837 թ. օգոստոսի 31-ին Լազարյան ինստիտուտին տրվում է 2-րդ կարգի մասնավոր և պետական գիմնազիաների կարգավիճակ¹¹: Դրանով ճեմարանի հոգաբարձուն և մյուս վարչական աշխատողները մտնում են պետական պաշտոնյաների կարգը: Ճեմարանն ընդհանուր ձևով ենթարկվում էր լուսավորության նախարարության վերահսկողությանը, թեպետև չէր մտնում նրա համակարգի մեջ: Հոգաբարձուին հաստատում էր կայսրը, մյուս պաշտոնյաներին՝ հոգաբարձուն՝ գլխավոր պետի համաձայնությամբ: Ինստիտուտի անձնակազմին, այդ թվում և աշակերտներին թուլյատրվում էր օգտագործել հատուկ հագուստ: Այդ որոշումից հետո ճեմարանի վիճակն ավելի բարվոքվեց, աճեց աշակերտների թվաքանակը:

¹¹ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 119, գ. 56, վավ. 94, թ. 156: Խ.Լազարյանը մշում է, որ Ա.Բենկենդորֆի ներկայացմամբ է կայսրը Լազարյան ինստիտուտը հավասարեցրել երկրորդ կարգի ուսումնական հաստատություններից, չնայած դրան առարկում էր լուսավորության նախարարը (տե՛ս մույն տեղում, Երիցյանների արխիվ, թղթ. 155, վավ. 15):

Ինչպես Հայտնի է, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետութեան տակ անցնելուց հետո կառավարութիւնը ձեռնարկեց վերափոխել Հայոց եկեղեցու կարգավիճակը, այն կանոնակարգել պետութեան շահերին համապատասխան: Տարբեր կարծիքներ էին Հայտնվում, բայց գերակշռում էր այն տեսակետը, ըստ որի՝ նկատի էր առնվում ժողովրդի կյանքում Հայոց եկեղեցու ունեցած մեծ առաքելութիւնը: Պետերբուրգում ստեղծված բարեփոխումներ մշակող հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Ա.Բենկենդորֆը և Խ.Լազարյանը: Մշակված նախագիծը 1836 թ. մարտի 11-ին հաստատեց Նիկոլայ I կայսրը: Եկեղեցական այդ կանոնադրութիւնը պատմութեան մեջ Հայտնի է «Պոլոժենիե» անունով: Նոր կանոնադրութիւնն անհրաժեշտ էր դարձնում բարեփոխումներ իրականացնելը նաև Հայ համայնքների ինքնավարութիւնը եկեղեցու հիման վրա կազմակերպած մայրաքաղաքների հայկական գաղութներում:

Լազարյան ինստիտուտում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ ստացվող մշտական եկամուտները չէին բավարարում հաստատութեան օրեցօր աճող ծախսերը: Պակասող գումարը մշտապես լրացնում էին Լազարյանները իրենց անձնական միջոցներից: Այդ հանգամանքը՝ մի կողմից, «Պոլոժենիեի» համաձայն՝ թեմերում թեմական դպրոցներ հիմնելու համար գրագետ հոգևորականներ ունենալու անհրաժեշտութիւնը՝ մյուս կողմից, հրատապ լուծում էին պահանջում:

Իրար հետ կապ չունեցող մտահոգիչ հիմնախնդիրները լուծելու յուրօրինակ և միաժամանակ հիմնավոր տարբերակ առաջարկեց Խ.Լազարյանը: Նա 1837 թ. սեպտեմբերին Ա.Բենկենդորֆին և նրա միջոցով բարձրագույն ատյաններին դիմեց հետևյալ առաջարկով: Մայրաքաղաքների 5 եկեղեցիները միավորել Լազարյան ճեմարանի հետ և ստեղծել տնտեսական մի ընդհանուր վարչութիւն, որտեղ

մեկի տնտեսական միջոցների պակասը կլրացվի մյուսի կողմից: Հիրավի, ինչպես արդեն նշել ենք, որպես կանոն, Պետերբուրգի եկեղեցիները եկամուտների մեծ հավելում էին ունենում, իսկ Մոսկվայի եկեղեցիները՝ պակասորդ: Մյուս խնդրի՝ կրթված հոգևորականներ պատրաստելու առնչությամբ Խ.Լազարյանն առաջարկում էր ինստիտուտում բացել հոգևոր բաժին¹²:

Ա.Բենկենդորֆը, Խ.Լազարյանի մշակած նախագիծը հիմք դարձնելով, դիմեց ներքին գործերի նախարար Դմիտրի Բլուդոպին: Նա նախարարին հիշեցնում էր «Պոլոժենիեի» համաձայն հայկական թեմերում սեմինարիաներ կամ թեմական դպրոցներ բացելու անհրաժեշտություն մասին: Նոր դպրոցներ բացելու համար պահանջվում էին ֆինանսական վիթխարի միջոցներ, որ ի վիճակի չէին վճարելու հայկական եկեղեցիները: Լազարյան ինստիտուտը գտնվում էր օրինակելի վիճակում: Ուսումնական այդ հաստատությունը հայերի համար դարձել էր կենտրոնական լավագույն կրթօջախ: Նպատակահարմար էր նոր դպրոցներ հիմնելու փոխարեն գրագետ հոգևորականներ պատրաստելու խնդիրն իրականացնել հենց Լազարյան ճեմարանում՝ այդտեղ բացելով հոգևոր բաժին, որտեղ կալանդվեն Սուրբ գիրք, եկեղեցու պատմություն, նրա ծիսական համակարգի վերաբերյալ գիտելիքներ: Այդտեղ կրթություն ստացած լավագույն սաները 6 տարի կարող են աշխատել ինստիտուտում, ուսուցչություն անել թեմական դպրոցներում կամ էլ ծառայություն անցնել էջմիածնի հայ լուսավորչական սինոդում:

Ապա ինստիտուտի գլխավոր պետը նախարարին տեղեկացնում է, որ Լազարյանները սեփական միջոցներով Պետերբուրգում և Մոսկվայում կառուցել են 5 եկեղեցի և

¹² Տե՛ս Մ.Ստեբեանց, Յիշատակարան կենաց եւ գործոյ մեծանուն պալազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856, էջ 102:

դրանք ապահովել մշտական եկամուտներով: Նրանց անձնական միջոցներով հիմնվել ու պահպանվում է Լազարյան ինստիտուտը: Անհրաժեշտ է մայրաքաղաքների եկեղեցիները և ինստիտուտը, որոնց հոգաբարձուները Լազարյաններն են, միացնել մեկ ընդհանուր տնտեսական միավորի մեջ: Մեկի տնտեսական միջոցների պակասը կլրացվի մյուսի կողմից, և դրանով իսկ միավորումը կենսունակ կլինի: Եկեղեցիները, առանձին-առանձին վերցրած, ի վիճակի չեն հիմնելու թեմական դպրոց, հրավիրելու լավագույն ուսուցիչներ և ապահովելու դպրոցի հետագա գոյատևումը: Ա. Բենկենդորֆը նշում է նաև, որ մայրաքաղաքների հայկական եկեղեցիներն ունեն համայնքների կողմից ընտրված երեցփոխաններ, որոնք համաձայն են նման միավորում կատարելուն: Նրանք շխատելու են հոգաբարձուների դեկավարության ներքո 3 տարի ժամկետով: Հոգաբարձուի պաշտոնը ժառանգաբար շարունակելու են զբաղեցնել Լազարյանները: Ինստիտուտը, հայկական եկեղեցիները՝ հարակից կառույցներով, ազատվելու են պետական և քաղաքային տուրքերից՝ բացի ճանապարհների պահպանությունից:

Նախարար Դ.Բլուդովը ստացած առաջարկը համարում է նպատակահարմար և արդարացված: Միայն նոր կանոնադրության («պոլոժենիեի») պահանջով անհրաժեշտ է հարցը համաձայնեցնել Ամենայն հայոց կաթողիկոսի հետ: Առաջարկում է մշակված նախագիծն ուղարկել կաթողիկոսին¹³:

1839 թ. առանց էական լրացումներ կատարելու նախագծին հավանություն են տալիս և իրենց ստորագրությամբ վավերացնում Հովհաննես Կարբեցի կաթողիկոսն ու սինոդի անդամները¹⁴:

¹³ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 118, վավ. 15:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, վավ. 19:

Թեպետև Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը ժողովրդական լուսավորության կազմում չէր, բայց քանի որ ուսումնական Հաստատություն էր, նախագիծը 1840 թ. ուղարկվում է նաև այդ նախարարություն, որտեղ արժանանում է Հավանության¹⁵:

Կայսրը 1841 թ. հունվարին Հավանություն է տալիս ներկայացված վերափոխումներին, իսկ սենատը Հաստատում է այն: Ինստիտուտում կատարվող բարեփոխումների իրականացմանը ուշադրությամբ հետևում, տարբեր գերատեսչությունների հետ համաձայնեցնում էր ներքին գործերի վարչության պետ կոմս Ա.Ստրոգանովը, որը բարեկամական սերտ հարաբերություններ ուներ Լազարյանների հետ:

Լազարյան ինստիտուտը, զույգ ուղղություններ ունենալով, իր պատմության ընթացքում հնարավորություն չէր ունեցել երկու ուղղությամբ էլ կազմակերպելու լիարժեք ուսուցում: Մի կողմից՝ ինստիտուտը մասնագիտանում էր արևելյան լեզուների մեջ, մյուս կողմից՝ ջանում էր երկրում գործող գիմնազիաների ծրագրին հավասար կրթություն տալ: Այսինքն՝ պատրաստում էր արևելյան լեզուներին տիրապետող թարգմանիչներ, ծառայողներ, միաժամանակ տալիս գիմնազիական լիարժեք ուսում՝ բարձրագույն ուսումնական Հաստատություն ընդունվելու համար: Երկու ուղղությունները համատեղելը լուրջ դժվարություններ էր հարուցում, տուժում էր մեկը կամ մյուսը:

1837 թ. երկրորդ կարգ ստանալուց մինչև 1848 թ. ինստիտուտում գերակշռում էր մասնագիտական ուսուցումը: Գիմնազիական կրթության ընդհանուր ծրագիրը կորցնում էր իր լիարժեք ու ամբողջական բնույթը, հարմարեցվում ուսանողների տարբեր խմբերի մասնագիտական պահանջներին: Հոգևոր բաժինը այլ թեքում ուներ, առևտրա-

¹⁵ Տե՛ս նույն տեղում, վավ. 24:

կան գործունենութեան մեջ մասնագիտացող աշակերտները՝ միանգամայն այլ: Մասնագիտական այդ թեքումներին ընթացք տալով՝ ինստիտուտը չէր կարողանում բավարարել գիմնազիականի ծրագրով նախատեսված անհրաժեշտ դիտելիքներ հաղորդելու և դրա հետ մեկտեղ համապատասխան լեզուներ սովորեցնելու պահանջը:

1844 թ. վախճանվեց Ա.Բենկենդորֆը: Լազարյանների խնդրանքով 1844 թ. հոկտեմբերի 12-ին ինստիտուտի գլխավոր պետ նշանակվեց կոմս Ալեքսեյ Օրլովը: Վերջինս, հիմք դարձնելով Կովկասի կոմիտեի հայտնած կարծիքը, հոգաբարձութեանը հայտնում է, որ ինստիտուտը կարիք ունի արմատական բարեփոխման: Միաժամանակ տեղեկացնում է, որ վերափոխումները հարկ է այնպես իրականացնել, որ արևելյան լեզուների ուսուցումը և գիմնազիական կրթութեանը կազմակերպվեն կառավարութեան սահմանած պահանջներին համապատասխան¹⁶: Ա.Օրլովը Կովկասի կոմիտեին հանձնարարում է մշակել ինստիտուտի բարեփոխումների ծրագիր: Կոմիտեի կառավարիչ Վ.Բուտկովը, խորհրդակցելով Լազարյանների, ինչպես և ինստիտուտի գլխավոր պետի հետ, ներկայացնում է բարեփոխումների իր տարբերակը: Կայսեր կողմից 1848 թ. մայիսի 10-ին հաստատված այդ ծրագրի համաձայն՝ Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը հավասարեցվում է առաջին կարգի լիցեյներին: Նրան տրվում է Դեմիդովի, Բեզբորոդկոյի, Ռիշելյեի լիցեյների կարգավիճակ: Վեցամյա ուսուցումը դարձվում է ութամյա: Ավելացվում են 7-րդ և 8-րդ հատուկ լիցեյական ուսման դասարանները¹⁷: Ինստիտուտի ամբողջ գործավարութեանը ուստիականական վարչութեանը

¹⁶ Ст'ю А.Хаханов, Тридцатилетие специальных классов Лазаревского института восточных языков, Москва, 1903, т. IV:

¹⁷ Ст'ю Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ, 119, գ. 56, վավ. 94, ք. 157-159:

նից, որն առնչվում էր նախկին գլխավոր պետ Ա.Բենկենդորֆի պաշտոնավարման հետ, վերապահվում է Կովկասի կոմիտեի գրասենյակին: Հաստատված նոր հաստիքներով ինստիտուտի ղեկավարման նախկին համակարգը պահպանվում է:

Այդ նույն ժամանակ ռազմական նախարար Ա.Ջերնիչևը արդարադատության նախարար Վ.Պանինին հաղորդում է Լազարյան ինստիտուտին առնչվող մի բարեգործության մասին: Թիֆլիսի քաղաքացի Հովհաննես Մնացականովը, առաջնորդվելով բարեգործական մղումներով, 52500 ռուբլի մշտական գումար է տրամադրել խնամակալական խորհրդին, որպեսզի այդ գումարի տոկոսներով Անդրկովկասի երկրամասի հայկական աղքատ ընտանիքներից երկու երեխա կրթություն ստանան Լազարյան ինստիտուտում: Կայսրը որոշում է Հ.Մնացականովի բարեգործությունն ընդունել և շնորհակալություն հայտնել նրան: Այդ մասին 1849 թ. հրապարակվում է կառավարիչ սենատի հրամանը¹⁸: Ավելորդ չէ նշել, որ Հ.Մնացականովից բացի պատանիների կրթությամբ մտահոգ շատ հայեր՝ Ս.Գասպարյանը, Ք.Արղության-Երկայնաբազուկը, Հ.Դելյանովը, Խ.Լազարյանը, Եգոր Թամամչևը, Հովհաննես Ամիրովը, Մոսկվայի հայ համայնքը, Սարգիս Զալալյանը և ուրիշներ, իրենց անձնական միջոցներով սաներ էին պահում Լազարյան ինստիտուտում:

1850 թ. ընդհատվեց Լազարյան տոհմի արական գծով ժառանգորդությունը. մահացավ Խ.Լազարյանի փոքրահասակ (7 տարեկան) Հովհաննեսը: Նրա ծնողները՝ Խ.Լազարյանը և Մանուկ Բեյի դուստր Եկատերինան, նաև հորեղբայր Հովհաննեսը, ի հիշատակ Լազարյանների վերջին ժառանգի, 60 հազար ռուբլի արծաթ գումար նվիրաբերեցին ճեմարանում աղքատ հայ ընտանիքների 14 երեխա-

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

ների համար նախապատրաստական բաժին բացելու համար: Այդպիսի բաժին բացելը հույժ կարևոր էր տարբեր գավառներում ապրող, լեզու չիմացող ունեզուրկ երեխանե-



Վաղամեղիկ Հովհաննես Լազարյան

խնամազուրկ երեխաների համար: Կայսրը միաժամանակ շնորհակալություն է հայտնում Լազարյան եղբայրների նման բարեգործություն կատարելու համար¹⁹: Լազարյանները մշտապես մտահոգվել են ինստիտուտը եկամուտներով ապահովելու հարցով: Հիշատակենք միայն մեկ փաստ. նրանք 1853 թ. Մոսկվայի իրենց բնակելի շենքը ծավալուն հողամասով նվիրեցին ինստիտուտին²⁰:

1858 թ. մահանում է ինստիտուտի հոգաբարձու Հովհաննես Լազարյանը: Նրան փոխարինում է կրտսեր եղբայրը՝ Խաչատուրը, որը մինչ այդ էլ որպես տնօրեն և հոգաբարձուի տեղակալ, գործուն մասնակցություն էր ունենում ինստիտուտի կյանքին: 1860 թ. Ա.Օրլովին գլխավոր

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 159–160:

²⁰ Տե՛ս А.Зиновьев, Գշվ. աշխ., էջ 66:

պետի պաշտոնում փոխարինում է Ալեքսանդր II-ի բարեփոխումների ակտիվ մասնակից Վլադիմիր Բուտկովը:



Հովհաննես Հ. Լազարյան



Խաչատուր Հ. Լազարյան

Նորանշանակ պետը ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ կայսեր հրամանագրով կյանք մտած դպրոցական նոր կանոնադրությունը բոլոր գիմնազիաների շրջանավարտներին թույլատրում էր առանց քննությունների ընդունվել համալսարան, որից չէին օգտվում Լազարյան ինստիտուտի շրջանավարտները: Այդ կարգը ինստիտուտի վրա տարածելու նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով (Մ.Էմին, Ս.Նազարյանց, Գ.Քանանյան, Ն.Տիխոնրավով): Հանձնաժողովն այնպիսի փոփոխություններ է մտցնում դասավանդվող առարկաների ծրագրերի մեջ, որ ճեմարանը լիովին բավարարի լրիվ միջնակարգ կրթությունն ապահովելու պահանջները: Հանձնաժողովը մեկը մյուսից որոշակիորեն սահմանազատում է գիմնազիական և լիցեյական ուսուցումը, որպեսզի իրար չխանդարեն: Միաժամանակ արևելյան լեզուների ուսումնասիրությունը դրվում է ամուր հիմքերի վրա, իսկ լեզուների ուսուցման երկու տարին դարձվում է երեք տարի:

Այդ բարեփոխումների իրականացումը պահանջում էր լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնց աղբյուրը չէր գտնվում: Խ.Լազարյանը ինստիտուտը հանում է ստեղծված դժվարին դրութիւնից՝ իր անձնական միջոցներից նվիրաբերելով 200 հազար ռուբլի: Նրա այդ քայլը մեծ տպավորութիւն է գործում բոլորի վրա: Ալեքսանդր II կայսրը նրան պարգևատրում է Սպիտակ առյուծի շքանշանով²¹: Այդ բարեփոխումները սկսում են կիրառել 1865 թ., որոնք մեծապես նպաստում են ինստիտուտի բարգաւաճմանը: Ինստիտուտ են ընդունվում լավորակ սաներ, աճում է աշակերտների թվաքանակը: Եվ դա հասկանալի է: Շրջանավարտներին առաջին հերթին հետաքրքրում էր բարձրագույն կրթութիւնն ստանալու հարցը, ինչը մինչ այդ հնարավոր չէր:

1867 թ. ապրիլի 26-ին ինստիտուտ է այցելում Ալեքսանդր II կայսրը թագաժառանգ Ալեքսանդրի հետ: Այցելութիւնը դիտվում էր որպես ինստիտուտի 50-ամյա գործունեութիւն արժևորման խորհրդանիշ և միաժամանակ գրավական հետագա լավագույն արդիւնքների: Հոգաբարձու Խ.Լազարյանը բուժման նպատակով մեկնել էր Եվրոպա: Տեղեկանալով ինստիտուտին վերապահված պատվի՝ կայսեր այցելութիւն մասին, նա այդ իրադարձութիւնը նշանավորում է բարեգործութիւնը՝ 10 հազար ռուբլի նվիրաբերելով ինստիտուտում ռուս աղքատ ազնվականների, չինովնիկների երեխաներին երկու հատուկ թոշակ նշանակելու համար:

Այդ նույն ժամանակ գլխավոր պետ Վ.Բուտկովը ներկայացնում է ճեմարանը վերափոխելու հետևյալ նախագիծը: Լազարյաններից վերջինի՝ Խ.Լազարյանի մահից հետո ինստիտուտը թողնել նույն կարգավիճակում, սակայն

²¹ Տե՛ս Յ.Թադէոսեան, Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վիեննա, 1953, էջ 387-389:

դնել լուսավորության նախարարության ենթակայության ներքո: Հոգաբարձուի պաշտոնը դարձնել պատվավոր, բայց պահպանել «Լազարյան» անվանումը: Պահպանել նաև չքավոր հայ երեխաների համար սահմանված կարգը: Ինստիտուտում մտցնել դասական գիմնազիայի լրիվ դասընթաց²²: Մշակված բարեփոխումների նախագիծն իրականացնելու պարագայում ճեմարանը հեռանում էր արևելյան լեզուներ ուսուցանելու իր առաքելությունից և վերածվում մոսկովյան սովորական գիմնազիայի:

Բնականաբար, Խ.Լազարյանը հավանություն չտվեց առաջարկվող փոփոխություններին: Նրա հանձնարարությունում մշակվեց նախագիծ Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների Հոգաբարձուի պաշտոնի միանձնյա տնօրինումը, որ վերապահված էր Լազարյաններին, կոլեկտիվ ղեկավարությունում փոխարինելու վերաբերյալ: Նրան հատկապես մտահոգում էր ճեմարանի ապագայի հարցը: Ծերությունն ու հիվանդությունը ավելի մտահոգ ու անհանգիստ էին դարձրել նրան: Առաջարկություն էր արվել ճեմարանը տեղափոխել Կովկաս: Կաթողիկոս Գևորգ Դ-ն ցանկություն էր հայտնել Խ.Լազարյանի մահից հետո ինստիտուտը դնել իր բարձրագույն իշխանություն ու հովանավորության ներքո: Արվող առաջարկներից ոչ մեկին հոգաբարձուն հավանություն չէր տալիս:

Այդ ծանր շրջանում, երբ տակավին չէր գործադրված գլխավոր պետի մշակած նախագիծը, հոգաբարձուն տնօրենի պաշտոնից ազատում է Բաբստին, որ առաջարկված նախագծի ջատագովն էր, և նրա փոխարեն 1869 թ. նշանակում է իր փեսային՝ Հովհաննես Դավիդի Դելյանովին²³:

²² Տե՛ս А.Хаханов, ԳՂՎ. աշխ., էջ VII–IX:

²³ Տե՛ս Г.И.Кананов, ԳՂՎ. աշխ., էջ 38–41:

Հ. Դելյանովն աշխատել էր որպէս տեսուչ և լավ ծանոթ էր ինստիտուտին, լուսավորութեան փոխնախարար էր



Հովհաննէս Դելյանով

և ճանաչված էր գործիմացութեամբ, բարի ու կիրթ վարքագծով: Տեսուչի պաշտոնը վերապահվում է Գ. Քանանյանին (Քանանով): Անտարակույս, հենց Հ. Դելյանովի խորհրդով, որը լավ էր ճանաչում նախարարին, Խ. Լազարյանը դիմում է անսպասելի ու վճռական քայլի: Ինստիտուտի գլխավոր պետի պաշտոնում հրավիրում է լուսավորութեան նախարար կոմս Դմիտրի Տոլստոյին, որոշում ճեմարանը դնել լուսավորութեան նա-

խարարութեան ենթակայութեան տակ: Դ. Տոլստոյը 1870 թ. մայիսից ստանձնում է գլխավոր պետի պաշտոնը: Նա Պետերբուրգ է հրավիրում տեսուչ Գ. Քանանյանին և լսում ճեմարանի մասին նրա զեկուցումը: Ապա գալիս է Մոսկվա, երկու օրվա ընթացքում հանգամանորեն ծանոթանում ճեմարանի պատմութեանը, նրա գործունեութեան բոլոր կողմերին: Նախարարի նախաձեռնութեամբ դասախոսների, վարչակազմի մասնակցութեամբ հրավիրված խորհրդի նիստում քննարկվում են լուծման կարոտ բոլոր հարցերը:

Նախարարը կրթութեան, առհասարակ հասարակական երևույթների մասին ուներ իր հաստատուն սկզբունքները: Ճեմարանի 70-ամյա հոբելյանի առթիվ նա հետևյալ միտքն է արտահայտում. «Հաստատուն են միայն այն բարեփոխումները, որոնք իրենց հիմքում ունեն պատմական հող,

որոնք, չկտրելով կապերն անցյալի հետ և պահպանելով նրանում եղած ամեն լավը, չեն ոչնչացնում այն, այլ զարգացնում ու կատարելագործում են ժամանակի ոգուն և հասարակութայն պահանջներին համապատասխան»²⁴: ԴՏՈՍ-տոյը այդ տեսանկյունով էր մոտենում ճեմարանում կատարելիք բարեփոխումներին: Նա գտնում էր, որ ուսումնարանը, փաստորեն, բաղկացած է իրար հետ կապ չունեցող երկու ուղղություններից: Մեկը գիմնազիան էր, որտեղ սովորում են 10–17 տարեկան տղաները, մյուսը՝ արևելյան լեզուների բարձրագույն դասընթացը: Գիմնազիայի դասարաններում աշակերտները պարտավոր էին տիրապետել արևելյան մի լեզվի, որն իրականացվում էր գիմնազիական ուսուցման մյուս առարկաների հաշվին: Դրա հետևանքով նրանք, ավարտելով ուսումնարանը, ընդհանուր կրթութայն լավ պատրաստվածություն չէին ունենում, ինչպես նաև չէին հասցնում լավ տիրապետել ընտրած արևելյան լեզվին: Այդ ամենը նկատի առնելով՝ նոր ծրագրում խստորեն պահանջվեց գիմնազիայի ծրագրի ընդհանուր դասընթացի լիիրավ ուսուցումը: Նախարարի հանձնարարութայն արևելյան լեզուների ուսուցմանը հատկացվեց ոչ թե երկու, այլ երեք տարի՝ վերականգնելով նախկինը: Այդ փոփոխությունը կատարվեց այն նպատակով, որ լեզուների ուսուցումը հավասարեցվի համալսարանական մակարդակին:

Արևելագիտական դասընթացը բաղկացած էր լինելու հետևյալ առարկաներից՝ հայերեն, վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, թաթարերեն, արաբերեն, Արևելքի պատմություն և հնագրություն: Ավելացվում է նաև ռուսերենը, քանի որ Արևելքից եկած պատանիները թույլ էին լինում այդ լեզվից:

²⁴ А.Хаханов, 62վ. աշխ., էջ XIII:

Բարձրորակ մասնագետներից կազմված Հանձնաժողովի մշակած ծրագիրը հավանության է արժանանում նախարարի, Կովկասի կոմիտեի կողմից: 1872 թ. դեկտեմբերի 16-ին այն հաստատվում է բարձրագույն հրամանով, և մինչև վերջ՝ 1918 թ., ինստիտուտն առաջնորդվում է դրանով²⁵: 1872 թ. Դ.Տոլստոյը հրաժարվում է գլխավոր պետի պաշտոնից, քանի որ ինստիտուտի լուսավորության նախարարության ենթակայության տակ անցնելով՝ վերացվում է այդ պաշտոնը:

1871 թ. վախճանվում է Լազարյան նշանավոր տոհմի վերջին ներկայացուցիչը՝ ինչատուր Լազարյանը: Վիթխարի էր նրա ներդրումը Հայ Համայնքի, մասնավորապես Լազարյան ճեմարանի պահպանման ու զարգացման գործում: Ռուսաստանում ապրող Հայերը, խոր հարգանք տածելով Լազարյան գերդաստանի նկատմամբ, որը մեծ նվիրատվություն էր կատարել Հօգուտ Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների ու Լազարյան ճեմարանի հիմնադրման ու պահպանման, իրենց ներկայացուցիչներ Գալուստովի, Նազարյանցի, Ստեփանովի, Սկարբեկովի միջոցով դիմում են Մոսկվայի գեներալ-նահանգապետին: Նրանք խնդրում են թույլատրել հրապարակավ երախտագիտություն հայտնել Հոգաբարձու ին.Լազարյանին և նրա միջոցով բոլոր Լազարյաններին, ռուսահայերի շրջանում հանգանակություն կազմակերպել և հավաքված գումարով Լազարյան ինստիտուտում դնել ին.Լազարյանի կիսանդրին և նշանակել նրա անվամբ թոշակ²⁶: Հայ Համայնքի միահամուռ ցանկությամբ ին.Լազարյանի մահից հետո հանգանակած գումարով քանդակվում և ինստիտուտի դահլիճում դրվում է նրա մարմարե կիսանդրին: Լազարյան տոհմի շարունակականությունն այդուհետ պահպանվում է նրա փեսայի՝ Սիմեոն Աբամելի-

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ XI–XII:

²⁶ Տե՛ս Русский инвалид, 10 июня, 1868:

քի և Լազարյան գերդաստանների միավորումով, որն անվանվում էր Աբամելիք-Լազարյան²⁷:

Այդ գերդաստանի նահապետը՝ Հովհաննես Սիմեոնի Աբամելիքը, Ռուսաստան էր եկել Պավել I կայսեր օրոք: Նրանք ևս Ռուսաստանում առաջադիմած հայ առևտրաարդյունաբերական նշանավոր գերդաստաններից էին: Նրանց նույնպես շնորհվել էր ազնվականական տիտղոս:

Լազարյան ինստիտուտը շարունակում էր գրավել երկրի և արտասահմանյան նշանավոր գործիչների ուշագրուլթյունը: 1873 թ. մայիսի 8-ին ինստիտուտ է այցելում Իրանի շահը՝ Նասր-էդդինը՝ Մոսկվայի գեներալ-նահանգապետ Վ. Դոլգորուկովի ուղեկցությամբ, իսկ 1876 թ. սեպտեմբերի 2-ին՝ Բրազիլիայի կայսրը՝ Դոն-Պեդրոն՝ լուսավորության նախարար Դ.Տոլստոյի ուղեկցությամբ: Հարկ է նշել, որ վերջինս գլխավոր պետի պաշտոնը վերացնելուց հետո էլ մշտապես հետաքրքրվում էր ճեմարանի կյանքով: Ինստիտուտի վիճակով իր այցելության ժամանակ մանրակրկիտ կերպով հետաքրքրվում է նաև կոմս Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովը²⁸:

Հ. Դելյանովը 1881 թ. թողնում է վերատեսչի կամ տնօրենի պաշտոնը: Նա նշանակվում է լուսավորության նախարար: Նրան փոխարինում է մինչ այդ տեսուչ աշխատող Գևորգ Քանանյանը, որը մեծ նվիրումով աշխույժ գործունեություն է ծավալում և այդ պաշտոնը վարում

²⁷ Արական սեռի ժառանգ չունենալով՝ Խ.Լազարյանը որպես իր հաջորդ էր տեսնում երկու դուստրերի ամուսիններին՝ փեսաներին: Տակավիճ 1863 թ. նա Մատթեոս Ա կաթողիկոսին հայտնել էր, որ արուզավակ չունենալու պատճառով խնդրում է իրենից հետո հայկական եկեղեցիների և Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի հոգաբարձու ճանաչել կայսեր կողմից ճանաչում ունեցող իր փեսաներին՝ Հովհաննես Դելյանովին և իշխան Սիմեոն Աբամելիքին (տե՛ս Մատեմադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 197, վավ. 18ա):

²⁸ Տե՛ս Գ.И.Кананов, Գշվ. աշխ., էջ 48-49:

մինչև իր մահը՝ 1897 թ.: Ապա վերատեսուչ է նշանակվում Մոսկվայի Համալսարանի ճանաչված գիտնական ակադեմիկոս Վսեվոլոդ Միլլերը: Վերջինս ևս մեծ հմտությամբ



Գևորգ Զանանյան

ու բարձր պատասխանատվությամբ էր վարում ճեմարանի գործերը: Վ.Միլլերին փոխարինում է Պավել Գիդուլյանովը, իսկ որպես տեսուչ՝ 1911 թ. հրավիրվում է Հայագետ Կարապետ Կոստանյանը:

Լազարյան ինստիտուտը կահավորված էր ուսումնական գործընթացներին անհրաժեշտ պարագաներով: Ուներ երկրաբանության, ֆիզիկայի և այլ կարիներտներ, հիվանդանոց, սպորտային դահլիճ, որը սեփական միջոցներով կառուցել էր Մանուկ

Բեյը: Եվ որ առավել կարևոր է, ինստիտուտի ղեկավարութիւնը հենց սկզբից՝ հիմնադրման շրջանից, նախանձախնդիր է եղել և բոլոր միջոցներն օգտագործել ուսումնարանը լավագույն մանկավարժներով ապահովելու հարցում: Նրանց որոշ մասը համալրվել է անգամ Մոսկվայի Համալսարանի դասախոսական կազմից: Ճեմարանում բեղմնավոր դասախոսական աշխատանք են կատարել ճանաչված նշանավոր շատ մանկավարժներ: Հայոց լեզվի առաջին վաստակաշատ մանկավարժներից էին Միքայել Սալլանթյանցը, Հարութիւն Ալամդարյանը: Ապա տարբեր տարիներին իրենց լուրջ ներդրումն են ունեցել գերմաներենի և ֆրանսերենի մասնագետ պրոֆ. Կրաուզեն, պրոֆ. Իվան Դավիդովը, Պյոտր Ռիմանը, Ֆյոդոր Մորոշկինը, Ա.Ջինովկը, Մ.Էմինը, Ս.Ջելենոյը, Մ.Մսերյանցը, Ս.Նազարյանցը,

Ս.Շահազիզյանցը, Գ.Խալաթյանը, Գ.Քանանյանը, Վ.Միլլերը, Կ.Կոստանյանը և շատ ուրիշներ: Խորհուրդը, որը մշտապես էական դերակատարություն ունեւր ինստիտուտի կյանքում, բաղկացած էր շուրջ 10 հոգուց: Նրա կազմի մեջ, բացի տնօրինությունից ու դասախոսներից, մտնում էին նաև Մոսկվա ժամանած հիմնականում հայազգի ճանաչված անձնավորություններ, որոնք անմիջականորեն կապ չունեին ինստիտուտի հետ: Խորհրդի կազմում XIX դ. առաջին կեսին տարբեր տարիների ընդգրկված են եղել գեներալ Պ.Մելիքովը, Եսայի և Հակոբ Բաղդադով եղբայրները, նվիրաբերություն կատարած վաճառական Ս.Գասպարովը, Հովհաննես Օնանովը, Հովհաննես և Նիկիտա Ասկարխանովները և ուրիշներ: Հայ աղքատ ընտանիքների երեխաներն ու որբերը և հոգևոր բաժնի սաները սովորում էին առանց ուսման վարձ վճարելու: Մյուսները վճարում էին լրիվ՝ 300 ռուբլի, կամ զեղչված՝ կես գումարի չափով:

Հարկ է նշել, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայկական լուսավորական հաստատությունների, մասնավորապես դպրոցների նկատմամբ ցարական կառավարության հետադիմական, ազգահալած ձեռնարկումներից Լազարյան ինստիտուտը՝ որպես հատուկ կրթօջախ, դուրս էր թողնվում կամ չնչին չափով էր դրանց ենթարկվում: Օրինակ՝ 1887 թ. ժողովրդական լուսավորության նախարարության կարգադրումով փակվեցին բոլոր գիմնազիաների նախապատրաստական բաժինները, բայց Լազարյան ինստիտուտին բացառություն արվեց, և կարևոր այդ բաժինը պահպանվեց²⁹: 1903 թ. հայոց եկեղեցու գույքի պետականացման մասին որոշումը չկիրառվեց Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների նկատմամբ:

²⁹ Տե՛ս Մշակ, 1887, 98: Ըստ հավանական է, որ այդ հարցում դրական միջամտություն կատարած լինի ճեմարանն իրեն շատ հոգեհարազատ համարող լուսավորության նախարար Հովհաննես Դեյլանովը:

Սակայն պարբերաբար Լազարյան ինստիտուտում ևս ազգայինը երկրորդական, լուսանցքային դարձնելու փորձեր էին կատարվում, որին ընդդիմանում էին մայրաքաղաքների հայ հասարակայնության լայն շերտերը: Եվ դա լայն արձագանք էր գտնում հայկական մամուլում: Այսպես՝ ճեմարանի տնօրինութունը վերադաս ատյաններից 1910 թ. հրահանգ է ստանում պաշտոնական գրագրութունը միայն ուսուցիչներով կատարելու, ուսուցիչների ներկայությամբ միայն ուսուցիչներով խոսելու, գրադարանը կասկածելի գրականութունից մաքրելու, եկեղեցիներում նախ ուսուցիչներով, ապա նոր միայն հայերենով աղոթելու վերաբերյալ: Այդ առիթով «Մշակ» թերթի թղթակիցը, արտահայտելով մայրաքաղաքների հայ համայնքների վերաբերմունքը ինստիտուտի նկատմամբ, գրում է. «Թէև ծրագիրը համապատասխանում է ուսական գիմնադիական ծրագրին, բայց հայոց լեզուն, հայոց պատմութիւնը, Հայաստանի աշխարհագրութիւնը և հայ մատենագրութիւնը բռնում են ծրագրի մէջ պատւաւոր տեղ, և մինչև ծրագրի դասարանը, նոյնիսկ ճեմարանի լսարաններում, անցնում են յիշեալ առարկաները ըստ ծրագրի այն չափով, ինչ չափով որ անցնում են Գէորգեան ճեմարանը և մասամբ թեմական դպրոցները: Այդպէս է եղել հիմադիր Լազարեանի և յետնորդների կտակը, յանձնելով իրենց ամբողջ կարողութիւնը Լազարեան ճեմարանին, նրա պահպանութեան ու ապահովութեան համար, ուր մոտաւորապէս 300 հոգու չափ հայ մանուկներ ձրի ստանում են ուսում Լազարեանների հաշուով», և ապա՝ «նմանապէս անհասկանալի է և այն կարգադրութիւնը, որ աշակերտները խօսեն անպատճառ ուսուցիչներ լեզուով, ...որոնք դեռ հաստատուն կերպով չեն էլ տիրապետում ուսաց լեզուին – անբնական է»³⁰: Այդ ամենը համարելով

³⁰ Նույն տեղում, 1910, 223:

1905 թ. հեղափոխութիւնից հետո սկսված ռեակցիայի հետևանք մերժվում է:

Լազարյանների ճկուն քաղաքականութեան, պետական և ազգային շահերը հմտորեն զուգակցելու, ավելի ճիշտ միատեղելու շնորհիվ ճեմարանը ժամանակի պահանջների ոգով մշտապես բարեփոխվել, բարգավաճել է: Հայ երեխաներին ուսում տալը, նրանց մայրենի լեզվի ու հայ դավանանքի վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ հաղորդելը, ասել է թե կրոնաբարոյական դաստիարակութիւնն ու մտավոր կրթութիւնն տալը եղել է Լազարյանների հիմնական նպատակը: Ճեմարանի տնօրինութիւնը հատուկ հոգ էր տանում, բոլոր պայմանները ստեղծում, որ Հայաստանի հեռավոր գավառներից, խավարի մեջ ընկղմված գյուղերից մանուկները հասնեն Մոսկվա, սովորեն, կրթվեն: Եվ նրանց հաջողվեց երազանքի հասնող իրենց այդ ցանկութիւնը իրականացնել:

Լազարյան ճեմարանը միաժամանակ դեպի հարավարևելք ծավալվող Ռուսական կայսրութեան համար արևելյան լեզուներին հիմնավոր տիրապետող մասնագետներ էր պատրաստում: Նրա շրջանավարտները ծառայութեան էին անցնում կայսրութեան տարբեր նախարարութիւններում, Կովկասում, Միջին Ասիայում, Պարսկաստանում և արևելյան այլևայլ երկրներում: Նրանք, կրթութիւնն ստանալով ու դաստիարակվելով ռուսական միջավայրում, դառնում էին ռուսական ոգու, ռուսական քաղաքակրթութեան կրողներ: Այդ եղանակով Լազարյաններն իրենց ծառայութիւններն էին մատուցում Ռուսաստանի կառավարութեանը:

Լազարյանների հետևողական ջանքերի և պետական աջակցութեան շնորհիվ Լազարյան ինստիտուտը դարձել էր կայսրութեան լավագույն ուսումնական հաստատութիւններից մեկը: Այն արժանանում էր երկրի և անգամ արտասահմանյան անվանի շատ գործիչների ուշադրութեանն ու դրվատանքին: Ամենաբարձր հարյուրավոր պաշտոնյաներ

Ռուսաստանի կայսրերը, բազմաթիվ նախարարներ, արտերկրի նշանավոր ներկայացուցիչներ, ինչպես նշվեց, այցելել են Լազարյան ճեմարան և իրենց բարձր կարծիքն ու գոհունակութիւնն արտահայտել կրթօջախի մասին: Բերված փաստերին հավելենք ևս մի քանիսը: 1889 թ. Պարսկաստանի պետական խորհրդի նախագահը, լուսավորութեան նախարարը, մշակույթի նախարար հայազգի Ջհանգիր խանը, երկրի հեռագրատան տնօրեն Կարապետ Բաղիրկյանն այցելում են ճեմարան: Նրանց ընդունում, ուսումնարանին ծանոթացնում է վերատեսուչ Գ.Քանանյանը: Երկար մեջբերում ենք կատարում, որովհետև այցելութեան առիթով բավականաչափ հանգամանալի տրվում է ճեմարանի նկարագրութիւնը:

«Հանքաքանական կարիներում, որ դարդարուած է Կ. Ալէքսանդր II-ի և Հայոց կաթողիկոսների պատկերներով, — գրում է հանդիպման մասնակից Մ.Շովրյանը, — հիւրերը զննեցին մեծ ուշադրութեամբ զանազան քարեր և ապա անցնելով Ալէքսանդր III կայսեր մեծադիր պատկերի առաջից, դարձեալ մտան մատենադարան: Այստեղ պ. վերատեսուչը և գրապահը հիւրերի ուշադրութիւնը հրաւիրեցին հին հայոց ձեռագիրների վրայ, որոնց հնագոյնը, որ մի երկաթագիր աւետարան է, պատկանում է IX դարուն. դորանից հին ձեռագիր մինչև այժմ չէ յայտնվել ոչ էջմիածնում, ոչ սուրբ Յակոբայ վանքում Երուսաղէմի, ոչ Վենետիկում, ոչ Փարիզի թագաւորական մատենադարանում... Շարունակելով ճեմարանի զննութիւնը, հիւրերը բարձրացան երրորդ յարկը, ուր ղետեղուած են աշակերտների ննջարանները, այնտեղից իջան մանկական դահլիճ, ուր շարուած էին բոլոր աշակերտները, որոնց մեծագոյն մասն միշտ եղել են և են հայոց զաւակներ: Հայոց մանուկների այս ստուար բազմութիւնը հայրենիքից դուրս, հեռու հիւսիսում, մեծ գոհունակութիւն պատճառեց մանաւանդ՝ պարսից հայագն պաշտօնէից, որոնցից մէկը սոյն տողերը դրո-

դին ասաց. «Երանի այս հայ զաւակներին, որոնց վիճակված է ուսում և կրթութիւն ստանալ Լազարեանի հռչակաւոր ճեմարանում: Պարսկաստանում, շարունակեց պարոնը, մենք ունինք երկու բարձրաստիճան պաշտօնեայք՝ Սարգսեան և Դաւթեան, որոնք աւարտած են ձեր ճեմարանում, հնարաւոր է արդեօք մեզանից աշակերտ ուղարկել Լազարեան ճեմարան»³¹: Հյուրերը, տեսածներից և լսածներից խորապես տպավորված, իրենց գոհունակութիւնն են հայտնում և թողնում կրթօջախը:

1904 թ. ճեմարան է այցելում Ռուսաստանի լուսավորութեան նախարար գեներալ-լեյտենանտ Վ. Գլազովը և իր գոհունակութիւնն է արտահայտում ուսումնարանի մասին³²:

Տակավին ճեմարանի հիմնադրման տարիներին նրա առաքելութեանը՝ որպէս ժամանակի լուսավորական կարևոր ձեռնարկում, այնպիսի մեծ նշանակութիւն էր տրվում, որ դրան արձագանքում էր ռուսական մամուլը: «Московские ведомости» պարբերականը ուսումնարանի երևան գալը համեմատում է Գոլիցինների, Շերեմետևների, Դեմիդովների հասարակական նշանակութիւն ունեցող բարեգործական ձեռնարկումների հետ³³:

Լազարեան ճեմարանում ուսումնական գործընթացը պատշաճ ձևով կազմակերպելը, դասախոսութիւնների բարձր մակարդակը և ընդհանուր մթնոլորտը այնպիսի ներգործութիւն էին ունենում սաների վրա, որ նրանք երախտագիտութեան բարձր զգացումով էին մշտապես հիշում իրենց կրթօջախը: 1890 թ. ճեմարանի 75-ամյա հոբելյանի առիթով Նոր Նախիջևանից 18 շրջանավարտներ, որոնց թվում է. Շահազիզը, Գ. Զալխուշյանը, Գ. Շլդյանը,

³¹ Արձագանք, 1889, 19:

³² Տէս Մշակ, 1905, 12:

³³ Տէս Московские ведомости, 1817, 17:

Գ.Տիգրանյանը և ճանաչված այլ անձինք խոր երախտագիտության խոսքն են ուղղում ուսումնարանին: «Նոր օր, նոր արև էր բացուել, – գրում են նրանք ուղերձում, – ժամանակը փոխուել էր, նոր պահանջ[ներ] էին առաջ եկել: Լազարեան ճեմարանը կոչուած էր ահա այդ պահանջներին բաւականութիւն տալու: Ուրախութեան զանգակի պէս Հնչեցին Հայերի ականջին 1815–1816 թուականները, դա մի հրաւէրք էր դէպի վերածնութիւն, դէպի նոր կեանք... Նա այսօր կանգնած է ինչպէս մի յաղթական այր և հրաւիրում է իւրայիններին իւր յաղթութեանը մասնակից լինելու: Ոգևորուած ճեմարանի տուած արդիւնքների բեղմնաւորութեամբ, այսօր մենք նորա սաներս, մենք, որ մեր վերայ ենք զգացել նորա ծնողական խնամքն ու գուրգուրանքը... մենք այսօր խոնարհ յարգանքով ծունկ ենք իջեցնում Հիմնադիրների պատկառելի շիրիմների առաջ...»³⁴:

Ճեմարանն այնպիսի ճանաչման էր արժանացել, որ անգամ ոուս ազնվականության ներկայացուցիչներն էին իրենց զավակներին այնտեղ ուղարկում սովորելու:

Այսպիսով, Ռուսաստանի կենտրոնում ուսումնական նշանավոր Հաստատություն Հիմնադրելը լայն արձագանք գտավ ոչ միայն կայսրության տարածքում, այլ նաև Արևմտյան Հայաստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում բնակվող հայության շրջանում: Ուսումնական գործընթացի հմուտ կազմակերպման, ճեմարանի հեղինակության բարձրացման շնորհիվ նա կարճ ժամանակում ճանաչվեց որպես հայկական կենտրոնական բարձրակ ուսումնական Հաստատություն: Տարբեր երկրների հայաբնակ վայրերից մեծ ձգտում կար իրենց զավակներին Լազարյան ճեմարան ուղարկելու, որպեսզի ստանան Հիմնավոր կրթություն: Ինստիտուտի տնօրինությունը, Լա-

³⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 120, գ. 117, վավ. 188:

զարյանները ավելի քան մեկ դար ուշադիր հետևում և ամեն ինչ անում էին, որ պահպանեն ճեմարանի կենսունակ գոյատևումը և նաև նպաստեն, որ ճեմարանն անշեղորեն կատարի իրենց մտահղացած ու փայփայած ազգային առաքելությունը:

Լազարյան ճեմարանին վիճակված էր ուսումնակրթական բեղուն գործունեությունը շարունակել մինչև XX դ. երկրորդ տասնամյակի վերջերը, մինչև արմատական հեղաբեկումների ժամանակաշրջանը: ՌՍՖՍՀ լուսավորության և հայկական գործերի կոմիսարիատների 1918 թ. հունիսի 22-ի համատեղ որոշմամբ Պողոս Մակինցյանը նշանակվեց ճեմարանի կոմիսար: Նրա վրա դրվեց ուսումնարանի կառավարման գործը: Հունիսի 28-ին լուսժողկոմատը վերացրեց ճեմարանի հոգաբարձուի պաշտոնը և նրան առընթեր գոյություն ունեցող հասարակական կոմիտեն, իսկ ճեմարանը վերանվանվեց Մոսկվայի հայկական ինստիտուտ:

Ժողկոմխորհի նախագահ Վ.Լենինի ստորագրությամբ 1919 թ. մարտի 4-ին հատուկ դեկրետ է հրապարակվում Մոսկվայի հայկական ինստիտուտի մասին: Դեկրետում նշվում է, որ հայկական ինստիտուտում դասավանդումը տարվելու է հայերենով, իսկ մի քանի ֆակուլտետներում՝ հայերենով և ռուսերենով: Մինչև ինստիտուտի վերջնական վերակառուցումը նրա ղեկավարումն իրականացնում է հայկական գործերի կոմիսարիատը: Ծեմարանի ամբողջ գույքը տրվում է ինստիտուտին՝ հայկական գործերի կոմիսարիատի ընդհանուր տնօրինությամբ: Ինստիտուտի միջոցներով պահվում և լրացվում են ուսումնարանի հայկական թանգարանը, հիմնարար գրադարանը, հրատարակվում են հայոց պատմության, լեզվի, գրականության նյութերը: Հայկական գործերի կոմիսարիատի կողմից գիտյի որոշմամբ հաստատվում է ինստիտուտի գիտական

խորհրդի հետեւյալ կազմը՝ Վ.Տերյան, Պ.Մակինցյան, Հ.Օրբելի, Ն.Մառ, Կ.Կոստանյան, Ն.Ադոնց և Մսերյան:

Հարկ է նշել, որ Վ.Տերյանը և Պ.Մակինցյանը, ճեմարանի նախկին սաները խնամքով էին վերաբերվում ուսումնարանի հետ կապված հարցերին:

Վայրիվերումների այդ տարիներին դժվար էր կազմակերպել ուսուցումը, մանավանդ սովորողների մի զգալի մասը թողել հեռացել էր, և 1918 թ. վերջերից պարամունքները դադարեցվեցին: Այնուհետև ինստիտուտը՝ բազում անուններ ստացալ (Առաջավոր Ասիայի, Արևելյան կենդանի լեզուների, Արևելագիտության): 1921 թ. հոկտեմբերից Լազարյան ճեմարանի շենքը դարձաւ Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն³⁵:

Դժվար է գերազնահատել ավելի քան մեկ դար անընդմեջ արգասավոր գործունեութիւնը ծավալած Լազարյան ճեմարանի նշանակութիւնը լուսավորութիւնը տարածելու, ուսուս և եվրոպական քաղաքակրթութիւնը հայկական միջավայրում տարածելու, գիտութեան, կրթութեան զարգացման գործում, հայ-ուսուսական համակողմանի հարաբերութիւններում: Լազարյան ճեմարանը տվեց արևելագիտութեան, հայագիտութեան, մանկավարժութեան, հասարակական-քաղաքական բնագավառի լայն ճանաչման արժանացած բազմաթիւ խոշոր մասնագետներ, գործիչներ:

* * *

Մայրաքաղաքների հայ համայնքներում կրթութեան ջահակիրն ու մարմնավորողը, հիրավի, Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտն էր, որը, արդարև, ոչ միայն և ոչ այնքան ծառայում էր մայրաքաղաքների հայութեանը, որքան ամբողջ հայ ժողովրդին: Լազարյան ուսումնարանը

³⁵ Տես Ս.Ալիսանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, էջ 75-78:

դարձավ Հայոց նոր շրջանի գիտակրթական անփոխարինելի հաստատութիւններից մեկը: Իր այդ նշանակութիւնը նա պահպանեց նաև Ներսիսյան դպրոցի (1824 թ.) և Գևորգյան ճեմարանի (1874 թ.) նման նշանավոր ուսումնական հաստատութիւնների հիմնումից հետո: Այնուհանդերձ, այդ ոլորտում Հայկական գաղութների դերը միմիայն Լազարյան ճեմարանով պարփակելը կլիներ միակողմանի մոտեցում: Հայկական երկու Համայնքների ինքնավարութիւնը մարմնավորող, ճեմարանի հետ ամբողջական մի միավոր կազմող եկեղեցական խորհուրդն իրականացնում էր համազգային ուսումնակրթական մեծածավալ գործունեութիւն:

Այդ ոլորտում նրա գործունեութիւնը երկու հիմնական ուղղութիւն ունեւ: Դրանցից մեկը, հարկավ, նույնպես շատ էական, բայց համեմատաբար սահմանափակ ընդգրկում ունեւ: Դա հիմնականում Պետերբուրգի եկեղեցական խորհրդի գործունեութիւնն այն մարզն էր, երբ սատար էր կանգնում Հայաստանի ու Հայաբնակ բնակավայրերի պատանիների՝ Լազարյան ինստիտուտում կրթութիւն ստանալուն: Իսկ որ ավելի գնահատելի է, եկեղեցական խորհուրդն ամեն ջանք գործադրում էր՝ սատար կանգնելու Հայկական գավառներում գործող ուսումնարանների կենսունակութիւնն ապահովելու, նոր դպրոցներ բացելու, ուրիշ խոսքով՝ տեղերում կրթական համակարգի բարելավման գործին: Եկեղեցական խորհրդի ներդրումն առավել գնահատելի է դառնում, երբ նկատի ենք առնում, որ ճեմարանի սովորողների շատ չնչին մասն էր Մոսկվայի և Պետերբուրգի տեղաբնակ Հայերից: Ուսումնարանի սաների կազմը իր մեծագույն մասով համալրվում էր Հայաստանից և հայաբնակ վայրերից եկող պատանիների հաշվին:

Լազարյան ինստիտուտի ավելի քան հարյուրամյա գոյութիւնն ընթացքում մշտապես դիմումներ են եղել ուսումնարան ընդունվելու, որպես թոշակաուու կամ առանց

ուսման վարձ վճարելու սովորելու խնդրանքով: Դիմում-խնդրանքները բազմաքանակ են դառնում հատկապես XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին: Այդ դիմումներից երևում են բնակչութեան սոցիալական դժվարին կացութիւնը և համատարած բնույթ կրող անգրագիտութիւնը: 1911 թ. Վահան Տեր-Առաքելյանը խնդրում է 13 տարեկան Արշավիր Բունիաթյանին ճեմարան ընդունել որպես ձրիավարժ աշակերտ՝ Պետերբուրգի եկեղեցական խորհրդին անհանգստութիւն պատճառելը հիմնավորելով հետևյալ կերպ. «Նախ, մտքի բացարձակ խաւարն ու տգիտութիւնն է թագաւորում իմ հայրենի Շարուր-Դարալագեազ գաւառում, որի աղքատիկ Բաշքեանդ գիւղում ներկայումս ապրում է յիշեալ երեխայի դժբախտ հայրը: Վիճակագրութեամբ կարելի է ապացուցել, որ այդ գաւառի 24 հազար հայերից չկայ մինչև անգամ 8-10 մարդ, որ ստացած լինի գեթ միջնակարգ դպրոցի կրթութիւն: Եվ այդ այն պատճառով, որ գաւառում, բացի պետական երկու դպրոցից, չկան տարրական այլ ուսումնարաններ, իսկ դրսում զաւակներին պահելու, ուսուցանելու մասին երազել անգամ չի կարող գարի հացի կարօտ դարալագեագցին, որ իւր ողորմելի գոյութիւնը քարշ տալու համար ստիպուած է օր ու գիշեր կռիւ մղել անողոք տարերքի և քարքարոտ ու անբերրի բնութեան հետ»³⁶:

Նույն ձևով Լազարյան ճեմարան ընդունվելու համար դիմում են Բորչալուի գավառի Գյառգյառ գյուղի քահանա Տեր-Հովհաննիսյանը իր 9-ամյա զավակի, Թիֆլիսից Բեգլար Տեր-Հովհաննիսյանը իր կրտսեր որդու՝ Հայկի, Ախալքալաքից Երանյակ Տեր-Վարդանյանը իր զավակ Մարտիրոսի, Գրոզնի քաղաքից Աննա Մարգարյանը իր որդի Միքայելի համար³⁷ և այլն, և այլն: Անհատ անձերից

³⁶ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1057, ք. 49:

³⁷ Տե՛ս նույն տեղում, ք. 66, գ. 936, ք. 3, գ. 1056, ք. 64, 254:

բացի՝ համապատասխան միջնորդություններ էին կատարում էջմիածնի սինոդը, բարեգործական և հասարակական այլևայլ կազմակերպություններ: Ճեմարանի տնօրինությունը, ինչպես արդեն նշել ենք, պայմաններ էր ստեղծում և մշտապես հետամուտ էր հայկական գավառներից եկող հայ պատանիների ուսման կազմակերպմանը:

Դրանից բացի՝ եկեղեցական խորհուրդը հայ պատանիների կրթությանը նպաստում էր նաև այլ եղանակներով: Նա Մայր աթոռի Գևորգյան ճեմարանում «լազարյան սաներ» էր պահում, ինչպես նաև, բավականաչափ միջոցներ հատկացնելով, նպաստում նրա գործունեությանը: 1909 թ. Գևորգյան ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետը եկեղեցական խորհուրդ է առաքում լազարյան 30 սաների ցուցակը և խնդրում ուղարկել նրանց համար նախատեսված 6 հազար ուռլլի գումարը: Հաջորդ տարում «լազարյան սաների» թվաքանակը հասնում է 40-ի: Այդ առիթով տեսուչը գրում է, որ էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի «նիւթականի անապահով վիճակը ստիպում է վարչութեանս, ժամանակից վաղ դիմելու և խնդրելու պատուարժան խորհրդիցդ՝ կարգադրել ուղարկելու, ինչպես 5000 ուռլլի ճեմարանիս 1910–1911 ուսումնական տարուայ Զեր եկեղեցիներից ուղարկուելիք նպաստը, նմանապէս Բարեյիշատակ «Լազարեան» անուան 40 սաների 8000 ուռլլի թոշակը: Այդպիսով խորհուրդդ դիւրութիւն պատճառած կ'լինի վարչութեանս նախօրօք հոգալու հաստատութեանս սաների մի քանի անհրաժեշտ ու անյետաձգելի պիտոյքների մասին»³⁸:

Հասարակական առավել ծանրակշիռ արժեք էին ձեռք բերում և ավելի ծավալուն ու ընդգրկուն էին Պետերբուրգի եկեղեցական խորհրդի օգնությունը, նրա ներդրումը Հայաստանում ու հայաբնակ վայրերում գործող հայկական

³⁸ Նույն տեղում, գ. 1044, ք. 19:

դպրոցներին: Խորհրդի կողմից ուսումնական գործին աշակցելն իրականացվում էր բազում ձևերով՝ սկսած դպրոցներ բացելուց, դպրոցները վերանորոգելուց, մանկավարժներով ապահովելուց, ձեռնարկներ ու դասագրքեր հրատարակելուց:

Պատկերացում կազմելու համար մեծաքանակ փաստերից հիշատակենք միայն մի քանիսը: Շարուր-Դարալագյազի գավառի Ուլյա Նորաշեն գյուղից խորհրդին խնդրում են միջոցներ հատկացնել գյուղի ծխական դպրոցը վերաբացելու համար, որն ավերվել ու փակվել է 1905 թ. փետրվարին գյուղ ներխուժած թուրք խուժանի կողմից: Դիմումներ են հղում համանման ձևով Հայ-թաթարական ընդհարումներից տուժած Ղարաբուլաղ, Չարդախլու գյուղերից: Գանձակի գավառի Բանանց գյուղի դպրոցը, որը գործում էր 1871 թվականից, փակվելու վտանգի տակ էր, եթե չհաջողվեր ուսուցիչ հրավիրելու համար համապատասխան գումար հայթայթել: Կախեթի Սղնախ քաղաքի դպրոցը նույնպես փակվելու վտանգի առաջ էր կանգնած, ուստի խնդրում էին 1000 ռուբլի գումար, այլապես, ինչպես հավաստում էին նրանք, տեղի 20 հազար օտարազգիներով շրջապատված Հայ բնակչությունն արագորեն կկորցնի ազգային դեմքը և կձուլվի: Շուշիի Մարիամյան օրիորդաց դպրոցի հոգաբարձու Եղիշե Թարխանյանը, ներկայացնելով դժվարին կացությունը, նույնպես օգնություն է հայցում եկեղեցական խորհրդից և ստանում 500 ռուբլի գումար³⁹:

³⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 1026, ք. 1, 4, 13, 14: Համանման ձևով եկեղեցական խորհրդին են դիմում Արտանուշի գավառի Տանձուտ, Էջմիածնի գավառի Իլանջալու, Մաղմուսավանք, Ղոթուր գյուղերից, Մայկուպից՝ ծխական դպրոցներ բացելու խնդրանքով, Կարսի շրջանի Ճալա, Մուրմայուի գավառի Իգդիր, Մավիա գյուղերից, Կերչից, Ակերմանից և այլ վայրերից՝ դպրոցներին նյութական միջոցներով օգնելու խնդրանքով (տե՛ս նույն տեղում, ք. 48-119):

Այդ և մյուս տեղերից ստացվող դիմում-խնդրանքները մասամբ կամ լիովին բավարարվում էին:

Կրթութայն Հարցով եկեղեցական խորհրդի Հետ ավելի ընդարձակ ծրագրերով հարաբերվում էին բազմաթիվ Հասարակական կազմակերպություններ: Դրանց մեջ առանձնանում էին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ) և Բաքվի Հայոց կուլտուրական միությունը (ԲՀԿՄ):

Խորհուրդը 1908 թ., ընդառաջելով ԿՀԲԸ նախագահ Ս.Հարությունյանի խնդրանքին, 12 հազար ռուբլի է հատկացնում Կովկասի Հայաբնակ շրջանների դպրոցների համար: Նա միաժամանակ Հնարավորություններ է ստեղծում և պահանջում բարեգործական ընկերություններից նպաստել Արևմտյան Հայաստանից կատարվող գաղթին. «Այս նպատակով, – նշում է խորհուրդը 1914 թ. օգոստոսին, – յատկացնում ենք երկու հազար ռուբլի ընկերութեանդ տնօրինութեան, որ շարունակեք նպաստել Հայրենիք դառնալ ցանկացող թիւրքահայ պանդուխտներին եւ Հետեւանքի մասին հաճութիւն ունենաք տեղեակ անել խորհրդիս»⁴⁰: 1915 թ. հուլիսին խորհուրդը ԿՀԲԸ-ին հայտնում է, որ իրենց խնդրանքին ընդառաջ գնալով՝ գյուղական դպրոցների համար, որպես բացառություն, հատկացնում է 3 հազար ռուբլի⁴¹:

Եկեղեցական խորհրդից դրամական միջոցներ էին հայցում կրթական ոլորտի ամենատարբեր Հաստատություններ: Թիֆլիսի կրթական ջուլհականոց ունեցող տնայնագործական ընկերությունը երեք տարվա համար խնդրում էր 3 հազար ռուբլի և այլն⁴²:

⁴⁰ Նույն տեղում, գ. 1048, թ. 66:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, թ. 75:

⁴² Տե՛ս նույն տեղում, գ. 1026, թ. 45:

Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամ, 1908 թ. հուլիսի նիստի նախագահ ականավոր պատմաբան Ն.Ա. դոնցը տեղեկացնում է ԿՀԲԸ-ին և ԲՀԿՄ-ին այն մասին, որ խորհուրդն առայժմ 8 հազար ռուբլի է հատկացնում Կովկասի հայկական գավառների կենտրոնական գյուղերում մեկական դպրոց բացելու համար: «Նշանակուած գիւղերը, — նշում է Ն.Ա.դոնցը, — միմիայն մերձաւոր արժեք ունեն, վերջնական ընտրութիւնը թողնում է Կուլտուրական Միութեան հայեցողութեանը: Շրջանական սիստեմի նպատակն է մօտիկ ապագայում, ինչպէս ծրագրում է Խորհուրդս, կամաց կամաց աւելի բարգաւաճ վիճակի մէջ դնել յիշեալ շրջաններում գեթ մի մի դպրոց, և եթէ հնարաւոր կը լինի, վերածել աւելի բարձր կարգի կրթավայրի, ուր իրօք արդիւնաշատ և կրթարար դեր ունենայ յետամնաց և չքաւոր գաւառների համար»⁴³:

Ինչպես արդեն նշվել է, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կյանքի բոլոր բնագավառներում, հատկապես կրթութեան ասպարեզում դժվարին իրավիճակ էր ստեղծվել: ԿՀԲԸ-ն տեղեկացնում է եկեղեցական խորհրդին, որ 1915–1916 ուսումնական տարում մի՛շարք դպրոցներ փակվելու վտանգի առաջ են կանգնած: Ընկերութեանն անգոր է օգնութեան ձեռք մեկնելու, քանի որ իր միջոցները սպառվել են: Դպրոցների գոյութեանն ապահովելու համար խնդրում է 5 հազար ռուբլու օգնութեան: Խորհուրդը կարողանում է տարրական դպրոցների համար հատկացնել 2 հազար ռուբլի գումար⁴⁴:

ԲՀԿՄ-ն ուներ կրթական, բժշկական, գյուղատնտեսական մասնաճյուղեր: Միութեան աշխատանքները մեծ եռանդով գլխավորում էր նշանավոր պետական-քաղաքական գործիչ Ալեքսանդր Խատիսյանի եղբայր Կոստանդին

⁴³ Նույն տեղում, գ. 145, ք. 90:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 1048, ք. 80, 81:

Խնատիսյանը: Պետերբուրգի եկեղեցական խորհուրդն ամեն տարի ԲՀԿՄ-ին հատկացնում էր որոշակի գումար: 1909 թ. ուղարկում է ծխական դպրոցների նպաստը՝ 2650 ռուբլի: Հաջորդ տարվա միայն չորս ամիսների համար (մայիս-օգոստոս) առաքում է նույնչափ գումար: Տարվա առաջին կեսի համար 1911 թ. ուղարկում է 4 հազար ռուբլի: Միության բժշկական մասնաճյուղը Ղարաբաղում հիվանդանոց վերակառուցելու համար հայցում և ստանում է 1000 ռուբլի: ԲՀԿՄ-ն, եկեղեցական խորհրդին տեղեկացնելով, որ իր հովանավորութան տակ հայաշատ կենտրոններում գտնվող 80 ուսումնարաններում զգացվում է գյուղատնտեսական գիտելիքների պակաս, այդ մասնագիտութան գծով 20 գիրք հրատարակելու համար խնդրում և ստանում է նույնպես 1000 ռուբլի⁴⁵:

Պետերբուրգի հայ համայնքը նախանձախնդիր կերպով ուշադրութան կենտրոնում էր պահում ուսման խնդիրը: 1902 թ. Հայաստանից ժամանած հոգևորականների հաղորդումներից տեղեկանալով հայրենիքում կրթական գործի դժվարին կացութային մասին՝ անմիջական գործնական քայլերի է դիմում, որին մասնակցում են անգամ ուսանողները: Ուսանող Հովհաննես Արամյանը գյուղական մի ուսումնարան ապահով գրութային մեջ պահելու համար տարեկան 300 ռուբլի տալու պարտավորութուն է վերցնում: Համայնքը հանգանակում է 900 ռուբլի՝ 3 ուսումնարան պահելու, իսկ եկեղեցական խորհուրդը 3 հազար ռուբլի է հատկացնում նոր Զուղայի թեմական դպրոցն ընդարձակելու համար⁴⁶:

Եկեղեցական խորհուրդը ջանում էր լուծել կրթութայանն առնչվող բոլոր էական հարցերը: ԿՀԲԸ-ն հիմնում է դպրոցական-ուսուցչական հիմնադրամ, որի տոկոսներով

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, գ.1045, թ. 1, 3, 21, 24:

⁴⁶ Տե՛ս Մշակ, 1902, 152:

նախատեսվում էր պահպանել չքավոր դպրոցները և նպաստ տալ տարեց ու հիվանդ վաստակաշատ ուսուցիչներին: Ընկերութիւնը դիմում է խորհրդին, իսկ վերջինս աշխատում է ընդառաջ գնալ խնդրանքին⁴⁷:

* * *

Հայ համայնքի, առկա պարագայում գաղութի ինքնավար գոյութիւնը մարմնավորող եկեղեցական խորհրդի կրթական, լուսավորական գործունեութեան համազգային բնույթը լավագոյնս դրսևորվեց Արևմտյան Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Թեև միայն Ռուսական կայսրութեան հայկական բնակավայրերի կրթական խնդրով զբաղվելն արդյունավետ ու գնահատելի ձեռնարկում էր, սակայն Թուրքիայի տիրապետութեան տակ գտնվող Արևմտյան Հայաստանն այդ ոլորտից դուրս թողնելը կնշանակեր լուսավորութիւն տարածելու առաքելութիւնը թերի կատարել, հայութեան մեծ մասին դուրս թողնել այդ ծիրից: Փաստերին անգամ թռուցիկ ծանոթութիւնը հավաստում է, որ կարևոր այդ հարցում եկեղեցական խորհուրդը խելամիտ ու նպատակաւոր լինելով քաղաքականութիւն էր վարում:

Խորհուրդը երկու տարի (1908 և 1909 թթ.) 3 հազար ուռբլի է ուղարկում Կ.Պոլսի պատրիարքին՝ 1000-ական ուռբլի հատկացնելու Աղթամարի, Ս.Կարապետի և Վարագա վանքի վարժարաններին՝ ուսումնարանները բարվոք վիճակի մեջ դնելու համար: Վարագա վանքի ատենապետը, ընդառաջելով ուսման կարոտյալներին, ընդունում է ևս 15 աշակերտ՝ հնչարկով, որ ստացվող գումարը շարունակական կլինի: Ապա խորհրդի առաջ նոր խնդիր է դնում: «Ուրախութեամբ կը յայտարարենք պատ[ուական] Հոգաբարձութեանդ, — գրում է նա, — թէ վարժարանիս գոյութեան յիսնամեակը լրացած լինելով, առաջիկայ յունիսին պիտի տօ-

⁴⁷ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 399, ց. 1, գ. 1048, ք. 49:

նուրի իր յօքելեանական տօնը Համաձայն Համակիրներու բուռն ցանկութեան: Յոյս ունինք որ, այս գեղեցիկ առիթով պիտի յաջողինք վարժարանիս Հնացած շէնքը իր յարակից մասերով (դպրոց, ննջարան, ճաշարան, հիւանդանոց, թատերասրահ, գրադ-ընթերցարան) վերանորոգել և ընդարձակել (որը կարօտ է առ առաւել 800 օսմ[անեան] լիւրայի (մօտ 7000 ուղբ[ի] չափ գումարի մը) և վարժարանիս պիւտճէն ընդարձակել և բարձրացնել անոր տնտեսական-ուսումնական վիճակը, բանալով գիւղատնտեսական կուրսեր, որու պէտքը խիստ կարևոր է մանաւանդ, որ Վարագայ վանքը իւր հողերով յարմարութիւններ կը ներկայացնէ»⁴⁸:

Երամյան վարժարանը, ամենայն հավանականութեամբ, պարբերաբար օգնութիւն էր ստանում: Այդ խնդրին դրականորեն նպաստում էին նաև ուսսական իշխանութիւնները: Վարժարանի տնօրենը 1912 թ. եկեղեցական խորհրդին խնդրում է ուղարկել տարվա նպաստը: Հաջորդ տարում խորհրդի նախագահ Վ.Վարդանյանը Վանի ուսսական հյուպատոսին հայտնում է, որ Ն.Մառի միջոցով ստանալով Վանի Հայկական դպրոցին օգնելու ուսսական հյուպատոսի միջնորդութիւնը, Երամյան դպրոցին հատկացրել է 1000 ուղբի: Այդ առիթով վարժարանի հիմնադիր Համբարձում Երամյանը 18 ուսուցիչների և 370 աշակերտների անունից շնորհակալութիւն է հայտնում խորհրդի նախագահին: Մի խումբ հայ մտավորականներ, այդ թվում Հ.Առաքելյանը, Ս.Մալխասյանը, տեսնելով վարժարանի դժվարին վիճակը, 1914 թ. դիմում են եկեղեցական խորհրդին: Նրանք, նշելով դպրոցի նախորդ 36 տարիների կատարած լուսավորական գործունեութիւնը, կովան էին դարձնում այն պարագան, որ դպրոցը պատվար է դարձել ֆրանսիական, անգլիական, գերմանական քուլեջների դեմ այդ երկրների ազդեցութիւնները տարածելու գործում:

⁴⁸ Նույն տեղում, գ. 1037, ք. 43:

Արդեւն 4 տարի է, ինչ վարժարանն անցել է նաև ուսաց լեզվի ուսուցման, որի համար երկու տարի է՝ ուսսական կառավարութիւնը հասկացնում է 100-ական ուսսական ոսկի: Օտար ուսումնական հաստատութիւններին հավասար մրցակից լինելու համար անհրաժեշտ է մեկ դասարան ավելացնել և վարժարանը դարձնել քոլեջ: Խնդրում են օգնել հիմնադիր տնօրեն Հ.Երամյանին, որն այդ նպատակով կոլյր վիճակում հանդանակութիւն է անում Անդրկովկասում⁴⁹:

Էրզրումի Սանասարյան վարժարանի տեսուչ Գևորգ Աբուլյանը 1908 թ. եկեղեցական խորհրդից օգնութիւն է հայցում՝ միաժամանակ նշելով ուսումնարանի արդյունավետ գործունեութիւնը 28 տարիների ընթացքում: Այդ ժամանակամիջոցում ուսումնարանը տվել է գալառում արդյունավետ աշխատանք կատարող 200-ից ավելի շրջանավարտներ: Այդ ուսումնարանի հիմնադրումը ևս կապվում է Պետերբուրգի հայկական գաղութի հետ: Հայ համայնքի ակտիվ դեմքերից Մկրտիչ Սանասարյանն իր միջոցներով տակալին 1881 թ. էր հիմնադրել ուսումնարանը, երբ մոլեգնում էր սովը: Մ.Սանասարյանը լայն ճանաչման էր արժանացել բարեգործութիւններ կատարելով: Ղազարոս Աղայանը, Պետերբուրգում գտնվելու տարիներին շփվել և մոտիկից ճանաչում էր նրան:

«Ուսանողութիւն սերն ու հարգանքը, — գրում է նա, — Սանասարյանցն էր վայելում և ոչ Միանսարենցը, որովհետև նա էր պետք գալիս մի դրամական օգնութիւն պահանջ եղած ժամանակ, բացի այն մշտական տուրքից, որ վճարում էր ամսեամիս չքավոր ուսանողաց օգտին: Այդ մարդը շատ առատաձեռն էր և տվածը տալիս էր առանց զգացնել տալու ստացողին, որ նրան մի բան տվաւ: Տալիս էր իբրև թե պարտ լինէր ուզողին: Եվ հարստահարվում էր

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 112, 114, 149–150:

անխնա: Նրա համար չկային ոչ բախտախնդիրներ, ոչ խաչագողներ, դիմողին չէր մերժում. իր ողորմածությունը տարածում էր և օտարների վրա»⁵⁰:

Եկեղեցական խորհուրդը 1913 թ. գրում է Կ.Պոլսի Հայոց պատրիարքին, թե կողմնակի անձինք միջնորդում են՝ օգնության հասնելու Սանասարյան վարժարանին: Իրենք անտեղյակ են իրավիճակին, խնդրում են տեղեկություններ ուսումնարանի մասին: Ապա խորհուրդը տրամադրում է 4 հազար ռուբլի՝ Սանասարյան, Վանի կենտրոնական, Մուշի և Բիթլիսի ուսումնարաններին 1000-ական ռուբլի հատկացնելու համար⁵¹:

Սանդխտյան օրիորդաց վարժարանը, հիշեցնելով, որ անցած 40 տարիներին բեղմնավոր գործունեություն ունեցած ուսումնական այդ օջախը տակավին 1870 թ. հիմնել է Խրիմյան Հայրիկը, եկեղեցական խորհրդից օգնություն է հայցում: Համանման խնդրանքներով դիմումներ են հղում դպրոցասեր կանանց միացյալ ընկերությունը, եկեղեցական թեմերի առաջնորդները, վանքերի հոգաբարձուները և ուրիշներ: Տարբեր բնակավայրերից ու հաստատություններից ստացվող դիմում-խնդրանքներին ընթացք տալու համար անհրաժեշտ էր ստույգ կերպով տեղյակ լինել իրավիճակին: Մանավանդ տեղերից ստացվող դիմումներում հաճախ չափազանցնում, ավելի տխուր գույներով էին ներկայացնում ստեղծված դրությունը: Խնդիրը կարգավորելու նպատակով խորհուրդը նպատակահարմար էր գտել աշխատանքները կազմակերպել և գործ ունենալ միայն Կ.Պոլսի պատրիարքարանի Հետ: Սակայն այդ եղանակը նույնպես իրական արդյունքների չի հանգեցնում, քանի որ տեղերից բազմաթիվ դիմումներ էին ստացվում՝ շրջանցելով, ամենևին

⁵⁰ Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, հ.3, էջ 367:

⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, գ. 1037, ք. 6-7, 126, 159, 58-62:

տեղյակ չպահելով պատրիարքարանին, ինչի պատճառով վերջինիս չէր հաջողվում համակարգել այդ գործը:

Եկեղեցական խորհուրդը Արևմտյան Հայաստանում կրթական գործին օժանդակելն արդար ու տեղին կատարելու այլ եղանակի է դիմում: Նա վճռում է Տարոնի նահանգում՝ Մուշ քաղաքում, հիմնել բարեկարգ ուսումնարան և դրա պահպանման ամբողջ ծախսերը վերցնել իր վրա, ուսումնարանը ենթարկել պատրիարքարանին և նրա վրա դնել նահանգի մյուս կրթօջախների ուսումնական հոգսերին աջակցելու պարտավորությունը: Եկեղեցական խորհրդի անունից նրա գործունյա անդամ Ն.Ադոնցը 1910 թ. գրում է Կ.Պոլսի պատրիարք Եղիշ սրբազանին այն մասին, որ ժամանակին մտահղացված կրթական մի հաստատություն հիմնելու խնդիրն առկա է մնացել, և այժմ հնարավոր է այն իրականացնել: Ուսումնարան բացելու համար խորհրդի նախահաշվի մեջ նախատեսված է 5 հազար ուրբի: Դպրոցը բացվելու է Մուշ քաղաքում: Նրա ուսման ծրագիրն աստիճանաբար բարձրացվելու և հասցվելու է միջնակարգ դպրոցի մակարդակի: Դպրոցը տնօրինող մարմինները լինելու են ուսուցչական և հոգաբարձական խորհուրդները: Դրանցից առաջինը զբաղվելու է ուսումնամանկավարժական, իսկ երկրորդը՝ տնտեսական հարցերով: Հոգաբարձական խորհրդի նախադասը լինելու է Տարոնի թեմի հոգևոր առաջնորդը⁵²:

Եկեղեցական խորհուրդը չէր բավականանում սոսկ կրթական-լուսավորական նպաստներ հատկացնելով: Նա պարզում էր կրթության ոլորտում տիրող իրական դրությունը և այն բարեփոխելու նպատակով հատուկ քաղաքականություն տանում նաև Արևելյան Հայաստանում: Խորհուրդը ԲՀԿՄ և ԿՀԲԸ միջոցով ջանում է պարզել, թե ինչ սկզբունքներով են ծախսվում Պետերբուրգից ստացվող

⁵² Տե՛ս Առնյճ տեղում, ք. 15–16:

նպաստները, ինչ կարգի դպրոցներ են բացվում և ինչպիսի՞ բնակավայրերում: ԲՀԿՄ նախագահ Կ. Նատիսյանը և Հատկապես միության կրթական մասնաճյուղը խորհրդին տեղյակ են պահում իրավիճակի մասին: Նրանք մանրամասնորեն ներկայացնում են խորհրդին Հետաքրքրող Հայաստանի գավառներում կրթության ոլորտում տիրող դրուժյունը: Ներկայացված տեղեկագրի Համաձայն՝ Ղարաբաղի թեմում սովորում էին դպրոցական Հասակի երեխաների 23 տոկոսը, Երևանի, Թիֆլիսի, Շամախիի թեմերում՝ 11 տոկոսը, Նոր Բայազետի ենթաթեմում՝ 6 տոկոսը, Կարսի շրջանում՝ ավելի պակաս: Դպրոցների ցանցը խիստ աղքատիկ էր: Ամենից շատ բնակչություն ունեցող Ալեքսանդրապոլի գավառում կար 8 դպրոց, Նոր Բայազետի 57 գյուղերում՝ 6 դպրոց, իսկ Էջմիածնի գավառի Ապարանի շրջանի 43 գյուղերում՝ ոչ մի դպրոց: Դպրոցները մեկ կամ երկդասարանային էին: Կրթական մասնաճյուղը եկեղեցական խորհրդից հայցում էր 11620 ռուբլի գումար՝ գավառներում նոր դպրոցներ բացելու համար՝ բացվելիք յուրաքանչյուր դպրոցին 200–300 ռուբլի հատկացնելու հաշվարկով⁵³:

Եկեղեցական խորհրդի նախանձախնդիր անդամ Ն. Ադոնցը, նկատի առնելով, որ կրթական գործին Պետերբուրգի եկեղեցիներից կատարվող օգնությունն իրականանում է անկազմակերպ, առանց որևէ սկզբունքի վրա հիմնված ծրագրի, հատուկ զեկուցագրով դիմում է խորհրդին: Ըստ նրա՝ եկեղեցական խորհուրդը, հայրենիքից հեռու գտնվելով, չի կարողանում օգտվել հասարակության ներգործուն ազդեցությունից՝ Հանրային միջոցներն առավել նպատակաուղղված ձևով ծախսելու համար: Խորհուրդն առանց որևէ ծրագրի, հախուռն կերպով նպաստներ է տրամադրում ինչպես դպրոցներին, այնպես էլ բարձրա-

⁵³ Տե՛ս նույն տեղում, գ. 145, ք. 58–62:

գույն դպրոցներում սովորող ուսանողներին: Ն.Ադոնցն առաջարկում է կրթութեան հարցում առաջնութիւնը տալ գերազանցապես Հայաստանի գյուղական շրջաններին: Նա նշում է, որ Հայաստանը բնականորեն կտրված է լեռներով ու առանձին հովիտներով, ինչի հետևանքով իրենից ներկայացնում է հարևանից բնական լեռներով առանձնացած, ներփակ, 15–30 հազար բնակչութեամբ բազմաթիվ շրջաններ: Ն.Ադոնցը դրանցից որսպես առավել աղքատ, հետամնաց և անմիջական օգնութեան կարոտ բնակավայրեր առանձնացնում է 15-ը՝ Վարանդան, Դիզակը, Խաչենը, Զանգեզուրը, Սիսիանը, Կապանը, Գողթնը, Նախիջևանը, Ապարանը, Դարպադյազը, Շարուրը, Գյոկչայը, Շորաքյալը, Լոռին, Փամբակը: Նա առաջարկում է ամեն մի շրջանում կամ գավառում բացել մեկական դպրոց, որ կոչվեն Պետերբուրգի եկեղեցիների անուններով: Գյուղական այդ դպրոցները հարկ է դարձնել լուսավորութեան կենտրոններ՝ դրանց համար ստեղծելով այնպիսի պայմաններ, որ մտավորական ուժերին քաղաքից քաշեն դեպի գյուղ: Ըստ իրեն ներկայացրած տեղեկագրի՝ ԲՀԿՄ-ն դպրոցների պահպանման համար տարեկան նախատեսում է 250–300 ուրբլի, նման չնչին գումարով բարեկարգ դպրոց պահել հնարավոր է: Նա առաջարկում է բացվելիք դպրոցների պահպանման համար, բացի դասագրքերից և սնտեսական ծախսերից, նախատեսել տարեկան գոնե 600 ուրբլի, որպեսզի նրանք ի գործ լինեն ծառայելու իրենց նպատակին⁵⁴:

Ն.Ադոնցի զեկուցագրում բերված նկատառումները հիմնավորված էին և հավանութիւն գտան, սակայն իրենց հիմնական մասով չիրականացան մի շարք հանգամանքների բերումով, գլխավորապես Առաջին համաշխարհային պատերազմի և Մեծ եղեռնի պատճառով:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, ք. 5–7:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են այն հանգամանքը, որ ուսական մայրաքաղաքների ոչ մեծաքանակ հայ համայնքներն ազգային շահի գիտակցությամբ ջանքեր էին գործադրում, իրենց հասարակական միջոցներն ուղղում մայր հայրենիքում այնքան անհրաժեշտ ուսումնական գործի բարելավմանը:

2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտության և մշակույթի ճանաչված կենտրոններ դարձած Մոսկվան և Պետերբուրգը հատկապես մեծ վերելք ապրող XIX դարում չէին կարող իրենց ոլորտի մեջ չընդգրկել այդտեղ հաստատված հայ մտավոր շրջաններին:

Լազարյան ճեմարանը, ուսումնական գործընթացին համազոր, դարձավ նաև գիտության կարևոր օջախ: Մայրաքաղաքների համալսարանների հայ դասախոսները և ուսանողությունը հեռու չէին գիտական նախասիրություններից: Լազարյանները մշտապես հատուկ հետաքրքրություն են դրսևորել և հովանավորել նաև գիտակրթական բնագավառները, այդ ուղղությամբ կյանքի կոչվող ձեռնարկումները: Հայ համայնքները, նրանց ինքնավարությունը հատկանշող եկեղեցական խորհուրդները, մասնավորապես Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը գիտության զարգացմանը նպաստող լայնածավալ և արգասավոր գործունեություն են ունեցել:

Լազարյան ճեմարանը դարձավ հայագիտության, արևելագիտության ձևավորման ու զարգացման նշանավոր կենտրոն: Նրա դասախոսական կազմի հիմնական մասը ուսումնական ծրագրեր, ձեռնարկներ, դասադրքեր կազմելու հետ մեկտեղ ստեղծեց հայոց պատմության, հայ բանասիրության ու հայ եկեղեցու վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ: Ծանրակշիռ է մասնավորապես հայկական սկզբնաղբյուրների հրատարակման ասպարեզում նրանց վաստակը:

Ուսումնական գործընթացին զուգահեռ ստեղծագործական բեղմնավոր աշխատանքներ կատարողներից էր Մսեր Մսերյանը (1808–1873), որը 1848 թ. հրավիրվեց Լազարյան ճեմարան՝ դասավանդելու հայոց լեզու և կրոնի պատմություն: Խ.Լազարյանը նրան առաջարկում է գրել հայոց պատմության և հայոց եկեղեցու ընդհանուր պատմության վերաբերյալ աշխատություն⁵⁵: Շուտով Մ.Մսերյանը հրատարակում է կրոնագրականաբանական բազմաթիվ աշխատություններ, այդ թվում «Հրահանգ քրիստոնեական հաւատոյ...», «Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան...» ուսումնասիրությունները⁵⁶: Նա «Խմբագիր չափածոյ բանից» ժողովածուում խրթին գրաբարով գովերգել է պատմական Հայաստանն ու աստվածաշնչյան զանազան դրվագներ⁵⁷: «Յիշատակարան կենաց և գործոյ...» աշխատությունը Լազարյան տոհմի պատմությունը ներկայացնելու առաջին փորձն էր⁵⁸:

Մկրտիչ էմինը (1815–1890) Լազարյան ճեմարանը, Մոսկվայի համալսարանի բանասիրությունների բաժինն ավարտելուց հետո 1838 թ. ճեմարանում անցել է աշխատանքի: Ավելի քան 50 տարի մինչև մահկանացուն կնքելը, նա աշխատել է որպես դասախոս, տեսուչ, ամբիոնի վարիչ: Մանկավարժությունից առավել զբաղվել է պատմաբանասիրական գիտական գործունեությունը: Նա ուսումնասիրել է


⁵⁵ Տե՛ս Մատենադարան, Մտերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1534:

⁵⁶ Տե՛ս Մ.Մսերեան, Հրահանգ քրիստոնեական հաւատոյ ըստ ուղղափառ դասանութեան եկեղեցոյ Հայաստանեայց, Մոսկվա, 1850, Նույնի՝ Քրիստոսապատում այն է համառօտութիւն ավետարանական պատմութեան, Մոսքուա, 1861, Նույնի՝ Հաւատապատում կամ մանր ուսմունք քրիստոնեական Հաւատոյ, Ս.Էջմիածին, 1865, Նույնի՝ Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան ի պէտս Հայկազնեանց մանկանց, Մոսկուա, 1874:

⁵⁷ Տե՛ս Նույնի՝ Խմբագիր չափածոյ բանից, Մոսքուա, 1864:

⁵⁸ Տե՛ս Նույնի՝ Յիշատակարան կենաց եւ գործոյ մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856:

Հայոց հեթանոսական կրոնը, Հայոց պատմության ժամանակագրական համակարգը, առասպելաբանական վիպագրությունը և ստեղծել բազմաթիվ աշխատություններ, դասագրքեր⁵⁹։



Մկրտիչ Էմին

Մ.Էմինի մեծ վաստակն է Ղազար Փարպեցու, Մովսես Կաղանկատվացու, Մխիթար Այրիվանեցու, Վարդան Արևելցու աշխատությունների քննական բնագրերի հրա-

⁵⁹ Տե՛ս Մ.Էմին, Վեպր հնոյն Հայաստանի, քննութիւն, Մոսկվա, 1850, Նոյնի՝ Моисей Хоренский и древний эпос армянский, Москва, 1881, Նոյնի՝ Очерк религии и верований языческих армян, Москва, 1864, Նոյնի՝ Династический список Хайкидов в Истории Армении Моисея Хоренского и хронологическая их таблица у О.Михаила Чамчеана, Москва, 1884 և այլն։

տարակումը⁶⁰: Առավել գնահատելի էր նրա առաջաբանով ու ծանոթագրություններով Մովսես Խորենացու և մի շարք այլ պատմիչների գործերը ուսուցանող հրատարակելը⁶¹ և ուսուցանողական հայոց ազգային արժեքներին ծանոթացնելը: Նա եղել է Լազարյան ճեմարանի մատենադարանի հիմնադիրը:

Գիտական մեծ նվաճումների է հասել և մնայուն Հետք թողել Մ.էմինի սաներից Քերովբե Պատկանյանը (1833–1889): Նա Մ.Քերոյանին 1861 թ. փոխարինել է Պետերբուրգի համալսարանի հայոց լեզվի ամբիոնում: Մայրաքաղաքի կովկասյան կոմիտեի առաջարկով նա նշանակվել է նաև Պետերբուրգում սովորող կովկասցի երիտասարդների հայոց լեզվի դասախոս⁶²: Ք.Պատկանյանը մեծ հաջողությամբ սովորել է հին լեզուներ, պարսկերեն, գրաբար: Նա հիմնավորապես ուսումնասիրել է մոնղոլների պատմությունը⁶³, խորացել Ասորեստանի պատմության մեջ, սովորել սեպագիր կարդալ և Հետազոտել Վանի սեպա-

⁶⁰ Տե՛ս Դազար Փարպեցի, Թուրք առ Վահան Մամիկոնեից, ի լոյս ընծայեաց Մ.Էմին. Մոսկվա, 1853, Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայած Մլրտիչ Էմին, Մոսկվա, 1860, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1861, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մ.Էմին. Մոսկվա, 1861:

⁶¹ Տե՛ս История Армении Моисея Хоренского, перевел с армянского и объяснил Н.Эмин, Москва, 1858, Всеобщая история Вардана Великого, перевел Н.Эмин, Москва, 1861, Всеобщая история Степаноса Таронского, Асохика по прозванию, писателя XI столетия, переведена с армянского и объяснена Н.Эминым, Москва, 1864, Синодальное слово Нерсеса Ламбронского архиепископа Тарсийского, пер. с арм. Н.Эмин, Москва, 1865:

⁶² Տե՛ս Մատենադարան, Պատկանյանների արխիվ, քրթ. 145, վավ. 342:

⁶³ Տե՛ս История монголов по армянским источникам, пер. и объяснения К.П.Патканова, в 2 вып., Санкт-Петербург, 1873–1874:

գիր արձանագրությունները⁶⁴: Նա ուսումնասիրություններ է նվիրել Հայոց լեզվին, Հայերենի բարբառներին⁶⁵, ան-



Քերովբե Պատկանյան

հրածեղտ գիտական ապարատով հրատարակել միջնադարյան մի շարք պատմիչների բնագրերը⁶⁶, իսկ ուսսերեն թարգմանությամբ՝ Մ.Կաղանկատվացու, Սեբեոսի, Ղևոնդ Երեցի, Մխիթար Այրիվանեցու և այլ պատմիչների երկե-

⁶⁴ Տե՛ս Կ.Պատկանյան, Ванские надписи и значение их для истории Передней Азии, Санкт-Петербург, 1881, Նույնի՝ О клинообразных надписях Ванской системы, открытых в пределах России, Санкт-Петербург, 1883:

⁶⁵ Տե՛ս Նույնի՝ Исследование о составе армянского языка, Санкт-Петербург, 1864, Նույնի՝ О диалектах армянского языка, филологический опыт, Санкт Петербург, 1869, Նույնի՝ О месте, занимаемом армянским языком в кругу индо-европейских, Тифлис, 1879:

⁶⁶ Տե՛ս Մխիթար Անեցի, Պատմութիւն: Սկիզբն, Գլուխք ԻԷ և յաւելումաճք, ի լոյս ած՝ Բ.Պ., Սանկտ Պետերբուրգ, 1879, Թովմայի վարդապետ Արծրունտյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Բ.Պ., Սանկտ Պետերբուրգ, 1887:

րը⁶⁷: Ք.Պատկանյանը փաստորեն դարձավ Պետերբուրգի Հայագիտական դպրոցի Հիմնադիրը⁶⁸: Հայ գիտնականներից առաջինը նա 1885 թ. ընտրվեց Պետերբուրգի (Ռուսաստանի) կայսերական ակադեմիայի թղթակից անդամ: Նա նաև բազմաթիվ ընկերութունների անդամ էր⁶⁹, եղել էր Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Բեռլինում, Սյուլսխենում, գիտական կապեր հաստատել բազմաթիվ արևելագետների հետ:

Ք.Պատկանյանի աշակերտներից Նիկողայոս Մառը (1864–1934) նոր փուլ բացեց արևելագիտութայն, կովկասագիտութայն, այդ թվում և Հայագիտութայն⁷⁰ բնագավա-

⁶⁷ St' u История императора Иракла, сочинение епископа Себеоса, писателя VII века, перевод с армянского [К.Патканьяна], Санкт-Петербург, 1862, История халифов вардапета Гевонда, писателя VIII века, пер. с арм. [К.Патканьяна], Санкт-Петербург, 1862, Хронографическая история, составленная отцом Мехитаром, вардапетом Айриванским, пер. с арм., с предисл. и примеч. К.Патканова, Санкт-Петербург, 1869, История монголов инока Магакии VIII века, перевод и объяснение К.П.Патканова, Санкт-Петербург, 1871:

⁶⁸ Ք.Պատկանյանի կենսագրության մասին տե՛ս Н.Веселовский, Ксропэ Петрович Патканов, биографический очерк. – Записки Восточного отделения Императорского Русского археологического общества, т. 5, Санкт-Петербург, 1890, էջ 243–263:

⁶⁹ Ք.Պատկանյանը անդամ էր Ռուսաց հնագիտական ընկերության (1860), Գերմանական արևելյան ընկերության (1860), Ազատ-տնտեսական կայսերական ընկերության (1870), Ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերության (1873), թրթալից անդամ Փարիզի ազգագրական ընկերության (1876), Փարիզի ասիական ընկերության (1880) (տե՛ս Արարս, գիրք Ա, Ս.Պետերբուրգ, 1889, էջ 99):

⁷⁰ St' u Н.Я.Марр, Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей, Санкт-Петербург, 1891, Նույնի՛ Յուցակ համառոտ ձեռագրաց վանուց Մեմանայ, Մուսուտ, 1892, Նույնի՛ Յուցակ Վարդան (материалы для истории средневековой армянской литературы), т. 1–3, Санкт-Петербург, 1894, 1899, Նույնի՛ Քրещение армян, грузин, абхазов и аланов Святым Григорием (арабская версия), Санкт-Петербург, 1905, Նույնի՛ К критике Истории Моисея Хоренского, Санкт-Петербург, 1898, Նույնի՛ Сказание о

ուում: Նրա ներդրումը վիթխարի է ինչպես մնայուն պատմաբանասիրական հետազոտություններ կատարելու, այնպես էլ խոստումնալից երիտասարդներին մասնագիտացնելու ասպարեզում: Այդ երկու ուղղություններով անվանի գիտնականը սերտ կապերի մեջ էր Պետերբուրգի հայ եկեղեցական խորհրդի հետ:

Ն.Մառը 1902 թ. մարտին դիմում է եկեղեցական խորհրդին՝ հայտնելով, որ Պարսկաստանի Նոր Զուղա քաղաքի Ս.Ամենափրկիչ վանքում պահպանվում է հայկական ձեռագրերի մեծ հավաքածու: Իրեն հասած տեղեկություններից հայտնի է դարձել, որ ձեռագրերն աստիճանաբար պահասում, անհայտանում են, և անհրաժեշտ է փրկել պատմական մեծ արժեք ներկայացնող այդ հարստությունը: Իր ջանասեր ուսանող Սմբատ Տեր-Ավետիսյանը ցանկություն է հայտնել մեկնելու Նոր Զուղա՝ նկարագրելու եկեղեցու և շրջակա գյուղերում պահպանված ձեռագրերը, ինչի համար պահանջվում է 4-5 ամսվա աշխատանք: Նկատի ունենալով այդ ամենը, ինչպես և այն, որ այդ աշխատանքը խթան կդառնա ուսանողի կատարելագործման համար, ուսուցչապետը խնդրում է ֆինանսավորել իր սանի գործուղումը: Ն.Մառի գրությունը ներկայացնելով խորհրդին՝ էջմիածնի միաբան Սմբատ Տեր-Ավետիսյանը, անհրաժեշտ ծախսերի մասին վկայակոչելով պարսկահայոց հոգևոր առաջնորդ Բագրատ վարդապետի հավաստիացումը, խնդրում է հատկացնել 300 ռուբլի գումար⁷¹:

Արդեն նույն տարվա նոյեմբերին Սմբատ Տեր-Ավետիսյանը խորհրդին զեկուցում է շուրջ 4 ամիս տևած գործուղման արդյունքների մասին: Նոր Զուղայի Ս.Ամենա-

католикосе Петре и ученом Иоанне Козерне (из материалов истории средневековой армянской литературы), Санкт-Петербург, 1895 և այլն:

⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 179, ք. 6,7:

փրկիչ վանքում պահվում էր 324, քաղաքի 9 եկեղեցիներում՝ 206, մասնավոր անձանց մոտ՝ 32, իսկ որոշ հայկական գյուղերում՝ 19 ձեռագիր: Նա, որ նկարագրել էր 581 ձեռագիր, եկեղեցական խորհրդին իր երախտագիտությունն է հայտնում ընձեռած հնարավորության համար⁷²:

Երկու տարի անց՝ 1904 թ., Ն.Մառը կրկին դիմում է եկեղեցական խորհրդին: Հիշեցնում է տակավին երկրորդ կուրսի ուսանող Սմբատին տրված հանձնարարությունը՝ Նոր Զուղայի ձեռագրերի նկարագրությունը հաջողությամբ կատարելու փաստը, և հավելում, որ նախորդ տարում նա հավաքել է Ղազախի գավառի վիմական արձանագրությունները՝ դրանով մեծապես նպաստելով իր կողմից կազմվող հայ և վրացական վիմագիր արձանագրությունների կորպուսի հրատարակության նախապատրաստմանը: Հայոց եկեղեցու պատմությունը լուսաբանելու և Սմբատի գիտական հասունացմանը նպաստելու նպատակով Ն.Մառը խնդրում է հնարավորություններ ստեղծել, որ համալսարանն ավարտելուց հետո իր սանը ևս մեկ տարի մնա Պետերբուրգում: Այդ ընթացքում վերջինս հրատարակության կնախապատրաստի Նոր Զուղայի ձեռագրերի նկարագրությունը, կկատարի մեկ գավառի վիմագրական հետազոտություն, կնկարագրի Պարսկաստանի Ստեփան նահատակի եկեղեցու ձեռագրերը, իսկ ամռանը, երբ ինքը կլինի Անիում, նա որոշ ժամանակով կմասնակցի պեղումներին: Պրոֆեսորի առաջարկին խորհուրդն ընդառաջ է գնում⁷³:

Մայրաքաղաքների հայ հասարակության շրջանում մեծ հետաքրքրություն էր նկատվում Հայաստանի սլատամաշակութային, հատկապես հնագիտական ուսումնասիրության նկատմամբ: Մոսկվայի հնագիտական ընկերության (որի կազմում ընդգրկված էին հայեր) նախագահ կոմսուհի

⁷² Տե՛ս նույն տեղում, ք. 11:

⁷³ Տե՛ս նույն տեղում, ք. 21:

Ուվարովան 450 ուուբլի է ուղարկում ընկերության կովկասյան բաժանմունքին, որպեսզի արշավախումբ կազմակերպվի և նկարագրվի Ախալքալաքի, Բորչալուի, Արդահանի, Արդվինի եկեղեցապատմական հուշարձանները⁷⁴: Այդ նույն ընկերությունը շատ բարձր է գնահատում Լազարյան ինստիտուտի դերը ինչպես ուսումնական գործընթացի, այնպես էլ... Արևելքին ծանոթացնելու հարցում: Եվ դա ոչ միայն գործնական, պետական-առևտրական նպատակների, այլ նաև գիտական՝ Հին Արևելքը ուսումնասիրելու համար⁷⁵:

Պետերբուրգի՝ Հնագիտությամբ հետաքրքրվող մի խումբ հայեր ձեռնարկում են ստեղծել «Անի» անվամբ ընկերություն, որի նպատակն էր լինելու «ժողովել Հնագիտական իրեր, Հիմնել թանգարաններ, կատարել պեղումներ և այլն»⁷⁶: Մտադրություն կար ընկերության կազմում ընդգրկելու վրացիների, անգամ մահմեդականների:

Մեծ էր հետաքրքրությունը մասնավորապես միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ուսումնասիրության, նրա Հնագիտական պեղումների նկատմամբ: 1905 թ. Ն.Մառը գրում է այն մասին, որ կայսերական Հնագիտական Հանձնաժողովին Անի քաղաքի պեղումների մասին իր տված զեկուցագրից եկեղեցական խորհրդին հայտնի է դարձել այդ փաստը, և խորապես ըմբռնելով դրա նշանակությունը՝ մեծ գումար՝ 2 հազար ուուբլի է հատկացրել պեղումները շարունակելու համար: Ինքը խիստ շոյված է խորհրդի վստահությունից, ինչը համարում է հայ հասարակայնության թեկուզ մի հատվածի կարծիքի արտահայտություն: Ինքը գտնում է, որ անհետաձգելի անհրաժեշտություն է Անիում պարբերաբար պեղումներ կազմակերպելը:

⁷⁴ Տե՛ս Մշակ, 1902, 156:

⁷⁵ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 120, վավ. 191:

⁷⁶ Տե՛ս Մշակ, 1907, 4:

Այդ պարագայում, ինչպես գրում է Ն.Մառը, «Անի քաղաքը կստանա հսկայական ոչ միայն գիտատեսական նշանակութուն բանասիրական, հնագիտական տարբեր գիտաճյուղերի համար, այլև գիտալուսավորական գործնական նշանակութուն անմիջականորեն հայ ժողովրդի և հետևաբար հայոց եկեղեցու համար, քանի որ հայոց եկեղեցին ժողովրդաազգային է (ընդգծումն իմն է – Վ.Բ.), և ինչը որ կարևոր է հայ ժողովրդի համար, կարևոր է նաև նրա համար»⁷⁷: Պրոֆեսորը միաժամանակ իր գոհունակութունն է հայտնում խորհրդին ճարտարապետ Թորոս Թորամանյանին նյութական օգնություն ցույց տալու համար, որը մասնագիտական ստույգ չափագրություններ ու նկարահանումներ է կատարում:

1906 թ. խորհրդի նախագահ պրոֆ. Վարդան Վարդանյանը Ն.Մառին հայտնում է, որ պեղումները շարունակելու համար ընթացիկ տարում ևս արչավախմբին հատկացվել է 2 հազար ռուբլի գումար, և շնորհակալություն է հայտնում աշխատանքի հաջող ընթացքի և եկեղեցական խորհրդի նիստում կարգացած զեկուցման համար: Արչավախմբի պետը պեղումների մասին պարբերաբար զեկուցում էր խորհրդին: Նույն տարվա նոյեմբերին նա խորհրդին հայտնում է Գագկաչեն տաճարը պեղելու համար լրացուցիչ 700 ռուբլի հատկացումը ստանալու և նաև այն մասին, որ աշխատանքներն ավարտելուց հետո ինքը կզեկուցի խորհրդին⁷⁸:

Հայտնաբերված հնագիտական նյութերը կորստյան վտանգից զերծ պահելու նպատակով որոշվել էր տեղում կառուցել ժամանակավոր թանգարան: Խորհուրդը, տեղեկանալով, որ հովանավորների միջոցով ժողովված գումարը

⁷⁷ ՀԱԱ, ֆ. 399, գ. 1018, ք. 5:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 15, 16:


բավական չէ Թանգարանի կառուցման համար, իր կողմից հատկացնում է 600 ռուբլի:

Անիի հնագիտական արչավախմբի մասնակիցներից բացի՝ քիչ չէին նաև հնություններով ու պեղումներով հետաքրքրվող երիտասարդները: Ն.Մառը նախաձեռնել էր կազմակերպել Անիի հնագիտական դպրոց, որտեղ լսվեն դասախոսություններ, անցկացվեն պարապմունքներ: Պետերբուրգի կայսերական ակադեմիան որոշել էր այդ դպրոցը դնել հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո: Մատթեոս Բ կաթողիկոսը, ըստ ամենայնի գիտակցելով այդ նախաձեռնություն կարևորությունը, Շիրակի պատմական հուշարձաններն ուսումնասիրելու և արևելագետներ, բյուզանդագետներ պատրաստելու առումով սիրահոփար ստանձնում է հոգաբարձուի պարտականությունները: Կարևոր այդ նախաձեռնությունն իրականացնելու համար նա հաջողություն է մաղթում Ն.Մառին և նրա գործընկերներին⁷⁹:

Եկեղեցական խորհուրդը, պարբերաբար լսելով արչավախմբի ղեկավարի ղեկուցումները և տեսնելով կատարվող աշխատանքների արդյունավետությունը, ավելացնում է պեղումներին հատկացվող գումարը: 1911 թ. պեղումների համար տրվում է՝ 3500 ռուբլի, իսկ տնտեսական այլ ծախսերի համար՝ 500 ռուբլի: Հաջորդ տարիների արչավախմբերին մշտապես հատկացվում է ավելացրած այդ գումարի չափով: Անգամ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ եկեղեցական խորհրդի համար ստեղծված ֆինանսական դժվարին ժամանակներում, պեղումներին հատկացվող 3500 ռուբլի գումարը թողնվում է անփոփոխ:

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 921, ք. 3: Անիի պեղումների ընթացքի վերաբերյալ Ն.Մառի մամակների մասին տե՛ս Мирзоян С., Письма Н.Я.Марра об археологических раскопках в Ани (1904–1917 гг.). – ԼՀԳ, 1979, 12, էջ 93–108:

Անի քաղաքի Հնագիտական ուսումնասիրութեան նկատմամբ եկեղեցական խորհրդի դիրքորոշումը Հավանու-



թյան, ավելին, գրվատանքի էր արժանանում: Այն դուրս էր մնում անգամ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի ուշադրությունից: Ակադեմիայի պրեզիդենտ Կոնստանտին Ռոմանովը 1913 թ. հոկտեմբերի 11-ին հատուկ գրությամբ

ակադեմիայի և անձամբ իր անունից երախտագիտություն է հայտնում եկեղեցական խորհրդին ակադեմիայի կողմից գործուղված ակադեմիկոս Ն.Մառի գլխավորությամբ Անի քաղաքի պեղումներին տարիներ շարունակ առատաձեռն օգնություն ցույց տալու և անցյալի հուշարձանները պահպանելու համար⁸⁰:

Եկեղեցական խորհուրդը 1913 թ. նոյեմբերի 26-ին հատուկ գրությամբ Ն.Մառին տեղեկացնում է հետևյալի մասին: Նկատի առնելով նրա 25-ամյա վիթխարի վաստակը հայ բանասիրության ու հայ եկեղեցու պատմության ուսումնասիրության ասպարեզում՝ Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում հիմնել է պրոֆ. Նիկողայոս Մառի անվան կրթաթոշակ՝ 600 ռուբլի գումարի չափով: Միաժամանակ հայտնում է, որ նրա անվան կրթաթոշակը այդ տարում տրվում է նույն ֆակուլտետի հայ-վրացական բաժնի ուսանող Վահան Տեր-Գրիգորյանին (Տերյանին):

Արշավախմբի պեսը մշտապես հաշվետու էր լինում խորհրդին ոչ միայն պեղումների արդյունքների, այլև անգամ նախատեսվող աշխատանքների մասին: Անիի 13-րդ արշավախումբը, որը հավանության էր արժանացել կայսերական ակադեմիայի կողմից, Ն.Մառը համաձայնեցնում է նաև եկեղեցական խորհրդի հետ: Խորհրդի նախագահ Վ.Վարդանյանին հղած նամակում նշում է, որ ինքն անհետաձգելի գործերով լինելու է Հյուսիսային Կովկասում: Արշավախմբին անմիջական մասնակցություն ունենալ չի կարող, սակայն իր աշակերտներն արշավախմբի փորձված անդամների հետ կաշխատեն ոչ պակաս արդյունավետությամբ: Նրանց հանձնարարված է ստույգ գրանցել պեղումների ընթացքը: Ավարտուն վիճակում հրատարակության պատրաստել արքունական եկեղեցու գծագրերն ու նկարնե-

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 399, ց.1, գ. 1018, ք. 18:

րը: Արշավախմբի ավարտին բոլոր կատարված աշխատանքները տեղում իր կողմից կնայվեն ու կընդունվեն⁸¹:

Տեղեկանալով, որ խորհուրդը առանց նախորդ տարվա պեղումների մասին զեկուցում լսելու ֆինանսավորել է 16-րդ արշավախումբը (1917 թ.), Ն.Մառն իր գոհունակությունն է հայտնում և ներկայացնում Անիի Հնությունների թանգարանի 1916 թ. գործունեության արդյունքները: Նա նշում է, որ գիտական մասի ուրվագծումը ի հայտ է բերում հետաքրքիր կանխատեսումներ՝ բնութագրելու արևելաքրիստոնեական, մասնավորապես հայկական արվեստը: Այդ տարում արշավախումբը գործել է կայսերական ակադեմիայի կողմից հատկացված 5 հազար ռուբլի, եկեղեցական խորհրդի կողմից հատկացված 3500 ռուբլի և քաղաքացի Աֆրիկյանի կողմից տրված 1000 ռուբլի գումարներով: Ապա արշավախմբի պետը նկարագրում է կատարված բոլոր գործերը: Արշավախմբին մասնակցել են ուսանող Ն.Տոկարսկին, լուսանկարիչ Ա.Վրույը և հնագիտական աշխատանքների գծով Ն.Մառի տեղակալ Գ.Չուբինովը⁸²:

Հաջորդ տարում խորհրդի նույնչափ գումարով արշավախմբին ֆինանսավորելու առիթով Ն.Մառն իր խորին շնորհակալությունն է հայտնում դժվարին ժամանակներում հետևողականորեն գիտամշակութային այդ ձեռնարկմանն աջակցելու համար: Եվ դա այն պարագայում, նշում է նա, երբ դեռևս մտավոր լայն շրջաններում և իշխանության ոլորտներում շատ քչերն են կատարվող պեղումների նշանակությունը խորապես ըմբռնում⁸³:

Կատարված պեղումների արդյունքներն ամփոփվեցին 1934 թ. հրատարակված «Անի» աշխատությունում⁸⁴:

⁸¹ Տե՛ս նույն տեղում, թ. 53:

⁸² Տե՛ս նույն տեղում, թ. 55-56:

⁸³ Տե՛ս նույն տեղում, թ. 35:

⁸⁴ Տե՛ս Н.Я.Март, Ани: книжная история города и раскопки на месте городища, Ленинград, Москва, 1934:

* * *

Պետերբուրգի եկեղեցական խորհրդի աջակցութեանն էին դիմում տարատեսակ մեծ ու փոքր, այդ թվում նաև հաճախ սոսկ անձնական բնույթի խնդիրներով: Այդ հարցերը համակողմանիորեն քննարկվում էին խորհրդի նիստերում, բայց դրական ընթացք էին ստանում առաջին հերթին հասարակական նշանակութունն ու հնչեղութունն ունեցող արժեքավոր գործերը:

1891 թ. «Ազգագրական հանդեսի» խմբագիր Երվանդ Լալայանը ներկայացնում է հայկական Հինգ գավառների ազգագրական նյութերն իր կողմից հավաքելու և տպագրելու պարագան և խնդրում 3 հազար ռուբլի գումար հետագա աշխատանքների համար: Նա շեշտում է նաև այն հանգամանքը, որ Անդրկովկաս մուտք գործած երկաթուղիները մի քանի տարվա ընթացքում կկերպարանափոխեն հայկական կյանքն ու կենցաղը, ուստի անհրաժեշտ է փրկել այդ նյութերը կորստից⁸⁵: Խորհուրդը դժվարանում է կողմնորոշվել, ուստի կարծիքի է ուղարկում բանիմաց մասնագետներից Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանին: Վերջինս ներսիսյան դպրոցում եղել էր Ե. Լալայանի դասընկերը, միասին մանկավարժութեամբ էին զբաղվում, ուստի և քաջատեղյակ էր նրա կյանքին ու գործին: Նա Ե. Լալայանին բոլոր կողմերով բնութագրող ծավալուն կարծիք է ներկայացնում՝ նշելով, որ Ե. Լալայանն ազգագրութեան մեջ մասնագիտացել է Շվեյցարիայում, ապա Փարիզում, որտեղ ընտրվել է Մարդաբանական ընկերութեան թղթակից անդամ: Հիմնավոր պատրաստվածութեամբ և մեծ նվիրումով մի քանի տարում՝ 1896 թ. մինչև 1900 թ., հրատարակել է Հայաստանի տարբեր գավառներին վերաբերող 6 գիրք: Նա ջանացել է ներկայացնել հայ ժողովրդի կյանքը՝

⁸⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1001, ք, 1:

իր բոլոր դրսևորումներով: Ապա Մ.Տեր-Մովսիսյանը բերում է Ե.Լալայանի խոսքերը ապագա ծրագրերի մասին. «...Հանդէսը կը դառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իւր նիւթը կ'վերցնէ ազգային վէպ ստեղծելու..., լեզուաբանը բառերու ոճեր կ'քաղէ..., հրապարակախօսն և հոգևորականն ազդի վէրքերը կ'նկատեն..., բժիշկը նրա ցաւերը կ'տեսնէ..., ուսուցիչը մանկան ընտանեկան կեանքը կ'ը/մբռնէ..., իսկ գիտնականը իւր նիւթը կ'վերցնէ գծելու էվոլյուսոնի օրէնքները»⁸⁶: Վերջում Մ.Տեր-Մովսիսյանը ներկայացնում է հրատարակված հատորների բովանդակութիւնը, կառուցվածքը, հեղինակի ջանասեր նվիրումը և իր կարծիքն ավարտում հետևյալ խոսքերով. «Եր.Լալայանի հինգ տարուայ տոկոսն, նիւթական և անձնական զոհաբերութիւններով լի և բեղմնաւոր աշխատանքը արժանի է թէ մասնաւոր և թէ հասարակական հաստատութիւնների բարոյական և նիւթական խրախուսանքին և իմ խորը համոզմամբ ով կ'կատարէ և ցոյց կ'տայ այդպիսի օգնութիւն, նա կարող է հաւատացած լինել, որ հայ գրականութեան մի արդիւնաւետ մշակի օգտակար աշխատանքն է խրախուսել»⁸⁷:

Եկեղեցական խորհուրդը կրկին քննարկում է և հենվելով Ե.Լալայանի ու նրա աշխատանքների մասին հույժ դրական կարծիքի վրա՝ «Ազգագրական Հանդեսի» տպագրութեան համար առանձնացնում է 3 հազար ռուբլի՝ յուրաքանչյուր հատորին 500 ռուբլի հատկացնելու պայմանով⁸⁸: Տարիներ անց՝ 1908 թ., «Հայոց ազգագրական ընկերութեան» նախագահ Ալեքսանդր Մելիք-Աղարյանը հայտնում է խորհրդին, որ վերջինիս կողմից ընկերութեանը հատկացրած 1000 ռուբլին տրվել է Ե.Լալայանին, որը

⁸⁶ Նույն տեղում, թ. 2:

⁸⁷ Նույն տեղում, թ. 3:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

թողել է լավ վարձատրվող ներսիսյան դպրոցի ուսուցչու-
թյունը և ամբողջովին նվիրվել հայկական նոր գավառների
նյութերի հավաքմանն ու «Ազգագրական հանդեսի» հա-
տորների տպագրմանը: Ա.Մելիք-Աղարյանը խնդրում է
1909 թ. ևս ընկերութանը հատկացնել 1000 ռուբլի՝ Ե.Լա-
լայանին փոխանցելու նպատակով⁸⁹:

Արդեն պատերազմի ժամանակ՝ 1915 թ., Ե.Լալայանը
խորհրդին տեղեկացնում է իր կողմից ուղարկված գրքերի
և այն մասին, որ շուտով՝ պատերազմի ավարտից հետո,
ձեռնամուխ է լինելու Վանի վիլայեթի, Մուշի տեղագրա-
կան և ազգագրական նյութերի հավաքմանը, ձեռագրերը
նկարագրելուն: Նա խնդրում է միջոցներ հատկացնել
տպագրելու «Ազգագրական հանդեսի» 26-րդ գիրքը: «Յու-
սալով որ Մեծարգոյ Խորհուրդը որպէս իմ միակ մեկենասը,
– գրում է նա, – չի թողնիլ ինձ իղձերիս կատարման կէս
ճանապարհին, ես մերժեցի ինձ առաջարկուած Թիֆլիսի
Կովկասեան Թանգարանի վերատեսչի օգնականի պաշտօնը,
որ յետոյ յանձնեցին Սմբատ Տէր Աւետիսեանին»: Այդ
հարցը լուծում է ստանում⁹⁰:

Եկեղեցական խորհուրդն առնչվել և իր նպաստն է
բերել նաև հայագիտական միացյալ արժեքավոր աշխատու-
թյան՝ Գյուլտ քահանա Աղանյանցի «Դիւան հայոց պատ-
մութեան» բազմահատորյակի հրատարակութանը:

Մայրաքաղաքների հայկական եկեղեցիների հոգա-
բարձու Ս.Աբամելիք-Լաղարյանը 1900 թ. դեկտեմբերի 12-
ին եկեղեցական խորհրդին հայտնում է այն մասին, որ
իրեն վեհափառ հայրապետը խնդրել է դիմել խորհրդին, որ
միջոցներ գտնի և իրականացնի «Դիւանի» 5-րդ հատորի
հրատարակութունը: Երկրորդ՝ 1901 թ. մարտի 8-ի գրու-
թյամբ հոգաբարձուն խորհրդին տեղեկացնում է, որ նոր

⁸⁹ Տե՛ս Առյժն տեղում, ք. 32:

⁹⁰ Տե՛ս Առյժն տեղում, ք. 75–76:

Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդը շատ բարձր է գնահատում Գ.Աղանյանցի աշխատութիւնը, որի 5-րդ հատորը նվիրվում է Հովհաննես Լազարյանի մահվան 100-ամյակին: Նա խնդրում է խորհրդին քննարկել այդ հարցը և հնարավորութիւն ստեղծել հատկացնելու 1000 ռուբլի գումար, իսկ «Դիւանի» հրատարակված հատորներից 50-ական օրինակ ձեռք բերելու հարցը կարող են քննարկել հեղինակի հետ⁹¹:

Տարիներ անց Գ.Աղանյանցը, գոհունակութիւն հայտնելով 5-րդ հատորի տպագրութեան համար և հավելելով, որ ժողովածուի 8-րդ հատորը լույս է տեսել Բաքվի հայոց մշակութային խորհրդի նպաստով, նշում է, որ իր մոտ պատրաստ են մինչև 15-րդ հատորները, և խնդրում է հոգալ հատորներից մեկի հրատարակութեան ծախսերը: Խորհուրդն ընդառաջում է հեղինակին և գումար է փոխանցում նաև նախորդ հրատարակութիւններից օրինակներ ստանալու համար⁹²:

* * *

Գիտութեան զարգացման առաջագիծ կենտրոններ դարձած ռուսական մայրաքաղաքներում իշխող ընդհանուր մթնոլորտը, Հայ գիտակրթական մտավորականութեան առկայութիւնը, Պետերբուրգի եկեղեցական խորհրդի հայագիտութիւնը խթանելու հետևողական դիրքորոշումը հայկական համայնքները դարձրել էին համազգային գիտական խնդիրներ արծարծող կարևոր օջախներ: Հիշատակենք այդ հանգամանքը հատկանշող կարևոր մի իրադարձութիւն:

Ինչպես հայտնի է, ցարական Ռուսաստանը Հայ հեղափոխական դաշնակցութեան կողմից «սեպարատիզմի», պետական հեղաշրջում նախապատրաստելու շինծու մեղա-

⁹¹ Տե՛ս Առյժ տեղում, գ. 1100, ք. 1, 4:

⁹² Տե՛ս Առյժ տեղում, ք. 10, 23:

դրանքով կալանավորել էր 159 հայ քաղաքացիների, որոնց թվում էր նաև Հովհաննես Թումանյանը: Հայկական ոգով լիաթոք շնչող հայկական գաղութը մեծ ոգևորությամբ է ընդունում մեծ գրողի՝ Պետերբուրգում գտնվելու հանգամանքը:

1912 թ. մարտի 22-ին կալանքից ազատվելուց հետո նրա հետ ջերմ հանդիպումներ են ունենում քաղաքի ամենատարբեր շրջանները: Հայկական ակումբում Հ.Թումանյանի պատվին մեծ խնջույք է կազմակերպվում: Բանաստեղծն այցելում է դպրոց, որտեղ երգչախումբը նրա համար կատարում է «Մեր հայրենիքը», «Զեյթունցիների քայլերգը», ներկայացնում են «Շունն ու կատուն»⁹³:

Մեծ գրողը բաց չէր թողնում Պետերբուրգում գտնվելու պատեհ առիթը տեղի մտավորականների հետ հանդիպելու և հատկապես գիտամշակութային կարևոր իր մտահղացումներին գործնական բնույթ հաղորդելու համար: Նա հանդիպումներ է ունենում ռուս բանաստեղծ Վ.Կորոլենկոյի, նկարիչներ Բրոդսկու, Լանսերեի, Լյուբիմովի, Վարդգես Սուրենյանցի և ուրիշների հետ: Քանիցս հանդիպում է ակադեմիկոս Ն.Մառի հետ: Նրան խիստ մտահոգում էր ժողովրդին լուսավորելու, նրա հետամնացութունը հաղթահարելու հարցը: Հոգևոր գործիչ բանասեր Մ.Տեր-Մովսիսյանին ուղղած նամակում Հ.Թումանյանը խորհուրդ է տալիս գիտության բնագավառում Ն.Մառին օգտագործելու անհրաժեշտության մասին և ավելացնում. «Գիտություն, գիտություն. տգիտության մեջ

⁹³ Տե՛ս Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 144: «Հրավիրեցին այստեղի գաղութի մանկական ցերեկույթին, – գրում է բանաստեղծը Նվարդ Թումանյանին: – Մի երեխա առաջ եկավ իրեն նման պստիկ մի ճառ ասավ ինձ ու ծաղիկներ սվեց, իհարկե, ես էլ համբույրներով ընդունեցի: Ներկայացրին «Շունն ու կատուն», հետո շարքով մի խումբ երեխաներ եկան ինձ – համբուրվեցինք ծափերի տակ»:

տառապում ենք: Էսքան էլ տգիտություն. ոչ մեզանից բան գիտենք, ոչ աշխարհքից: Ինչի՞ նման է»⁹⁴: Հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանին հասցեագրած նամակում Հ.Թումանյանը գրում է. «Ախր շատ ենք անգետ ու կույր – գյուղից մինչև քաղաք, հոգևորական – աշխարհական, գրող ու ընթերցող տգե՛տ, տգե՛տ, ամեն բանից, սկսած մեզանից, մեր պատմությունից, մեր կյանքից»⁹⁵:

Դպրոցի աշակերտների հետ հանդիպումների մասին Նվարդ Թումանյանին գրած նամակն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Բայց ամենից լավն էն էր, որ երեք գիշեր հայոց պատմության ֆոնդի ժողովն ունեցանք – ընտրվեց հանձնաժողով և գործս, ինձ թվում է, արդեն ունեցավ սկիզբը ու կերթա»⁹⁶: Հ.Թումանյանը նախնական կալանքից ազատվելուց մի քանի օր անց գրում է «Հայոց պատմություն» և «Հայագիտության ազգային ֆոնդ» հոդվածները: Դրանցում բարձրացրած հարցերը, հավանական է, մտորել ու գրել էր կալանքում եղած օրերին, մանավանդ որ հոդվածներում շոշափած հիմնախնդիրներն իրեն զբաղեցնում էին վաղուց, ինչի մասին գրել էր Գ.Տեր-Մկրտչյանին դեռևս 1891 թ. հոկտեմբերին ուղղած նամակում⁹⁷: Առաջին հոդվածում նշում է, որ հայ ժողովուրդն անծանոթ է իր պատմությանը, «չգիտի թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում: Հոգեկան ու մտավոր կուրուլթյան մեջ այս տեսակ ժողովուրդը անուղեցույց խարխափում է»⁹⁸:

Պետերբուրգի հայ համայնքի նշանավոր դեմքերի ու գիտնականների մասնակցությամբ ժողով է հրավիրվում, որտեղ քննարկվում է հայոց պատմության և հայագիտության ազգային ֆոնդ կամ ուղղակի հայագիտության ազ-

⁹⁴ Նույն տեղում, էջ 149:

⁹⁵ Նույն տեղում, էջ 151:

⁹⁶ Նույն տեղում, էջ 145:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 129:

⁹⁸ Նույն տեղում, հ. 6, Երևան, 1994, էջ 355:

գային ֆոնդ ստեղծելու հարցը: Հ.Թումանյանը հողվածուժ ֆոնդի նպատակն ու անելիքները, սակ է թե հայագիտության խնդիրները այնքան խոր ու համակողմանի, միաժամանակ այնքան խելամիտ ու ստույգ է բնութագրել, որ 100 տարի անց դրանք լիովին այժմեական են հնչում: Ահա թե ինչու մեծ մտածողի խոսքերը, թեև ծավալուն, մեջբերում ենք ամբողջությամբ: Հայագիտության ազգային ֆոնդի նպատակն է լինելու.

«Հավաքել, թարգմանել, ուսումնասիրել և հրատարակել .

1. Հայկական, հունական, հռոմեական, ասորական, պարսկական, արաբական, վրացական, ռուսական և այլ ազգերի պատմագիրների տեղեկությունները հայ ազգի մասին:

2. Ռուսական, տաճկական, պարսկական և այլ տերությունների պետական դիվանատներում-արխիվներում գտնվող հայոց պատմագրության վերաբերյալ նյութերն ու դոկումենտները:

3. Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսության և Սսի ու Ախթամարի կաթողիկոսարանների, Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարանների, այլև Հռովմի Վատիկանի և այլ հոգևոր իշխանությունների արխիվների հայոց պատմության վերաբերյալ դոկումենտներն ու նյութերը:

4. Էջմիածնի, Վենետիկի, Վիեննայի, Պետերբուրգի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի և այլ տեղերի թանգարանների ու մատենադարանների հայոց պատմության վերաբերյալ նյութերն ու ձեռագիրները և հայոց վանքերի ու հին հիշատակարանների արձանագրությունները:

5. Հայոց լեզվի, կրոնի, հին ու նոր բանավոր և գրավոր գրականության, երաժշտության, նկարչության, ճարտարապետության և այլ արվեստների վերաբերյալ նյութերն ու ուսումնասիրությունները:

6. Հայն ծավալ տալ պեղումներին և հրատարակել նրանց արդյունքներն ու հետազոտությունները:

7. Հավաքել հայոց և օտար մամուլի մեջ եղած հայոց պատմության համար կարևոր նյութերն ու տեղեկությունները:

8. Բոլոր նյութերը հավաքել էջմիածին և այնտեղ ամեն հարմարություն տալ այս գործով պարապող ձեռնհաս մարդկանց:

9. Սրա համար կազմել մի ընկերություն կամ կապել այս գործը եղած ազգային հիմնարկություններից մեկի հետ:

Եվ 10. Որովհետև այս ամենը երկար տարիների կատարելիք գործեր են՝ առանձին ուշք դարձնել ըստ կարելույն շուտով տալու վերջին դարերի պատմությունը՝ հայերը Ռուսաստանում, հայերը Տաճկաստանում, հայկական գաղթականությունը և հայկական խնդիրը»⁹⁹:

Ժողովում ընտրվում է հանձնաժողով, որի կազմում էին ակադեմիկոս Ն.Մառը, պրոֆեսորներ Վ.Վարդանյանը, Գարագաշը, Ն.Ադոնցը, պետական խորհրդի, դումայի անդամներ Ա.Ղուկասյանը, Ս.Տիգրանյանը, նկարիչ Վ.Սուրենյանցը և Պատկանյանը:

Հայագիտության ուղղությունը լայն ձեռնարկումների հարցը Հ.Թումանյանին հանգիստ էջեր տալիս անգամ Թիֆլիս վերադառնալուց հետո: Բանաստեղծը Թիֆլիս է հասնում 1912 թ. ապրիլի 19-ին, իսկ ապրիլի 25-ին այդ խնդիրներին նվիրված հատուկ նամակով կապվում է Ն.Մառի հետ: Ներողություն է խնդրում, որ իրենց վերջին հանդիպման ժամանակ պայմանավորվածությունը (մինչև Մոսկվայում չստեղծվի հանձնաժողով, այնտեղից չհեռանալ) չկարողացավ կատարել, և հայտնում, որ Մոսկվայում էլ այդ գաղափարը շատ են հավանել: «Մոսկվացիք պնդե-

⁹⁹ Նույն տեղում, էջ 356–357:

ցին, – գրում է Հ.Թումանյանը, – գրական ու պատմագրական ֆոնդը միացնելու վրա և հայկական ակադեմիայի խնդիրն ավելի որոշեցին: Հատկապես պ. Ստ.Մամիկոնյանը, որ, ինչպես գիտեք, քաջածանոթ է հայոց դպրոցական գործերին...»: Ապա Ն.Մառին խորհուրդ է տալիս հարցը գործնական հողի վրա դնելու համար օգտագործել շուտով Պետերբուրգ մեկնող Ամենայն հայոց կաթողիկոսին: Հ.Թումանյանը հայագիտության զարգացումը, իրավամբ, առաջին հերթին կապում էր Ն.Մառի հետ: «Դուք լինելու եք գլխավոր դերակատարը, – շեշտում էր նամակում, – և ես սրտանց ուրախ եմ, որ հայկական ակադեմիայի և հայագիտության գործը մեր մեջ հաջողելու է Ձեր ձեռքով և կապվելու է ընդմիջտ Ձեզ հետ, որ այնքան վայելուչ ու գեղեցիկ գալիս է Ձեր սիրելի անձնավորությանը, Ձեր՝ գիտությանն ու հայագիտությանն արած անգնահատելի ծառայություններին և Ձեր մեծ պատրաստությանն ու հմտությանը»¹⁰⁰:

Ապա նամակով Հ.Թումանյանը դիմում է Մ.Տեր-Մովսիսյանին, որը ուղեկցում էր Պետերբուրգ մեկնող Գևորգ Ե նորընտիր կաթողիկոսին: Նրան խնդրում է հայագիտության հարցով լրջորեն զբաղվել և օգտագործել Ն.Մառին. «Ա՛յ մարդ ինչքան բան ունեի խոսելու, կարծում էի կգաս Թիֆլիս, բայց չմոռանաս Պետերբուրգում էդ հայագիտության թե հայկական ակադեմիայի խնդիրը: Իհարկէ, Մառի հետ կխոսես: Տո էդպես էլ լավ մարդ կլինի^o: Երբ է շատանալու էդ տեսակ մարդկանց թիվը – համ լավ մարդ, համ գիտնական»¹⁰¹:

Նույն ոգով նամակ է ուղարկում էջմիածին՝ հայագետ Գ.Տեր-Մկրտչյանին, նրան ևս հորդորում այդ գործում ակտիվ դերակատարություն ունենալու և Ն.Մառին օգտագործելու մասին: «Քո և մի երկու հոգու մասին, –

¹⁰⁰ Նույն տեղում, հ. 10, էջ 146–147:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 149:

գրում է Հայագիտության զարգացմամբ մտահոգ Հայրենասեր բանաստեղծը, – շատ ենք խոսել Մառի, այդ շատ լավ մարդու հետ: Եթե կարողանայինք այն տեսակ մի գործ կատարել, այսինքն ճիշտ որ գիտության մի ակադեմիա ունենալ և Մառն էլ այնտեղ... Նա ինքն էլ շատ է ուրախ և ուրախությամբ էլ ընդունեց Պետերբուրգի Հանձնաժողովի անդամությունը, կանի ամեն բան, ինչ հնարավոր է, և վերջապես այնքան բան է անում – միայն մենք չկանք: Սրանից էլ լավ դեպք չի կարող լինել, որ մենք էլ ազգովին մի շարժվենք գիտության համար»¹⁰²:

Մեծ գրողն ու մտածողը, լավ իմանալով ռուսական մայրաքաղաքների Հայկական Համայնքների գիտակրթական բարձր մակարդակ ունեցող մտավորականության ներուժը, հենց այդտեղ էր բարձրացնում Հայագիտության որպես ժողովրդի ինքնությունը հատկանշող, նրա ազգային դիմագիծը պահպանող կարևոր մի ուղղության զարգացման հիմնախնդիրները: Որքան խոր ու մարգարեաբար էր կանխատեսում քաղաքակրթության զարգացման ուղենիշը, որ տակավին մեկ դար առաջ բարձրացնում էր ազգային ակադեմիա հիմնելու հարցը: Նա լուսավորություն տարածելու, ժողովրդին խավարից հանելու հարցերում յուրովի շարունակում էր Մոսկվայի և Պետերբուրգի Հայկական Համայնքների լիբերալ գործիչների գաղափարախոսությունը, բայց առավել գործնական, ընդգրկուն և ապագային միտված առավել խորաթափանց կանխատեսումներով:

Մայրաքաղաքում Հայտնվելու առիթից օգտվելը և Հայագիտությունը զարգացնելու, այն օրակարգի հարց դարձնելու Հ.Թումանյանի մտահղացումը միանգամայն հիմնավորված էր: Ռուսական մայրաքաղաքները դարձել էին Հայ գիտամշակութային կյանքի զարգացման կենտրոններ: Այդտեղ Հայոց պատմության, բանասիրության, առ-

¹⁰² Նույն տեղում, էջ 151:

հասարակ մշակույթի ուղղությամբ կատարվող աշխատանքները մեծապես խթանվում էին երկու քաղաքներում հիմնված հայկական տպարանների միջոցով:

* * *

Հայերեն գրականության տպագրման գործը Պետերբուրգում ավելի շուտ սկզբնավորվեց, քան Մոսկվայում: Գրիգոր Խալգարյանն իր տպարանը Լոնդոնից 1781 թ. տեղափոխեց Պետերբուրգ: Մայրաքաղաքում այն գործեց ութ տարի, ապա Հովսեփ Արղությանի ջանքերով տեղափոխվեց Նոր Նախիջևան, այդտեղից էլ՝ Աստրախան: Ռուսահայերի այդ առաջին տպարանի մասին շատ է գրվել: Նշենք միայն, որ Պետերբուրգում գտնվելու տարիներին տպագրվեց 18 աշխատություն: Դրանք ծառայում էին երկու նպատակի. դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ՝ մանուկներին ուսուցանելու և ռուսաց լեզվին տիրապետելու համար, աշխատություններ՝ ուղղված երկու ժողովուրդների պատմությանն ու մշակույթին փոխադարձ ծանոթացնելուն: Հրատարակված գրքերի թվում էր Գ.Խալգարյանի հայ-ռուսերեն բառարանը, որը կրում էր «Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» խորագիրը: 1788 թ. հրատարակվում է Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» ուսույց-բառարանը, որը նախատեսված էր և՛ կրթություն ունեցող երեխաների, և՛ բնակչության տարբեր խավերի համար: Նրա աշխատության մեջ թարգմանված են ոչ միայն առանձին բառեր, այլև արտահայտություններ՝ առաջին խոսակցություն՝ *первыи разговор*, հավիտենական կյանք՝ *вечная жизнь*, երկնային թագավորություն՝ *царство небесное* և այլն: Գիրքն ուներ հիմնականում դպրոցականներին ուղղված զրուցարան, որով ուսուցանում էր կիրթ վարվեցողություն: Ենթադրվում է, որ Կ.Սարաֆյանը նշանավոր վաճառական-արդյունաբերող, Հայաստանի

ազատագրման նախագծի հեղինակ Մովսես Սարաֆյանի գուստրն էր: Նա կիրթ ու գրագետ անձնավորություն էր և հետամուտ էր, որ հայրենակիցներին ուսուց լեզու և բարեվայելուչ վարվեցողություն ուսուցանվի¹⁰³: Հրատարակվում են Եղիշեի «Վարդանի և հայոց պատմություն մասին» երկը, Ներսես Շնորհալու և ուրիշ հեղինակների գործերը:

Հրատարակվում են (1786 թ.) զինվորական Վառլամ Վահանովի թարգմանությունամբ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի վերջին մասը՝ «Ողբ Հայաստանի մասին», և այլ թարգմանություններ:

Հաջորդ հարյուրամյակի սկզբին Աստրախանի հոգևոր գործիչ, տպագրիչ Հովսեփ Հովհաննիսյանը Պետերբուրգում Ս.Կատարինե եկեղեցու երկրորդ հարկում հիմնում է հայկական տպարան¹⁰⁴: Այդ տպարանում տպագրվում են տասից ավելի գրքեր: Դրանց թվում էին Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» ռուսերեն ամբողջական բնագիրը, Գևորգ Խուրովի՝ ռուս ընթերցողին հասցեագրված «Հայաստանում հիշարժան իրադարձությունների նկարագրությունը»: Հրատարակվում են նաև կենսագրական բնույթի «Հարություն Արարատյանի կյանքը» գիրքը և այլ աշխատություններ: Պետերբուրգում հրատարակչական բեղուն գործունեություն էր ծավալել Հ.Արղունի

¹⁰³ Սալոմե Արեշյանը, հենվելով Պետերբուրգի մարզային արխիվի որոշ տվյալների վրա, գտնում է, որ Ս.Կատարինե եկեղեցում կար դպրոց, և Կ.Սարաֆյանը հենց այդ դպրոցի երեխաների, ինչպես նաև մյուս բնակավայրերի երեխաների համար էր դասագիրք ստեղծում (տե՛ս Ս.Գ.Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, էջ, 17–18):

¹⁰⁴ Կամսար Գրիգորյանը տպարանի հիմնադրման տարեթիվը համարում է 1805 թ. (տե՛ս Կ.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 113), Ռաֆայել Իշխանյանը՝ 1810 թ. (տե՛ս Ռ.Իշխանյան, Հայ գիրքը, Երևան 1981, էջ 136), իսկ Ս.Արեշյանը՝ 1812 թ. (տե՛ս Ս.Գ.Арешян, նշվ. աշխ., էջ 18): Տվյալ պարագայում մի քանի տարվա տարբերությունը եական նշանակություն չունի:

մերձավոր օգնականներից Մարգար Խոջենցը, որը գեղարվեստական գործեր էր թարգմանում ու հրատարակում:

XIX դ. Պետերբուրգում հիմնվեցին հայկական նոր տպարաններ, և հայագիտական ու թարգմանական գրականության հրատարակությունը լայն թափ առավ:

Մոսկվայում մի փոքր ավելի ուշ՝ XIX դ. 20-ական թթ., հատկապես 1829 թ. Լազարյան ճեմարանի տպարանը հիմնելուց հետո սկսվեց գրատպությունը: Մոսկվայում լույս տեսած առաջին գրքերից էին Հարություն Ալամդարյանի «Ռուս-հայերեն» բառարանը, Միքայել Սալլանթյանի «Քերականութիւն գրաբար լեզուի հայոց» և բազմաթիվ դասագիրք-ձեռնարկներ¹⁰⁵:

Լազարյանների հովանավորությամբ հրատարակվեց Ա.Խոլդաբաշյանի «Հայ-ռուսերեն բառարան» երկհատորյակը¹⁰⁶: Խ.Լազարյանը հանձնարարեց գրող, պատմաբան Սերգեյ Գլինկային նյութեր հավաքել՝ գրելու հայոց պատմության և հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ աշխատություններ: Հոլմանիստ ստեղծագործող Ս.Գլինկան տարվեց հայոց պատմությամբ ու մշակույթով, գրեց երկու պատմվածք Հայաստանի անցյալից: Դրանցից մեկը նվիրված էր Հայկի և Բելի առասպելին¹⁰⁷: Նա գրեց երկու մասից բաղկացած «Հայ ժողովրդի պատմության տեսություն» (1832–1833) աշխատությունը¹⁰⁸: Գրեց մեկ

¹⁰⁵ Տե՛ս Սալլանթեանց Մ., Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց, հ.1, Մոսկով, 1827, Նույնի՝ Կրօնագիտութիւն քրիստոնէական /ըստ ուղղափառ դասնութեան առաքելական եկեղեցոյ լուսատրչակոց հայոց, Մոսկով, 1831 և այլն:

¹⁰⁶ Տե՛ս Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, աշխատասիրութեամբ Աղէքսանդրի Մակարեան Խոտաբաշեանց, հ. 1–2, Մոսկով, 1838:

¹⁰⁷ Տե՛ս С.Н.Глинка, Две повести в стихах, почерпнуты из древних армянских летописей, Москва, 1831:

¹⁰⁸ Տե՛ս Նույնի՝ Обзорение истории армянского народа, Москва, ч. 1–2, Москва, 1832–1833 (Ереван, 1990)::

այլ աշխատութիւնն՝ նվիրված Հայերի ներգաղթին Արևել-
յան Հայաստան¹⁰⁹: Ս.Գլինկան կազմեց և ուսուցեց Նրատա-
րակեց ժողովածուի երեք Հատորները: Արժեքավոր այդ
ժողովածուում ներառված են Հայ-ուսական հարաբերու-
թիւնների շատ կարևոր վավերագրեր, որոնք այսօր էլ չեն
կորցրել իրենց նշանակութիւնը¹¹⁰: Մոսկվայում ևս հետա-
գայում լայն ծավալ ընդունեց գրականութիւն, այդ թվում
նաև եվրոպական և ուսական դասական հեղինակներից
կատարվող թարգմանական գործերի հրատարակումը:

* * *

Պետերբուրգի և Մոսկվայի հայկական շրջաններում
տարբեր ձևերով ու մեթոդներով կատարվում էին գիտա-
կրթական բեղուն աշխատանքներ, որոնց իրենց մասնակ-
ցութիւնն էին բերում ինչպես տեղի մտավորականու-
թիւնը և ուսանողութիւնը, այնպես էլ Հայաստանի և
Ռուսաստանի հայկական շրջանների ներկայացուցիչները:
Երկու քաղաքների տարբեր հաստատութիւններում հիմ-
նականում Հայերի մասնակցութեամբ կազմակերպվում էին
անվանի մասնագետների զեկուցումներ, դասախոսութիւն-
ներ: Գերազանցապես նորութիւններ բովանդակող հաղոր-
դումներն աշխույժ մթնոլորտ էին ստեղծում և մեծապես

¹⁰⁹ Տե՛ս Նույնի՝ Описание переселения армян аддербиджанских в пере-
делы России, Москва, 1831 (Նկարագիր գաղթականութեան Հայոց ի
Պարսկաստանէ ի Ռուսաստան, Մոսկուա, 1832):

¹¹⁰ Տե՛ս Նույնի՝ Собрание актов, относящихся к обозрению истории
армянского народа, ч. 1–3, Москва, 1833–1838: Պահպանողական
շրջանները վատ վերաբերմունք դրսևորեցին ռուս և հայ ժողովուրդ-
ների բարեկամական հարաբերություններին նվիրված Ս.Գլինկայի
աշխատության նկատմամբ: Նա դիմեց Խ.Լազարյանի օգնությանը,
որը Ա.Բենկենդորֆի միջոցով հարցը լուծեց՝ թույլատրելով աշխա-
տանքը տեղափոխել Պետերբուրգ (տե՛ս Ս.Գ.Арешян, նշվ. աշխ., էջ
105–107):

խթանում հետաքրքրությունը հայագիտության նկատմամբ:

Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության արևելյան հանձնաժողովի նիստում Լազարյան ճեմարանի դասախոս Խ.Հովհաննիսյանը զեկուցում է կարդում Ղրիմի և Բեսարաբիայի հայկական ձեռագրերի մասին: Ներկաներն իրենց գոհունակությունն են հայտնում զեկուցման առթիվ¹¹¹: Ընկերության նիստում Գ.Խալաթյանցը զեկուցում է կարդում հանգուցյալ պրոֆ. Ք.Պատկանյանի մասին: Խ.Հովհաննիսյանը հաղորդում է 1888 թ. հնագիտական ընկերության նախագահ կոմսուհի Ուլարովայի և ճարտարապետ Պալինովի հետ Ախալցխայում, Գորի քաղաքում և հարակից շրջաններում ձեռք բերած հայկական ձեռագրերի մասին¹¹²: Այդ նույն ընկերության մեկ այլ նիստում Ն.Ադոնցը զեկուցում է «Վասսիլը և հայկական շարժումը V դարում» թեմայով, որտեղ, հակադրվելով պատմագիտական ավանդական տեսակետին, նորովի է ներկայացնում Վասսիին¹¹³:

Պետերբուրգի աշխարհագրական ընկերության դահլիճում հրավիրված ընկերության ազգագրական բաժնի ընդհանուր ժողովում Հ.Առաքելյանը հանդես է գալիս Ղևոնդ Ալիշանի հիշատակին նվիրված զեկուցմամբ: Դասախոսը նպատակ էր դրել ընկերության անդամներին և ունկնդիրներին և նրանց միջոցով ուղև հասարակայնությանը ծանոթացնելու Մխիթարյանների և Ղևոնդ Ալիշանի գործունեությանը: Նա զեկուցման առաջին մասը նվիրում է Մխիթարյաններին: Շեշտում է այն հանգամանքը, որ միաբանության հիմնադիր Մխիթար Աբբասայրը լավ էր հասկանում, որ առանց կաթոլիկ եկեղեցու հովանավորու-

¹¹¹ Տե՛ս Մարտ, 1911, 4. էջ 11:

¹¹² Տե՛ս Սշակ, 1889, 145:

¹¹³ Տե՛ս ճույն տեղում, 1902, 288:

թյան անհնար կլինե՞ր նախատեսված ծրագրերի իրագործումը: Այդ պատճառով նա ստեղծում է կաթոլիկ եկեղեցու միաբանութուն՝ պահպանելով ազգային եկեղեցու սովորությունները: Զեկուցողը լուսաբանում է Մխիթարյանների գիտամշակութային, ազգային վիթխարի գործունեությունը, անդրադառնում նրանց այն նշանավոր դեմքերին, որոնք եվրոպական համբավ են վայելում:

Զեկուցման երկրորդ մասը նվիրված էր Ղ.Ալիշանին, «որին ազգը նահապետ է անվանում»: Ունկնդիրների ձեռքից ձեռք էին անցնում նրա «Միսական», «Միսուան», «Այրարատ» հատորները: Վերջում հոտնկայս հարգում են Ղ.Ալիշանի հիշատակը: Նախագահող Լամանսկին առաջարկում է մեծ հետաքրքրություն և առաջացրած դասախոսությունը տպագրել, որպեսզի հասարակութայն լայն խավերը հնարավորություն ունենան ծանոթանալու Մխիթարյանների և նրանց վաստակաշատ գործիչների հետ¹¹⁴:

1908 թ. փետրվարի 21-ին Լազարյան ճեմարանի մեծ դահլիճում Ն.Մառը երեք ժամ տևողությամբ երեք ընդարձակ դասախոսություն է կարդում հայ և օտարազգի ներկայացուցիչների համար: Առաջին դասախոսությունը նվիրված էր Անի քաղաքի պատմությանը՝ նախքան պեղումները՝ հիմնված հայկական սկզբնաղբյուրների և եվրոպական ճանապարհորդների հաղորդումների վրա: Երկրորդ դասախոսությունը նվիրված էր Անիի՝ առաջինից մինչև վեցերորդ (1902–1907 թթ.) պեղումներին: Զեկուցողը մանրամասնորեն նկարների ցուցադրությամբ ներկայացնում է յուրաքանչյուր տարվա պեղումների արդյունքները և բացահայտում դրանց պատմամշակութային նշանակությունը: Երրորդ դասախոսությունը Անիի պատմության լուսաբանումն էր պեղումների, պահպանված հուշարձանների և գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա: Դասախոսու-

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, 1902, 102:

թյունները մեծ տպավորություն են գործում ունկնդիրների վրա: «Այսպէս՝ շնորհիւ պրոֆ. Մառի անխոնջ աշխատասիրութեան, — գրում է ունկնդիրներից Մ.Շովրյանը, — և նրա զուտ անգլիական յամառութեան ձեռնարկած գործում՝ մենք այժմ կարող ենք բաւականին ճիշտ գաղափար կազմել մեր միջին դարերի նախնեաց նիստ ու կացի և կուլտուրական բարգաւաճման մասին. իսկ հին կեանքի մասին մենք տակաւին ոչինչ չը գիտենք: Հայոց հնագոյն մայրաքաղաքները՝ Արտաշատ, Երուանդաշատ, Վաղարշապատ, Դուին և այլն դեռ ևս սպասում են իրանց Մառերին»¹¹⁵:

Գիտական աշխատանքի նկատմամբ համակրության ընդհանուր մթնոլորտ էր ստեղծում, հետաքրքրություն առաջացնում, դրա խթանմանը նպաստում լավագույն աշխատանքների համար մրցանակներ սահմանելը: Մրցանակներ էին սահմանվում առաջին հերթին հայագիտական աշխատությունների համար: Լազարյան ճեմարանի խորհուրդը 1908 թ. երեք մրցանակ է սահմանում (առաջինը՝ 700 ռուբլի, մյուս երկուսը՝ 500-ական ռուբլի գումարով) հայկական բարբառների ուսումնասիրության համար: Առաջին մրցանակը տրվելու էր քերականական ձևերի համառոտ տեսությամբ երկու կամ ավելի չուսումնասիրված բարբառների բառարան ստեղծելու համար: Մյուս մրցանակներից մեկը պետք է տրվեր Մուշի և Սասունի, երկրորդը՝ էրզրումի գավառի հայոց ազգագրական մանրամասն նկարագիրը ներկայացնելու համար: Բարբառների ուսումնասիրման նպատակով մրցանակ սահմանելը բացատրվում է դրանց կարևորությամբ, իսկ բառարանը՝ տարբեր բարբառներով արտահայտվողների՝ հաճախ իրար չհասկանալու դժվարությունը հաղթահարելու նպատակով: Այդ առիթով արծարծվում են ազգային բարքերն ու սովորությունները պահպանելու խնդրում տարբեր բարբառների ու դրանց առնչված ժո-

¹¹⁵ Նույն տեղում, 1908, 57:

ղովորդի հասարակ խավերի, աշխատավորական շերտերի էական ներդրման հարցերը: Բարբառները «պահում են սերնդից սերունդ իրանց նախնաց աւանդութիւնները, նախապաշարմունքները, հաւատալիքները, սովորութիւնները, նիստ ու կացը, խորիմաստ ասածները, որոնք ազգագրութեան համար առատ նիւթեր են մատակարարում: Այս բոլոր գաղափարները ու հասկացողութիւնները արտայայտելու համար ժողովուրդը ունի բառերի ամբողջ գանձարան, որ կրթեալ և լուսաւորեալ դասակարգին շատ անգամ անմատչելի է մնում բարբառագիտական բառարանի բացակայութեան շնորհիւ»¹¹⁶:

Լազարյան ճեմարանի տնօրեն Վ.Միլլերը հրապարակում է սկզբնաղբյուրների ժողովածուներ պատրաստելու երկու մրցանակ սահմանելու մասին հայտարարութիւն: Առաջինը՝ կազմել հայկական վիմագիր արձանագրութիւնների ժողովածու, երկրորդը՝ ձեռագրերի բաղդատամբ կազմել «Հայոց կանոնագիրքը»¹¹⁷: Դժվար չէ հասկանալ, թե երկու ժողովածուները աղբյուրագիտական-հայագիտական ինչպիսի մեծ արժեք են ներկայացնում:

Ուսանողութիւնը ևս իր մասնակցութիւնն էր բերում մայրաքաղաքների, մասնավորապես հայկական շրջաններում կազմակերպվող գիտական միջոցառումներին: Ի դեպ, երիտասարդներից շատերը, հաղորդակցվելով, շփվելով ու սնվելով բարենպաստ միջավայրում, աճում և հետագայում դառնում էին գիտութեան ճանաչված դեմքեր: Պետերբուրգի համալսարանի հիմնադրման 80-ամյա հոբելյանին ուսանողները ներկայացնում են իրենց աշխատանքները. 16 աշխատանքներ արժանանում են ոսկե մեդալի, որոնցից 4-ը հայ ուսանողների աշխատանքներն էին: Նրանցից Ալեք-

¹¹⁶ Նույն տեղում, 1908, 83:

¹¹⁷ Տե՛ս Մատենադարան, Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 273:

սանդր Աթաբեկյանը ներկայացրել էր «Պայմանական դատավարություն», Ռուբեն Հովհաննիսյանը (ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի հայրը)՝ «Աշխատասիրություն տների մասին», իսկ Ն.Ադոնցը՝ «Հարանց վարքի մասին» խորագրով աշխատություններ:

Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության արևելյան հանձնաժողովի նիստերին մասնակցում էին ուսանողներ Լ.Մսերյանը, Գ.Խալաթյանը, Գ.Տեր-Մկրտչյանը, Մ. արք. Սմբատյանը և ուրիշներ¹¹⁸:

Գիտական աշխատանքի նկատմամբ հետաքրքրության ուժեղացման ազդակ էին դառնում ճանաչում ստացած գիտական ընկերությունների կազմում հայ մասնագետներին ընտրելը կամ նրանց ատենախոսությունների պաշտպանությունները: Ռուսական կայսերական հնագիտական ընկերությունը 1882 թ. ընկերության անդամ Բ.Պատկանյանին ընտրում է բաժանմունքի կառավարիչ: Գ.Տեր-Մկրտչյանն ընտրվում է Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության թղթակից, ապա իսկական անդամ: Այդ նույն ընկերության անդամ է ընտրվում Գարեգին Հովսեփյանը, որը 1902 թ. ընտրվում է այդ նույն ընկերության կովկասյան բաժանմունքի իսկական անդամ:

Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում Ն.Ներսիսյանը վաճառականական իրավունքին նվիրված ատենախոսություն է պաշտպանում: Փակուլտետի դեկան պրոֆ. Լեչկովը բարձր է գնահատում աշխատությունը: Ի դեպ, այդ ֆակուլտետի ուսանող է եղել Ալեքսանդր Համբարձումյանը (ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի հայրը), ով գլխավորել է ուսանողական խորհուրդը: Պետերբուրգի համալսարանում Լևոն Մսերյանը համեմատական լեզվաբանության գծով մագիստրոսական ատե-

¹¹⁸ Տե՛ս Մշակ, 1899, 34, 1897, 139:

նախոսությունն է պաշտպանում՝ «Մուշի բարբառը» թեմայով¹¹⁹:

Ռուսական մայրաքաղաքների հայկական շրջաններում գիտություն, մասնավորապես հայագիտության զարգացումը մեծապես պայմանավորված էր Լազարյանների՝ գիտություն՝ իրենց համար հոգեհարազատ այդ ճյուղի համար պայմաններ ստեղծելու նախանձախնդրությամբ: Նշանավոր այդ գերդաստանից բեղմնավոր գործունեություն էր ծավալել առավելապես Խ.Լազարյանը: Դեռևս շատ երիտասարդական տարիներից դրսևորվում էին նրա հետաքրքրությունները գիտության նկատմամբ: Հովակիմ Լազարյանը խորհուրդ էր տալիս որդուն՝ Խաչատուրին, Եվրոպայում շրջագայության ժամանակ (1820-ական թթ. սկզբներին) անպայման այցելել Վենետիկ, «ուր տեսանել կարէք և Մխիթար արքայի միաբանութիւնն և հայոց մեծ ակադէմիսն»¹²⁰: Գիտության նկատմամբ նրա հետաքրքրություններն այն աստիճան ճանաչման էին արժանացել, որ Պետերբուրգի կայսերական ակադեմիան հրավիրում է մասնակցելու ակադեմիայի հիմնադրման 130-ամյակին նվիրված հանդիսավոր ժողովին¹²¹: Լազարյան ճեմարանում սկսնավորված և աշխուժորեն ծավալվող հայագիտական, արևելագիտական աշխատանքները հովանավորողները Լազարյաններն էին և առաջին հերթին Խ.Լազարյանը: Գիտության հարցերում նրա ուղադրության աստիճանը հավաստելու նպատակով

¹¹⁹ Տե՛ս նույն տեղում, 1878. 74, 1897, 115, 117: Ընդդիմախոս Բուլիչը դիտողություն է անում, որ մատենագիրներից լավ չի օգտվել, և որ աշխատությանը պետք է կցված լիներ Մուշի քարտեզը: Մյուս ընդդիմախոս Ն.Մառը բազմաթիվ դիտողություններ է անում, սակայն կատարած աշխատանքի համար հեղինակին շնորհվում է հայցած աստիճանը:

¹²⁰ Տե՛ս РГИА, ֆ. 880, օր. 1, Ժ. 240, և. 190:

¹²¹ Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, քոթ. 113, գ. 95, վավ. 46:

վկայակոչենք միայն մեկ փաստ: Նա 1854 թ. գրում է Մ.Էմինին, որ գոհունակությամբ ընդունեց Հայկական ձեռագրերը հրատարակելու նրա պատրաստակամությունը: Կրկնակի գոհ է, որ դա իրականացնելու է իրենց ուսումնարանի նախկին սանը՝ ներկայիս հարգարժան պրոֆեսորը: Խ.Լազարյանը նշում է, որ իր եղբայր Հովհաննեսի հետ նպատակ է դրել աստիճանաբար հրատարակելու պատմական արժեք ունեցող հին Հայկական ձեռագրերը: Առաջարկում է առկա 5 ձեռագրերը հրատարակել անհրաժեշտ ծանոթագրություններով ու բացատրություններով, որպեսզի հասկանալի դառնան հետաքրքրվողներին: Նա Մ.Էմինին խնդրում է պարզել, թե ձեռագրերից ըստ անհրաժեշտության որ մեկը պետք է հրատարակել առաջին հերթին և ըստ այդմ մյուսների համար սահմանել հերթականություն, սպագրական ծախսերը հողալու համար նշել ձեռագրերի ծավալը: Միաժամանակ խնդրում էր առանց նեղվելու, հանուն փոխադարձ հարգանքի ու բարոյական բավարարվածության պարզորոշ հայտնել նրա աշխատանքի վարձատրության չափը¹²²:

Խ.Լազարյանը համագործակցում և սերտ կապերի մեջ էր ժամանակի Ֆրանսիացի Հայադեստներ Վիկտոր Լանգլուայի (1829–1869) և հատկապես Փարիզի համալսարանի Հայագիտության ամբիոնի վարիչ Էդուարդ Դյուլորիեի (1807–1881) հետ: Նա 1854 թ. Մ.Էմինին հայտնում է, որ իր խնդրանքով «իր արժանավոր բարեկամ» է. Դյուլորիեն արտասահմանում պատրաստել է տվել Հայերեն տառատեսակների ձուլվածքը /մատրիցան/, որը շուտով կուղարկի: Նա խնդրում է որոշ ձեռագրերի պատճեններն ուղարկել Հայագետին՝ Վիեննա կամ Փարիզ¹²³: Խ.Լազարյանը միաժամանակ հայտնում է, որ է. Դյուլորիեի «Հայերը

¹²² Տե՛ս նույն տեղում, թղթ. 100, վավ. 11, ք. 1–3:

¹²³ Տե՛ս նույն տեղում, վավ. 10:

1854 թվին» հոդվածը հրատարակվել է ռուսերեն «Кавказ» ամսագրում, և անհրաժեշտ է համարում այն թարգմանել ու տպագրել նաև հայերեն:

Մեկ այլ առիթով տեղեկացնում է, որ է.Դյուլորիեն իր ստեղծագործությունները հայոց դավանանքի, Լազարյան ճեմարանի մասին և մեծ քանակությամբ գրականություն է շոգենավով ուղարկել: Դրանք հասցեագրել է անձամբ իրեն, Պետերբուրգի կայսերական ակադեմիային, նրա գրադարանին, Լազարյան ինստիտուտին: Խ.Լազարյանը հայտնում է, որ կհոգա տեղափոխություն մեծագումար վարձր, և խնդրում է հետևել, որ մաքսատանը և այլուր գրքերի կապոցներն առանց վնասելու տեղ հասցվեն¹²⁴:

Համառոտ այս ուրվագիծը, կարծում ենք, բավարար պատկերացում է տալիս ռուսական մայրաքաղաքների հայկական շրջանների՝ Հայագիտության ուղղություն կատարած քայլերի և ունեցած վաստակի մասին:

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, թղթ. 108, գ. 83, վավ. 12:

3. Գրականություն և մամուլ

Նոր շրջանում, մասնավորապես XIX դ. կեսերից սկսած աշխույժ վերելքը, կյանքի բոլոր բնագավառներում նկատվող զարթոնքը ներառել էր հատկապես գիտամշակութային ոլորտը: Պետերբուրգի երիտասարդական շարժման մեջ ընդգրկված անվանի գրող Ղ.Աղայանը հետևյալ կերպ է բնութագրել այդտեղի հասարակական կյանքի ընդհանուր մթնոլորտը. «Հնությունն ու նորությունը պատերազմ էին հայտարարել իրար դեմ, որոնք էլ դարձյալ բաժանված գանազան ճյուղերի՝ անխնա հարձակվում էին միմյանց վրա, ամեն ինչ քննադատում, ամեն խավար վարագույր յետ քաշում: Արևմտյան լուսավոր մտքերի առջև դրված թումբը քանդվելով՝ այդ քաղաքը հեղեղեց նորանոր գաղափարներով: Դա էր առավելապես թարգմանական գրականութունը, որ յուրաքանչյուր օր տասնյակ հատորներով էր դուրս գալիս: Մարդը շշկվում էր, չգիտեր, որը կարգա և որը թողնի, քանի որ մեկը մյուսից զարգացուցիչ էր, մեկը մյուսից գրավիչ»: Ապա հավելում է. «Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնությունը, ինչպես ասացի, նման էր հեղեղի»¹²⁵:

Ուսանողական ժողովներն ազգային-հասարակական հասունացած հարցերին անդրադառնալու հետ մեկտեղ դարձել էին նաև գեղարվեստի յուրօրինակ կենտրոններ: Ղ.Աղայանը «Հարություն և Մանվել» վեսլը գրեց երիտասարդական այդ հավաքներում ստեղծված մթնոլորտի շնորհիվ, նրանից թելադրվող ազգականների ազդեցութամբ:

¹²⁵ Ղազարոս Աղայան, Երկերի ժողովածու, հ.3, էջ 361, 365:

Պետերբուրգի տարբեր հաստատությունների մի խումբ ուսանողներ, հարգելով Գ.Ջանշյանի հիշատակը, նախաձեռնում են նրան նվիրված գիտագեղարվեստական ժողովածուի հրատարակությունը: Նրանք գիտակցում են դրա դժվարությունները, սակայն ստեղծում են հանձնախումբ և մեծ խանդավառությամբ անցնում գործի¹²⁶:

Մոսկվայում հայ գրականությամբ զբաղվելու հնարավորություններն ավելի ընդարձակ էին հենց միայն Լազարյան ճեմարանի առկայության շնորհիվ: Ճեմարանը ուսումնակրթական գործունեության հետ մեկտեղ նշանակալի չափով նաև գրական ստեղծագործական հաստատություն էր: Նրա դասախոսներից և ուսանողներից շատերը բանաստեղծությունների, ուշագրավ պատմվածքների հեղինակներ էին: Հանրահայտ է ճեմարանի երկարամյա դասախոս Սմբատ Շահազիզի գրական գործունեությունը, նրա «Լեոնի վիշտը» փայլուն ստեղծագործությունը¹²⁷, որտեղ արտահայտվել է գրողի անհուն սերը հայրենիքի հանդեպ: 1892 թ., երբ հանդիսավորությամբ նշվում է Ս.Շահազիզի մանկավարժական գործունեության 30-ամյակը, հավաքված գումարով դրվում է նրա անվամբ հիմնադրամի հիմքը: Հոբելյանի առթիվ Ալեքսանդրապոլի աշուղները ողջունում են գրողին և հատուկ շեշտում, որ իրենք մշտապես երգում են նրա հիանալի ստեղծագործությունները: Հինգ տարի անց, երբ նշվում է գրողի գործունեության 35-ամյակը, նրա նախկին ուսանողները հրատարակում են իրենց ուսուցչին նվիրված ժողովածու և որոշում նրա ծննդավայր Աշտարակում հիմնել գրադարան¹²⁸:

¹²⁶ Տե՛ս Մշակ, 1901, 76:

¹²⁷ Տե՛ս Մ.Շահազիզեան, Լեոնի վիշտը: Ժամանակակից վէպը չորս գլուխ բաժանուած եւ զանազան բանաստեղծութիւններ, Մոսկուա, 1865:

¹²⁸ Տե՛ս Մշակ, 1898, 21, 22, 219:

Հայտնի են նաև Ս.Նազարյանցի, Մ.Նալբանդյանի, Մ.Էմինի, Հայր և որդի Մսերյանների և շատ շատերի գրական գործերը, եվրոպական և ռուսական գրականությունից նրանց և ուրիշների թարգմանությունները: Մայրաքաղաքների հայկական շրջանները, սնվելով ռուսական և եվրոպական միջավայրի նոր ու առաջավոր գաղափարներով, դարձել էին հայ գրականության մեջ դրանք տարածելու յուրօրինակ օջախներ: Հայ մտավորականները, ռուսական մայրաքաղաքներ այցելելով, համակվում էին այդ գաղափարներով, հատուկ լիցք ստանում: Պատահական չէ, որ Հենց Մոսկվայում ստեղծվեց Գամառ Քաթիպա (Գ.Քանանյան, Մ.Թեմուրյան, Ռ.Պատկանյան) գրական խմբակը: Թեև մի քանի տարի հետո այն փակվեց, սակայն ունեցավ իր հետևորդները՝ հանձինս «Հյուսիսսիսիայի» պարբերականի և երիտասարդական այլևայլ խմբակների: Լազարյան ճեմարանից Վարվառա Քանանյանը «Մշակ» թերթի միջոցով¹²⁹ տեղեկացնում էր լայն հասարակայնությանը, որ մտադիր է Գամառ Քաթիպայի երկերը մեկ հատորով հրատարակել, և խնդրում է նրա գործերից, ում մոտ որ կա, ուղարկել իրեն: Նա միաժամանակ հայտնում է, որ մտադիր են գրքի վաճառքից գոյացած եկամուտներով օգնել Ռ.Պատկանյանին: Պետերբուրգի մի խումբ հայ երիտասարդներ, ուշ իմանալով Բաֆֆու մահը և հնարավորություն, չունենալով դրսևորելու իրենց վերաբերմունքը, որոշում են գումար հավաքել՝ գերեզմանի վրա գրողի արձանը կանգնեցնելու համար:

Հայ համայնքների մտավոր շրջանների, մասնավորապես Լազարյան ճեմարանի ներդրումը մեծ է հայ գրականությունը ռուս ընթերցողին ներկայացնելու և հատկապես հայկական շրջաններին ռուս գրականությանը ծանոթացնելու մեջ:

¹²⁹ Տե՛ս նույն տեղում, 1892, 16:

Ռուսական մայրաքաղաքների հայկական համայնքներում են հատկապես իրականացվել, ամրապնդվել ու զարգացել հայ-ռուսական մշակութային կապերը: Այդտեղ են կատարվել Ա.Պուշկինի, Մ.Լերմոնտովի, Ն.Նեկրասովի և մյուս գրողների ստեղծագործությունների հայերեն թարգմանություններն ու հրատարակությունները: Լազարյան ճեմարանի դասախոս Մ.էմինն է կատարում առաջին թարգմանությունները Ա.Պուշկինի երկերից և իր ուսանողներին (Ռ.Պատկանյան, Ս.Շահազիզ, Գ.Դոդոխյան և ուրիշներ) ծանոթացնում ռուսական պոեզիային: 1830–1840-ական թթ. Լազարյան ինստիտուտի սան Հովհաննես Լազարյանը հրատարակում է Վ.Ժուկովսկու, Ա.Պուշկինի, Մ.Լերմոնտովի և այլ հեղինակների ստեղծագործությունների թարգմանություններից կազմված ժողովածու¹³⁰: Այդ նույն տասնամյակում համալսարանների հայ ուսանողները մշակութային կապերին նվիրված երկու ժողովածու են հրատարակում:

Հետագա տասնամյակներում աստիճանաբար ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը: Մ.Նալբանդյանը թարգմանություններ է կատարում Ա.Պուշկինից, Մ.Լերմոնտովից: Նրանց ստեղծագործությունների տարածման հարցում մեծ է եղել «Հյուսիսսփայլի» դերը, որտեղ իրենց թարգմանություններով հանդես էին գալիս Մանուկ Սադաթյանը, Գևորգ Բարխուդարյանը¹³¹: XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ավելի է ուժեղանում այդ գործընթացը:

Հայ գրականության արժեքները ռուս ընթերցողին ներկայացնելու գործում բարձր գնահատություն է արժանի

¹³⁰ Տես Թարգմանութիւնք արծակ և ոտանատր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Ժուկովսկիյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկոյ և Գնեդիչէ, թարգմ. Յ.Համազասպեանց, Մոսկով, 1843:

¹³¹ Տես՝ Կ.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 200–205:

առաջին հերթին ուսուցողների վաստակը: Նրանցից է Յու.Վեսելովսկին (1872–1919), որն ուսանել է Լազարյան ճեմարանում, եղել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, սովորել հայերեն: Մեծ են նրա ծառայությունները հայ գրականության ու մշակույթի ուսումնասիրման և ուսուցողական ներկայացնելու գործում: Տակավին ճեմարանում սովորելու տարիներին հանդես է եկել հայ ժողովրդին նվիրված բանաստեղծություններով: Բազմաթիվ զեկուցումներ է կարդացել, թարգմանություններ կատարել, հատուկ մենագրություն գրել իր սիրելի ուսուցչի՝ Սմբատ Շահազիզի մասին¹³²: Գրքում ներկայացվում են գրողի ապրած ժամանակի, Մոսկվայի հայկական միջավայրի գրական, հասարակական կյանքն ու նշանավոր դեմքերի գործունեությունը: Հեղինակը ցույց է տվել, որ Ս.Շահազիզը, ապրելով հայրենիքից հեռու, անմիջականորեն կապված լինելով տեղի հայության և ուսական մշակույթի հետ, իր ստեղծագործություններով նվիրվել է հայրենիքին ու իր ժողովրդին:

Վալերի Բրյուսովը (1873–1924) Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկով հիմնավոր կերպով սկսեց աշխատել «Հայ պոեզիան հնագույն շրջանից մինչև մեր օրերը» ժողովածուի վրա: Նա ուսումնասիրեց հայոց պատմությունն ու հայ պոեզիան: 1916 թ. մեկնեց Անդրկովկաս, զեկուցումներ կարդաց, հանդես եկավ հայ բանաստեղծների ստեղծագործություններից կատարած իր թարգմանություններով: Մտերմական կապեր հաստատեց Հ.Հովհան-

¹³² Стен Ю.Веселовский, Армянский поэт Смбат Шах-Азиз, Москва, 1902: Մոսկվայի համալսարանում կայացած ռուս բանասերների ընկերության պուշկինյան համձնագործողի նիստում նա կարդում է «Պուշկինի բանաստեղծությունների հայ արձագանքները» զեկուցումը, որտեղ թեման ներկայացնում է մանրակրկիտ ամբողջությամբ: Երկու ժողովուրդների գրական կապերի մասին տես Յ.Ա.Акопян, Арменоведение в России. – Вопросы филологии, Ереван, 1988:

նիսյանի, Հ.Թումանյանի հետ: Գրեց նաև «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը»¹³³ աշխատությունը: Նա ծանոթ էր մայրաքաղաքներում ստեղծագործող Հայագետների աշխատանքներին: Վ.Բրյուսովը մեծ ավանդույնի ռուս ընթերցողին Հայ պոեզիային ու պատմությանը ծանոթացնելու գործում:

Մաքսիմ Գորկին (1868–1936) XIX դ. 90-ական թթ. ծանոթացել է Հայ գրականությանն ու պոեզիային: Նրա հրատարակած «Հայ գրականության ժողովածուն»¹³⁴ նույնպես երկու ժողովուրդների գրական կապերի և ռուս Հասարակայնությանը Հայ գրականությանը ծանոթացնելու նշանակալի երևույթ էր:

* * *

Հայ Հասարակական մտավոր կյանքին զբաղեցնող առանցքային հարցերն անմիջականորեն իրենց արձագանքն էին գտնում և քննարկվում մամուլում: Ռուսաստանում, հատկապես նրա մայրաքաղաքներում ծավալվող ժողովրդավարական-լուսավորական, հասարակական լայն բնույթ ստացած շարժումն իր արտացոլումն էր գտնում առաջին հերթին մամուլում: Ազատամտական այդ շարժումը, ինչպես Հայտնի է, գլխավորում էր Լազարյան ինստիտուտի դասախոս, տաղանդավոր բանասեր-պատմաբան, հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը: Նրան զինակցում էր Մ.Նալբանդյանը, որը հաճախ առաջ էր անցնում Ս.Նազարյանցի լիբերալ գաղափարների շրջանակներից: Այդ հոսանքը պայքարում էր միջնադարյան հետամնացության դեմ, ձգտում լուսավորության միջոցով բարձրացնել ժողովրդի

¹³³ Стé В.Я. Брюсов, Летопись исторических судеб армянского народа: (От VI в. до Р. Хр. по наше время), Москва, 1918 (Ереван, 1940):

¹³⁴ Стé Сборник армянской литературы, под ред. М.Горького, Петроград, 1916:

ազգային ինքնագիտակցությունը: Նրանք հետամնացությունը խարազանում, Եվրոպայից եկող նորի, լուսավորի քարոզչությունն իրականացնում էին Ս.Նաղարյանցի՝ այդ նպատակով հիմնադրած «Հյուսիսսփայլ» ամսագրի (1858–1862 թթ., 1864 թ.) միջոցով¹³⁵:

Ազգը լուսավորելու հիմնական ուղին պարբերականի խմբագիրը համարում էր դպրոցը, մամուլն ու գրականությունը: «Հյուսիսսփայլում», բացի Ս.Նաղարյանցից և Մ.Նալբանդյանից, տպագրվում էին Ս.Շահազիզը, Ա.Սուլթանշահը, Բաֆֆին, Ռ.Պատկանյանը, Գ.Բարխուդարյանը, Խ.Ստեփանեն և շատ ուրիշներ:

Այդ նույն տարիներին նույնպես Մոսկվայում հրատարակվում է հայր և որդի Մսեր և Զավեն Մսերյանների «Ճոռքաղ» (1858–1862 թթ.) գրական պարբերականը: Վերջինս «Հյուսիսսփայլին» հակառակ դիրքերում էր կանգնած, պաշտպանում էր հայոց եկեղեցու անխտիր բոլոր

¹³⁵ Ամսագիրը հրատարակելու համար խմբագիրը դժվարություններ էր հաղթահարում: Տակավիճ 1856 թ. սկզբներին դիմում է ուղղում լուսավորության նախարարությանը և Կովկասի փոխարքա Ա.Բարյատինսկուն և հիմնավորում ամսագիր ունենալու անհրաժեշտությունը՝ իր հայրենակիցներին ներգրավելու ռուսական կյանքի ու մտքի ոլորտը: Ա.Բարյատինսկին լուսավորության նախարարին հայտնում է, որ ինքը ժամանակակից հայերենով «Հյուսիսսփայլ» ամսագրի հրատարակության գործում որևէ արգելք չի տեսնում: Ցանկալի է համարում ամսագրում ավելացնել կառավարական կարևոր որոշումների և քաղաքական իրադարձությունների բաժին: Լուսավորության նախարարությունը, նկատի առնելով, որ ամսագիրը նախատեսվում է գերազանցապես Կովկասի հայ բնակչության համար, և այն հանգամանքը, որ Թիֆլիսում դադարել էր Գ.Պատկանյանի թերթի հրատարակությունը, նմանապես դրական կարծիք է հայտնում: 1857 թ. օգոստոսին Ս.Նաղարյանը, հրատարակության թույլտվություն ստանալով, շնորհակալություն է հայտնում Ա.Բարյատինսկուն և հավաստում, որ ամսագիրը քարոյառոգեբանական առումով կմոտեցնի «հայ-ասիացիներին ռուս-եվրոպացիներին»: Խնդրում է նպաստել իր տնօրինած երկրամասում ամսագրի տարածմանը (տես Մատենադարան, Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 99, վավ. 112–116):

դրույթներն ու դիրքորոշումները, հանդես գալիս աշխարհաբարի դեմ: Ուշագրավ է, որ երկու պարբերականների՝ գաղափարական պայքարի տարբեր բևեռներում գտնվող խմբագիրները երկար տարիներ Լազարյան ճեմարանի հիմնական դասախոսներն էին և իրենց պարբերականներում տեղ էին տալիս ճեմարանի լավագույն ուսանողների ստեղծագործություններին:

«Հյուսիսսփայլի» դեմ հանդես է գալիս մոսկվաբնակ մտավորական Հ.Չերքեզյանը: Նրան միանում են Գ.Այվազովսկին, Ջ.Մսերյանը և ուրիշներ: Ս.Նազարյանցին մեղադրում են գրաբարը թերագնահատելու, ազգի ներսում խռովություն սերմանելու մեջ, որ իբր հյուսիսային լույս ասելով՝ ամսագիրը լյութերական կրոնի վարդապետությունն է տարածում և այլն¹³⁶: Հասարակական լայն արձագանք ստացած գաղափարական այդ պայքարում ավելի են խորանում ու բյուրեղանում նրանց դիրքորոշումների տարբերությունները:

Հայ մամուլին և գրականությունը ծանոթ ռուս մտավորականները եղել են «Հյուսիսսփայլի» պաշտպանության դիրքերում: Մոսկվայի համալսարանում Յու.Վեսելովսկին «Հյուսիսսփայլին» նվիրված դասախոսություն է կարդում՝ «1860-ական թվականները և Հայ առաջադեմ ամսագիրը»



Ստեփանոս Նազարյանց

¹³⁶ Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII–XIX դդ., հ. 1, Գահիրե, 2006, էջ 179–195, 204–207 (Մ.Մխիթարյանի հեղինակած բաժինը «Հյուսիսսփայլի» և «Շոքաբաղի» մասին):

խորագրով: Նա նշում է, որ Ս.Նազարյանցը, ծանոթ լինելով XIX դ. առաջին կեսի Եվրոպայի առաջադեմ գաղափարների, մտածում էր խավարի մեջ խարխափող իր ազգի առաջադիմութեան մասին: Նրան հաջողվեց առաջադեմ կայսր Ալեքսանդր II-ի գահ բարձրանալուց հետո միայն հրատարակել պարբերականը: Դրվատելով ամսագրի որդեգրած ուղին՝ դրան աշխատակցողներից հիշատակում է Մ.Նալբանդյանի, Բաֆֆու, Ա.Սուլթանշահի, Ս.Շահազիզի անունները¹³⁷:

Ռուսական «Вестник знания» հանդեսը հոգևած է տպագրում «Որոնումներ խելացի և մարդասեր դաստիարակութեան. մի դրվագ հայ մամուլի պատմութեանից» խորագրով: Հոգևածում ընդգծվում է դաստիարակութունը մարդասիրական դարձնելու, այն բարեփոխելու անհրաժեշտությունը: Հեղինակը հիշատակում է հայ գրողներին, անդրադառնում դաստիարակության և կրթության ասպարեզում աչքի ընկած պարբերականներին: Դրանց թվում նշվում է Ա.Հովհաննիսյանի «Փորձ», Խ.Ստեփանեի «Հայկական ախարհ», «Մանկավարժանոց», Վ.Բաստամյանցի «Դպրոց», Հ.Բարխուդարյանի «Մանկավարժական գրադարան», Էջմիածնի «Արարատ» պարբերականների դրվատելի գործունեությունը: Հոգևածն ավարտվում է Ս.Նազարյանցի ու «Հյուսիսսահայլի» ոգուն ներդաշնակող հետևյալ խոսքերով. «Մեր առջևից այժմ անցան մի քանի մանկավարժական օրգաններ, որոնք հիմնվեցին XIX դարի երկրորդ կիսում նոր, մարդասիրական և կուլտուրական կրթութեան գործով ոգևորեալների ձեռքով հայկական միջավայրում և որոնք ցանկացան տնկել մայրենի հողի վրա այն ամենը, ինչ որ լավագույնն էր արևմտեան եւրոպական և ռուսական մանկավարժութեան մէջը»¹³⁸:

¹³⁷ Տե՛ս Մշակ, 1903, 68:

¹³⁸ Նույն տեղում, 1904, 76:

Պարբերականների հրատարակությունները դադարեցնելուց հետո Զ.Մսերյանը 1861–1864 թթ. հրատարակում է «Համբաւաբեր Ռուսիոյ» շաբաթաթերթը, որը պատկերազարդ, ամիսը երկու անգամ հրատարակվող պարբերական էր: Ընթացիկ կյանքի պաշտոնական նյութերից բացի՝ շաբաթաթերթն ընթերցողներին ծանոթացնում էր ռուս գրականությանը և առհասարակ մշակութային կյանքին: Բավականաչափ երկար ընդհատումից հետո հայր և որդի Մսերյանները 1872–1876 թթ. հրատարակեցին «Փարոս» տարեգիրքը, իսկ 1879–1881 թթ.՝ «Փարոս Հայաստանի» պատկերազարդ ամսագիրը: Նրանց պարբերականներում հիմնական տեղ էր հատկացվում գրական-գեղարվեստական նյութերին:

Ինչպես արդեն նշվել է, 1883–1884 թթ. հրատարակվում են «Ազատության ավետաբեր» պարբերականի մի քանի համարներ: Մոսկվայում, նշվածներից բացի, հրատարակվում են նաև այլ պարբերականներ: Մկրտիչ Բարխուդարյանը 1888–1890, 1894–1896 թթ. հրատարակում է «Հանդես գրականական և պատմական» պարբերադիրքը, որն իր խորագրին համապատասխան հոդվածներ էր հրատարակում: Պարբերականում տպագրվում են Մ.Նալբանդյանի, Ռ.Պատկանյանի, Հ.Պարոնյանի, Բաֆֆու, Լեոյի, Պ.Պոռչյանի ու մյուս հայ գրողների ստեղծագործությունները և ռուս ու եվրոպական հեղինակների գործերի թարգմանությունները: 1892 թ. հրատարակվում է Հովհաննես Բարխուդարյանի «Մանկավարժական գրադարան» տարեգրքի 340 էջանոց ընդամենը մեկ գիրքը: Հինգ տարի անց լույս է տեսնում Հովհաննես Շահնազարյանի «Նոր փորձ» գրական-հասարակական հանդեսի 128 էջ ունեցող միակ համարը: Լազարյան ճեմարանի աշակերտների կողմից 1899 թ. հայերեն և ռուսերեն հրատարակվում է խմորատիպ «Գործ» ամսագիրը: Հայերեն բաժնի խմբագիրը Մինաս Բերբերյանն էր, իսկ ռուսերենինը՝ Յու. Վեսելովսկին:

1890 թ. վախճանված անվանի Հայագետ Մ. Հմինի կտակած գումարներով և այլ միջոցներով Լազարյան ճեմարանում նրա հիշատակին հիմնվում է «Հմինյան հիմնադրամ»: Ճեմարանի վաստակաշատ մանկավարժ, պատմաբան, Հայ Համայնքի ակտիվ գործիչ Գրիգոր Խալաթյանը ձեռնամուխ է լինում «Հմինյան ազգագրական ժողովածու» շարքը հրատարակելու գործին: Առաջին Հատորում, որ կրում էր «Փշրանքներ Շիրակի ամբարներից» ընդհանուր խորագիրը, ներկայացվում էր Շիրակի ժողովրդական բանահյուսությունը գրեթե իր բոլոր (հեքիաթ, առած, անեծք, աղոթք, երգում և այլն) դրսևորումներով: Առաջին Հատորում մշակված կանոններով հրատարակվեցին նաև մյուս Հատորները, որոնցում տեղ գտան Հ. Աճառյանի՝ գավառաբարբառների վերաբերյալ և լեզվաբանական այլ ուսումնասիրությունները, ուրիշ հեղինակների գործեր: 1901-1913 թթ. լույս տեսան ժողովածուի 9 գրքեր:

Պողոս Մակինցյանի, Յուլակ Խանզատյանի և Վահան Տերյանի խմբագրությամբ 1910-1912 թթ. լույս են տեսնում «Գարուն» գրական-գեղարվեստական, գրական-քննադատական ալմանախի 1-3 գրքերը: Արշակ Թումանյանի խմբագրությամբ 1911-1916 թթ. հրատարակվում են «Մարտ» գրական, հասարակական և քաղաքական ամսաթերթի 84 Համարները:

Պետերբուրգում պարբերականներն այնքան էլ բազմաքանակ չէին: Դրանք չունեին նաև Մոսկվայում հրատարակվող «Հյուսիսափայլի» և որոշ այլ պարբերականների մարտական ոգին:

Ռ. Պատկանյանին 1863 թ. հաջողվում է «Հյուսիս» շաբաթաթերթը հրատարակելու թույլտվություն ստանալ: Թերթի կառուցվածքի և ուղղվածության վերաբերյալ գրաքննչական կոմիտեի ներկայացրած ծրագրում նա նշել էր, որ հրատարակելու է կառավարական հրովարտակներ, հրամանագրեր, պաշտոնական այլ նյութեր: Դրանցով հանդերձ՝

նա թերթի գլխավոր նպատակն էր համարում այն բարենպաստ պայմանները ցույց տալը, որոնք ստեղծվել են Ռուսաստանում ապրող հայերի համար: Թերթը հրատարակելուց հետո այդ ծրագիրը կատարվում էր մասամբ: Թերթում հոդվածներ էին տպագրվում գլխավորապես Լեհաստանի ապստամբության, Հ.Ալամդարյանի, Ջեյթունի 1862 թ. ապստամբության, Ղարաբաղի մելիքությունների և այլ հարցերի մասին: Թերթում տպագրվում էին բանաստեղծի հոր Գ.Պատկանյանի երկարաչունչ բանաստեղծությունները: Հաջորդ տարում՝ 1864 թ.՝ ընդամենը 31 համար լույս տեսնելուց հետո, շաբաթաթերթը փակվում է:

1887–1898 թթ. Սիմեոն Գյուլամիրյանի խմբագրությամբ հրատարակվում է «Արաքս» գրական-գեղարվեստական հանդեսը, որում տեղ էր տրվում Հայաստանի պատմության, աշխարհագրության հարցերին, քաղաքական պատմությանը: Առավել ուշադրություն էր դարձվում ռուս և եվրոպական նշանավոր հեղինակների գործերի թարգմանությանը: Իրանով պարբերականը հետամուտ էր հայ ընթերցողին ծանոթացնելու համաշխարհային հնչեղությունները: Իրանով գեղարվեստական ստեղծագործություններին:

Ն.Ադոնցի խմբագրությամբ 1903–1904 թթ. լույս են տեսնում «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի 254 և 217 էջանոց երկու գրքերը, որոնցում հրատարակվում են հայ գրողներ Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Ավետիք Իսահակյանի, Վրթանես Փափազյանի և ուրիշ հեղինակների ստեղծագործությունները: Իրանով հանդեսը կատարում էր հայ գրականության, հայոց գրական լեզվի տարածմանն ու արմատավորմանը նպաստելու իր առաքելությունը:

1906–1907 թթ. Դավիթ Օբրոյանի խմբագրությամբ հրատարակվում են «Սփրիչ» գրական-երգիծական ամսաթերթի 12 համարները: Պետերբուրգի հայ ուսանողները

1913 թ. հրատարակում են «Շողեր» (խմբագիր՝ Գևորգ Մեսյան) գրական-քննադատական ժողովածուն:

Նշված պարբերականների թեկուզ միայն խորագրերից աչքի է զարնում այն հանգամանքը, որ թե՛ Մոսկվայում և թե՛ հատկապես Պետերբուրգում դրանք առավելապես գրական-գեղարվեստական ուղղվածություն ունեին: Դրանցում հասարակական-քաղաքական հիմնախնդիրները, դրանց քննարկումները երկրորդական պլան էին մղված: Այդ պարագան, անշուշտ, պայմանավորված էր կառավարության կողմից կիրառվող քաղաքականության՝ սահմանված գրաքննչական խիստ կարգով:

Ազգությունաբ հայ Արտեմի Կոտելնիկովը 1910 թ. Պետերբուրգում հրատարակում էր «Жизнь Кавказа» ամենամսյա պարբերականը, որը մեծ տեղ էր հատկացնում Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքին, Հյուսիսային Կովկասի հատկապես հայ համայնքների անցյալի ու արդի ժամանակաշրջանի իրադարձություններին: Խմբագրի մահվանից հետո հրատարակվում է մի քանի համար ևս, որից հետո այն փակվում է:

4. Արվեստ

ա. Թատրոն

Թատրոնը արվեստի այն նշանավոր ճյուղերից է, որը հայ ժողովրդի հասարակական զարգացման ասպարեզում նշանակալի դեր է կատարել: Թատրոնի միջով ենք մեծապես կարողացել ծանոթանալ ու հասկանալ մեզ շրջապատող կյանքը, իրականությունը, առանց որի անհասկանալի կմնային հասարակական կյանքի շատ երևույթներ: Նաև թատրոնի միջոցով ենք գաղափար կազմել մեր ժողովրդի և օտարների կյանքի, սովորությունների ու բարքերի մասին: Թատրոնն է հասարակության լայն շերտերի մեջ սերմանում ճշմարտության, ազնվության գաղափարները: Այն ժողովրդի հոգևոր-բարոյական պահանջներին բավարարություն տվող մշակույթի հիմնական ճյուղերից մեկն է: Օտար երկրներում ծվարած հայ զանգվածների համար թատրոնը եղել է նաև մայրենի լեզուն, ազգային բարքերն ու սովորությունները պահպանելու կարևոր գործոն: Համատեղ այդ հանգամանքների շնորհիվ է, որ հայկական գաղթավայրերում արվեստի այդ ճյուղը հատուկ ուշադրություն է արժանացել:

Ռուսահայ շրջաններում թատերական ներկայացումները սկիզբ առան Մոսկվայի հայ համայնքում: 1859 թ. Մոսկվայի մի խումբ հայ ուսանողներ կազմակերպում են ներկայացում¹³⁹: Ուսանողների օրինակին անմիջապես հե-

¹³⁹ Հայ թատրոնի մասնագետներից Լ.Բաբայանը նշում է, որ Մոսկվայում առաջին ներկայացումը բեմադրվել 1858 թ. հունվարի 28-ին,

տևում են Լազարյան ճեմարանի աշակերտները: Հետագայում ուսանողներն ու աշակերտները հաճախ համատեղ էին ներկայացումներ կազմակերպում: Ճեմարանի նախկին աշակերտ, հետագայում Մոսկվայի համալսարանի սան Ա.Քիչմիշյանը պատմում է, որ արձակուրդների ժամանակ աշակերտները կազմակերպում էին դպրոցական ներկայացումներ ու պարահանդեսներ: Դրանց մասնակցում էին նաև ճեմարանի ուսուցիչները և համալսարանի հայ ուսանողները, որոնցից շատերը ճեմարանի նախկին սաներ էին: 1859–1860 թթ. Լազարյան ճեմարանի աշակերտները 5 ներկայացում են կազմակերպել¹⁴⁰:

Ուսանողական ներկայացումներին իբրև դերասաններ հանդես էին գալիս Ն.Փուղինյանը, Վ.Շահխաթունյանը, Մ.Բուրջալյանը, Ս.Մանդինյանը, Ա.Քիչմիշյանը, Ա.Կաճկաճյանը, Մ.Հախումյանը և ուրիշներ: Ն.Ալադաթյանը, Ն.Փուղինյանը, Հ.Գուրգենբեկյանը և ուրիշներ գրում էին սցենարներ¹⁴¹: Նրանք արևելահայ առաջին կենցաղագիրներն էին:

Մերկայացվել է Հ.Գուրգենբեկյանի «Հաջի Մուլեյման» մեկ գործողությամբ վոդևիլը (տե՛ս Լ.Բաբայեան, Ռուսահայ թատրոնի յիսնամեակը (1858–1908), Թիֆլիս, 1908, էջ 106): Անվանի թատերագետ Հ.Հովհաննիսյանը Մոսկվայում կազմակերպված առաջին մերկայացման ժամանակը համարում է 1859 թ. հունվարը, երբ մերկայացվել է Վանանդեցու «Մեծ Ներսեսը», Նիկողայոս Ալադաթյանի «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկին» և այլ գործեր (տե՛ս Հ.Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն. XIX դ., Երևան, 1996, էջ 72): Ս.Նազարյանը ևս ակնարկում է 1859 թ. (տե՛ս Հյուսիսսասիայ, 1860, 3): «Մեղու Հայաստանի» թերթի 1859 թ. 10-րդ համարում տպագրված «Մոսկվա. թատրոն հայոց» վերտառությամբ հոդվածում նշվում է, որ Մոսկվայի համալսարանի ուսանողները հայրենասիրական մեծ քայլ կատարեցին. ազգին մվիրեցին հայկական թատրոն: Նշանակում է՝ առաջին մերկայացումը եղել է 1859 թ. սկզբներին:

¹⁴⁰ Տե՛ս Վ.Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, 1668–1868, Երևան, 1959, էջ 423, 425:

¹⁴¹ Տե՛ս Լ.Բաբայեան, նշվ. աշխ., էջ 107:

Մոսկվայում կազմակերպված առաջին ներկայացումներին ներկա էին Ս.Նազարյանցը և Մ.Նալբանդյանը: Արվեստի այդ ճյուղի երևան գալու հանգամանքը շատ բարձր է գնահատում նշանավոր հրապարակախոսը: «Մեր ազնիւ հայկական պատանիքը, – գրում է Ս.Նազարյանցը, – կամեցել են մի ազնիւ զբոսանք պատրաստել Մոսկուայի մէջ պանդխտացած հայերիս, կամեցել են ցուցանել մի հրապարակ հայկական խոսակցութեան, Հայոց ազգի բարբառը դուրս հանելով թատրոնական բեմի վրայ. այդ ձեռնարկութեան խորհուրդը միայն մեծ է և գրեթէ անբովանդակելի»¹⁴²: Ապա ավելացնում է, որ ներկայացման նյութը ազգային պատմությունից է, որը շատ գովելի է, որքան էլ անկատար լիներ ներկայացումը:

Աստիճանաբար ավելի կատարելագործվեցին ներկայացումները, բարձրացան սիրողական դերասանների մակարդակը, նրանց խաղացած դերերի որակը: Մեծացավ բնակչության հետաքրքրությունը դեպի թատերական ներկայացումները: Սկզբնական շրջանում հայ օրիորդները չէին մասնակցում ներկայացումներին:

Պետերբուրգում ուսանողները 1875 թ. կազմակերպում են Գ.Սունդուկյանի «Պեպոն» և հայկական թեմատիկայով այլ ներկայացում, որտեղ կանանց դերը կատարող չեն գտնում: Դրությունը փրկում է մի գերմանուհի, որին հաջողվում է հայերենով խաղալ կանանց դերերը: Ինչպես նշում է թղթակիցը, հայ օրիորդները դեռևս չեն կարողանում ձերբազատվել նախապաշարմունքներից¹⁴³: Շուտով հաղթահարվում է նաև նահապետական բարքերից մնացած այդ սովորույթը: Շուրջ 10 տարի անց՝ 1884 թ., մայրաքաղաքի ուսանողները ներկայացնում են Գ.Սունդուկյանի «էլի մեկ զոհ» պիեսը: Իրենց լավ խաղով աչքի են

¹⁴² Հիսիսափայլ, 1860, 3, էջ 223:

¹⁴³ Տե՛ս Մշակ, 1875, 4:

ընկնում օրիորդներ Վարդանյանը և Էդիլխանյանը: Մոսկվայում կազմակերպում էին ներկայացումներ, որոնց նյութը արևմտահայերի կյանքից էր՝ պանդխտություն, կյանքը պանդխտության մեջ, վերադարձ հայրենիք և այլն: Դրանց մասնակցում էին բարձր խավի օրիորդներ Ջանումյանները, Ներսիսյանը, Ախաշյանը, տիկին Շահինյանը: Լեցուն դահլիճի ունկնդիրների մեջ էին Ն.Ներսիսյանը, Վ.Միլլերը, Յու.Վեսելովսկին, Ն.Ստորոժենկոն և ուրիշներ¹⁴⁴:

Թատերական ներկայացումների որակի բարձրացմանը և հասարակական լայն շրջաններում տարածում գտնելուն մեծապես նպաստում էին նշանավոր դերասանների հյուրախաղերը: Մոսկվայի կայսերական մեծ թատրոնում ներկայացվում է «Դեմոն» օպերան, որտեղ Դեմոնի պատասխանատու ու դժվարին դերը մեծ հաջողությամբ կատարում է Ամիրջանյանը: Նախապես նա ելույթ է ունենում Պետերբուրգում, որտեղ տեղի «Лыч» և «Петербургские ведомости» թերթերը մեծ գովեստով են խոսում հայ արտիստի մասին¹⁴⁵: Երկու քաղաքներում էլ դահլիճը լեցուն էր նաև հայերով, որոնք եկել էին լսելու իրենց հայրենակցին:

Երկու քաղաքների հայկական շրջանների թատերական արվեստի առաջադիմության, նրա տարածման գործում վիթխարի էր հուշակավոր դերասան Պետրոս Ադամյանի այցելությունների նշանակությունը: Մոսկվայի հայ ուսանողների հրավերով 1883 թ. Նոր Նախիջևանից հյուրախաղերի է գալիս Պ.Ադամյանը: Լեվի-լեցուն դահլիճում նա փայլուն կերպով կատարում է Համլետի դերը՝ արժանանալով ուռու և հայ հանդիսատեսի հիացմունքին: Մոսկվայի հայ հասարակայնությունը հանգանակությամբ մեծ նվեր է մատուցում: Նույն ձևով է վարվում նաև ուսանողություն-

¹⁴⁴ Տե՛ս նույն տեղում, 1891, 6:

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, 1897, 35, 51:

նը՝ մակագրելով՝ «Պ.Աղամյանին՝ Մոսկվայի կայսերական համալսարանի ուսանողներից»։ Հայ ուսանողները Պ.Աղամյանի մասնակցութեամբ ներկայացնում են Մ.Լեւոնտովի «Դիմակահանդեսը»։ Արբենինի դերը կատարում է Պ.Աղամյանը։ Իրենց լավ խաղով աչքի են ընկնում նաև օրիորդներ Մամիկոնյանն ու Սուրենյանցը¹⁴⁶։ Պ.Աղամյանը Համլետի դերով հանդես է գալիս նաև Պետերբուրգում։ Այդտեղ ևս նրա խաղն արտակարգ տպավորություն է թողնում։ Հայկական շրջաններից բացի՝ նրա դերասանական խաղը բարձր է գնահատում նաև ռուսական մամուլը։ Երկու մայրաքաղաքներում 1890-1891 թթ. կազմակերպվում էին երեկույթներ, որոնց մասնակցում էին ռուս և արտերկրի նշանավոր արվեստագետներ, Պ.Աղամյանի արվեստի երկրպագուներ, և հասույթը փոխանցվում էր Կ.Պոլիս՝ դերասանին¹⁴⁷։

Աստիճանաբար ուսանող երիտասարդական սիրողական թատրոնի խաղացանկում ընդգրկվում են նաև ռուսական և եվրոպական դասական հեղինակների դրամատիկական գործեր։ Հաճախ թատերական ներկայացումներից հետո կազմակերպվում էին կովկասյան և եվրոպական պարեր։ Կատարվում էին խմբային երգեր՝ ռուսական, հայկական։ Հայկական երգերից լավ էին ընդունվում «Մայր Արաքսի ակերով» և հատկապես «Ջեյթունցիների քայլերգը»։ Եվ ներկայացումներին, և՛ վերջում կատարվող երաժշտական հանդեսներին հայերի հետ հաճախ մասնակցում էին ռուսները, ինչպես նաև վրացիները, անգամ օտարերկրացիներ։ Ջքավոր ուսանողների օգտին Պետերբուրգում կազմակերպվում են ներկայացում ու երեկույթ։ «Մշակ» թերթի թղթակիցը նշում է, որ ժողովուրդը, այդ թվում և ռուսները, միշտ աջակցել և ներկա են եղել այդ երեկույթներին, իսկ

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, 1883, 32, 44, 45։

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում, 1891, 16, 40, 41։

Հայտնի դերասանուհի Սավինյան Հագել է Հայկական զգեստներ և դիմի ու միրգ է վաճառել Հանդիսականներին¹⁴⁸:

Թատրոնը ինչպես Ռուսաստանի մյուս քաղաքներում, այնպես էլ հատկապես մայրաքաղաքների Հայ Համայնքներում բազմանշանակ առաքելութուն է ունեցել: Գեղագիտական հաճույքից բացի՝ Թատրոնը Հայրենի ավանդները պահպանելու, Հայրենիքի հետ հարաբերվելու ազգապահպան կարևոր լծակ էր: Այն կարևոր գործոն էր ռուսներին Հայկական կյանքին ծանոթացնելու, երկու ժողովուրդների մշակութային առնչությունների, փոխհարաբերությունների հարցում:

բ. Երաժշտություն և կերպարվեստ

Հայ Համայնքներում երաժշտությունը նույնպես ազգային ավանդները պահպանող, Հայրենիքի հետ կապող, ազգային ոգի ներարկող կարևոր գործոն էր: Մեծն Կոմիտասը 1914 թ. արվեստի այդ ճյուղի մասին նշել է. «Մինչդեռ Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն ու իր մեջ կանուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենն մաքուր Հայելին է ցեղին, ամենն Հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությունց մեջ – կենդանի, – որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, – որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը»¹⁴⁹:

Երկու Համայնքներում առաջնային դեր կատարող եկեղեցին նախանձախնդիր էր երաժշտության հարցում: Բավական է ասել՝ մայրաքաղաքների Հայ եկեղեցիներում որպես խմբավարներ էին աշխատում նշանավոր երգահան-

¹⁴⁸ Տե՛ս նույն տեղում, 1891, 135:

¹⁴⁹ Կոմիտաս, Հայ երաժշտության հաղթանակը. – Նույնի՝ Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավ. Ռ.Թերլեմեզյան, Երևան, 1941, էջ 195:

ներ Մակար Եկմալյանը, Ռոմանոս Մելիքյանը: Հայկական երաժշտությունը օտար միջավայրում բնակվող հայության մեջ արմատավորելու, երաժշտության միջոցով հայկական ոգին բնակչության մեջ պահպանելու ձգտումն այնքան ուժեղ էր, որ առանձին դեպքերում օտար տարրեր մտցնելու մեջ հանդիմանում, մեղադրում էին անգամ Մ.Եկմալյանին: Վերջինս 1887 թ. դիմում է սինոդին և հայտնում, որ Պետերբուրգ է եկել իսորեն Ստեփանեն, իրեն և իր գլխավորած երգեցիկ խումբը մեկուսացնում, հեռացնում է ասելով, թե օտար երգեցողությունն եք ներմուծում¹⁵⁰:

Մոսկվայի հայ համայնքը հաճախ էր իր դժգոհությունն արտահայտում եկեղեցիների երգեցիկ խմբի վատ վիճակից: Խ.Ենգիբարյանը «Մշակ» թերթում հրապարակած հոդվածում նշում է, որ Մոսկվայում եկեղեցին բարվոք վիճակում է շնորհիվ երեցփոխ Գ.Փանյանցի, սակայն երգեցիկ խմբի վիճակն անմխիթար է: Երբեմն կիրակի օրերը Լազարյան ճեմարանի աշակերտներից բաղկացած խումբն է Հ.Պոպովյանի գլխավորությամբ երգում, բայց դրանով էականապես դրուժյունը չի փոխվում: Նա առաջարկում էր երիտասարդ երգահան Մ.Եկմալյանին ուղարկել Մոսկվա, որպեսզի ամեն ինչ մտնի իր հունի մեջ¹⁵¹:

Տարիներ անց կրկին բարձրացվեց այդ հարցը: Այս անգամ՝ ավելի հանդիմանելով համայնքի անդամներին և խնդիրը կարգավորելու եղանակներ առաջադրելով: «Մենք լիովին հաւատացած և համոզուած ենք, – գրում է հարցը բարձրացնող թղթակիցը, – որ տեղական հայերից ամեն մեկը սիրալիք աջակցութիւն և պատրաստականութիւն ցոյց կը տայ այդ գործում, թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Քանի Մոսկվայի հայ գաղութն ունի ժամհարեանների, Լիանօզեանի, Գէորգեանների, Տէր-Յակոբեանի, Խալաթեանների և

¹⁵⁰ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 8026, ք. 33:

¹⁵¹ Տե՛ս Մշակ, 1883, 93:

այլոց նման մարդիկ, մարդիկ, որոնցից ամեն մէկը եթէ ուզենա իր հսկայական միջոցներից մի գումար յատկացնել, հավատացած եղէք, որ նուիրաբերած գումարի տոկոսներով կարելի կը լինի մի կանօնաւոր խումբ պահել և այդպիսով սեփական խումբ ունենալու գործը միանգամայն հաստատուն հողի վրա կը լինի դրված»։ Ապա ավելացնում է. «Եթէ Մօսկվայի գաղութի մէջ չի գտնվիլ մէկը, որ մի գումար նուիրելով այդ նպատակին, միանգամայն ապահովացնէր սեփական խումբ ունենալու գործը, մնում է, որ գաղութի (որը 300 ծխից պակաս չէ) ծխականներից իւրաքանչիւրը միանուսդ այդ նպատակին նուիրաբերէ տարեկան 20 ռուբլի, որ ամեն մէկը ուրախութեամբ կը տայ և այդ ճանապարհով գործը առաջ տանել»։ Բարձրորակ խմբավար գտնելու համար խորհուրդ է տալիս հայացքն ուղղել դեպի էջմիածին և դիմել Կոմիտաս վարդապետին՝ վերջինիս վերապահելով ընտրութեան իրավունքը։ Թղթակիցն իր խոսքն ավարտում է լավատեսորեն. «Մենք հաւատացած ենք, — գրում է նա, — որ Մօսկվայի գաղութը սիրով կը վերաբերվի մեր առաջարկին, մենք յուսով ենք, որ մեր կոչը արձագանք կը գտնի նրանց սրտում, և վերջապէս, չենք ուզում կասկածել, որ տեղական ամեն կարողաւոր ոյժ, այսպէս թէ այնպէս, գործին կ'աջակցէ և շատերի վաղուցվայ իղձերը կատարելով, բարոյապէս ու հոգեպէս մխիթարած կը լինի գաղութին, իսկ մայրաքաղաքի եկեղեցու պատիւը բարձր կանգնեցրած օտարների առաջ, նման Պետերբուրգի եկեղեցու»¹⁵²։

Ընդհանուր մտահոգութիւնը տալիս է իր արդյունքը։ Շատ շուտով Մոսկվայի եկեղեցիների երգեցիկ խմբի խմբավարի պաշտօնը ստանձնում և երկար տարիներ վարում է Ռ.Մելիքյանը։ Նա հատուկ նշում էր, որ հայկական ձայնագրութիւնը սովորել է երաժշտագետ Գևորգ սարկա-

¹⁵² Նույն տեղում, 1905, 142:

վագ Չորեքչյանի մոտ: 1912 թ. սկսում է սովորել Պետերբուրգի կոնսերվատորիայում և որպես խմբավար՝ աշխատում քաղաքի հայկական եկեղեցիներում:

Պետերբուրգում մնալու և կոնսերվատորիայում սովորելու ժամանակ նա՝ որպես երաժիշտ, աշխատում է երկար տարիներ: Միայն 1877-1884 թթ. մայրաքաղաքում նրա գտնվելու ընթացքում շուրջ 4 հազար ուղբի ու ծախսերը հոգացել է եկեղեցական խորհուրդը: Երբ էջմիածինը 1889 թ. պահանջում է, որ Ռ.Մելիքյանը վերադառնա Մայրաթոռ, Պետերբուրգի հայ հասարակայնության բազմաթիվ նշանավոր ներկայացուցիչներ ու ծխականներ դիմում են եկեղեցական խորհրդին և հայտնում, որ Ռ.Մելիքյանի կազմած երգեցիկ խումբը քաղաքակիրթ աշխարհին հատուկ նոր երևույթ է մեզանում, և խնդրում են այնպես անել, որ իրենք չզրկվեն այդ քաղցր սաղմոսերգերը լսելուց¹⁵³:

Պետերբուրգի եկեղեցական քառաձայն երգչախումբը երկար տարիներ ղեկավարել և լավ արդյունքների է հասցրել նաև հայտնի երգիչ Ներսես Շահլամյանը:

Ուշագրավ և դրվատելի է, որ եկեղեցում և առհասարակ կազմակերպվող համերգներին ակտիվ մասնակցություն էին ունենում ուսանող երիտասարդությունը, անգամ աշակերտները: Մոսկվայի հայ ուսանողներից 6-7 հոգի Զակեյանի գլխավորությամբ երգեցիկ խումբ էին կազմել և եկեղեցում երգում էին պատարագի ժամանակ: Դրանից բացի՝ համայնքում ուսանողությունը նշում է վարդանանց տոնը: Օխոտնի ակումբում կազմակերպված երաժշտադրամատիկական երեկույթում լավ են ընդունվում հատկապես Լիանոզյանի՝ դաշնամուրով կատարած բայաթին, կոնսերվատորիայի ուսանող Բոյաջյանի՝ ջութակով կատարած «Կոուենկը»¹⁵⁴:

¹⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1225, ք. 7, 14, 17:

¹⁵⁴ Տե՛ս Մշակ, 1887, 24, 1897, 25:

Մոսկվայի ազնվականական սրահում կազմակերպվում է հայկական երեկույթ, որին մանակցում էր շուրջ 2 հազար մարդ: Թղթակիցը նշում է, որ ուռս հասարակայնության ներկայացուցիչները միշտ սիրով են այցելում հայկական այդ երեկույթներին և բավականութուն ստանում: Բեմը զարդարված էր արևելյան ոճով՝ ներկայացնելով մի հին քաղաք, որի ձևավորումը կատարել էր Մարտիրոս Սարյանը: Առանձին հետաքրքրություն են առաջացնում կուլյր երաժիշտ Նիկողայոս Տիգրանյանի նվագը, ապա նրա և Սարաջևի (Ջութակ) համատեղ ելույթը: Լավ ընդունելություն է գտնում երգչուհի Տերյան-Կորգանովայի ելույթը: Երգեցիկ խումբը ղեկավարում էր ուսանող Թամբյանը: Կատարվում են «Կիլիկիա», «Բամբ որոտան» երգերը: Լավ տպավորություն է թողնում հասարակությանն արդեն ծանոթ ուսանող Միքայելյանի երգը: Փայլուն ընթացող երեկույթն ավարտվում է ազգային ոգով կազմակերպված պարահանդեսով¹⁵⁵:

Նույնպես Մոսկվայում կազմակերպվում է աշակերտական համերգ, «որ տուին, — գրում է հանդիսատես թղթակիցը, — երգեցողութեան ուսուցիչներ՝ տ. և պ. Անդրիևսկիները իրանց աշակերտների մասնակցութեամբ, նախկին Գիրչի թատրոնում: Համերգն անցաւ շատ աջող, երևաց թէ ուսուցիչների շօլայի հմտութիւնը և թէ՛ աշակերտների երաժշտական ընդունակութիւնները»¹⁵⁶:

Հայկական երեկույթներ էին կազմակերպում նաև ուռսական մշակույթի նշանավոր գործիչները: Կայսերական մեծ թատրոնի դերասան Վլասովը Մոսկվայի շքեղ դահլիճներին մեկում կազմակերպում է հայկական երեկույթ: Բեմը զարդարվում է Անիի Բագրատունիների պալատի և Սևանա լճի տեսարաններով: Հանդիսատեսը հաղորդում է, որ Վլա-

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղում, 1902, 279:

¹⁵⁶ Նույն տեղում, 1905, 40:

սովի ներկայությունը մեծ շուք էր տալիս Հանդեսին և ապա հավելում. «Մօսկվայի Հայերը եւ ռուս ինտելիգենցիան միշտ առանձին հետաքրքրութեամբ են վերաբերվում հայկական երեկոյթին եւ սպասում են անհամբերութեամբ»¹⁵⁷:

Ամեն տարվա վերջում՝ դեկտեմբերին, Լազարյան ճեմարանում տեղի էր ունենում պարահանդես, որին մասնակցում էին Հայ հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ: Դրանց մշտապես մասնակցում էին ճեմարանում սովորող կամ սովորած օտարազգի, գերազանցապես ռուս աշակերտների ծնողները: Այդ պարահանդեսները հաճախ ղեկավարում էր ճեմարանի պարի ռեսուցիչ, Մոսկվայի մեծ թատրոնի դերասան Շաշկինը:

Պետերբուրգում հայ համայնքի նախաձեռնությամբ տեղի է ունենում կոնսերվատորիայի ռեսանող Ա.Մամիջանյանի հաջողված համերգը: Հայ վաճառականներն իրենց գոհունակությունն արտահայտում են ռեսանողին նվերներ մատուցելով:

Պետերբուրգի ամառանոցային արվարձան Պավլովսկում հրավիրված երաժշտական երեկոյին առաջին անգամ հնչում է երիտասարդ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի «Կոնցերտային նախերգանքը»՝ դիրիժոր Ն.Գալկինի ղեկավարությամբ: «Մշակ» թերթն անդրադառնում է այդ համերգին, նշում, որ Ա.Սպենդիարյանի «Նախերգանքը» մասնագիտական նուրբ ու բարձր ճաշակով էր կազմված և մեծ տպավորություն գործեց: Թերթը նշում է, որ նորահայտ տաղանդավոր երաժիշտը Ն.Ռիմսկի-Կորսակովի աշակերտն է: Նա մեծ հույսեր է ներշնչում, մանավանդ շատ հմուտ է արևելյան և հայկական երաժշտության մեջ¹⁵⁸:

Ռուսական մայրաքաղաքներում երաժշտասեր հասարակայնության առջև հանդես էին գալիս ամբողջ երկրում

¹⁵⁷ Նույն տեղում, 1901, 281:

¹⁵⁸ Տե՛ս նույն տեղում, 1901, 63, 126:

և նրա սահմաններից դուրս անուն վաստակած Հայ երաժիշտները: Հանդիսատեսի հիացմունքին արժանացող նրանց կատարումները, նրանց ոգեշունչ ընդունումն արժանապատվության, հպարտության զգացում էր առաջացնում Հայրենակիցների մեջ: Հայ համայնքներում դրանով միասնության, ազգային ինքնության գաղափարն էր ծիլեր տալիս, արմատավորվում:

Հռչակված երաժիշտներից էր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը: Նրա բազմաթիվ ելույթները Պետերբուրգում և Մոսկվայում անցնում էին մեծ հաջողությամբ: Ռուսական և հայկական մամուլն արձագանքում էր միայն բարձր գնահատումներով ու դրվատալից հոդվածներով: 1905 թ. սեպտեմբերի 11-ին Պետերբուրգի կոնսերվատորիայի դահլիճում նա համերգ է տալիս օպերային երգիչ Բեգլար Ամիրջանի (բարիտոն) և իր աշակերտ Ռեսովիչի (երկրորդ ջութակ) մասնակցությամբ, կատարում Բախի, Պագանինիի ամենազովարին ստեղծագործությունները: «Պետերբուրգի ընտիր հասարակութեան սիրելի դարձած ջութակահարի անունը, — գրում է «Մշակը», — ահադին բազմութիւն էր գրաւել... Ծրագիրը մշակված էր մտածած, հետևողական, այդ իսկ պատճառով համերգը առանձին շուք ու փայլ էր ստացել»: Աշխարհահռչակ ջութակահար Սարասատեն, չբավականանալով Հ.Նալբանդյանի՝ արտասահմանում եղած ժամանակ անձամբ հայտնած չափազանց բարձր կարծիքով, «նամակով էլ է իր հիացմունքն ու սքանչացումը արտայայտել ամբողջապէս զգացումն դարձած երաժշտին և գուշակել նրա փայլուն ապագան»¹⁵⁹:

¹⁵⁹ Տե՛ս նույն տեղում, 1905, 50: Հ.Նալբանդյանը ծնվել է 1872 թ. Սիմֆերոպոլում: Մանուկ հասակից դրսևորել է երաժշտական արտակարգ ընդունակություններ: Տասնմեկ տարեկանից հանդես էր գալիս համերգներով, իսկ 15 տարեկանից սովորում էր արդեն Պետերբուրգի կոնսերվատորիայում: Ուսման առաջին տարիներին նյութական դժվարին դրության մեջ գտնվող երիտասարդին օգնում էր քաղաքի

Մեծ Հեղինակություն ունեցող անվանի երգիչ Ներսես Շահամյանի ելույթները մեծ Հաջողությամբ էին ավարտվում: Պետերբուրգում նրա արվեստով այն աստիճան էին հիացել, որ ոռուսաց ազնվականական շրջանի մի խումբ երաժշտասերներ որոշել էին Ն.Շահամյանին 3 տարի տարեկան 1000 ռուբլի հատկացնել՝ ձայնը Իտալիայում մշակելու համար¹⁶⁰:

Պետերբուրգի «Лыч» և «Петербургские ведомости» պարբերականները մեծ գովեստով են խոսում Մոսկվայի կայսերական օպերայի երգիչ Բեգլար Ամիրջանյանի մասին:

Մեծ Հաջողությունների էին հասել նաև օպերային երգիչներ տիկին Տերյան-Ղորղանյանը, Արշակ Կոստանյանը և ուրիշներ:

Ռուս և Հայ երաժիշտների համատեղ ելույթները, երկու ժողովուրդների երգարվեստի գործերի կատարումը մի կողմից՝ ոռուս հասարակայնությանը ծանոթացնում էր Հայ երաժշտական արվեստին, մյուս կողմից՝ նպաստում մշակութային փոխազդեցությունը: Եվ այդ ամենը, ի վերջո, դրական ազդեցություն էր ունենում, խորացնում երկու ժողովուրդների բարեկամական համագործակցությունը:

Երաժշտության բնագավառում ոռուս և Հայ կատարողների համատեղ ելույթները եզակի երևույթ էին: Լա-

հայ ուսանողների հայրենակցական միությունը, հետագա տարիներին հովանավորում էր ռեկտոր Ա.Ռուբինշտեյնը: Կոնսերվատորիան ավարտելուց հետո գործուղվում է Բեռլին՝ կատարելագործելու իր արվեստը: Շուտով դասախոսական աշխատանքի է հրավիրվում կոնսերվատորիա և երկար տարիներ աշխատում որպես պրոֆեսոր: Հայեցի դաստիարակված Հ.Նալբանդյանը սերտ կապերի մեջ էր ազգային մշակույթի գործիչներ Ա.Սպենդիարյանի, Հ.Այվազովսկու, Գ.Բաշինջաղյանի, Ն.Շահամյանի և ուրիշների հետ: Մահացել է 1942 թ.:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում, 1889, 24:

գարյան ճեմարանի դահլիճում ջուլթակահար Ա.Կաթինյանցը գերում է բոլորին իր վարպետ կատարմամբ: Ապա հանդես է գալիս ոռւս 40 կատարողներից բաղկացած նրա երգեցիկ խումբը, որը, եկեղեցական գրավիչ երգերից բացի, հնչեցնում է «Մայր Արաքսի ամերով» երգը: Ունկնդիրների մեջ էին առաջին շարքում նստած հեղինակը՝ Ռ.Պատկանյանը, Վ.Նեմիրովիչ-Դանչենկոն, «Русские ведомости» թերթի խմբագիրը: Փայլուն է անցնում նաև տեղի հայ ուսանողների նախաձեռնությունները կազմակերպված երեկույթը, որին, ուսանողներից բացի, մասնակցում էին Մեծ թատրոնի դերասաններ Ֆոստեմը, Սարինովը, Իգումնովը, Դուբինսկին, Ջիարլոնեն: Կատարվում են ոռւս, եվրոպական և հայ երգահանների գործերը¹⁶¹:

Պետերբուրգում ազնվականների ժողովի դահլիճում տեղի է ունենում հայկական երեկույթ: Դահլիճը բարձր ճաշակով ձևավորել էր նկարիչ Վ.Սուրենյանցը: Համերգային բաժնին մասնակցում էին կայսերական թատրոնների երգչուհիներ Մ.Դոլինան, Պապայանը, ջուլթակահար Հ.Նալբանդյանը, խմբավար Կոզաչենկոն՝ սիրողների իր խմբով: Ներկաները ոգեշնչվում են «Ջեյթունցիների քայլերգի» կատարումից: Երեկոն ավարտվում է ասիական և եվրոպական պարահանդեսով, որը տևում է մինչև գիշերվա ժամը 4-ը: Նույնպես մայրաքաղաքում Նիկողայոս Տիգրանյանը մեծ հաջողություններ համերգ է տալիս ջուլթակահար Հ.Նալբանդյանի և կամերային երգչուհի Թերեզա Լեչետիցկայայի հետ¹⁶²:

¹⁶¹ Տե՛ս Առյժ տեղում, 1889, 13, 1896, 150:

¹⁶² Տե՛ս Առյժ տեղում, 1901, 256, 1898, 49:

Առավել մեծ հաջողությամբ է անցնում Պետերբուրգում այլազգի կատարողների մասնակցությամբ հրավիրված հայկական 40-րդ երեկույթը¹⁶³:

Հայ երաժիշտների կատարմամբ ազգային շատ ստեղծագործություններ էին հնչում մայրաքաղաքներում: Դրանք նպաստում էին ուսու հասարակայնությանը հայկական երաժշտական արվեստին ծանոթացնելուն, ինչպես նաև հայկական համայնքների բնակչության ազգային ոգին ամրապնդելուն:

¹⁶³ Երեկույթը տեղի է ունենում ազնվականների դահլիճում, որը զարդարված էր արևելյան ճաշակով: Ինչպես նկարագրում է քոթակիցը, գլխավոր նուտըը ձևավորված էր Անիի Բագրատունյաց պալատի և Ախուրյանի հովտի՝ Կոնդուրովի յուղաներկ նկարներով: Գեղեցիկ զարդարված կրպակներում շամպայն-գինիներ էին վաճառվում: Դրանցից մեկում նստած էր կայսերական քատրոնի բալետի պարուհի Մարիա Պետիպան, որ առաջին անգամ չէ, որ սիրով հանձն էր առնում որևէ կրպակի կառավարչուհի լինելը: Մի անկյունում ձևավորված էր «սառցային տուն», որտեղ հայ օրիորդները պաղպաղակ էին վաճառում: Բուֆետում հետաքրքիր էր «Կովկասյան դուքանը», որտեղ հայ ուսանողը կինտոյի հագուստով գինի էր վաճառում: Գույնզգույն լուսավորող լամպերը ավելի խորհրդավոր էին դարձնում պատկերը: Հորելյանական երեկույթին Կոզաչենկոյի՝ սիրողների երգեցիկ խմբի, տեխնոլոգիական ինստիտուտի ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի հետ մասնակցում էին անվանի կատարողներ, Նորին կայսերական մեծության մենակատարներ Դոլինան, Շահլամյանը, Պապայանը, Դավիդովը, դերասան Պոտոցկայան, ջութակահար Հ.Նալբանդյանը: Կատարվում են եվրոպական, ռուս և հայ երգահանների դասական ստեղծագործություններ ու ժողովրդական երգեր: Բուռն ծափահարությունների տարափի տակ շատ ելույթներ կրկնվում են մի քանի անգամ: Երեկոն, ինչպես հաճախ էր պատահում, ավարտվում է պարահանդեսով: Սկզբում պարում են «Կինտաուրի», «Լեզգիմկա», «Ուզունդարա», «Շալախո», ապա անցնում եվրոպական պարերին, որին հաջորդում են դարձյալ ասիական պարերը: Երեկոն ավարտվում է լուսաբացին (տես նույն տեղում, 1901, 260):

* * *

Կերպարվեստի հարցում մեծ է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի դերը: Նոր շրջանում՝ XIX դ. և XX դ. առաջին տասնամյակներում, այդտեղ մասնագիտացել են շուրջ 4 տասնյակի հասնող հայ երիտասարդներ: Նրանք, ինչպես և պարբերաբար այդտեղ այցելող հայ արվեստաբանները շփվել են տեղի հայուլթյան հետ, մասնակցել հայ համայնքի կյանքին, ապրել ազգային գաղափարներով: Ուսանելով և հաղորդակցվելով ռուս և եվրոպական գեղարվեստի բարձր ոլորտներում՝ հայ երիտասարդներն իրենց ստեղծագործություններով կապված են մնացել հայ իրականության հետ:

Պետերբուրգի և Գեղարվեստի ակադեմիայի հետ իր ամբողջ կյանքում սերտորեն կապված մնաց համաշխարհային համբավ ունեցող ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին: Նա կապված էր հայ համայնքի հետ, օգնում էր երիտասարդներին մասնագիտանալու հարցում: Պետերբուրգում 1887 թ., երբ մեծ հանդիսավորությունը նշվում էր նրա գործունեության 50-ամյա հոբելյանը, տեղի հայուլթյունն ակտիվ մասնակցություն է ունենում: Հայ համայնքը նվիրում է արծաթյա պնակ՝ Արարատի և Պետերբուրգի հայկական եկեղեցու պատկերով, իսկ հանկուտակ հրեսին՝ հետևյալ ուղերձը. «...Դուք միշտ եղել եք հպարտության առարկա այն ազգի համար, որից Դուք ծագում եք... Պետերբուրգի հայոց հասարակությունը տեսել է Ձեզ գրեթե ամեն օր իր եկեղեցու ծխականների թվում, սկսած այն ժամանակներից, երբ Դուք ուսանում էիք Գեղարվեստի կայսերական ակադեմիայում մինչև մեր օրերը»¹⁶⁴: Երբ Մոսկվայում բացվեց Հ.Այվազովսկու նկարների ցուցահանդեսը, հայերը խմբվել էին «Տրապիզոնի կոտորածը» զարհուրելի վայրագությունը պատկերող նկարի առաջ:

¹⁶⁴ Նույն տեղում, 1887, 89:

Հայ ուսանողներն ակտիվորեն մասնակցում էին ուսանողական կամ տարեկան ցուցահանդեսներին: 1901 թ. ակադեմիայի տարեկան հանդեսում ներկայացվում են Հայ ուսանողներ Վրթանես Ախիկյանի և Տեր-Մինասյանի գործերը: Վերջինիս աշխատանքը բարձր է գնահատվում: 1909 թ. Գեղարվեստի ակադեմիայի դահլիճում բացված նկարչի կոչում ստանալու ուսանողական գործերի ցուցահանդեսին մասնակցում էր Հետագայում ճանաչված նկարիչ Դավիթ Օքրոյանը: Նա ներկայացրել էր «Սահակ Պարթևի խնդիրը դազադի մեջ» անսովոր մտահղացմամբ ու վարպետորեն կատարված նկարը:

Հայ հասարակայնության տարրեր խավերի մեջ դեպի գեղարվեստը Հետաքրքրություն արթնացնելու նպատակով մայրաքաղաքի Հայ գեղարվեստասերների և մասնագետների մի խումբ կազմակերպում է «Հայ գեղարվեստական ընկերությունը»: Վերջինս ունենալու էր երեկուլթներ, կազմակերպելու էր դասախոսություններ, սահմանելու էր մրցանակներ և այլն¹⁶⁵: Տարիներ անց գործող ընկերությունը շնորհակալություն է հայտնում Գարեգին Հովսեփյանին՝ նրա կարդացած Հետաքրքիր զեկուցման համար: Դասախոսն ունկնդիրներին ծանոթացնում է Հայ մշակույթի այն դրվագներին, որոնք տակավին քիչ են ուսումնասիրված: Ընկերությունը հույս է հայտնում, որ մոտ ապագայում Պետերբուրգում կրկին նրան լսելու հնարավորություն կունենա¹⁶⁶:

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի Հայ առաջին սաներից էին Հակոբ Հովնաթանյանը, Հ.Այվազովսկին,

¹⁶⁵ Տե՛ս նույն տեղում, 1910, 75:

¹⁶⁶ Տե՛ս Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 412:

Ստեփան Ներսիսյանը, Աղաթոն Հովնաթանյանը և ուրիշներ¹⁶⁷:

Նրանցից երիտասարդ Ս.Ներսիսյանին Խ.Լազարյանը փոքրիկ նպաստ էր նշանակել ուսումը շարունակելու Հնարավորություն ստեղծելու համար¹⁶⁸:

Հայ ուսանողների նոր սերնդի ներկայացուցիչներից էին Գևորգ Բաշինջաղյանը, Հարություն Շամշինյանը, Էմանվել Մահտեսյանը, Տրդատ Լիսիցյանը և շատ ուրիշներ: Նրանք տարբեր եղանակներով առնչվում և առավել կամ նվազ չափով մասնակցում էին տեղի հայուլթյան համայնքային կյանքին:

Այսպիսով, ուղևորական մայրաքաղաքների հայկական համայնքներում գրականությունն ու արվեստը ծառայում էին հայ մշակույթի ավանդները տեղի հայուլթյան մեջ ամրապնդելու, իր արմատներից չկտրվելու, այն ուղևորական միջավայրին ծանոթացնելու գործին: Միաժամանակ ազգային մշակույթը ուղևորական ու եվրոպական մշակույթների փոխազդեցությամբ առաջընթաց քայլեր էր կատարում և այն փոխանցում, տարածում մայր հայրենիքում՝ Հայաստանում:

¹⁶⁷ Տե՛ս Ա.Աղասյան, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, Երևան, 2009, էջ 19–30:

¹⁶⁸ Տե՛ս Մ.Մարգարյան, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, Երևան, 1979, էջ 44:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ

1. Ռուս-Հայկական Հարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսից աշխույժ ու կենսունակ հունի մեջ մտան:

Այդ Հարաբերությունների մեջ առանձնանում էին Ռուսաստանի Հայկական գաղութները, որոնց մեջ առաջնային էր Մոսկվայի և Պետերբուրգի, թեպետև փոքրաքանակ, Հայության դերը:

2. Մայրաքաղաքների Հայ Համայնքները ձևավորվեցին եկեղեցու, հոգևոր իշխանության հիմքի վրա, որը կանխորոշեց նրանց գործունեության արդյունավետությունը:

Ռուսաստանի Հայկական մյուս Համայնքների ինքնավարությունը մարմնավորում էին մագիստրները, ռաթ-հաուզները, որոնց իրավասությունները սահմանափակված էին ներգաղութային շրջանակներով: Բացի այդ՝ XIX դ. կեսերին դրանք վերացվեցին: Մայրաքաղաքներում Համայնքների ձևավորումը (հոգաբարձություն, եկեղեցական խորհուրդ) կատարվեց շատ համեստ հիմքի՝ երկու քաղաքների Հայ եկեղեցիների ունեցվածքը տնօրինելու նպատակով:

Դրանց գործունեությունն առանց արգելքների ընդարձակվեց, դարձավ լայնածավալ ու բազմաբեղուն: Դրանք, ըստ էության, աշխարհիկ կազմակերպություններ էին, սակայն եկեղեցու անվան տակ գործում էին անկաշկանդ, գերծ մնում իշխանությունների միջամտությունից:

Եկեղեցու միջոցով առավել սերտ հարաբերություններ էին ստեղծվել հայրենիքի հետ, ինչը և հնարավորություն էր ընձեռում ծավալելու լայն գործունեություն:

3. Երկու հայ համայնքներին մշտապես մտահոգել է հայրենիքի պատմական ճակատագիրը: Նրանց միջավայրում մշակվեցին հյուսիսային հզոր հարևանի միջոցով Հայաստանի ազատագրման Մ.Սարաֆյանի և Հ.Արղուժյանի ծրագրերը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ Հայաստանին լայն ինքնավարություն տալու Խ.Լազարյանի նախագիծը: Այդուհետ հայ համայնքները մշտապես հետամուտ էին Արևելյան Հայաստանի ազատագրմանը:

4. Մոսկվան և Պետերբուրգը դարձան հայ մշակույթի ավանդների պահպանման ու զարգացման յուրահատուկ կենտրոններ: Այդտեղ հրապարակ եկան հայոց պատմության, բանասիրության և մշակույթի մյուս բնագավառների հիմնարար աշխատություններ: Հայ համայնքները որոշակի ներդրում ունեցան հայ ընթերցողին ուսու և եվրոպական մշակութային արժեքներին ծանոթացնելու հարցում:

5. Նշանակալի է մայրաքաղաքների հայ համայնքների ներդրումը հայ-ռուսական հարաբերությունների սմբապնդման գործում: Դասագրքեր, բառարաններ, ձեռնարկներ, երկու ժողովուրդների պատմությանն ու մշակույթին վերաբերող գրականություն հրատարակելով՝ հայ համայնքները՝

ա. մեծապես նպաստեցին երկու ժողովուրդների փոխճանաչմանն ու հարաբերությունների խորացմանը,

բ. նախկին՝ գերազանցապես առևտրատնտեսական կապերի համեմատ գիտամշակութային նոր որակ տվեցին ու նոր աստիճանի բարձրացրին հայ-ռուսական հարաբերությունները:

6. Մեծ էր Հայ Համայնքների դերակատարությունը Հայաստանում և Հայկական գաղթավայրերում հետամնացությունը Հաղթահարելու, լուսավորություն տարածելու ասպարեզում:

ա. Մոսկվայի և Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատություններում, Լազարյան ճեմարանում երիտասարդները մասնագիտանում, հաղորդակցվում էին առաջավոր մշակույթին, հասարակական կյանքին: Վերադառնալով Հայրենիք՝ լծվում էին նոր գաղափարների տարածմանը: Երիտասարդությունը կրթելու հարցում մեծ էր դասախոսների և Հայ մտավորականությունից դերը:

բ. Նշանակալի էր եկեղեցական խորհուրդների համակողմանի աջակցությունը Հայրենիքում ուսուցումը կազմակերպելու, լուսավորություն տարածելու գործին:

7. Երկու Հայ Համայնքները մշտապես արձագանքել, սատար են կանգնել Հայրենակիցներին բնական աղետների (երկրաշարժ, երաշտ և այլն), քաղաքական վայրիվերումների (կոտորածներ, փախստականներ և այլն) ժամանակ և այլ պատճառներով ստեղծված դժվարին իրադրություններում:

8. Որտե՞ղ էր թաքնված խիստ փոքրաքանակ Հայկական Համայնքների համազգային ընդգրկում ունենալու և համապատասխան կարողություն, ներուժ դրսևորելու գաղտնիքը:

ա. Միջնադարին հաջորդող, կյանքի բոլոր բնագավառներում վերելք ստեղծող պատմական նոր ժամանակաշրջանը առաջընթացը խթանելու նպաստավոր դաշտ էր ստեղծում:

բ. Բարենպաստ այդ պայմանները հրապարակ հանեցին գիտամշակութային տարբեր բնագավառների մասնագետների, մտավորականների, որոնք կայացան Մոսկվայի և

Պետերբուրգի քաղաքակիրթ միջավայրում: Նրանք, ինչպես նաև Հայաստանից ու հայկական միջավայրից մայրաքաղաքներում ժամանակավորապես հաստատվող մտավորականները պատասխանատվությամբ և արժանապատվորեն ծառայում էին իրենց կոչմանը:

գ. Մայրաքաղաքներում ապրում ու գործում էին առևտրատնտեսական ոլորտի նշանավոր հայ գերդաստաններ, անհատներ: Նրանցից էին Լազարյանները, Աբամելիքները, Դելյանովները, Մանուչարյանները, Արղուլթյաներկայնաբազուկները, Լորիս-Մելիքովները և ուրիշներ: Հայերի փոքրաքանակ այդ շերտի ներկայացուցիչներն ունեին տիտղոսներ, անգամ արժանացել էին ազնվականական կոչման և ճանաչված էին բարձրագույն իշխանությունների կողմից: Նրանք, որպես կանոն, իրենց հնարավորություններն ու կապերն օգտագործում էին լուծում տալու հասարակական, ազգային բնույթ կրող հարցերին:

Այդ գերդաստանների մեջ առանձնանում էին հատկապես Լազարյանները:

9. Համընդհանուր գնահատություն արժանացած Լազարյանների գործունեությունն ուղենշեց, նրա հաստատուն հիմքերը դրեց Հովհաննես Լազարյանը: Խարիսխ գցելով Պետերբուրգում, բարեկամական հարաբերություններ հաստատելով պետական գործիչների հետ՝ նա ի գորու եղավ հմտորեն զուգակցելու պետական հետաքրքրություններն ու ազգային շահերը:

ա. Նա խորապես գիտակցում էր պետականությունը կորցրած, տարբեր երկրներում ծվարած ժողովրդի կյանքում եկեղեցու նշանակությունը՝ որպես ազգը միավորող, նրա ինքնությունը հատկանշող կազմակերպության: Սնփական միջոցներով նա կառուցեց եկեղեցիներ, հատկացրեց համապատասխան միջոցներ, որ նրանք դառնան հայ հա-

մայնքների ինքնավարութիւնը մարմնավորող հաստատութիւններ:

բ. Լազարյանների ազգաշնորհ գործունեութեան հիմնարար սկզբունքները մշակող Հովհաննես Լազարյանի տաղանդի փայլատակման արգասիք է տակավին XVIII դ. վերջին կրթութիւն, լուսավորութիւն տարածելու նպատակով հայկական ուսումնարան հիմնելու վերաբերյալ նրա թողած կտակը:

գ. Նրա հասարակական ծառայութիւններն այնքան ակնառու են եղել, որ բազմիցս արժանացել են պետութեան գնահատականին: Նրա անվան հետ է կապվում 1775 թ. Լազարյաններին ազնվականական դասի մեջ ներառելը: Հռոմի և Գերմանիայի միապետ Հովսեփ II-ի հրամանով նրան շնորհվել են բարոնի, կոմսի տիտղոսներ: Նա ստացել է կոլեգիական խորհրդականի (1791 թ.), ապա՝ իսկական պետական խորհրդականի (1800 թ.) աստիճաններ:

Չ.ա. Լազարյան ճեմարանը դարձավ արևելագիտութեան, հայագիտութեան նշանավոր կենտրոն, ուսումնակրթական անփոխարինելի հաստատութիւն: Գիտակրթական իր բարձր որակը նա հետևողականորեն պահպանեց ավելի քան մեկ դար՝ հաղթահարելով բազում խոչընդոտներ ու դժվարութիւններ: Լուսավորութեան նախարարութիւնը ձգտում էր վերացնել ուսումնարանի առանձնահատուկ կարգավիճակը և այն՝ որպես սովորական գիմնազիա, մտցնել իր համակարգի մեջ: Լազարյաններին հաջողվեց պահպանել ճեմարանի գիմնազիական և արևելագիտական երկու մասնագիտութիւնները: Ուսումնական բոլոր հաստատութիւններում վերացվեցին նախապատրաստական բաժինները, մեծ ջանքերով ճեմարանում այն պահպանվեց, քանի որ առանց նախապատրաստական դասընթացի հայկական գավառներից եկող պատանիները չէին կարող ճեմարան ընդունվել:

բ. Ճեմարանի հետ Լազարյաններից հատկապես կապված է եղել, նրա խնդիրներով մեծ պատասխանատվությամբ շուրջ 50 տարի զբաղվել է Խաչատուր Լազարյանը: Նրան հաջողվել է լուծել ուսումնարանի առաջ ծառայած անհաղթահարելի թվացող խնդիրները՝ այլ ելք չգտնելու պարագայում սեփական միջոցներից մեծագումար հատկացումներ կատարելով: Նա իր մահից առաջ կարողացավ ճեմարանի համար հիմնադրո մշակված այնպիսի կարգավիճակ ստեղծել, որ ուսումնարանն իր արգասավոր գործունեությունը շարունակեց ևս կես դար:

գ. Խաչատուր Լազարյանը պայմաններ էր ստեղծում և մշտապես խրախուսում հայագիտության զարգացումը: Նա մեծահարուստներին հորդորում էր ներդրումներ կատարել հենց այդ բնագավառում: Նա լավ հարաբերություններ էր ստեղծել և համագործակցում էր անգամ ֆրանսիացի հայագետներ Վիկտոր Լանգլուայի և Էդուարդ Դյուլոնրիեի հետ:

Նա հորեղբոր՝ Հովհաննես Լազարյանի գործի արժանավոր շարունակողը եղավ:

Լազարյաններն անջնջելի հետք թողեցին հայ ժողովրդի նոր շրջանի պատմության տարեգրության մեջ: Ազնվականի վեհ պահվածքով նրանք ավելի քան մեկ դար փայլատակեցին հայոց երկնակամարում:

Խորապես ըմբռնելով ժամանակի ոգին ու նրա պահանջները՝ նրանք վիթխարի ներդրում կատարեցին լուսավորության տարածելու, սեփական ժողովրդին ծառայելու գործում:

Արդի ժամանակաշրջանի հայ գործիչների համար նրանք կարող են մշտապես ժողովրդի կողքին լինելու, նրան նվիրվելու լավագույն օրինակը լինել:

ՀԱՎԵԼՎԱԾ
Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ր Ե Ր

Յուցակ

Անուանց ժողովրդականաց Մոսկովայ ըստ արուաց և իգաց և
ամբ հասակի նոցայ ի 1840 Ամի

Վեհազնեայ Յովհաննէս Յովհաննիսեան	
Հայրապետեանց	65
կին նորա Եղիսաբեթ Հայրապետեանց	55
Գեներալ մայոր Պալ Իւանովիչ Հայրապետեանց	60
կին նորա Կատարինէ Հայրապետեանց	45
որդի նորին Յովհաննէս	28
դուստր նորին Կատարինէ	24
___ „ ___ Մարիամ	23
___ „ ___ Վառվառա	22
Հանգուցեալ գեներալ մայոր Դաւիթ Արտեմիչ Դելանովի	
կին Մարիամ Դելանով	52
որդի նորին Յոհան	24
դուստր նորին Հեղինէ	20
եղբայր հանգուցեալ Դելանովի Պետր Արտեմիչ Դելանով	56
Հանգուցեալ կնիազ Դաւիթ Սիմոնիչ Աբամելիքովի	
կին Մարթայ Աբամելիք	50
դուստր նորին Աննայ	25
որդի նորին Սիմէօն	24
դուստր նորին Կատարինէ	21
որդի նորին Յարութիւն	18
___ „ ___ Յովակիմ	17
դուստր նորին Սովիայ	14
Գեներալ մայոր Պավլ Մոսէիչ Մելիքով	58
Նիկիտ Օսիպիչ Ասկարխանով	50
դուստր նորին Մանուշակ	22
որդի նորին Յովհաննէս	21
Հանգուցեալ Գրիգոր Յովսէփի Ասկարխանովայ	

կին Աննայ Ասկարխանհան	40
դուստր նորին Մանուշակ	24
___ „ ___ Շուշան	22
___ „ ___ Կատարինե	14
որդի նորին Սիմեօն [ջնջված է]	
Ազնիու Պետրոս Ստեփանեան Խերոտինով	42
որդի նորին Ստեփան	17
___ „ ___ Յովսէփ	15
___ „ ___ Նիկողայոս	13
___ „ ___ Դաիթ	11
___ „ ___ Գրիգոր	9
երկրորդ կին նորին Եղիաաբեթ Խերոտինով	39
որդի նորին Յովհաննէս	7
Հանգուցեալ Յակոբ Աբելեան Բաղդադովայ	
կին Եղիաաբեթ Բաղդադով	58
որդի նորին Աբել	38
___ „ ___ Յակովբ	36
___ „ ___ Եսայի	34
դուստր նորին Աննայ	20
Հանգուցեալ ազնիու Յակովբ Աստուածատրեան Սակինովայ	
կին Մարիամ Սակինեանց	54
որդի նորին Յովակիմ	32
փեսայք հանգուցեալ Սակինովայ	
Կվարտալնի Կարապետ Ղազարեան Քալանթարով	42
կին նորա Մարգարիտ	26
Սարգիս Պետրոսեան Պոպով	32
կին նորա Մագթարինե	24
Հանգուցեալ Ռափայել Պալիչ Աղամալովայ	
կին Կատարինե Աղամալեանց	46
որդեգիր նորին Մինաս Ղազարեան Լազարեանց	40
դուստր նորին Եղիաաբեթ	24
թոռն նորին Ռափայել	7
___ „ ___ Պօղոս	6
փեսայ հանգուցեալ Աղամալովայ	
մայօր Յովհաննէս Չաքարեան Մելիքով	50
կին նորա Մարիամ	25
եղբայր Մելիքովայ Եսայի Չաքարեան	49

Հանգուցեալ Յովհաննէս Դաւթեան Էղիլխանովայ	
կին Աննայ Էղիլխանեանց	45
որդի նորա Դաւիթ	24
դուստր նորա Թագուհի	19
___ „ ___ Մարգարիտ	17
Մօսկովայ վաճառական Մարգար Դաւթեան Էղիլխանեանց	58
կին նորա Աննայ Էղիլխանեանց	42
որդի նորա Գրիգոր	19
___ „ ___ Կարապետ	7
եղբարք Մարգարայ Էղիլխանեանց	
Սարգիս Դաւթեան Էղիլխանեանց	40
Եսայի Դաւթեան Էղիլխանեանց	38
Մօսկովայ վաճառական Մատթէոս Պօղոսեան Այինցով	68
կին նորա Հռիփսիմէ	56
որդի նորին Պօղոս [ջնջված է]	35
դուստր նորա Մարիամ	36
որդի նորա Պետրոս	35
___ „ ___ Պօղոս	34
___ „ ___ Յարութիւն	32
դուստր նորա Եղիսաբեթ	29
որդի նորա Յակոբ	28
___ „ ___ Յովակիմ	27
դուստր նորա Կատարիմէ [ջնջված է]	24
որդի նորա Աղեքսանդր	25
դուստր նորա Կատարիմէ	22
Յովհաննէս Մարգարեան Գալստեանց	57
կին նորա Եղիսաբեթ Գալստեանց	36
դուստր նորին Ծաղիկ	17
___ „ ___ Մանուշակ	1,5
Գերագնիվ Սոլոմոն Արտեմիչ Տեր-Ղուկասով	45
կին նորա Սոփիայ	35
աներորդի նորա Գրիգոր	36
եղբայր Սողովմոն Տեր-Ղուկասովայ Տիգրան	22
Դաւիթ Արխիբիչ Սերեբրեակով	49
կին նորա Կատարիմէ	30
որդի նորա Արխիբ	11
դուստր նորա Եղիսաբեթ	7

եղբայր նորա Պետրոս Արխիքեան Սերեբրեակով	45
կին նորա Աննայ	24
որդի նորա Մարգար	6
___ „ ___ Յովհաննէս	5
___ „ ___ Գեորգ	2
մօրաքոյր Սերեբրեակովայ այրի կին Նաթալեայ	65
քեռորդի նորին Գեորգ	28
Հանգուցեալ Յովհաննէս Աւետիսեան Եզովայ	
կին Եղիսաբեթ	32
որդի նորա Աւետիս	10
դուստր նորա Մարիամ	8
որդի նորա Գրիգոր	6
որդի նորա Մարգիս	4
Յարութիւն Աւետիսեան Եզով	45
կին նորա Եղիսաբեթ	29
դուստր նորա Մարիամ	10
որդի նորա Կարապետ	7
դուստր նորա Աննայ	5
Ստեփան Աւետիսեան Եզով	38
կին նորա Եղիսաբեթ	25
Նիկողայոս Աւետիսեան Եզով	36
Կոմմերցի սովետնիկ Յովհաննէս Ստեփանեան Օնանով	34
կին նորա Մարիամ	22
դուստր նորա Աննայ	3
որդի նորա Ստեփաննոս	2
որդի նորա Յովհաննէս	1
Ազնիւ Գրիգոր Սկրտիչեան Քալանթարով	70
կին նորա Հռիփսիմէ	48
դուստր նորա Մարիամ	24
որդի նորա Սկրտիչ	23
դուստր նորա Սովիայ	21
եղբայր նորա Առաքել Սկրտիչեան Ղայսով	75
կին նորա Մարիամ	61
Նախիջևանցի Մարտիրոս Քիստով [Քեասով]	68
կին նորա Աննայ	55
որդի նորա Կարապետ	38
___ „ ___ Ռափայել	32

Մոսկ. վաճ. Թեոթոս Կարապետեան Կազաչկով	50
կին նորա Մարիամ	33
Ազնի Նիկիտ Գասպարեան Մուրաչով	55
կին նորա Մարիամ	30
Թիֆլիզեցի Յովհաննէս Յարութիւնեան Բաբանով	60
կին նորա Եղիսաբէք	34
դուստր նորա Մարիամ	10
___ » ___ Աննայ	8
որդի նորա Նիկողայոս	6
Առաքել Փիլիպպոսեան Շահումեանց	33
կին նորա Մարիամ	18
Գալուստ Մալխասի Բուրդովայ	
կին Կատարինէ	31
որդի նորա Մինաս	12
քոյր Կատարինէ Բուրդովայ Վառվառայ	29
Ազնի Աւետիս Յովհաննէսեան Փիրատով	40
կին նորա Մարիամ	22
դուստր նորա Եղիսաբէք	1,5
մայր Աւետիս Փիրատովայ Եղիսաբէք	70
Բարադամ Բարսեղեան Մերետնիկով	87
կին նորա Կատարինէ	65
դուստր նորա Հոփսիմէ	32
որդի նորա Բարսեղ	30
Վարդան Թովմասեան Նազարեանց	35
կին նորա Թագուհի	22
Այրի կանայք	
Աննայ Պետրովնայ Միրզախանեանց	68
քոյր նարա Եղիսաբէք	58
քեռդուստր նորա Աննայ	33
Եղիսաբէք Պետրովնա Առաքելով	65
որդի նորա Յովհաննէս	40
դուստր նորա Կատարինէ	34
___ » ___ նորա Մարիամ	29
Կատարինէ Յարութիւնեան Չերքազով	61
որդի նորա Անդրէաս	32

դուստր նորա Աննայ	28
Մարիամ Մինասեան Մահեկով	61
դուստր նորա Մարիամ	30
Մարիամ Յարութինեան Բողդանով	62
դուստր նորա Շուշան	32
Կատարինէ Պալովնայ Կանդիմցով	40
որդի նորա Շմաւոն	18
դուստր նորա Եղիսաբեթ	14
որդի նորա Աղեքսանդր	11
դուստր նորա Կատարինէ	9
— „ — նորա Աննայ	7
Խումար Դանիէլեան	58
Հանգուցեալ Տեր Մինաս քահանայի	
կին Մանուշակ Պոպովեան	58
որդի նորա Խաչատուր	31
Հանգուցեալ Իւան Միխայլիչ Էրիցպոպովի	
այրի կին Սոփիայ	45
Մանուշակ Աւետիսեան Չերնով	61
Մանուշակ Աղեքսանդրեան Թավելդարեանց	57
որդի նորա Սկրտիչ	11
Եղիսաբեթ Առաքելեան	44
Աննայ Յարութինեան Դորդանով	60
Թագուհի Մատվէլովնայ Մուրաչով	32
եղբայր սորին Յովհաննէս	29
քոյր սորին Մարգարիտ	21
քոյր սորին Մարիամ	19
Հանգուցեալ Մարգարայ Ալեքսանդրովայ	
դուստր Մագթարինէ	23
Մանուշակ Անտոնեան	46

Օտարականք բնակեալք ի Մոսկով

Ազնիվ Անդրէյ Աֆանասիչ Լորիս-Մելիքով	62
եղբորորդի նորա Յովհաննէս	25
Իսայ Մոսէիչ Գասպարով	59
Ազնի Յարութին Մարգարեան Եաղուով	50
Ազնի Սկրտիչ Յովհաննէսեան Վարդանով	39

եղբայր նորին Վարդան Վարդանով	33
Մինաս Մինասեան Փանեանց	47
Պետրոս Կիրակոսեան	70
Ստեփան Պողոսեան Ալմասով	58
Խրիստափօր Լազարիչ Աբելով	59
Գրիգոր Մարգարեան Տարասով	50
Թորոս Մարգարյան _____	53
Կվարտալնի պորուտչիկ Պետրոս Խրիստափօրիչ	42
Գրիգոր Յարութիւնեան Տուրչենիմով	41
Գալուստ Նազարիչ Արխիտեկտօրով	69
Սկրտիչ Փարսադանեան	64
Աւետիս Մարտիրոսեան Մարտիրոսով	[61]
Նախիջևանցի Մարգար Գալստեան Սվեշնիկով	60
կին նորա Ոստինեայ	45
դուստր նորա Գայեանէ	12
Նախիջևանցի Աւագ Եփրեմեան Ադամեանց	34
կին նորա Գեղեցիկ	19
Նախիջևանցի Խաչատուր Կէօկչեանց	55
կին նորա Եփրակսէ	41

Հոգևորականք Մոսկովայ

Տեր Յովակիմ քահանայ Մելիքեանց	38
կին նորա Աննայ	29
մեծմայր քահանային Մելիքեանց	79
Տեր Յովհաննէս քահանայ Վարդանեանց	[41]
դուստր նորա Շուշան	15
որդի նորա Վարդան	6
դուստր նորա Աննայ	4
Ազգական նոցին այրի կին Ծաղիկ Գասպարով	[92]
Մարկաւագ Գրիգոր Սուքիասեանց	34
կին նորա Ոսկի	26
դուստր նորին Շուշան	2
որդի նորին Ռափայէլ	1

Ս.ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ
ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1905 թ.

1. Աբամելիք-Լազարեան իշխան Սիմէօն
2. Աբրահամեան Լևոն
3. Ադոնց Նիկողայոս
4. Ալաջալեան Աղէքսանդր
5. Ալաջալեան Սարգիս
6. Ալէքսեանց Ալէքսին
7. Աթաբէգեան Աղէքսանդր
